

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (28)

2 0 2 5

Գյումրի 2025

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն հիմնադրվել է 1998թ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ:
Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316-2025.28.1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ՄԵՐԳՈ՝ (գլխավոր խմբագիր) բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԱԿՈՂՈՎ ԱՐԿԱՐԻ՝ (գլխ. խմբագրի տեղակալ), պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԲԱԶԵՑԱՆ ԿԱՐԻՆԵ՝ (պատ. քարտուղար) պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ

ԱՈՒԶԵԼԼԻ ՖՐԱՆԶԵՍԿՈ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, Միլան, ԻՏ, Հունան, ՉԺՀ
ԲԱՐԱԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ՝ բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԲԱԼՅԱՆ ԿԱՐԵՆ՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր, IAAM թղթակից անդամ Մոսկվա, ՌԴ
ԳՐԻԳՈՐՅԱՆ /Հայկազուն/ ԱՇՈՏ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, ՃԱԹԻ, Երևան, ՀՀ
ԴԵՎԵՆՆԵՐ ԿՈՒՄԱՐ՝ բան. գիտ. դոկտոր PhD, ԲՀՀ, Կուրուկչետրա, Հնդկաստան
ԽԱՉՏՉՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ
ԽԵՍՉՅԱՆ ԷՍԹԵՐ՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԽՈՍՐՈՒՅԿԱՆ ԱՆԱՀԻՏ՝ պատմ. գիտ. թեկնածու, Լորթ Փարք համալսարան, Չիկագո, ԱՄՆ
ԿԱՆՈՒՆ ԸՆԴՈՒՄՆԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՊՀ, Մայկոպ, ՌԴ
ԿԱՎԵՆԻՔՎԻՔՎԻՔ ԸՆԴՈՒՄՆԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ՍՉՊՀ, Ախալցխա, Վրաստան
ԿՐՑՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀԿԴՀ, Ստավրոպոլ, ՌԴ
ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵՊԿ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՀՈՒՄԿԱՆ ՅԱԹԻՄԵՏ՝ բան. գիտ., թեկնածու, ՄՊՏՀ, Վորոնեժ, ՌԴ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ՝ աստվածաբանության դոկտոր, ԱՊՀ, Աթենք, Հունաստան
ՄՍՀԵ ԺԱՆ - ՊԻԵՐ՝ հայագետ, ԱԳԱ անդամ, Փարիզ, Ֆրանսիա
ՄՄԳՎԱՐՅԱՆ ԱՐԱՔՍ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵԳԱ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՄՄԳՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՊԻ, Երևան, ՀՀ
ՄԿՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԳԻՍ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՌՈՒՆԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ՝ արվ. դոկտոր, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՍԱԴՈՎՍԿԻ ՄԻԽԱԷ՝ պատմ. գիտ. դոկտոր PhD, ՎՀ, Վարշավա, Լեհաստան
ՍԱՀԱԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ՝ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՄԼԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՕՐԴՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ՝ քաղ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՓՄԻԻ, Երևան, ՀՀ

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» N 1(28) / Հայագիտություն և հասարակա-
կան գիտություններ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հոդվածների ժողովածու: Խմբ. խորհուրդ՝ Ս.
Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2025,-226 էջ:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ.Սարգսյան 5ա:
էլ. հասցեն՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջը՝ www.shirakcenter.sci.am
հեռախոսը՝ +374/94/ 411 228*

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2025

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

1 (28)

EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2025 Gyumri

Периодический сборник статей «Научные труды» учрежден Ученым советом ШЦАИ НАН РА в 1998.
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.

The periodical collection of “Scientific Works” established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS, is indexed in the list of SCC MESCS RA.

ISSN 1829-4316

eISSN 2953-8076

DOI: 10.52971/18294316-2025.28.1

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АЙРАПЕТЯН СЕРГО - главный редактор, РА
АКОПОВ АРКАДИЙ - зам. гл. редактора, РА
БАЗЕЯН КАРИНЕ - отв. секретарь, РА

АУДЖЕЛЛИ ФРАНЧЕСКО - Италия, Китай,
АЙРАПЕТЯН АРМЕН, РА
АРУТЮНЯН АСМИК, РА
БАДАЛЯН СЕРГЕЙ, РА
БАЛЪЯН КАРЕН, РФ
ВАРДАНЯН БЕНИК, РА
ГРИГОРЯН (АЙКАЗУН) АШОТ, РА
ДЕВЕНДЕР КУМАР, Индия
ЖАН-ПИЕР МАЭ, Франция
КАВРЕЛИШВИЛИ РОИН, Грузия
КАЗАРЯН ГЕВОРГ, Греция
КАНДОР РУСЛАН, РФ
КРЮЧКОВ ИГОРЬ, РФ
МАРГАРЯН АРАКС, РА
МАРУКЯН АРМЕН, РА
МКОЯН АРТАШЕС, РА
ОГАНИСЯН АРТАК, РА
ОРДУХАНИЯН ЭМИЛЬ, РА
ПЕТРОСЯН САРГИС, РА
РУХКЯН МАРГАРИТ, РА
СААКЯН КАРИНЕ, РА
САДЛОВСКИЙ МИХАЛ, Польша
ХАЧАТРЯН ГУРГЕН, РА
ХЕМЧЯН ЭСТЕР, РА
ХОСРОЕВА АНАИТ, США
ХУАКО ФАТИМЕТ, РФ
ЦАКАНЯН РУСЛАН, РА

EDITORIAL BOARD

HAYRAPETYAN SERGO editor-in-chief, RA
AKOPOV ARKADI vice editor, RA
BAZEYAN KARINE secretary, RA

AUGELLI FRANCESCO - Italy, China
HAYRAPETYAN ARMEN, RA
HARUTYUNYAN HASMIK, RA
BADALYAN SERGEY, RA
BALYAN KAREN, RF
VARDANYAN BENIK, RA
GRIGORYAN (HAYKAZUN) ASHOT, RA
DEVENDER KUMAR, India
JAN-PIER MAHE, France
KAVREISHVILI ROIN, Georgia
GHAZARYAN GEVORG, Greece
KANDOR RUSLAN, RF
KRYUCHKOV IGOR, RF
MARGARYAN ARAKS, RA
MARUQYAN ARMEN, RA
MKOYAN ARTASHES, RA
HOVHANNISYAN ARTAK, RA
ORDUKHANYAN EMIL, RA
PETROSYAN SARGIS, RA
RUKHKYAN MARGARIT, RA
SAHAKYAN KARINE, RA
SADLOVSKI MIKHAL, Poland
KHACHATRYAN GURGEN, RA
KHACHATRYAN LALIK, RA
KHEMCHYAN ESTER, RA
KHOSROEVA ANAHIT, USA
HUAKO FATHIMET, RF
TSAKANYAN RUSLAN, RA

“Научные труды” ШЦАИ НАН РА NN 1(28). Арменоведческие и общественные науки / НАН РА:
Сборник статей: Редакционный совет: С.Айрапетян и др.: -Гюмри,” ЧП Р.Аветисян”, 2025, 226 с.

“Scientific Works” N1 (28) of SCAS of NAS RA: Ed. Board: S.Hayrapetyan & others: Gyumri, "IE RA". 2025, 226p.

Адрес: 3101, РА, Гюмри, ул. В.Саргсяна 5а
Address: 30101, 5 a V. Sargsyan Street, Gyumri, RA
E-mail: scient.works@shirakcenter.sci.am
hppt: www.shirakcenter.sci.am
me.l./tel.: +374/94/411-228

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА. 2025
@ Shirak Center for Armenological Studies of NAS RA. 2025

ՀՏԴ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2025.28.1-5

**ՀՈՒՅՆ ՊԱՏՄԱԳԻՐ ՊՈԼԻԲԻՈՍԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ
ՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԻ ՄԿՁԲՆԱՎՈՐՈՂ
(Պատմության մեթոդաբանության հարցեր)**

Արարատ Մ. Հակոբյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Պատմագիտության անբաժանելի մասն է կազմում պատմության տեսության ու մեթոդաբանության հարցերին տիրապետումը, առանց որոնց պատմաբանը չի կարող տալ անցյալի գիտականորեն հիմնավոր և ճշմարիտ պատմությունը: Պատմության տեսության ու մեթոդաբանության հարցերի ուսումնասիրության ու լուսաբանման գործընթացն սկսվել է անտիկ շրջանում՝ Հին Հունաստանում և Հին Հռոմում: Այդ երկրների գիտության և մշակույթի մեծերն իրենց մտավոր կառույցով, նորարարական գաղափարներով, պատկերացումներով ու հոգևոր բարձրարժեք հուշարձաններով դրեցին Արևմուտքի արդի քաղաքակրթական արժեքային համակարգի հիմքերը: Այդ համատեքստում պատմագրության գիտական մեթոդի ու մեթոդաբանության որոնումները հետագայում զարգացում ստացան Եվրոպայում, իսկ ժամանակային առումով իրենց վերջնական գիտական ձևակերպումը ստացան 19-րդ դարում: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: *Վերլուծություն.* Աշխատանքում վերլուծվել է Պոլիբիոսի կողմից պատմության շարադրման, երևութների ու եղելությունների, պատերազմների ու ճակատամարտերի պատճառակցական կապի, բնության և պատմական երևույթների փոխմիասնության ու կապի դրսևորումները: *Արդյունքներ.* Ուսումնասիրության մեջ հստակեցվել է Պոլիբիոսի դերը Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայական գաղափարները պետականությունների և դրանց կառավարման ձևերի վերաբերյալ զարգացնելու գործում: Վերլուծվել են Պոլիբիոսի գաղափարները երկրների ու ժողովուրդների պետական, քաղաքական և իրավական կառավարման վերաբերյալ: Ամփոփվել են Պո-

լիբիոսի հայացքներն ու մտեցումները պատմության տեսության և մեթոդաբանության վերաբերյալ, դրանց օգտակարությունը և գործադրելիությունը «Հայոց պատմության» ամենատարբեր հիմնախնդիրների լուսաբանման համար:

Բանալի բառեր՝ *համընդհանուր պատմություն, մեթոդ, Հռոմ, պատերազմ, պետություն, խառը կառավարում, դեմոկրատիա, օրենք:*

Ինչպես հղել՝ Հակոբյան Ա. *Հույն պատմագիր Պոլիբիոսը պատմագիտության մեջ քննական և վերլուծական մտեցումների սկզբնավորողը*, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1 (28): 5-22 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-5

THE GREEK HISTORIAN POLYBIUS AS THE ORIGINATOR OF CRITICAL AND ANALYTICAL APPROACHES IN HISTORIOGRAPHY (issues in the Methodology of History)

Ararat M. Hakobyan

Institute of History of the National Academy of Sciences, Yerevan, RA

Abstract

Introduction: The mastery of issues in historical theory and methodology forms an integral part of historiography, without which a historian cannot provide a scientifically substantiated and accurate account of the past. The process of studying and illuminating questions of historical theory and methodology began in antiquity—in Ancient Greece and Ancient Rome. The intellectual giants of science and culture from these countries, through their mental constructs, innovative ideas, perceptions, and spiritually valuable monuments, laid the foundations for the Western modern civilizational value system. In this context, the search for scientific methods and methodologies in historiography was subsequently developed in Europe, reaching their final scientific formulation in the 19th century. **Methods and Materials:** The work uses historical-comparative methods, as well as the methods of combining and analyzing primary sources. **Analysis:** The work analyzes Polybius's narrative of history, the causal connection of phenomena and events, wars and battles, the unity and connection of nature and historical phenomena. **Results:** The study clarifies the role of Polybius in developing the philosophical ideas of Plato and Aristotle about statehood and their forms of government. Polybius' ideas about the state, political and legal governance of countries and peoples are analyzed. Polybius' views and approaches to the theory and methodology of history, their usefulness and applicability for illuminating various issues of "Armenian History" are summarized.

Key words: *Universal history, method, Rome, war, state, mixed government, democracy, law.*

Citation: Hakobyan A. *The Greek Historian Polybius as the Originator of Critical and Analytical Approaches in Historiography (issues in the Methodology of History)*// "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2025: V. 1 (28).5-22 pp. DOI: 10.52971/18294316-2025.28.1-5

ՆԱԽԱԲԱՆ. Պատմագիտության սկզբնավորողներն են հույն պատմիչ-պատմագիրներ Հերոդոտոսը, Քսենոֆոնը, Թուկիդիդեսը, Պոլիբիոսը, Պլուտարքոսը և ուրիշներ: Բայց դրանց շարքում առանձնանում է պատմահամեմատական ու քննական-վեր-

լուծական մեթոդների սկզբնավորող, հույն ակնավոր պատմիչ-պատմագիր **Պոլիբիոսը** (մոտ 200-118 թթ. Ք. ա.), որի պատմագիտական հայացքների և մեթոդաբանական մոտեցումների վերհանմանն էլ նվիրված է սույն հրապարակումը: Հատկանշական է, որ ռուս պատմաբան Վլ. Դյակովը Թուկիտիդեսին ներկայացնում է՝ իբրև անտիկ պատմական մտքի գագաթ, իսկ Պոլիբիոսին՝ որպես «Համաշխարհային պատմության» հասկացության առաջին ձևակերպողի ու կիրարկողի [17, շ.18]: Նկատի առնելով, որ մեր հետազոտության կենտրոնական դեմքը հանդիսացող պատմագիր Պոլիբիոսն իր աշխարհայացքը ձևավորելիս մեծապես ազդվել է Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայական հայացքներից, ուստի սույն հրապարակման մեջ աշխատել ենք առավել ուշադրություն դարձնել ինդրի պատմափիլիսոփայական կողմին:

Պոլիբիոսի պատմագիտական հայացքները և մեթոդական մոտեցումները

Հիրավի, պատմության հանդեպ քննական, նաև վերլուծական մոտեցումների տեսանկյունից՝ որպես Թուկիտիդեսի գաղափարները մի շարք գծերով շարունակող ու զարգացնող կարելի է համարել հույն ճանաչված պատմիչ-պատմագիր Պոլիբիոսին, որը հատկապես հայտնի է 40 գրքերից (լրիվ պահպանվել է 5 գիրք, մյուսները հասել են հատվածաբար) կազմված իր «*Համընդհանուր պատմություն*» եռահատոր արժեքավոր աշխատությամբ, որում, պատմական նյութի հանգամանալի շարադրանքի հետ միասին, տվել է նաև նրա մշակման մոտեցումների ու մեթոդի իր հարացույցը (կոնցեպտը) [22]:

Ամենից առաջ՝ Պոլիբիոսն իր աշխատության ներածականում ընթերցողին կողմնորոշում է դեպի պատմության իմացության անհրաժեշտությունն ու օգտակարությունը: «Անցյալի իմացությունը,- գրում էր Պոլիբիոսը,- կարող է մյուս գիտելիքներից առավել ծառայել մարդկանց օգտին», և որ «պատմությունից քաղված դասերը հաստատապես կնպաստեն լուսավորությանը, ինչը և կնախապատրաստի մարդկանց հասարակական գործերի տիրապետմանը (իմացությանը)» [22, հ. 1, էջ 12]: Նա պատմություն գրելու իր մղումը պայմանավորում էր Հռոմի կողմից աշխարհը նվաճելու և դրա հետ կապված՝ գրավյալ տարբեր պետությունների վիճակին ծանոթանալու հանգամանքով: Բացի այդ, պատմություն գրելը նա կարևորում էր նաև նրանով, որ «ես եղել եմ ոչ միայն իրադարձությունների մեծ մասի ակնատեսը, այլև մասնակցել ու անգամ ուղղություն եմ տվել դրանց» [22, հ. 1, էջ 247]:

Պոլիբիոսն ակնարկում է, որ ինքը որքան հիշում է՝ մինչ այդ ոչ մեկը ձեռնամուխ չի եղել գրել «Համընդհանուր պատմություն»: Նա նաև նշում է, որ եղել են պատմագիրներ, ովքեր նկարագրել են միայն առանձին պատերազմներ կամ իրադարձություններ, ուստիև ինքը անհրաժեշտ է համարել լրացնել այդ բացը: Իսկ իր խնդիրը եղել է ճշմարտության վերհանումը: Ըստ նրա՝ պատմության մաս-մաս (հատվածաբար) ներկայացնելը բավարար չէ ամբողջը ճիշտ հասկանալու և ներկայացնելու համար [22, հ. 1, էջեր 15-16]: «Դրան կարելի է հասնել,- հավելում էր նա,- բոլոր մասերի համադրման միջոցով, թե որոնք են իրար նման, որոնք՝ տարբեր: Եվ միայն այդ դեպքում է հնարավոր իմանալ ամբողջը և դրանով իսկ յուրացնել պատմության դասերն ու բավականություն ստանալ դրանցից» [22, հ. 1, էջ 16]:

Պոլիբիոսն իր աշխատությունը «Համընդհանուր պատմություն» է անվանել նաև նրա համար, որ, իր իսկ հավաստմամբ, ներկայացնելով հռոմեական տերությունն իր նվաճումներով, դրա տակ հասկացել է գրեթե ամբողջ աշխարհը: Եվ սա կարելի է համարել համաշխարհային պատմության համակարգված շարադրման առաջին հաջողված փորձը: Թող զարմանալի չթվա, որ Պոլիբիոսը Ալ. Մակեդոնացու տիրապետությունը Հռոմի համեմատ սահմանափակ էր համարում՝ փաստարկելով, որ Ալեքսանդրը չէր հնազանդեցրել Սիցիլիան, Սարդիինիան և Լիբիան, էլ չենք ասում Արևմտյան Եվրոպայի առավել ռազմատենչ ժողովուրդների մասին [22, հ. 1, էջ 13]: Նա հարց է տալիս՝ «Այդ ինչպե՞ս և ո՞ր հասարակական հիմնարկությունների պայմաններում գրեթե հայտնի ողջ աշխարհը մի հիսուն տարվա ընթացքում հայտնվեց հռոմեացիների մենիշխանության ներքո» [22, հ. 1, էջ 13]. Հետագայում կտեսնենք, որ այդ հաջողությունը նա բացատրում է Հռոմի պետական կառուցվածքի առավելություններով:

Պոլիբիոսը, Թուկիդիդեսի նման, իր աշխատությունը պատրաստելիս քննադատաբար է մոտեցել օգտագործված աղբյուրներին և միշտ չէ վստահել «ականջներին»: «Բնությունից մենք օժտված ենք երկու օրգաններով,- գրում էր Պոլիբիոսը,- այն է՝ լսողությունը և տեսողությամբ, որոնց օգնությամբ ամեն ինչ տեսնվում (ընկալվում) ու ճանաչվում է: Ինչպես սովորեցնում է Հերակլիտը¹, տեսողությունը առավել ճշմարիտ է լսողությունից, քանզի աչքերն ավելի ստույգ վկաներ են, քան ականջները» [22, հ. 2, շ. 396]: Բերված խոսույթն առաջին հերթին վերաբերում է վստահություն ներշնչող արժանավոր պատմագրին ու պատմաբանին՝ առ այն, որ պատմություն գրողը պետք է ավելի հավատ ընծայի իր աչքերին, քան ականջներին, այսինքն՝ նրա ներկայացրած պատմությունը պետք է *արժանահավատ* լինի և ընթերցողի մոտ *վստահություն* ներշնչի:

Հին աշխարհի պատմիչներին բնորոշ օրինակով՝ Պոլիբիոսը ևս մեծ նշանակություն էր տալիս պատմության մեջ *անհատների* դերին, ինչպիսին էին, օրինակ, իր ժամանակից գորավարներ Պուբլիոս Կոռնելիոս Սցիպիոն Աֆրիկացի Ավագը (235-183 թթ. մ. թ. ա.) և Հաննիբալը (247-183 թթ. մ. թ. ա.): Խոսք բացելով Հաննիբալի բնավորության մասին՝ Պոլիբիոսը նշում է, որ շատերը նրան բնորոշում են չափազանց դաժան, մյուսները՝ շահամոլ: Իհարկե, իր համար դժվար համարելով պետական գործչի կամ գորավարի վերաբերյալ ճշմարիտ ու համոզիչ դատողություններ անելը, այնուամենայնիվ, ավելի հավանական է համարում, որ մարդու բնավորությունը ավելի ակնհայտ է դառնում *արտակարգ իրավիճակներում* [22, հ. 2, էջ 198]: Պունիկյան Երկրորդ պատերազմի (218-201 թթ. մ. թ. ա.) շրջանում, (մի պատերազմ, որը պատմությանը հայտնի այդ երեք պատերազմներից կարելի է համարել վճռականը, (ի դեպ, Պոլիբիոսն այն անվանել է նաև *Հաննիբալյան*)), երբ Հաննիբալն Ալպերից ներխուժել էր Իտալիա, առանձին ճակատամարտերում հաղթանակներ տարել և սպառնում էր գրավել Հռոմը, հռոմեացիները դիկտատոր են ընտրում Քվինթոս Ֆաբիոս Մաքսիմուսին (Մեծագործին): Պոլիբիոսի բնորոշմամբ՝ նա բնությունից օժտված հանճարեղ խելքի տեր մարդ էր [22, հ. 1, էջ 388]: Առհասարակ, Պոլիբիոսը չի թերագնահատել անհատի դերը պատմության մեջ:

¹ Խոսքը հույն մեծ փիլիսոփա Հերակլիտի (մոտ 535 - մոտ 470 թթ. մ. թ. ա.) մասին է:

Պոլիբիոսի կարծիքով՝ պատմությունը ծառայում է նաև *գործնական* նպատակների համար, և դրանից ստացված փորձը կարող է նպաստել ապագայի կանխատեսմանը: Ռուս պատմաբաններ Ն. Մաշկինի և Վ. Ավդիևի կարծիքով՝ Պոլիբիոսը դրանով սկիզբ է դրել «*պրագմատիկ պատմություն*» հասկացությանը[9, էջ 39]: Այն հետագայում՝ XVIII-XX դարերում, զարգացում ապրեց Գ. Հեգելի, Թ. Մունզենի, Ֆ. Բրոդելի և եվրոպական մի շարք այլ մտածողների կողմից: Օրինակ՝ Հեգելի մոտ «պրագմատիկ պատմության» գործնական ձևակերպում կարելի է համարել նրա հանրահայտ բանաձևումը՝ «*Ամեն բանական իրական է, և ամեն իրական՝ բանական*»[16, c. 89]: Պատմագիտության պրագմատիկ մոտեցումը ենթադրում է նաև սոցիալական և քաղաքական կոմպոնենտների (բաղադրիչների) միակցություն:

Պոլիբիոսը դատողություններ է անում պատմական իրադարձությունների ու դրվագների օրգանական կապի, նույնիսկ՝ օրինաչափությունների մասին: Ըստ այս երկու հեղինակների հայեցակարգային մոտեցումների՝ քանի որ մարդկային բնությունը (եությունը) անփոփոխ է, ուստի այդ կայունության հետևանքով պատմական երևույթներն ու իրադարձությունները, «պայմանավորված մարդկային բնությամբ, ի գործ են ապագայում *կրկնվելու*» [24, c. 14 և 15, c. 632]: Բայց, հիշելով *Թալես Միլեթացուն* (VI դար մ. թ. ա.) կամ նրա աշակերտ *Հերակլիտին* վերագրվող իմաստնական օրենք դարձած խոսույթը՝ «նույն գետը երկու անգամ չես մտնի» [25], բացառվում է դրանց *նույնությունը* կրկնվելը:

Պատմական էքսկուրս կատարելով անցյալին՝ հարկ է արձանագրել, որ պատմության հետազոտման *մեթոդաբանությունն* ի հայտ է եկել այն ժամանակ, երբ մարդկանց մոտ, իբրև հեռու և մոտիկ անցյալի հիշողություն, բնական անհրաժեշտություն է առաջացել փորձել *համակարգված շարադրել*, իմաստավորել պատմությունը, որտեղից էլ, կարելի է ասել, ձևավորվել է պատմությունը՝ իբրև *գիտություն*: Ինքնին հասկանալի է, որ բուն պատմությունն իր իրադարձություններով, գործընթացներով, դրվագներով, դեպքերով ու դեմքերով, ժամանակագրական առումով ավելի հին է, քան պատմագրությունը, ուրեմն նաև՝ դրա ուսումնասիրման գործիք հանդիսացող պատմության մեթոդաբանությունը:

Պոլիբիոսն իր աշխատության մեջ հաճախ անդրադառնում է պատմության շարադրման յուրահատուկ կողմերին ու գծերին: Ասենք, ի տարբերություն Հերոդոտոսի, Արիստոտելի և մյուսների, ովքեր *պոեզիան* դասում էին պատմությունից բարձր, քանի որ պոեզիայում ավելի շատ է խոսվում ընդհանուրից, իսկ պատմությունում՝ եզակիներից, նա պատմությունը հակադրում էր պոեզիայի ժանրերին, օրինակ՝ ողբերգությանը և տալիս հետևյալ մեկնաբանությունը. «Պատմաբանի խնդիրը նրանում չէ,- գրում էր Պոլիբիոսը,- որպեսզի պատմելով հրաշագործ բաների մասին՝ ընթերցողին ներշնչի սարսափ, և ոչ էլ նրանում, որպեսզի նկարագրելով ճշմարտանման պատմություններ՝ նկարագրվող իրադարձություններում նշել բոլոր երկրորդական (կողմնակի) հանգամանքները, ինչպես որ վարվում են ողբերգություն գրողները, այլ նրանում, որ ստույգ հաղորդել միայն այն, որ իրականում ասվել կամ արվել է, որքան էլ այն անսովոր լինի: Պատմության և ողբերգության նպատակները նույնը չեն, ընդհակառակը՝ հակադիր են: Մի դեպքում պահանջվում է

լսողներից ճշմարտանման ելույթներով տվյալ պահին ունկնդիրների մոտ առաջ բերել զարմանք և հիացմունք, մինչդեռ պատմությունից պահանջվում է հետաքրքրասեր մարդկանց տալ ճշմարիտ գրությունների և խոսքերի լիակատար (հուսալի) դասեր ու խրատներ (պատգամներ): Այն պարագայում, երբ ողբերգություն գրողների համար գլխավորը ճշմարտանման խոսույթներով հանդիսատեսին մոլորեցնելն է, ապա պատմաբաններինը՝ գլխավորը հետաքրքրասեր ընթերցողին օգուտ բերել՝ ճշմարիտ պատմության շարադրամբ» [22, հ. 2, էջ 198]:

Ի տարբերություն հռետորաբանների՝ Պոլիբիոսը պատմագրության միակ չափանիշը համարում էր *ճշմարտությունը*: Պատմիչ-պատմաբանների կողմից իրենց շարադրած պատմության ճշմարտացիության արժեքը որոշելու համար Պոլիբիոսը մեջ է բերել մեր ժամանակներում հանրահայտ դարձած խոսույթը, որ «Մեկ կաթիլով կարելի է իմանալ վիթխարի տակառի ամբողջ պարունակության մասին» (ռուս. По одной капле можно узнать все содержимое огромнейшей бочки [22, հ. 2, էջ 381]. Եվ, ըստ նրա, նույն կերպ պետք է վարվի պատմաբանը: Եթե որևէ հեղինակի երկում հայտնաբերվում է մեկ-երկու անճշտություն, առավել ևս, եթե անճշտությունը թույլ է տրվել դիտավորյալ, ապա ակնհայտ է դառնում, որ այլևս չի կարելի հենվել նման հեղինակի և ոչ մի խոսքին» [22, հ. 2, էջ 382]:

Պոլիբիոսի պատկերմամբ՝ պատմության արժանիքը մեծապես կախված է այն գրող պատմաբանի հատկություններից, ունակություններից, պատրաստվածությունից և այլն: Պատմաբանի նպատակը պիտի լինի ոչ թե փաստերի պարզ շարադրումը, այլ տեղի ունեցած երևույթների՝ եղելությունների, դեպքերի ու իրադարձությունների իրական ու խորքային *պատճառների բացահայտումը*: «Պատմության իսկական խնդիրը առաջին հերթին կայանում է նրանում,- գրում է հեղինակը,- որպեսզի իմանաս իրականում հնչեցրած խոսքը, ինչպիսին էլ որ դա լինի, այնուհետև փնտրես այն պատճառները, որոնցով տվյալ ձեռնարկը կամ խոսքը լուծվել է հաջողությամբ կամ անհաջողությամբ» [22, հ. 2, էջ 382]: Պոլիբիոսի ընդգծմամբ՝ պատմության ընթերցումն օգտակար է դառնում այն ժամանակ, երբ շարադրանքում բացահայտվում ու պարզաբանվում է իրադարձության պատճառը: «Ով լռության է մատնում իրադարձության վերաբերյալ հնչեցված խոսքի պատճառը, իսկ դրա փոխարեն տալիս է մտացածին դպրոցականի վարժանքներ ու երկար ճամարտակություններ, դրանով նա վերացնում է պատմության բուն գոյությունը» [22, հ. 2, էջեր 382-383]: Նա ենթադրում էր, որ պատմական իրադարձության պատճառը փնտրելը, գտնելը ավելի դժվար է, քան գրական կամ հրապարակային ելույթի համար խոսք պատրաստելը: Բացի այդ, նրա դիտարկմամբ՝ շատ քչերն են կարճ ելույթ ունենում, ընդհակառակը՝ հանդիպում են ընդարձակ ու աննպատակ ելույթներ (ճառեր)[22, հ. 2, էջ 389]: Եվ այդ իմաստով նա կշտամբում էր շատախոս հռետոր-ճարտասաններին: Այդպիսիք, ի դեպ, մեր ժամանակներում ևս քիչ չեն:

Պոլիբիոսը նմանություն ու ընդհանրություն է տեսնում *պատմություն գրողի և բուժող բժշկի* միջև: Պատմության հոլովություն պատմագրի գլխավոր նպատակը պիտի համարվի ուղղակի և անուղղակի ճանապարհով ձեռք բերված փաստերի ու փաստաթղթերի քննությամբ ու վերլուծությամբ անցյալի իրական պատմության, ճշմարտու-

թյան բացահայտումը, համեմատական առումով, ինչպիսին առողջապահության ոլորտում *բժշկինը*՝ հիվանդի աշխտորոշման ու բուժման գործողության, կամ էլ նույնիսկ իրավագիտության ու իրավունքի ոլորտում՝ *դատավորինը*, դատավարության ու դատավճռի կայացման գործում: Ընդ որում՝ պատմություն գրելը և մարդ բժշկելը, ըստ Թուկիտիդեսի, բաժանվում են երեք տեսակի՝ իրենց համապատասխան նախանշաններով: Եթե բժշկության պարագայում առկա են ա) գրքային՝ նկատի է ունեցել Ալեքսանդրիա քաղաքի գրականությունը, բ) դիետիկ (սննդային) և գ) դեղագործական ու վիրահատական փուլեր, ապա քաղաքական պատմությամբ զբաղվողը պիտի ա) ծանոթանա հետազոտվող թեմային վերաբերող պատմական երկերին, դրանցից դուրս բերի անհրաժեշտ բովանդակությամբ ու քանակությամբ նյութեր, բ) ծանոթանա երկրների քաղաքներին, գետերին, նավահանգիստներին, առհասարակ ցամաքային ու ծովային տեսարժան վայրերին և գ) ուսումնասիրի պետական (քաղաքական) իրադարձություններն ու կյանքը [22, հ. 2, էջեր 383-384]:

Պոլիբիոսը զանազանել է պատմական երևույթների ու գործընթացների երեք տարրեր՝ երևույթի, եղելության, իրադարձության կամ հանգամանքի ա) *պատճառը*, բ) *առիթը* և գ) *սկիզբը* [22, հ. 1, էջեր 248-251, և հ. 2, էջեր 382-383]: Եվ այդ երեքից, նրա պատկերմամբ, իրավացիորեն առաջնայինը համարվում է պատճառը, որը կարող է պայմանավորված լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Այստեղ նա նույնիսկ տարբերակել է *օբյեկտիվ* և *սուբյեկտիվ* գործոնների դերը [22, հ. 1, էջեր 248-251 և հ. 2, էջեր 382-383]: Հարկ է նկատել, որ այս հանգամանքը կարևորվում է անգամ մեր ժամանակներում: Բանն այն է, որ պատմություն ընթերցող հանրությունը, նույնիսկ սկսնակ պատմաբանները երբեմն դժվարանում են իրարից հստակ զանազանել պատմական այս կամ այն իրադարձության պատճառն ու առիթը: Այսպես, մեր ժամանակներում հաճախ կարելի է հանդիպել առանձին մարդկանց, որոնք զորօրինակ, Առաջին աշխարհամարտի պատճառը փորձում են կապել Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանտի ահաբեկչական սպանության հետ՝ տվյալ դեպքում առիթը շփոթելով բուն պատճառների հետ և այլն:

Պատերազմի պատճառի, առիթի և սկսման հարցը քննելիս, օրինակ, Պոլիբիոսը, Ալ. Մակեդոնացու մեծ արշավանքի հետ կապված, քննադատում է այն հեղինակներին, ովքեր պատճառ էին համարում Ալեքսանդրի գորքերի ափհանումը Փոքր Ասիա [22, հ. 1, էջ 250]: Մակայն իրականում պատերազմի պատճառները պիտի փնտրել հույն-պարսկական նախորդ պատերազմներում՝ իբրև փոխվրեժ, Հունաստանի կրած վնասների ու մարդկային կորուստների, Աթենքի հրդեհման և այլնի, իսկ միգուցե՝ Ալեքսանդր Մեծի համաշխարհային գերիշխանության հավակնությունների մեջ: Մեծ պատերազմին նախապատրաստվելը, զինվելը սկսվել էր դեռ Ալեքսանդրի հոր՝ Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպ II-ի ժամանակ: Մեջբերենք Պոլիբիոսից. «Կան մարդիկ, որոնք չեն զանազանում, թե որն է սկիզբը, ինչով է այն տարբերվում պատճառից ու առիթից» [22, հ. 1, էջ 249]: Պոլիբիոսի մտահանգմամբ՝ Ալեքսանդրի Ասիա մայր ցամաք ափհանումը ոչ թե պատերազմի պատճառ էր, այլ առիթ ու գործնականում՝ սկիզբ [22, հ. 1, էջ 250]: Ավելին, սույն աշխարհացունց պատերազմի պատճառների մասին խոսելիս՝ Պոլիբիոսը խոսում է

նաև ընդհանրապես պատերազմ կազմակերպելու մտադրության, որոշում կայացնելու, ռազմական պլան մշակելու և այլնի մասին: Այդ հարցում նա կարևորում էր նաև մարդկանց հոգեբանական տրամադրվածությունը, կողմերի հաշվարկներ անելը և համանման այլ անելիքները [22, հ. 1, էջ 250]: Պոլիբիոսը, հղում անելով Հին հունական հռետոր Հերմոկրատից, համեմատություն է անցկացնում պատերազմի և խաղաղության միջև՝ պատերազմը նմանեցնելով *քաղաքական հիվանդության*, իսկ խաղաղությունը՝ *առողջության* հետ [22, հ. 2, էջ 392]: Դժվար չէ նկատել, որ պետական ու ռազմական այս գործիչը պատերազմի և խաղաղության հարցում դատողություններ էր անում գրեթե ժամանակակից չափանիշներով:

Պոլիբիոսը պատճառի ի հայտ գալը փնտրում և տեսնում էր տվյալ իրադարձության ներսում և ոչ թե այդ երևույթից դուրս: Եվ պատահական չէ, որ նա համարվում է պատմագրության մեջ պատճառափոխանքային կապի մասին պատկերացումների հիմնադիր [23, էջ 17]:

Պոլիբիոսը պատերազմների պատճառափոխանքային կապի մասին խոսում և դատողություններ է անում առաջին հերթին Երկրորդ Պունիկյան պատերազմի օրինակով [22, հ. 1, էջեր 248-251]: Մասնավորապես, հետաքրքիր է նրա մոտեցումը պատերազմի այս կամ այն իրադարձության պատճառի բացահայտման հարցին: Միննույն իրադարձության վերաբերյալ տարբեր հեղինակներ հաճախ տարբեր կարծիք են հայտնում ու դրանից բխող տարբեր մեկնաբանություն ու գնահատական տալիս: Նկատի ունենալով դա՝ Պոլիբիոսը որպես պատմագիտական մեթոդ, առաջարկում է տվյալ իրադարձության, ասենք, պատերազմի *արդյունքով*, այսինքն՝ *հետահայաց դիտարկման (ռետրոսպեկտիվ)* մեթոդով բացահայտել դրա պատճառը կամ պատճառները: Սա հետագոտման այն ձևն է, երբ պատմաբանն իրադարձությանը հետևում է հակառակ դիտակետից՝ վերջնարդյունքից, հետևանքից դեպի իրադարձության ակունքը, պատճառը, սկիզբը: Այսինքն՝ այդ մեթոդը հնարավորություն է տալիս, հետադարձ հայացք ձգելով կատարված գործընթացին հակառակ ուղղությամբ, առարկայորեն նկատել ու պարզել շրջադարձային կարևոր պահերը, որոնք հանգեցրել են պատմական նման վերջնարդյունքի՝ դրական թե բացասական իմաստով:

Տվյալ դեպքում, Կարթագենի հանդեպ Հռոմի հաղթանակի արդյունքով Միցիլիպայի ձեռքբերումը, գործնականում Միջերկրականին տիրանալը, ավելին, հանձին Սցիպիոն Աֆրիկացի Ավագի ժառանգորդ և նրա քաղաքական գծի հետևորդ Էմիլիանոս Աֆրիկացի Կրտսերի՝ Աֆրիկա ներխուժումը և 146 թ. մ. թ. ա. Կարթագենի հիմնահատակ կործանումը ինքնին Պունիկյան պատերազմների ծագման պատճառների խոսուն վկաներն են: Այսպիսով՝ սա կարելի է դիտել Պոլիբիոսի կողմից առաջ քաշված մեթոդաբանական մի հնարք, երբ տվյալ իրադարձության վերջնարդյունքով կարելի է կռահել ու պարզել տեղի ունեցածի ծագման ու առաջացման պատճառը, ընթացքը և այլն:

Հին աշխարհի պետական, քաղաքական կամ ռազմական գործիչներին գնահատելիս՝ Պոլիբիոս պատմագիրը, վերլուծաբան-մեթոդաբանը գտնում էր, որ «Պատմաբանը պետք է զգուշանա անչափավորությունից՝ ինչպես դատապարտումներում, նույնպես և գովերգումներում» [22, հ. 2, էջ 371]: Պոլիբիոսի դիտարկմամբ՝ պետական ու ռազմական գործիչների կենսագրությունը և, առհասարակ, պատմությունը շարադրե-

լիս պատմաբանը պարտավոր է գիտակցել, որ «Պատմաբանի պարտավորության մեջ է մտնում՝ սերնդին հաղորդել ոչ միայն այն, որը ծառայում է մարդուն վարկաբեկելուն և դատապարտելուն, այլ նմանապես այն, ինչը արժանի է գովասանքի. հենց դրանում է կայանում պատմաբանի իսկական (իրական) խնդիրը [22, հ. 2, էջեր 371-372]:

Ինչպես արդեն ասվեց, Պոլիբիոսը պատմաբանի համար պարտադիր պայման էր համարում պատմությունը *ճշմարիտ* ներկայացնելը: «Պատմաբանի խնդիրը նա չէ, գրում է Պոլիբիոսը, - ինչի մասին նկարագրելով՝ ընթերցողի մոտ հրճվանք կամ սարսափ առաջացնի և կամ նրանում չէ, որ ճշմարտանման հեքիաթներ հնարի, այլ ճշմարիտ ներկայացնի այն, ինչն իրականում տեղի է ունեցել, որքան էլ որ այն անսովոր լինի» [22, հ. 1, էջ 198]: Պատմության մատուցման հարցում նրա բառացի բանաձևումն այն էր, որ ինչը *ճշմարիտ չէ*, կնշանակի՝ *սուտ ու կեղծիք է* [22, հ. 2, էջ 367]: Ըստ նրա՝ «պատմության մեջ չկա ավելի մեծ թերություն (բաց), քան սուտը» [22, հ. 2, էջ 367]: «Պատմական երկը, - շարունակում է նա, - չի կարելի կոչել պատմություն, եթե նրանում խախտված է ճշմարիտ լինելու պահանջը» [22, հ. 2, էջ 367]:

Պոլիբիոսը պատկերավոր համեմատություն է անում այն մասին, որ պատմությունից ճշմարտությունը հանելու դեպքում այն նմանվում է *տեսողությունը կորցրած կենդանի էակի*, և դրանով իսկ պատմությունը վերածվում է դատարկ ճամարտակության [22, հ. 2, էջ 367, և հ. 1, էջ 26]: Բայց և միաժամանակ՝ նա տարբերակում է անում, քանի որ պատմաբանի կողմից թույլ տրված սխալը լինում է երկակի՝ *անտեղյակությունից* կամ *կանխամտածված*: Ուստի մոլորված պատմիչ-գրողների հանդեպ պետք է ցուցաբերվի *ներողամտություն*, իսկ դիտավորյալ ու կանխամտածված անճշտությունը կամ սուտը պետք է մերկացվի և անխնա *դատապարտվի* [22, հ. 2, էջեր 367-368]: Մեկ այլ տեղ էլ այս նույն առնչությամբ գրում է, որ «սխալը հարկավոր է բարեմտորեն ուղղել (շտկել), իսկ դիտավորյալ սուտը՝ անխնա մերկացնել» [22, հ. 2, էջ 363]:

Բացի այդ, Պոլիբիոսի դիտարկմամբ՝ կան պատմաբաններ, ովքեր քիչ նշանակալի, նույնիսկ հիշատակման ոչ այնքան արժանի իրադարձությունը ինչ-ինչ նկատառումներով գերազնահատում են: Դա միգուցե կարող է հետաքրքիր լինել սովորական ընթերցասերներին, բայց իրական ու ճշմարիտ պատմության համար՝ ոչ պիտանի [22, հ. 2, էջ 99]: Գերմանացի պատմաբան, Նոբելյան մրցանակակիր *Թեոդոր Մոմզենը* (1817-1903 թթ.), շատ մտքեր, մեթոդական մոտեցումներ ու գործիքակազմեր ուսանելով Պոլիբիոսից՝ նշում էր, որ, իրոք, «Պատմաբանը չպիտի տանջի իր ընթերցողին անսովոր իրադարձությունների մասին պատմություններով» [20, էջ 229]: Հռոմի պատմությանը նվիրված Պոլիբիոսի գործին բնորոշ տիպաբանական որոշ հարցեր շարունակող Թ. Մոմզենը նկատել է տալիս, որ Պոլիբիոսի խնդրո առարկա աշխատությունը ներծծված է ընդդիմադիր՝ բանավիճային ոգով ու ոճով [22, էջ 423]:

Վերը նշվածներից գատ՝ Պոլիբիոսն ընդգծում էր նաև *պատմական փորձի* կարևորությունը: Օրինակ, նա Պունիկյան պատերազմների փորձով դատողություններ է անում, որ «Ճշմարիտ կյանքի համար մեզ ծառայում է ճշմարիտ պատմական իրադարձությունների *փորձը* (ընդգծումը մերն է- Ա. Հ.): Քանի որ միայն նա առանց վնասի

մարդկանց դարձնում է անսխալական դատավորներ բոլոր ժամանակներում և ցանկացած դրության մեջ» [22, հ. 1, էջեր 53-54]:

Ինչպես տեսնում ենք՝ Պոլիբիոսի պատմագիտական ու մեթոդաբանական մոտեցումներում ու դատողություններում պատմություն գրող հեղինակների առջև դրված գլխավոր, առաջնային պահանջն էր՝ առաջնորդվել ճշմարտությամբ և ընթերցող հանրությանը ներկայացնել իրական, օբյեկտիվ ու ճշմարիտ պատմություն:

Պոլիբիոսը՝ պետականության գաղափարի մասին²

Պատմագիր Պոլիբիոսի աշխատությունում պատմության մեթոդաբանության առանցքը պրագմատիկ առումով կազմում է *քննական ու վերլուծական մոտեցումը*, և դա առաջին հերթին վերաբերում է *քաղաքական* պատմությանը՝ ընդհանրապես, իսկ *պետականության* ինստիտուտին՝ մասնավորապես: Նա հատուկ ընդգծում էր պետականության նշանակությունը. «Ինչպիսի ձեռնարկում էլ որ արվի, նրա հաջողության և անհաջողության կարևորագույն պատճառը պետք է համարել *պետական կառուցվածքը* (ընդգծումը մերն է - Ա. Հ.): Իբրև սկզբնաղբյուր՝ դրանից են կախված բոլոր ձեռնարկումների մտքերն ու ծրագրերը, նրանից է կախված և դրանց իրագործումը» [22, հ. 2, էջ 6]: Պետականության հարցում Պոլիբիոսի առաջ քաշած գաղափարներից է այն, որ պետության զարգացումը տեղի է ունենում փուլերով, որ հասարակության զարգացմանը զուգընթաց՝ այն երթարկվում է լուրջ փոփոխությունների. փոխվում են կառավարման ձևը, բովանդակությունը, եղանակները, նպատակները, ինդիքները և սոցիալական ուղղվածությունը: Պետության բնույթի և պետական կառուցվածքի վրա, անշուշտ, ազդում են աշխարհագրական դիրքն ու պայմանները, բնակչության ազգային կազմը, մշակութային առանձնահատկությունները, կրոնական հայացքները, ժողովրդի սովորույթները և այլ գործոններ:

Այդ իմաստով Պոլիբիոսի ուշադրության կենտրոնում էր Հռոմի պետությունը: Նրա մեկնաբանությամբ՝ նախկին պատմագիրների ու փիլիսոփաների մեծամասնությունը տարբերակել են *պետական կառուցվածքի երեք ձևեր՝ թագավորական, քրիստոկրատական և դեմոկրատական* պետություններ [22, հ. 2, էջ 6]: Նա լավագույնը համարում էր այդ երեքի համադրումը, զուգակցումը կամ *խառը* կառավարումը: Պետական կառուցվածքի այդ երեք ձևերն իրենց հերթին նա տրոհել է կառավարման լրացուցիչ բաղադրիչների: Այսպես, թագավորության տեսակում նա գանազանում է սովորական *միապետությունը*, որը առաջնորդվում է օրենքներով, և *բռնապետությունը* (տիրանիան), որում չեն գործում օրենքները, և ամեն ինչ պայմանավորված է բռնապետի կամքից: Նա նկատել է տալիս, որ սովորաբար թագավորական իշխանությունը հակում ունի կերպավորվելու բռնապետության: Նա արիստոկրատիկ (ազնվականական) փոքրամասնություն կազմող պետությունը տարբերակում է ավելի նեղ ու խմբային հանդիսացող՝ օլիգարխիկ կառավարման ձևից, թեև վերջիններս, թվում է՝ իրար նման են: Նույն

² Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Պոլիբիոսի կողմից պետության տեսության առանձին հարցերի լուսաբանմանը անդրադարձել է պրոֆ. Ա. Ստեփանյանն իր «Պատմության հետազոտություններ» (Երևան, «Փրինթինֆո», 2014) մենագրության էջ 212-235-ում [11]: Այստեղ, չկրկնելով հեղինակին, մենք փորձ ենք արել ավելի շատ շեշտը դնել պատմագիր-փիլիսոփայի մեթոդական բնույթի հարցերի վրա:

ասվում է դեմոկրատական կառավարման պարագայում, որտեղ ժողովրդական զանգվածների մասնակցությամբ, բաց ու հրապարակային, օրենքներով գործող կառավարման ներքում կարող է առաջանալ անկառավարելիություն, որը ժամանակի ընթացքում ծնում է *ամբոխապետություն* (օխլոկրատիա)[22, հ. 2, էջեր 7-8]: Եվ, Պոլիբիոսի կարծիքով, բնության օրենքով պետական կառավարման ձևերի նման կերպավորումներ (տրանսֆորմացիաներ) տեղի են ունեցել թե՛ Հունաստանում և թե՛ Հռոմում:

Պոլիբիոսը պետական կառավարման ձևերի հարցում, օրինակ, կատարում է նաև հետևյալ պարզաբանումները: Այսպես՝ թագավորական իշխանության պարագայում թագավորն իր բարի կամքով սովորաբար զիջում է իր իշխանությունը, և այդ երկրում իշխում է ոչ թե *վահր*, այլ՝ *բանականությունը*: Կամ ոչ բոլոր փոքրամասնությունների կառավարումը կարելի է համարել արիստոկրատական, երբ կառավարող մարդիկ ընտրություն կատարելիս լինում են արդարամիտ ու դատող: Նույն կերպ, ժողովրդավարական կառավարում չի կարելի կոչել այն, երբ ժողովրդական զանգվածները փորձում են անել իրենց մտածածն ու ցանկացածը: Իրականում ժողովրդավարական համարվող պետությունում պարտադիր կարգով հաշվի են առնվում երկրի ու ժողովրդի վաղնջական սովորույթները, ուր փայփայվում են հարազատները, հարգվում են ավագները, մարդիկ հնազանդվում են օրենքներին, իսկ որոշումներ, վճիռներ կայացնելիս՝ վճռական խոսքը պատկանում է ժողովրդի մեծամասնությանը և այլն [22, հ. 2, էջ 8]:

Պոլիբիոսը *խառը* կառավարման վերաբերյալ նման դատողությունների հիմքում ունեցել է Պլատոնի, Արիստոտելի և ուրիշ այլ փիլիսոփաների մոտեցումները, որոնք նա զարգացրել է իր դարաշրջանի էությանը համապատասխան: Եվ, ի հավելումն ասվածի՝ նա փորձել է այդ ստեղծված շարադրել հստակ ու մատչելի կերպով [22, հ. 2, էջ 8]: Համենայն դեպս, պետական խառը կառավարման մեջ կառուցվածքի ու ձևի տեսակետից սկզբունքորեն մերժելով բռնապետությունը՝ նա նախապատվությունը տալիս էր երկու՝ արիստոկրատիկ և դեմոկրատիկ կառավարման *խառը* ձևերին: Պոլիբիոսը Հռոմի պետությունը համարում էր պետականության կատարելատիպ, որն ընդունակ էր իշխել աշխարհի վրա [22, հ. 2, էջ 59 և 9, էջեր 56-57]: Ուստի իր աշխատության 2-րդ հատորի 18-42 գլուխներում հանգամանորեն խոսում է Հռոմի պետական կառուցվածքի առավելությունների, ընտրական համակարգի և գործող օրենքների արդյունավետության մասին [22, հ. 2, էջեր 24-50]: Ի դեպ, նա ազգությամբ լինելով տոհմիկ հույն՝ Աքայական միության 168 թ. Հռոմից կրած պարտությունից հետո, ի թիվս հազար պատանդների, բերվել է Իտալիա և այդուհետ հավատարմորեն ծառայել Հռոմին:

Պոլիբիոսի աշխատության ուշագրավ արժանիքներից է նաև այն, որ նա, առաջնորդվելով բնափիլիսոփայությամբ, փորձել է բացահայտել պետականության ինստիտուտի (կառույցի) ու մարդկանց համակեցության ծագման ակունքները: Նա դատողություններ է անում այն մասին, որ մարդկային ցեղը վերացել է ջրհեղեղներից, համաճարակներից, երաշտներից կամ ուրիշ այլ աղետների պատճառով, ինչը քանիցս կրկնվել է մարդկության վաղ անցյալում և, բնականաբար, մարդկանց հետ միասին ոչնչացել են նաև նրանց ստեղծած բոլոր կառույցներն ու արվեստը: Բայց, ժամանակի ընթացքում, մարդկանց մի փոքր մասը, ըստ նրա, կարողացել է փրկվել և նրանցից կրկին բազմացել

են որոշակի թվով մարդիկ: Նման դեպքում նրանք, ինչպես բոլոր կենդանի էակները, իրենց թուլությունն ու անօգնականությունը հաղթահարելու նպատակով համախմբվել են՝ կազմելով միասեռ զանգված, իսկ նրանցից մեկը, ով մյուսներին գերազանցում էր իր ֆիզիկական ուժով, մտավոր կարողությամբ, դարձել է առաջնորդ և իշխող [22, հ. 2, էջ 9]:

Այդ համեմատությունը նա անում է՝ բնությունից վերցնելով գոմէշների, վարազների, աքլորների և այլ կենդանիների օրինակը, երբ դրանցից առավել ուժեղն անպայման դառնում է առաջնորդ [22, հ. 2, էջ 9]: Այսինքն՝ նրա ձևակերպմամբ՝ մարդկանց միջավայրում ևս իշխանության ակունքը հանդիսանում է *ուժը*, որը տանում է դեպի կառավարման մեն-իշխանություն (թագավորություն): Ուշագրավ է, որ Պոլիբիոսը, նման մեկնաբանություններ անելով, չի խոսում մարդկանց ծագման և իշխանության առաջացման ինչ-որ ոգու, *արար-չագործության*, գերբնական-աստվածային ուժերի ներգործության մասին: Նա, օրինակ՝ նման նկարագրով է պատկերում Հին Հռոմի պետության (թագավորության)՝ 753 թ. մ. թ. ա. առաջացումը. Հին աշխարհի պատմության առանցքային մի պետություն, որի մայրաքաղաքի՝ Հռոմի հիմնադրման տարեթիվը 31 տարով հետ է Հայոց Այրարատյան (Վանի, Ուրարտուի) թագավորության Արգիշտի I-ին արքայի հիմնած էրեբունի-Երևան հյուսիսային մայրաքաղաքից [5, էջ 27]:

Այդուհանդերձ, Պոլիբիոսի կողմից պետության ծագման վերաբերյալ բերված նկարագրություններից մեր ստացած ընդհանուր տպավորությամբ չի բացառվում, որ մարքսիզմի հիմնադիրներից Ֆ. Էնգելսն իր հայտնի աշխատությունը [3] պատրաստելիս, այլ աշխատություններից և ազգագրական նյութերից գատ, օգտված լինի նաև Պոլիբիոսի սույն աշխատությունից, մանավանդ, որ նա առանձին ենթավերնագրերով հանգամանորեն խոսում է տոհմատիրական հասարակության քայքայման և արթնական ու հռոմեական պետությունների առաջացման մասին [3, էջեր 128-150]:

Խոսելով պետականության գաղափարի մասին՝ Պոլիբիոսը արձանագրում է իր ժամանակվա Հռոմեական Հանրապետության իշխանության թևերի տարանջատվածությունը՝ մասնավորապես Սենատի (Օերակուլտի), կոնսուլների և ժողովրդական ժողովների միջև: Ըստ նրա՝ վերջիններիս կամքի արտահայտողն ամենից առաջ հանդիսացել է *տրիբունը*³: Պոլիբիոսի պատկերացմամբ՝ *կոնսուլը* չէր կարող առանց Սենատի և ժողովրդի գիտության ինքնազուլի գորարշավ կազմակերպել կամ պայմանագիր կնքել, որովհետև Լեգեոնները (մեկ լեգեոն=4.200 հետևակ և 300 հեծյալ զինվոր) ֆինանսավորվում էին Սենատի կողմից (Սենատն էր տնօրինում հանրապետության ֆինանսները): Բացի այդ, կոնսուլները նշանակվում էին Սենատի կողմից, իրենց գործողություններում հաշվետու լինում ինչպես Սենատի, նույնպես և ժողովրդի առջև [22, հ. 2, էջ 21]:

Իր հերթին, Սենատը պետական գործերում հաշվետու էր ժողովրդին: Պետական կարևորագույն վճիռներ կայացնելիս, ինչպիսին է, օրինակ, պետության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում մահապատժի վճիռը, նախապես պետք է հավա-

³ Գոյություն են ունեցել քաղաքացիական և զինվորական տրիբուններ (հռետորներ): Վերջիններս թվով 24-ն էին, որոնց մի մասը ընտրվում էր առնվազն հնգամյա, իսկ մյուսը՝ տասնամյա զինվորական (հեծյալ և հետևակ) արշավանքներին մասնակցելու պարագայում: Հետաքրքիր և արդիական առումով հնչել է այն դրույթը, որ պետական պաշտոններ կարող են զբաղեցնել միայն այն անձինք, ովքեր մասնակցություն են ունեցել տասնամյա արշավանքներին [22, տ. 2, c. 25]:

նություն ստանալու և հաստատվելու ժողովրդական ժողովի կողմից, իսկ Սենատի ու ժողովրդի միջև կապող օղակը (ժողովրդի ձայնը) ժողովրդական տրիբունն էր, առանց որի համաձայնության Սենատն իր որոշումները չէր կարող գործի դնել [22, հ. 2, էջ 22]: Իսկ տրիբունները միշտ գործում էին ժողովրդի օգտին, ուստի Սենատն ականջալուր էր նրա ձայնին, այդ իսկ պատճառով «վախենում էր ժողովրդից» [22, հ. 2, էջ. 23]:

Ինչ վերաբերում է իշխանության երրորդ թևին՝ *դատական* իշխանությանը, ապա Սենատն իր անդամներից ընտրում էր դատավորներ՝ ծանր հանցագործությունների, այդ թվում՝ հարուցված պետական ու մասնավոր մեղադրանքների համար: Պոլիբիոսը քննադատում էր կոսմոպոլիտ մտածելակերպի ու աշխարհայացքի տեր դատավորներին [22, հ. 2, էջ 372]: Թեև մենք արդի չափանիշներով չենք կարող խոսել դատական իշխանության ինքնուրույնության մասին, սակայն ժողովրդական տրիբուններն իրենց վճռական խոսքով կարծես համակշռում էին այդ բացը: Իշխանության թևերի տարանջատման հարցը հետագա դարերում պիտի բարեշրջում ապրեր ու հասցվեր մինչև պատմության ուշմիջնադարյան Վերածննդի, Ռեֆորմացիայի ու Նոր շրջանի, առնվազն՝ Ն. Մաքիավելի, Շ. Մոնտեսքյո, Թ. Հոբս և մյուսներ, մինչև որ կհասներ ժամանակակից կարգավիճակին:

Այդուհանդերձ, Պոլիբիոսն իր ժամանակի մեջ գտնում էր, որ Հռոմի Հանրապետության իշխանության երեք թևերն իրար օգնում և փոխգործակցում էին և նրա ձևակերպմամբ՝ «դա լավագույն պետական կառուցվածքն էր» [22, հ. 2, էջ 24]: Պոլիբիոսի կարծիքով՝ ամենից առաջ գնահատանքի է արժանի այն պետությունը, որը հարգում և առաջնորդվում է երկու կարևոր սկզբունքներով՝ *սովորույթներով* և *օրենքներով*: Հարկ է փաստել, որ հնում երկրների ու ժողովուրդների մեջ, անգամ կազմակերպված պետություններում, սովորույթը նույնիսկ օրենքի ուժ է ունեցել: «Այսպիսով,- եզրափակում է նա,- եթե ինչ-որ ժողովրդի մոտ մենք նկատում ենք բարի սովորույթներ ու օրենքներ, ապա կարող ենք համարձակ պնդել, որ այդտեղ լավ կլինեն և՛ մարդիկ, և՛ նրանց հասարակական կառուցվածքը» [22, հ. 2, էջ. 54]: Օրենքն ու սովորույթներն այն հիմնական կովաններն էին, որոնց հիման վրա պիտի զարգանային ու կատարելագործվեին քաղաքացիական հասարակության, հանրային կյանքի կազմակերպման բարձրագույն ձևը հանդիսացող պետությունը և պետականության ինստիտուտը:

Այսպիսով, պատմագիր Պոլիբիոսի պատմության, այդ թվում նաև պետության վերաբերյալ քննական ու քննական-վերլուծական մտքերն ու դատողությունները մեթոդական ուղեցույց պիտի հանդիսանային նոր և նորագույն դարաշրջաններում պետականության ինստիտուտի գաղափարի ու գործիքակազմի հետագա զարգացման, նրա կատարելագործման ու ավելի *ժողովրդավարական* դարձնելու ուղղությամբ:

Պոլիբիոսի պատմահամեմատական գուգահեռներ անցկացնելու փորձերը

Սովորաբար պատմահամեմատական մեթոդը կոչված է համադրելու և համեմատելու մեկից ավելի համանման ու ժամանակագրական առումով համեմատաբար իրար մոտ պատմական համակարգերի նմանությունն ու տարբերությունը, իսկ վերջնարդյունքում՝ բացահայտել պատմական իրականությունն ու ճշմարտությունը, արժևորել դրանք, տալ գիտական գնահատականներ, ցույց տալ դրանց պատմության առաջ-

ընթացի ու զարգացման միտումները և այլն: Անտիկ հեղինակների համար համեմատության օբյեկտ են հանդիսացել, օրինակ՝ հունական պոլիսների, Հռոմի և Կարթագենի համեմատությունը, կամ թե Հույն-պարսկական, Պելոպոնեսյան և Պունիկյան պատերազմների զուգահեռ համեմատություններ և այլն:

Այս հարցի մասին խոսելիս Պոլիբիոսը նախ նշում է, որ գրեթե բոլոր պատմաբանները միանշանակ գովեստով են խոսում Աթենական, Լակեդեմոնյան, Կրետեի, Մաստինեցիաների, Ֆիլյանների, նմանապես Կարթագենի պետական կառուցվածքի արժանիքների մասին: Բայց նա լիարժեքորեն չի կիսում այդ կարծիքը [22, հ. 2, էջ 50]: Այսպես, Աթենական պետության մասին Պոլիբիոսը լավ չի արտահայտվում, քանզի նրա կարծիքով՝ «բոլոր գործերը սեփական կամակորոթյամբ կառավարում է զանգվածը» [22, հ. 2, էջ 52]: Կամ, օրինակ, Լակեդեմոնյան պետության թագավորները, այսպես կոչված՝ ավագները, ցմահ կամ ժառանգական էին, և բոլոր պետական գործերը վարվում էին նրանց մասնակցությամբ կամ գիտությամբ [22, հ. 2, էջ 53]: Իսկ, օրինակ՝ Կրետեի պետությունում մարդկանց առօրյա կյանքում, նրա ներկայացմամբ, մեծ դեր էր կատարում *դրամը*, որն ավելի հաճախ ձեռք էր բերվում շահադիտական նպատակով, և նրա ժողովրդի բարքերում՝ «ոչ մի վաստակ (հարստացում) ամոթ չէր համարվում» [22, տ. 2, էջ 53]:

Եվ այդ իմաստով Հին աշխարհի պետականությունների կառուցվածքային, իրավական և ռազմաքաղաքական գնահատման տեսակետից, իբրև նորույթ, ուշագրավ է, որ Պոլիբիոս պատմաբանն ու փիլիսոփան *պատմահամեմատական զուգահեռներ* է անցկացրել, բացահայտել դրանց առանձնահատկությունները և տվել համապատասխան գնահատական⁴: Այսպես, ինչպես ասվեց, քաղաքական կառուցվածքի արդյունավետության առումով նա համեմատություն է անցկացրել հելլենական, լակեդեմոնյան, սպարտացիների, Կրետեի, Կարթագենի և Հռոմի միջև և *պատմականության* հաշվառմամբ հանգել այն հետևությանը, որ, այնուամենայնիվ, պետական կառուցվածքի, կառավարման սկզբունքների, օրենքների ու սովորույթների կիրառման առումներով նշվածներից լավագույնն ու կենսունակը հռոմեական պետությունն է [22, հ. 2, էջեր 24-50, էջեր 52-55, էջ 58]: Մասնավորապես, իրար դեմ պատերազմող Կարթագենի և Հռոմի միջև համեմատություն անցկացնելիս՝ նա նախապատվությունը տվել է հռոմեական պետական կառուցվածքին: Բացի այդ, եթե Կարթագենը ռազմական առումով հույսը դրել էր *վարձկանների* արիության վրա, ապա հռոմեացիները՝ իրենց սեփական *քաղաքացիների* ու դաշնակիցների վրա [22, հ. 2, էջ 59]:

Ջուտ պատմականության մոտեցում հանդես բերելով՝ Պոլիբիոսը պարզաբանում էր, որ սկզբում Կարթագենի պետությունը ձևավորված էր հրաշալի, նրանք ունեին թագավորներ, ավագների խորհուրդ, արիստոկրատական իշխանություն, իսկ ժողովուրդն էլ օգտվում էր իր իրավունքներից անհրաժեշտ չափով: Սակայն հետագայում հռոմեական պետությունը գերազանցեց Կարթագենին, ապրում էր ծաղկումի շրջանում և, վեր-

⁴ Ուշագրավ է, որ մեր ժամանակներում պրոֆ. Ա. Ստեփանյանը պոլիբիոսական մեթոդով համանման հաջողված զուգահեռներ է անցկացրել հունա-հռոմեական և հայ հին շրջանի մատենագիրների միջև՝ հրապարակ բերելով հոգեմտավոր և գոյաբանական զգալի *ընդհանրություններ* [12]:

ջին հաշվով, ապահովեց Հռոմի ծանր, բայց համոզիչ վերջնական (146 թ. մ. թ. ա.) հաղթանակը [22, հ. 2, էջ 58-59]:

Այս համատեքստում ֆրանսիացի փիլիսոփա, լուսավորիչ Շարլ Լուի Մոնտեսքյոն, Պոլիբիոսի աշխատության օրինակով, Հռոմի վերջնական հաղթանակը նույն կերպ բացատրել է հիմնականում Հռոմի Հանրապետության, նրա օրենքների ու կառավարման համակարգի առավելություններով և դրան հակակշիռ՝ Փյունիկյան պետությունում տեղ գտած թերություններով, կոռուպցիայով և այլն, թեև Կարթագենն ավելի հարուստ էր և օգտագործում էր օտարերկրյա վարձկան զորք, իսկ Հռոմը կռվում էր իր սեփական բանակով [21, էջ 61]:

Պետությունների համեմատության օրինակով՝ Պոլիբիոսը բնական և օրինաչափորեն ընդհանրացնող հետևություններ է անում այն մասին, որ յուրաքանչյուր պետություն ապրում է իր պատմության երեք հիմնական շրջաններ՝ ձևավորման, վերելքի և անկման, ինչպես, օրինակ, բնության մեջ ցանկացած երևույթ ունի իր սկիզբը, զարգացումը և վայրէջքը [22, հ. 2, էջեր 58-59]:

Պոլիբիոսը պատերազմների հարցում նիհիլիստ չէր. Պունիկյան պատերազմները նա հակաիրավական չէր համարում: Դրանց նպատակը, ըստ պատմագրի, *արդարության* հաստատումն էր [19, c. 90]: Սակայն, արդարության հաստատման իմաստով, նա հակված էր պաշտպանելու Հռոմը: Նրա պատկերմամբ՝ Պունիկյան պատերազմի ծագման հիմնական պատճառը Սիցիլիայի վրա իշխելը, ինչպես նաև Միջերկրական առևտրական ուղիներին տիրանալն էր [22, հ. 1, էջ 25 և 9, էջ 332]: Պատերազմի պատճառները բացահայտելու համար նա համեմատական կարգով անդրադարձել է դեռևս Պունիկյան պատերազմներից շատ առաջ Հռոմի ու Կարթագենի միջև կնքված միջպետական մի շարք պայմանագրերի՝ սկսած 509 թ., այնուհետև 481 թ., Քսերքսեսի՝ Հունաստան ներխուժումից առաջ, որից հետո՝ 348 թ. և 280 թ. պայմանագրերին: Հռոմեական պետական արխիվում պահվող այդ պայմանագրերը նա համեմատական քննության է ենթարկել [22, հ. 1, էջեր 265-266, 268, 272, 275]: Սա էլ կարելի է մեթոդական մի ուղեցույց համարել՝ ցույց տալու, թե ինչու և ինչպես պատմաբան-ուսումնասիրողն անպայման պետք է աշխատի արխիվներում, գործ ունենա վավերագրերի հետ:

Հարկ է նշել, որ մի փոքր ավելի ուշ պատմահամեմատական գուգահեռներ անցկացնելու մեթոդն ավելի հանգամանորեն կիրառել է դարձյալ հույն պատմագիր *Պլուտարքոսը* (46-127 թթ) իր հայտնի «Համեմատական կենսագրություններ» կամ «Զուգակշիռք» աշխատությամբ [10]: Սակայն, ինչպես հայտնի է, եթե Պլուտարքոսը համեմատական գուգահեռներ է անցկացրել հույն և հռոմեացի պետական, քաղաքական, զինվորական ճանաչված գործիչների միջև, ապա Պոլիբիոսի համեմատությունն անցկացվել է ոչ թե անհատների ու գործիչների, այլ մի խումբ՝ իր ժամանակաշրջանի և ավելի վաղ պետությունների կառուցվածքի, դրանցում գործող օրենքների, մղվող պատերազմների, անգամ կնքված պայմանագրերի, համանման երևույթների ու իրադարձությունների միջև, իսկ վերջում արված են համապատասխան հետևություններ ու գնահատականներ, ինչը, կարծում ենք, ավելի է բարձրացնում նրա աշխատության արժանիքները՝ մեր կարծիքով, գերազանցելով Պլուտարքոսի աշխատությանը:

Պոլիբիոսը յուրահատուկ զուգահեռ է անցկացնում նաև պետության ղեկավարի և իրական պատմություն գրող անհատների միջև: Նա Պլատոնի արտահայտած մտքի օրինակով նշում էր, որ մարդկության գործերը հաջող կընթանան այն ժամանակ, երբ փիլիսոփան կլինի թագավոր: Նույն կերպ էլ, ըստ նրա՝ «Պատմությունն այն ժամանակ լավ կլինի, երբ պատմական երկերի կազմմանը ձեռնամուխ կլինեն պետական գործիչները» [22, հ. 2, էջ 397]: Պատմություն գրելու հարցում նման կարծիք հայտնելիս՝ նա, հավանաբար, նկատի է ունեցել իրեն: Հայտնի է, որ Պոլիբիոսն իր 82-ամյա տևական կյանքում զբաղեցրել է պետական պաշտոններ, եղել է զորական գործիչ՝ Արքունտ և այլն:

Այս ամենը Հին Հունաստանի և որոշ առումներով նրա շարունակությունն ու զարգացումը հանդիսացող Հին Հռոմի հանրապետական, ժողովրդաիշխանության ընդօրինակելի նմուշներ են, որոնք արդիական են և շատ կողմերով ուսանելի ու կիրառելի են նաև մեր ժամանակներում: Ինչ վերաբերում է հայ պատմագիտական գրականության մեջ քննական ու վերլուծական բնույթ ունեցող աշխատություններին, ապա նման մոտեցումներով զուտ *քննական* բնույթի աշխատության հեղինակ-պատմաբաններից, թերևս, կարելի է մտաբերել Ա. Գարագաշյանին [2], Հ. Մանանդյանին [8], Ն. Ադունցին [1 և 14] և նրանց, որոնց ուսումնասիրությունների վերնագրերն իսկ վկայում են դրանց քննական բնույթի մասին: Մակայն դա ամեննիս չի նշանակում, թե մյուս պատմաբանները և, ընդհանրապես, հայ պատմագիտական միտքը պատմության հանդեպ հանդես չեն բերել քննական ու վերլուծական բավարար մոտեցումներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Պատմության, պետության և հասարակական կյանքի այլ հարցերում Թուկիդիդեսի հանդես բերած քննական մոտեցումները հետագայում պետք է զարգացներ ու նոր որակի հասցներ նրա մտքերի ու գաղափարների ժառանգորդ, հույնականավոր պատմաբան Պոլիբիոսը (մոտ 200-118 թթ. մ. թ. ա.): Վերջինիս «Համընդհանուր պատմություն» աշխատությունները ծառայում են ոչ միայն որպես իրենց դարաշրջանների վերաբերյալ պատմագիտական սկզբնաղբյուր, այլև դրանցում բարձրացված ու քննության առնված հարցերն աչքի են ընկնում պատմական նյութի քննական-վերլուծական ընկալման կարողականությամբ, որոնք և հետագայում տեսական ու մեթոդաբանական առումներով հիմք և ուղեցույց հանդիսացան պատմագրության զարգացման և պատմագիտական միտքը ճշմարիտ ուղու վրա դնելու տեսանկյունից: Ավելին, Պոլիբիոսն առանձնացավ նաև պետականության գաղափարի, կառավարման ձևերի միջև քննական-վերլուծական, պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելով և ավելի խորն ու առարկայական պատմության հանդեպ տեսական-մեթոդաբանական մոտեցումներով ու գնահատականներով: Մասնավորապես՝ Պոլիբիոսի կողմից առաջադրված պետության գաղափարի ու կառավարման ձևերի վերաբերյալ մտքերն ու դատողությունները, պատմահամեմատական զուգահեռների, երևույթների պատճառահետևանքային կապի, պատմականության և այլնի մասին արծարծումները տեսական ու մեթոդաբանական ուղեցույց հանդիսացան պետականության ինստիտուտի հետագա բարեշրջման, նրա կատարելագործման ու ավելի ժողովրդավարական դարձնելու համար:

Գրականություն

1. Աղոնց Ն. «Բնություն Մովսես Կաղանկատվացու»: Էջմիածին: «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ.: 2005: 176 էջ:
2. Գարագաշեան Ա. «Բնական պատմություն հայոց, հ. 1-4: Թիֆլիս, 1880-1895: Թիֆլիսի Հայոց հրատ. ընկ.: Մաս 1՝ 287 էջ, մաս 2՝ 277 էջ, մաս 3՝ 381 էջ, մաս 4՝ 287 էջ:
3. Էնգելս Ֆ. «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» Երևան: Պետհրատ: 1940, 232 էջ:
4. Խորենացի Մ. Հայոց պատմություն» թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան: Հայպետհրատ: 1961:448 էջ:
5. Հակոբյան Ա. «Հայոց պատմություն», Երևան: «Տնտեսագետ» հրատ.: 2022: 446 էջ:
6. Հերոդոտոս «Պատմություն, ինը գրից», թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան: «Գիտություն» հրատ.: 1986: 651 էջ:
7. «Հին Հունաստանի պատմություն», խմբ. Վ. Ավդիև, Երևան: ԵՀ հրատ.: 1982: 584 էջ:
8. Մանանդյան Հ. «Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության» (տե՛ս Երկեր, հ. Ա: Երևան: Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ.: 1977: 653 էջ: Հատ. Բ, Երևան: 1978: 648 էջ: Հատ. Գ, Երևան: 1977: 506 էջ:
9. Մաշկին Ն. «Հին Հռոմի պատմություն», Երևան: ԵՀ հրատ.: 1951: 1001 էջ:
10. Պլուտարքոս «Երկեր», ռուսերենից թարգմ. Հ. Հայրյանը, Երևան: «Հայաստան» հրատ.: 1988: 796 էջ:
11. Ստեփանյան Ա., «Պատմության հետազոտություն», Երևան: «Փրինսիփն» հրատ.: 2014: 496 էջ:
12. Ստեփանյան Ա., «Չուզակչիռ (գաղափար, մեկնություն, հասկացում)», Երևան, ԵՀ հրատ.: 2024:368 էջ:
13. Քսենոփոն «Անարբասի», (մեկնարկներ), թարգ. Ս. Կրկյաշարյանի, Երևան: Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ.: 1970: 282 էջ:
14. "Большая Советская энциклопедия (БСЭ)", Гл. ред. Введенский Б. А., т. 45, 2-ое изд.: М., 1956.
15. Гегель Г. "Энциклопедия философских наук (философия духа)", т. I, М., изд. "Мысль", 1974, 452 с.
16. Дьяков В. "Методология истории в прошлом и настоящем", М., изд. "Мысль", 1974, 190 с.
17. Дройзен И. "Историка. Лекции об энциклопедии и методологии истории", СПб, изд. "Вл. Даль", 2004, 408 с.
18. Мирзаев С. "Полибий", М., "Юрид. лит." 1986, 109 с.
19. Моммзен Т. "История Рима, т. I", М., "Гос. издатель", 1936, 832 с., т. II, М., "Гос. издатель", 1937. 448с.
20. Монтескье Ш. "Изб. произведения", М., "Гос. издатель", 1955. 799 с..
21. Полибий, "Всеобщая история в сорока книгах (перевод с греческого Ф. Г. Мищенко), т. I, кн. I-V, М., изд. А. Кузнецова, 1890,680 с., т. II, кн. VI-XXV, М., 1895, 805 с, т. III, кн. XXVI-XL, М., 1899. 785 с.
22. Соколов А. "История исторической науки. 2-е издание", М., изд. "Юрайт", 2018, 269 с.
23. Фукидид, "История", отв. ред. Я. Боровский, Ленинград, изд. "Наука", 1981, 554 с.
24. <http://www.allbest.ru> և <https://m.facebook.com>>posts (դիտվել է՝ 31.03. 24).

References

1. Adonts N. "Examination of Movses Kaghankatvatsi" [*K'nnut'yun Movses Kaghankatvats'u*], Echmiadzin, "Mary See of Holy Etchmiadzin" Publishing House, 2005, 176 p, (in Armenian)
2. Garagashean A. "Examination of the History of the Armenians" [*K'nnakan patmut'yun hayots*], vol. 1-4, Tbilisi, 1880-1895, Tbilisi Armenian Publishing House, part 1- 287 pages, part 2- 277 pages, part 3 - 381 pages, part 4 - 287 p. (in Armenian)
3. Engels F. "The Origin of the Family, Private Property and the State" [*Yntanik'i, masnavor sep'akanut'yan yev petut'yan tsagumy*], Yerevan, "Pethrat", 1940. 232 p. (in Armenian)
4. Khorenatsi M. "History of the Armenians", transl. St. Malkhasyan, Yerevan, "Haypethrat", 1961, 448 p. (in Armenian)
5. Hakobyan A. "History of Armenia" [*Hayots' patmut'yun*]: Yerevan: "Tntesaget" publishing house, 2022, 446 p. (in Armenian)
6. Herodotos, "History, in nine volumes" [*Patmut'yun: iny grits*], transl. S. Krkyasharyan, Yerevan, Armenian SSR, "Science" publishing house, 1986, 651 p. (in Armenian)

7. "History of Ancient Greece" [*Hin Hunastani patmutyūn*]. ed. V. Avdiev, Yerevan, YU Publishing House, 1982, 584 p. (in Armenian)
8. **Manandyan H.** "Critical Theory of the History of the Armenian People" [*K'nnakan tesut'yun hay zhoghovrdi patmutyan*] // (see Works, vol. A, Yerevan, Hayk. SSR Academy of Sciences Publishing House, 1977, 653 p.; vol. B, Yerevan, 1978, 648 p; vol. C, Yerevan, 1977, 506 p. (in Armenian)
9. **Mashkin N.**, "History of Ancient Rome" [*Hin Hrromi patmut'yun*]. Yerevan, "YU" Publishing House, 1951, 1001 p. (in Armenian)
10. **Plutarcos**, "Works" [*Yerker*], translated from Russian by H. Hayryan, Yerevan, "Hayastan" Publishing House, 1988. 796 p. (in Armenian)
11. **Stepanyan A.** "The Trajectory of History" [*Patmutyan hetagitsy*] Yerevan, "Printinfo", 2014. 496 p. (in Armenian)
12. **Stepanyan A.** "Balance (idea, interpretation, understanding) " [*Zugakshirr (gaghapr, meknutyun, haskatsum)*], Yerevan, YU Publishing House, 2024. 368 p. (in Armenian)
13. **Xenophon**, "Anabasis, (comments) " [*Anabasis, (meknabanutyunner)*], trans. S. Krkyasharyan, Yerevan, ASSR Academy of Sciences Publishing House, 1970, 282 p. (in Armenian)
14. "Great Soviet Encyclopedia (BSE)" [*Bol'shaya Sovetskaya entsiklopediya (BSE)*]. Gl. ed. Vvedensky B. A., vol. 45, 2nd ed., Moscow, 1956, (in Russian)
15. **Hegel' G.** "Encyclopedia of Philosophical Sciences (Philosophy of Spirit)", [*Entsiklopediya filosofskikh nauk (filosofiya dukha)*], vol. I, Moscow, ed. "Mysl", 1974, 452 p. (in Russian)
16. **Dyakonov V.** "Methodology of history in the past and present" [*Metodologiya istorii v proshlom i nastoyashchem*]. Moskva., izd. "Mysl", 1974, 190 p. (in Russian)
17. **Droizen I.** "History. Lectures on the encyclopedia and methodology of history" [*Istoriya. Lektsii po entsiklopedii i metodologii istorii.*], СПб, изд. "Вл. Даль", 2004, 408 с. (in Russian)
18. **Mirzaev S.** "Polibiy" [*Polibiy*]. Moskva, "Yuurid. lit." 1986, 109 p. (in Russian)
19. **Mommzen T.** "History of Rome" [*Istoriya Rima*]. p. I, M., "Gos. to publish", 1936, 832 p., vol. II, M., "Gos. to publish", 1937, (in Russian)
20. **Montesquieu Sh.** "Selected works" [*Produkty*], Moskva. "Gos. izdat", 1955, 799 p. (in Russian)
21. **Polybius.** "General History in Forty Books" [*Polnaya istoriya v soroka knigakh*], m. I, кн. I-V, M., изд. А. Кузнецова, 1890, 680 с., т. II, кн. VI-XXV, M., 1895, 805 с, т. III, кн. XXVI-XL, M., 1899. 785 с. (in Russian)
22. **Sokolov A.** "History of historical science" [*Istoriya istoricheskoy nauki*]. 2nd edition, M., izd. "Urayt", 2018, 269 p. (in Russian)
23. **Thucydides.** "History" [*Istoriya*]. ed. Ya. Borovsky, Leningrad, izd. "Nauka, 1981, 554 p. (in Russian)
24. <http://www.allbest.ru> i <https://m.facebook.com>>posty (data obrashcheniya: 31.03.24)

Ընդունվել է / Received on: **30. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **30. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արարատ Մխիթարի ՀԱԿՈԲՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. huugh՝ ararathakobyan47@gmail.com // orcid.org/0009-0005-8875-5970

Ararat Mkhitar HAKOBYAN: Doctor of Historical Sciences, Professor,
leading Researcher Institute of History of NAS, Yerevan, RA
e-mail. ararathakobyan47@gmail.com // orcid.org/0009-0005-8875-5970

ՀՏԴ՝93.94

DOI: 10.52971/18294316-2025.28.1-23

ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ռուսլան Ա. Ցականյան

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Միջինասորեստանյան ժամանակաշրջանը (Ք.ա. մոտ XV դարի վերջին քառորդ – X դարի 1-ին կես) նոր փուլ է Աշշուրի պետականության զարգացման գործընթացում: Ժամանակաշրջանը կարևոր անցումային փուլ է Հին Ասորեստանի «առևտրային» պետության և Նոր ասորեստանյան տերության միջև: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է սոցիալ-տնտեսական ու վարչա-քաղաքական յուրահատուկ նորամուծություններով և քաղաքական դինամիկայով: Քաղաք-պետությունից տարածքային ու տարածաշրջանային իշխանության անցնելով՝ Աշշուրը ստեղծեց քաղաքական մի կուռ համակարգ, ինչն էլ հետագայում պետք է հանդիսանար Նոր ասորեստանյան տերության (Ք.ա. մոտ 934-607/605 թթ.) քաղաքական հիմքը: Հիմնականում ուշադրության են արժանացել ներքաղաքական այն կարևորագույն գործոնները, որոնք նպաստեցին Ասորեստանի վերափոխմանը քաղաք-պետությունից՝ տարածքային թագավորության: Մեթոդներ և նյութեր. Հնագիտական նյութի, վարչական տեքստերի և համեմատական ուսումնասիրությունների վերլուծության միջոցով այս հետազոտությունը ուսումնասիրում է փոխկապակցված հասարակական, քաղաքական և տնտեսական համակարգերը, որոնք բնութագրում էին Միջին Ասորեստանի հասարակությանը: Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Աղբյուրների ուսումնասիրության ժամանակ կիրառվել է այդ մեթոդի համադրման և հակադրման սկզբունքը: Վերլուծություն. Վերհանված և բնութագրված են պետական կառավարման մարմինների ձևավորման և զարգացման եղանակները, ինչպես նաև Աշշուր պետության կառավարման համակարգը: Արդյունքներ. Միջինասորեստանյան ժամանակաշրջանում Աշշուրը ականատես եղավ վարչաքաղաքական նորամուծություններով, ավանդական նորմերի իրավական բնութագրմամբ հասարակական-տնտեսական վերափոխված ինստիտուտ-

ների առաջացմանը: Հենց այս փոփոխություններն էին, որ հետագա դարերի ընթացքում պետք է դառնային ասորեստանյան քաղաքակրթության կարևորագույն բնութագրիչը, ինչպես նաև՝ նրա հանրության առանձնահատուկ հիմքը:

Բանալի բառեր՝ Աշշուր, Ասորեստան, արքա, վարչական համակարգ, հասարակական և տնտեսական, նահանգ, նահանգային համակարգ, քաղաքական վերահսկողություն:

Ինչպես հղել՝ Ցականյան Ռ. Միջինասորեստանյան պետության վարչաքաղաքական և տնտեսական կառավարման համակարգերը // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1 (28): 23-34 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-23

THE ADMINISTRATIVE AND ECONOMIC GOVERNMENT SYSTEMS OF THE MIDDLE ASSYRIAN STATE

Ruslan A. Tsakanyan

The Institute of Oriental Studies of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The Middle Assyrian Period (approximately the last quarter of the XV century BC - the first half of the X century BC) is a new stage in the development of the Assyrian State. The period is an important transitional stage between the "merchant" state of Old Assyria and the Neo-Assyrian Empire. This period is characterized by unique socio-economic and administrative-political innovations and political dynamics. By moving from a City-State to a Territorial and Regional Power, Aššur created a solid political system, which would later serve as the political foundation of the Neo-Assyrian Empire (c. 934-607/605 BC). The main attention has been paid to the most important domestic political factors that contributed to the Transformation of Assyria from a City-state to a Territorial Kingdom. **Methods and materials:** Through the analysis of archaeological material, administrative texts, and comparative studies, this research examines the interconnected social, political, and economic systems that characterized Middle Assyrian society. The historical-comparative research method was used in the work. The principle of comparison and contrast of this method was used when studying the sources. **Analysis:** The methods of formation and development of governing bodies in the early stages of statehood, as well as the system of governance of the Assyrian state, are revealed and characterized. **Results:** During the Middle Assyrian period, Aššur witnessed administrative and political innovations, the legal characterization of traditional norms, and the emergence of transformed socio-economic institutions. It was these changes that were to become the most important characteristic of Assyrian civilization in later centuries, as well as the distinctive basis of its society.

Key words: *Aššur, Assyria, City-State, King, Administrative System, Social and Economic Systems, Provincial System, Political Control.*

Citation: Tsakanyan R. *The Administrative and Economic Government Systems of the Middle Assyrian State* // "Scientific Works" of SCAS NAS of RA. Gyumri. 2025. V. 1(28). 23-34 pp.

DOI: 10.52971/18294316-2025.28.1-23

ՆԱԽԱԲԱՆ. Միջինասորեստանյան ժամանակաշրջանում (Ք.ա. մոտ 1416-935թթ.¹) Աշշուրը ականատես եղավ Միջագետքի քաղաքական լանդշաֆտի զգալի վերափոխմանը: Այն բնութագրվեց Աշշուրի գլխավորությամբ ասորեստանցիների՝ որպես պետական հիմնական ուժի, համախմբմամբ և պետության տարածքի աստիճանական ընդարձակմամբ, քաղաք-պետությունից վերածվելով կենտրոնացված տարածքային ապա տարածաշրջանային պետության: Այդ ուժերի համախմբումը հիմնված էր արքայական իշխանության, վարչական կառուցվածքի և հասարակական ու տնտեսական գործոնների բարդ փոխազդեցությամբ: Ժամանակաշրջանի ներքին գործընթացների դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն մեխանիզմները, որոնց միջոցով Աշշուրի արքաներն աստիճանաբար ընդլայնվող իրենց տիրույթներում փորձում էին հասարակության կայունության, այլ համայնքների ինտեգրման և վերահսկման միջոցով բարելավել հզորացող երկրի հասարակական ու տնտեսական մարտահրավերները: Այս ժամանակահատվածում սկսում է ընդգծվել պետության ներքին քաղաքականության միջաբառնաձևափոխություններ՝ արքայի դերի ու նրա հոգևոր ընկալումների աստիճանական վերելքը, նահանգային կառավարման համակարգի զարգացումը և այս ու այլ գործոնների ազդեցությունը հասարակական կարգի վրա:

1. Պատմական հետնախորքը և աղբյուրները

Ասորեստանի պատմության Միջինասորեստանյան ժամանակաշրջանն իր հիմքերը դրեց Աշշուր-բել-նիշեշուի (Ք.ա. մոտ 1416-1408թթ.) կառավարման ժամանակահատվածում: Երբ վերականգնվեցին միտաննացիների կողմից ավերված Աշշուր քաղաքի պաշտպանական պարիսպները և Կասսիտական Բաբելոնիայի հետ կարգավորեցին միջպետական հարաբերությունները [2, էջ 16; 1, էջեր 20-21]: Աշշուր-ուբալլիտ I-ի (Ք.ա. մոտ 1362-1327թթ.) կառավարման ընթացքում Աշշուրը ոչ միայն դուրս եկավ իր սահմաններից և անցավ հարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերի [10, p. 61ff.; 34, 725ff.; 1, էջ 22; 18, p. 9f; 13, p. 40ff.]՝ Աշշուր-ուբալլիտ I-ի հաջորդների, և մասնավորապես՝ Ադադ-նիրարի I (Ք.ա. մոտ 1304-1273թթ.), Շուլմանու-աշարեդ (Սալմանասար) I (Ք.ա. մոտ 1272-1243թթ.) և Թուկուլտի-Նինուրտա I (մ.թ.ա. մոտ 1242-1206թթ.) կառավարման ժամանակաշրջանում հասնելով իր հզորության գագաթնակետին [22, p. 592; 17, p. 38ff.]:

Միջինասորեստանյան ժամանակաշրջանի վարչաքաղաքական, հասարակական և տնտեսական համակարգերի մասին մեր հիմնական տեղեկությունները քաղում ենք Աշշուրի, Կար-Թուկուլտի-Նինուրտայի, Շիրանիբայի, Թէլ Ռիմախի, Դուր-Կուտլիմնուի, Թէլ Խուրեայի, Թէլ Սաբի Աբյադի և այլ հնավայրերից հայտնաբերված բազմաթիվ վարչական, տնտեսական ու մասնավոր սեպագիր տեքստերից: Թեմայի առումով մասնավորապես հիշատակելի են.

ա) պալատական կառավարմանը վերաբերող վարչական նյութեր՝ Աշշուրի «M 7» (Մին-Շամաշի և Իշտարի տաճարների միջև) [32; 33; 11; 31, pp. 147-176; 28, 81ff.; 27, pp. 68-81] և Կար-Թուկուլտի-Նինուրտայի պեղավայրերից [6],

¹ Թվագրումների համար մանրամասն տե՛ս [2]:

բ) նահանգային տնտեսական վարչարարությանը վերաբերող նյութեր՝ Դուր-Կուտլիմնույից [20; 31, pp. 298-326; 5; 28, p. 94ff.],

գ) գյուղատնտեսության և գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ անգնահատելի տեղեկություններ է հաղորդում Թել Սաբի Աբյադի հնագիտական արխիվը [24, pp. 89-126; 39, pp. 171-232; 28, p. 100ff.],

դ) Միջինասորեստանյան օրենքները, որոնք ուրվագծում են հասարակական ու տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը [3, էջեր 230-263]:

2. Արքան և պալատական վարչակազմը

2.1.1. Արքայական իշխանությունը, գաղափարախոսությունը և տիտղոսների էվոլյուցիան

Միջինասորեստանյան պետության գլուխ կանգնած էր աշխարհիկ և հոգևոր իշխանությամբ օժտված արքան՝ «*šar māt Aššur*» : Այս ժամանակաշրջանում նկատվում էր արքայական իշխանության կենտրոնացման միտումը: Վերջինիս նպաստեց բյուրոկրատական ապարատի զարգացումը և ստանդարտացված վարչական պրակտիկայի ներդրումը:

Աշշուրի տիրակալները նախապես կրում էին *išši'akkum*՝ «*Աշշուրի* (աստծո - Ռ.Ց.) *փոխանորդ, տեղապահ*»՝ «*išši' ak Aššur.KI*» [2, էջ 7; 9, pp. 21-22, p. 24ff.; 16, p. 144f.] տիտղոսը: Արքայական իշխանությունը գաղափարաբանական և կրոնական նկատառումներից ելնելով՝ աստիճանաբար անցում կատարեց առավել համապատասխան մակդիրների՝ «*šar māt Aššur*», «*šarru rabū*» (*վեժ արքա*) և «*šarru dannu*» (*ուժեղ արքա*), և այլ [37; 36; 35]: Օր-օրի հզորացող Աշշուրի պետության համար այս փոփոխությունները արտացոլում էին իշխանության աճող կենտրոնացումը և արքայական գերակայության հաստատումը: Այն, որ արքայական տիտղոսների ու մակդիրների կիրառումը հանդես է եկել որպես քաղաքական իշխանությունը հավաստող գործիք՝ անժխտելի է: Աշշուրի արքաները և մասնավորապես՝ Թուկուլտի-Նինուրտա I-ը (Ք.ա. մոտ 1242-1206 թթ.), օգտագործում էին այնպիսի մակդիրներով տիտղոսներ, որոնք ընդգծում էին նրանց հսկայական տարածքային վերահսկողությունը՝ արտացոլելով ժամանակաշրջանի նվաճողական քաղաքականությունն ու նրա արդյունքները [16, p. 143f.; 37]:

2.1.2. Արքայի հոգևոր իշխանությունը

Աշշուրի արքան կենտրոնական դեր է խաղացել կրոնական գաղափարախոսության ոլորտում՝ հանդես գալով որպես Աշշուր աստծո տեղապահ և, ըստ երևույթին, որպես Աշշուրի գլխավոր քուրմ՝ *šangū* [26, pp. 195-224; 2, էջ 7; 28, p. 202ff.]: Ասորեստանի արքայի կողմից «*šangū*» տիտղոսն օգտագործելու հայտնի ամենավաղ վկայությունը գալիս է Ադադ-նիրարի I-ի արձանագրությունից՝ «18. *šangū šīru ša Enlil* ... 19. *šāknī Enlil iššaku Aššur*»՝ «18. *Էնլիլի վեհագույն քուրմ ... 19. Էնլիլի տեղապահը, նշանակված Աշշուրի կողմից*» [13, A.0.76.1; A.0.76.14:1-3; 15:1-4; 17:1-3; 16, p. 143] Աստծո և արքայի միջև կապը ապահովում էր արքայական իշխանության օրինականության ամենակարևոր աղբյուրը: Արքայի կրոնական պարտականությունները, ներառյալ տաճարների կառուցումն ու վերջիններիս ընծաների մատուցումը՝ աստիճանաբար ամրապնդում էին աստվածների և աշշուրցիների միջև նրանց միջնորդ դերը [26; 16, p. 144f.]: Արքան խորապես միահյուսված էր կրոնական հաստատությունների ու հավատալիքների հետ: Աշշուրը

աստվածային օրինականությունն էր ապահովում արքայական իշխանության համար, իսկ արքան ծառայում էր որպես Աշշուր սատոն երկրային ներկայացուցիչ [29, p. 219ff.]:

Վարչական տեքստերը և արքայական արձանագրությունները բացահայտում են պետական նշանակալի ներդրումները տաճարաշինության և ծիսական գործունեության մեջ: Տաճարները գործում էին ոչ միայն որպես կրոնական կենտրոններ, այլ նաև որպես տնտեսական հաստատություններ, որոնք մասնակցում էին գյուղատնտեսական արտադրությանը, արհեստագործական մասնագիտացմանը և առևտրային ցանցերին՝ հետագայում ինտեգրելով կրոնական և քաղաքական իշխանությունը [21, p. 82ff.]: Արքայի մասնակցությունը կրոնական ծեսերին ամրապնդեց նրա դիրքերը ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր հիերարխիայի գագաթնակետում: Տեքստերը փաստում են արքայական մասնակցությունը հիմնական կրոնական տոներին, մասնավորապես **akitu** (ամանորյա) փառատոնին, որը վերահաստատում էր տիեզերական կարգը՝ կենտրոնում ունենալով արքային [29, p. 416ff.]: Մոնումենտալ տաճարների և պալատների կառուցումը ծառայում էր ինչպես գործնական վարչական գործառնություններին, այնպես էլ գաղափարական նպատակներին՝ ֆիզիկապես դրսևորելով աստվածային և արքայական իշխանության սերտաձուլումը: Աշշուրի և Կար-Թուկուլտի-Նինուրտայի հնագիտական արտեֆակտները ցույց են տալիս ուժի այս ճարտարապետական արտահայտություններին հատկացված զգալի ռեսուրսները [25]:

Աշշուրի միապետը զգալի իշխանություն էր իրականացնում՝ հանդես գալով որպես գերագույն դատավոր (**daʾānu**), գորքերի գերագույն հրամանատար (**turtānu**) և վարչարար: Այդ ժամանակաշրջանի արքայական արձանագրություններում ընդգծված է թագավորի դերը արդարություն սերմանելու և տարածելու, ռազմարշավներ իրականացնելու և շինարարական նախագծերը վերահսկելու գործում [13, A.0.78]: Այնուամենայնիվ, գործնականում կառավարումը պահանջում էր էական բյուրոկրատական ապարատի անհրաժեշտություն:

2.2. Վարչաքաղաքական կառուցվածքն ու կառավարումը

2.2.1. Պալատական վարչությունները

Աշշուրի տարածքային ընդլայմանը զուգընթաց՝ նորանվաճ տարածքներում ձևավորվող նոր նահանգների արդյունավետ կառավարման անհրաժեշտություն էր առաջանում: Նվաճված նահանգների նկատմամբ իրականացվող վերահսկողության աստիճանը տարբերվում էր. որոշ շրջաններ պահպանեցին նախկինում գոյություն ունեցող տեղական կառույցների տարրեր, ինչը որոշակի պրագմատիկ կառավարման ցուցիչ է հանդիսանում [4; 22]:

Երկիրը ղեկավարվում էր արքայական պալատից (**ekallu**), որտեղ գտնվում էին նաև աշշուրական ազնվականներից կազմված գործադիր և խորհրդակցական մարմինները: Նույն **ekallu** եզրույթը կիրառելի էր նաև ցանկացած նահանգային վարչական կենտրոնի համար [19]: Պալատական վարչակազմում նվազեցված էր արքայի կնոջ՝ թագուհու՝ «**aššat šarre**»-ի կամ պալատի ցանկացած կնոջ՝ **sinniltu ša ekalle**՝ դերը [16, p. 148]:

Պալատի վարչակազմում ամենաբարձրաստիճան պաշտոնյան էր **sukkallu rabū**-ն (*մեծ վեզիր*) [34, pp. 753, 765; 15, p. 55ff.; 31, p. 203], որը հաճախ կրում էր «**sukkallu rabū ša**

māt Aššur» (*Աշշուրի երկրի մեծ վեզիր*) տիտղոսը, որի ենթակայության տակ գործում էր նաև **sukkallu šanû**-ն (երկրորդ կարգի վեզիր) [15, p. 55]: Այս պաշտոնը երբեմն զբաղեցնում էին արքայական ընտանիքի անդամները [15, p. 55ff., 64; 31, p. 203; 6, pp. 210-222]: Պալատական վարչակազմի մյուս հիմնական պաշտոնյաներն էին՝

ա) **rab ekalle** (հաճախ նաև՝ **ša muḫḫi ekalle** կամ **ukil ekalle** – արքունի գլխավոր ծառայապետը, պալատական վարչության համակարգողը) [16, p. 148 հմմտ.՝ 15, p. 74ff.],

բ) **masennu rabû** (գլխավոր գանձապահ, գլխավոր տնտես)՝ վերահսկում էր երկրի գանձարանը, տնտեսական ռեսուրսները, հարկերի ու տուրքերի հավաքագրումը [15, p. 94ff.; 31, p. 203],

գ) **rab šāqē** (գլխավոր մատովակ)՝ չնայած պաշտոնի արտաքինապես կենցաղային բնույթին ու ենթատեքստերին՝ այն գործում էր որպես Բարձրաստիճան զինվորական և վարչական պաշտոնյա [15, p. 92ff.],

դ) **ša reš šarre** կամ **rab ša reši** (արքայի ներքինապետ կամ գլխավոր ներքինապետ)՝ Միջինասորեստանյան ժամանակահատվածում պաշտոնի կիրառման վերաբերյալ Ս. Յակոբը նշում է, որ այնպես ինչպես **rab ša reši**, այնպես էլ **manzaz pāni** պաշտոնների գործառույթների վերաբերյալ դեռևս չկա միանշանակ կարծիք [16, p. 148; հմմտ. 15, pp. 82-92],

ե) **nāgir ekalle** (պալատական մունետիկ)՝ լայն լիազորություններով օժտված մունետիկները ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում պետական ապարատի բուրգում և բանակում [16, p. 148; 15, pp. 67-72],

զ) **bēl pāhete** (նահանգապետ)՝ նահանգային մակարդակով ամենաբարձրաստիճան պաշտոնյան է: Որպես **pāhutu** միավորի վարչական ղեկավար՝ նա իր լիազորությունների շրջանակներում գործում էր համեմատաբար անկախ, սակայն պատասխանատու էր պալատական վարչության, մասնավորապես՝ **sukkallu rabû**-ին և գտնվում էր նրա անմիջական ենթակայության ներքո: Նահանգապետերին իրավասու էին թագի անունից հրահանգներ տալ նաև արքայական ներկայացուցիչները՝ **qēpūtu** [15, p. 148; 31, p. 375f.; 14, pp. 111-131],

է) **rab zāriqē** (պալատի գլխավոր վերակացու, հսկիչ) [15, p. 148; 17, pp. 78-82],

ը) **tupšar šarre** կամ **rab tupšarre** (արքայական գրագիր կամ գլխավոր գրագիր), որը ղեկավարել և համակարգել է բյուրոկրատական գործունեության համար անհրաժեշտ բոլոր հրամանները, զեկուցագրերն ու կարգադրությունները [15, pp. 235-261]:

Խիստ կարևոր էին նաև **šakin mātē** կամ **šakin māt Aššur** (երկրի, Աշշուր երկրի կառավարիչ) [23, p. 88ff.], և մի շարք այլ պաշտոնյաներ, որոնց մասին ստորև:

2.2.2. Նահանգային կառավարումը

Ինչպես արդեն վերը նշվեց՝ Միջինասորեստանյան ժամանակաշրջանում ի հայտ եկավ նահանգային բարդ համակարգը, ըստ որի՝ նվաճված տարածքները բաժանվեցին մանր ու միջին վարչական միավորների: Վերջիններս ղեկավարվում էին արքունիքի նշանակած կառավարիչների կողմից: Նահանգային այս համակարգը ներառում էր և՛ աշշուրական կենտրոնը (**māt Aššur**), և՛ նվաճված տարածքները, թեև վարչարարական գործառույթները տարբերվում էին կենտրոնական և ծայրամասային շրջանների միջև [30, p. 252ff.]: Նահանգների կառավարիչները (**bēl pāhete** կամ **šaknu**) իրենց նշանակված

տարածքներում ծառայում էին որպես արքայական ներկայացուցիչներ: Փաստացի, նոր քաղաքականության տարբերակիչ առանձնահատկությունը նահանգային կառավարման համակարգված զարգացումն էր: Նշանակված պաշտոնյաների կողմից կառավարվող նահանգների ստեղծումը սահմանեց թագավորական անմիջական վերահսկողություն նվաճված տարածքների վրա [30, p. 252ff.]: Վարչական այս նորամուծությունը տարբերվում էր ավելի վաղմիջագետքյան մոտեցումներից նրանով, որ այն ուղղակիորեն ինտեգրում էր նվաճված տարածքները աշտուրական պետության կառուցվածքին, այլ ոչ թե պարզապես անուղղակի կառավարման միջոցով տուրք կորզում [22]:

Իրենց վստահված տարածքներում **bēl pāhete**-ները պատասխանատու էին և իրականացնում էին.

- ա) կարգի և անվտանգության պահպանում,
- բ) հարկերի և տուրքերի հավաքագրում,
- գ) պետական նախագծերի համար աշխատանքի կազմակերպում,
- դ) արքայական հրահանգների իրականացում,
- ե) դատական գործառույթների իրականացում իրենց վստահված նահանգներում:

2.2.3. Վարչական շրջանները

Ժամանակի ընթացքում, ռազմաքաղաքական նկատառումներից և անվտանգության պահպանումից ելնելով, նահանգային իշխանության վերահսկողության ներքո նահանգները բաժանվեցին ավելի փոքր վարչական շրջանների (**ḫalṣu**): Այս շրջանները վերահսկվում էին շրջանի ղեկավարների (**rab ḫalṣi**) կողմից և գտնվում էին **bēl pāhete**-ների անմիջական վերահսկողության տակ [23, p. 88 ff.; 15, p. 166-169]: Նահանգներն ավելի փոքր վարչաքաղաքական շրջանների վերածելն ու նշանակովի պաշտոնյաների կառավարման հանձնելը, իհարկե, նահանգապետերի անմիջական ենթակայության տակ, նպաստեցին առավել արդյունավետ ու անմիջական կառավարմանը, գյուղատնտեսական շրջաններում ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանն ու հավաքագրմանը [39] և այլն: Իհարկե պետք չէ նաև բացառել, որ շատ հաճախ հնարավոր է, որ **rab ḫalṣi**-ի միջոցով արքան փորձեր վերահսկել և հարկ եղած դեպքում արդյունավետ գործել **bēl pāhete**-ների ցանկացած հակապետական միջոցառման դեմ:

Հնագիտական և տեքստային վկայությունները Միջին Ասորեստանի տարածքային համայնքում բացահայտում են հիերարխիկ կառուցվածք.

ա) Կենտրոնական բնակավայր (**ālū dannu** - «ուժեղ քաղաք»)՝ հիմնական վարչական կենտրոնը, որը սովորաբար ընդգրկում էր հասարակական շենքեր, պահեստային տարածքներ և երբեմն՝ պաշտպանական կառույցներ:

բ) Դուստր բնակավայրեր (**kapru** կամ **dimtu**)՝ համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական փոքր համայնքներ:

գ) Համայնքային ժողով (**puḫru**)՝ Խորհուրդ, որը բաղկացած է տնային տնտեսությունների ղեկավարներից կամ հիմնադիր բնակավայրերի ներկայացուցիչներից:

դ) Ղեկավարներ (**rab ālāni** - «քաղաքների/բնակավայրերի ղեկավար»)՝ վարչական պաշտոնյաներ, որոնք միջնորդներ են եղել համայնքային և կենտրոնական իշխանության միջև:

2.2.4. Բանակը որպես տարածքային վերահսկողություն գործիք

Միջինասորեստանյան բանակը ծառայում էր ն՛ որպես նվաճող ուժ, ն՛ որպես տարածքային վերահսկողության գործիք: Ադադ-Նիրարի I-ի կառավարման շրջանից մինչև Թուկուլտի-Նինուրտա I-ը աշշուրական արքաների ռազմարշավների արդյունքում Աշշուրի տարածքը զգալիորեն ընդլայնվեց, և, բնականաբար, պետք էին արդյունավետ գործիքներ այդ տարածքները կառավարելու համար: Իսկ նման արդյունավետ գործիք կարող էր առաջին հերթին լինել բանակը: Բանակը, ամենայն հավանականությամբ, դեկավարում էր *ta/urtānu rabi'u*-ն (գլխավոր հրամանատար, դաշտային հրամանատար) կամ արքան [16, p. 152f.; 15, p. 191ff.]: Ջինվորական հիերարխիան սերտորեն ինտեգրված էր վարչական համակարգին: Նահանգների կառավարիչները դեկավարում էին տեղական ուժերը, մինչդեռ մասնագիտացված զինվորական պաշտոնյաները (*kisir šarri* կամ «արքայական գունդ/ստորաբաժանում») պահպանում էին արքայական իշխանությունը ռազմավարական վայրերում [15, p.191ff.]: Ս. Յակոբը ակնհայտ է համարում, որ Միջինասորեստանյան ժամանակաշրջանում բացի *kisir šarri*-ից մշտական բանակ չի եղել [16, p. 152]:

Նվաճված տարածքների նկատմամբ վերահսկողություն պահպանելու համար կիրառվել է մի շարք միջոցառումներ՝

ա) Ռազմավարական բնակավայրերի ստեղծում: Նվաճված տարածքներում գաղութների և վարչական կենտրոնների ստեղծումն ապահովում էր անմիջական վերահսկողություն [19]:

բ) Զանգվածային տեղահանության և վերաբնակեցման քաղաքականության կիրառում: Միջինասորեստանյան արքաները նախաձեռնեցին նվաճված բնակչության զանգվածային տեղահանության և վերաբնակեցման քաղաքականության պրակտիկան: Այս քաղաքականությունը, որը կրնդ լայնվի Նորասորեստանյան ժամանակաշրջանում, խաթարեց նվաճված բնակչության հավանական դիմադրությունը և աշխատուժ ապահովեց գյուղատնտեսական և շինարարական նախագծերի համար [38]:

գ) Ենթակառուցվածքի զարգացում. արքայական արձանագրությունները փաստում են ճանապարհների, ամրությունների և վարչական շենքերի կառուցումը, որոնք հեշտացնում էին գորքերի հաղորդակցությունն ու տեղաշարժը ողջ տարածքում:

դ) Գաղափարախոսական հսկողություն. արքայական արձանագրություններն ու հուշարձանները վկայում են աշշուրական ռազմական ուժի ու աստվածային իշխանության օգտագործումը որպես գերիշխանության տեսանելի վկայություն նվաճված տարածքներում: Նման տարածքներում ծիսական ներկայացումների և ճարտարապետական արտահայտությունների միջոցով արքայական կրոնական քարոզչությունը ամրապնդեց արքայի քաղաքական հեղինակությունը [29, pp. 28, 417]:

3. Տնտեսական կառավարումը

3.1. Ռեսուրսների արդյունահանում

Ռազմական արշավները վճռորոշ դեր խաղացին Միջին Ասորեստանի տնտեսական և քաղաքական կյանքում: Նվաճումների միջոցով ռեսուրսների ձեռքբերումը նպաս-

տեց պետության հարստությանը և ապահովեց հզոր բանակ պահելու միջոցներ²: Մշակվել էին տարածքներից ռեսուրսներ հանելու բարդ համակարգեր: Վարչական տեքստերը ներկայացնում են հարկման մի շարք ձևեր.

ա) Գյուղատնտեսական արտադրություն. Գյուղատնտեսական հարկերը կազմում էին պետության տնտեսական ողնաշարը: Նահանգային կենտրոնների գրառումները փաստում են հացահատիկի, ձեթի և այլ գյուղատնտեսական ապրանքների հավաքագրումն ու վերաբաշխումը [30, p. 259]:

բ) Աշխատանքային ծառայություն. Համակարգը ենթականերից պահանջում էր պետական նախագծերի կամ զինվորական ծառայության հետ կապված աշխատանք [5, S. 25]:

գ) Հարկ և տուրք. Նվաճված տարածքները հարկվում էին հաճախ թանկարժեք մետաղների, փայտանյութի, ձիերի կամ մասնագիտացված ապրանքների տեսքով: Արքայական արձանագրությունները հաճախ թվարկում են տուրքի վճարումները՝ որպես քաղաքական հնազանդության դրսևորում [13]:

Միջինասորեստանյան պետությունը համակարգված հողի կառավարման քաղաքականություն էր իրականացնում, որը բարձրացնում էր գյուղատնտեսության արտադրողականությունը՝ միաժամանակ ուժեղացնելով պետական վերահսկողությունը: Վարչական տեքստերը փաստում են հողերի մի քանի կատեգորիաներ.

ա) արքունական հող. ուղղակիորեն վերահսկվում է պալատի կողմից և աշխատում է պարտադիր աշխատանքի կամ վարձակալության պայմանագրերի միջոցով,

բ) տաճարային հող՝ նվիրված կրոնական հաստատություններին, տնտեսություններին աջակցելուն,

գ) սպասարկման հողատարածք. հատկացվում է պաշտոնյաներին և պետական ծառայողներին՝ պետությանը սպասարկելու դիմաց,

դ) համայնքային հող. կառավարվում էր տեղական համայնքների կողմից, բայց ենթակա էր հարկման:

«Ծառայողական հողի» (**ilku**) հատկացումը պաշտոնյաներին և զինվորներին ստեղծեց պետական ապարատից կախյալների դաս, որոնց տնտեսական բարեկեցությունը հիմնված էր շարունակական ծառայության և թագի նկատմամբ հավատարմության վրա [31, pp. 159, 260, 268, 339]: Այս համակարգը, որը հաստատված է Դուր-Կուտլիմուի և այլ նահանգային կենտրոնների տեքստերում, թույլ էր տալիս պետությանը պարզևստրեղ ծառայության դիմաց՝ չսպառելով զանձապետական ռեսուրսները, միաժամանակ պահպանելով հողի բաշխման վերահսկողությունը:

3.2. Հողի կառավարում

Պալատի կողմից կառավարվող գյուղատնտեսական հողերի մի քանի կատեգորիաներ գոյություն ունեին.

ա) **šibtu**-հողը հատկացվում էր պաշտոնյաներին և կախյալ անձանց՝ որպես ծառայության դիմաց փոխհատուցում,

բ) **pilku**-աշխատանքային ընդհանուր պարտականությունների դիմաց հատկացվող հող,

² Gaspa S. 2020, The Assyrian King as a Warrior: Legitimacy through War as a Religious and Political Issue from Middle Assyrian to Neo-Assyrian Times, 113-155

զ) **šibšu** - պալատի նկատմամբ հարկային պարտավորությունների վճարման ենթակա հող:

Նոր նվաճված տարածքներում, արքայի կողմից նշանակված կառավարիչներն անմիջական վերահսկողություն էին իրականացնում զգալի գյուղատնտեսական կալվածքների վրա, որտեղ հողերը հաճախ վերակազմավորվում էին և ընդգրկվում արքայապատկան հողատիրության ցանկում: Թէլ Սաբի Աբյադի փաստաթղթերը ցույց են տալիս, որ պալատական կառավարիչները մանրամասն գրառումներ են կատարել հողի արտադրողականության, բերքատվության և աշխատուժի հատկացումների վերաբերյալ [39]:

Համայնքային հողերն էլ իրենց հերթին կառավարվում և բաշխվում էին՝

ա) համայնքային հողերի (**qaqquaru ša ālāni** - «բնակավայրերի հող»)․ կոլեկտիվ կառավարվող հողեր, որոնք սովորաբար ներառում են արոտավայրեր և չմշակվող տարածքներ [տեւ և հմմտ.՝ 40, 24ff., 42ff.],

բ) հատկացված հողերի (**zittu** - «բաշխել, կիսել»)․ համայնքի անդամներին մշակման համար հատկացված տարածքներ,

գ) թագապատկան հողերի (**qaqquaru ša šarri** - «արքայի հող»)․ համայնքի անդամները հաճախ աշխատում էին արքայական կալվածքներում՝ կատարելով ծառայողական պարտականություններ [տեւ և հմմտ.՝ 5, S. 100; 40, 24ff., 42ff.]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ․ Միջինասորեստանյան ժամանակաշրջանում պետական ներքին քաղաքականությունը բնութագրվում էր արքայական իշխանության, վարչական նորարարության և սոցիալ-տնտեսական գործոնների դինամիկ փոխազդեցությամբ: Այս ժամանակաշրջանի արքաները հմտորեն ամրապնդեցին իրենց իշխանությունը, ընդլայնեցին իրենց տարածքները և հաստատեցին քաղաքական համակարգ, որը մնայուն ժառանգություն թողեց Հին Մերձավոր Արևելքում:

Քաղաքական, կրոնական և տնտեսական ինստիտուտների փոխկախվածությունը ստեղծեց կայուն պետական կառույց, որը հիմք դարձավ հետագա Նորասորեստանյան կայսրության համար:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ցականյան Ռ**․ *Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ* // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ: 2018, № XXXI, 19-33 էջեր:
2. **Ցականյան Ռ**․ *Աշշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերս* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26), 5-22 էջեր:
3. **Ցականյան Ռ**․ *Աշշուրուհին ըստ միջինասորեստանյան օրենքների* // «Կին Արևելքում», № 2, 2023, 230-264 էջեր:
4. **Brown B**․ *The Structure and Decline of the Middle Assyrian State: The Role of Autonomous and Nonstate Actors* // Journal of Cuneiform Studies, № 65, 2013, 97-126 pp..
5. **Cancik-Kirschbaum E**․ *Die mittelassyrischen Briefe aus Tall Šēh Ḥamad*. vol. 4; texts, 1. Berlin: Dietrich Reimer Verlag, 1996. x1 + 245 pp., 46 plates.
6. **Cancik-Kirschbaum E**․ *Nebenlinien des assyrischen Königshauses in der 2. Hälfte des 2. Jts. v. Chr.* // Altorientalische Forschungen, № 26, 1999, 210-222ss..
7. **Eickhoff T**․ *Kār Tukulti-Ninurta. Eine mittelassyrische Kult- und Residenzstadt*, Abhandlungen der Deutschen Orientgesellschaft 21. Berlin: MANN, 1985. XVIII+98 p.
8. **Faist B**․ *Kingship and Institutional Development in the Middle Assyrian Period* // G.B. Lanfranchi and R.Rollinger (eds.), *Concepts of Kingship in Antiquity*, Padova: S.A.R.G.O.N., 2010, 15–24 pp..

9. **Fink S., Sazonov V.** *The 12th Century Collapse and Assyria Turning Point or “Usual Crisis”* // Responses to the 12th Century BC Collapse: Recovery and Restructuration in the Early Iron Age Near East and Mediterranean: Proceedings of the 9th Melammu Workshop, Tartu, 7–9 June 2019, Edited by Mait Kõiv and Raz Kletter, Melammu Workshops and Monographs 10, 2024, 19–46 pp..
10. **Frahm E.** *Assyria: The Rise and Fall of the World’s First Empire*. New York. 2023. 528 p..
11. **Freydank H.** *Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte* (MARV, I), VS NF III (XIX), Akademie Verlag, Berlin, 1976, 68 p.
12. **Gaspa S.** 2020, *The Assyrian King as a Warrior: Legitimacy through War as a Religious and Political Issue from Middle Assyrian to Neo-Assyrian Times* // Societies at War, Melammu Symposia 10, ed. by R. Rollinger und S. Ponchia, Österreichischen Akademie der Wissenschaften, 2020, 113–155 pp..
13. **Grayson A.** *The Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC)*, The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. I, Toronto-Buffalo-London. 1987. XXII–355 p.
14. **Harrak A.** *Assyria and Hanigalbat: A Historical Reconstruction of Bilateral Relations from the Middle of the Fourteenth to the End of the Twelfth Centuries B.C.*, Texte und Studien zur Orientalistik. G. Olms Verlag, 1987, 315p.
15. **Jakob S.** *Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen*. Leiden: Brill. 2003, 587 p..
16. **Jakob S.** *Economy, Society, and Daily Life in the Middle Assyrian Period* // In Frahm, E. (ed.), *A Companion to Assyria*. Malden, MA: Wiley-Blackwell. 2017. 143–160 pp.
17. **Kertai D.** *The History of the Middle-Assyrian Empire* // TALANTA XL–XLI, 2008–2009, 25–51 pp..
18. **Koliński R.** *Making Mittani Assyrian, in Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire* // Essays dedicated to Frans Wiggermann (PIHANS 125), B. S. During (ed.), Leiden, 2015, 9–32 pp..
19. **Kühne H.** *Tall Šēḫ Ḥamad—Dūr-Katlimmu* // G. Bunnens (Ed.), *A New Companion to the Ancient Near East*. Hoboken: Wiley-Blackwell, 2018, 399–418 pp..
20. **Kühne H.**, Hrs., *Die Zitadelle von Dūr-Katlimmu in mittel- und neuassyrischer Zeit*. Teil. 1: Text, Teil. 2: Katalog, Teil. 3: Illustrationen. Berichte der Ausgrabung Tall Šēḫ Ḥamad/Dūr-Katlimmu 12.1 Wiesbaden: Harrassowitz, 2021. 758p.
21. **Lambert W.** *The God Aššur* // Iraq, № 45(1), 1983, 82–86 pp..
22. **Llop J.** *The Creation of the Middle Assyrian Provinces* // Journal of the American Oriental Society, № 131(4), 2011, 591–603 pp..
23. **Llop J.** *The Development of the Middle Assyrian Provinces* // Altoriental. Forsch., Akademie Verlag, 2012, 39/1, 87–111 pp..
24. **Lyon J.** *Middle Assyrian Expansion and Settlement Development in the Syrian Jazira: The View from the Balikh Valley* // Rainfall and Agriculture in Northern Mesopotamia. Proceedings of the Third MOS Symposium (PIHANS 88). 2000. Ed. R. M. Jas., Leiden, 89–126 pp..
25. **Miglus P.** *Festungswerke von Assur im 2. Jahrtausend v. Chr.* // S. Maul & N. Heeβel (Eds.), *Assur-Forschungen*. Wiesbaden: Harrassowitz, 2010, 211–244 pp..
26. **Parpola S.** *The King as Priest* // The King as a Nodal Point of Neo-Assyrian Identity, Ed. by J. Bach and S. Fink, Kasion, Band 8, Münster, 2022, 195–224 pp..
27. **Pedersén O.** *Archives and Libraries in the City of Assur. A Survey of the Material from the German Excavations*. Part 1. Acta Universitatis Upsaliensis. Studia Semitica 6, Uppsala, Almqvist & Wiksell, 1985, 125p.
28. **Pedersén O.** *Archives and Libraries in the Ancient Near East, 1500–300 B.C.*, Museum of Archaeology and Anthropology, Bethesda, Md: CDL Press, 1998, XXII + 291 p.
29. **Pongratz-Leisten B.** *Religion and Ideology in Assyria*. Studies in Ancient Near Eastern Records, vol. 6. Boston: De Gruyter, 2015, XIV+553 p.
30. **Postgate J.** *The Land of Assur and the Yoke of Assur* // World Archaeology, № 23(3), 1992, 247–263 pp..
31. **Postgate J.** *Bronze Age Bureaucracy: Writing and the Practice of Government in Assyria*. Cambridge: Cambridge University Press. 2013, XI+484 p.
32. **Prechel D., Freydank H.** *Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte X*, Mit einem Beitrag zu den Siegelabrollungen von Barbara Feller, Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orient-Gesellschaft 134, Wiesbaden 2011, p. X + 85, + 9 Tafeln.

33. **Prechel D., Freydank H.** *Urkunden der königlichen Palastverwalter vom Ende des 2. Jt. Chr. Das "ArchiAssur 21101 (M7 F)*, Studien zu den Assur-Texten 5, Wiesbaden, 2014. XII + 145 p., + 6 Tabellen
34. **Reculeau H.** *Assyria in the Late Bronze Age // The Oxford History of the Ancient Near East*, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford. 2022. 707-800 pp..
35. **Sazonov V.** *Die mittellassyrischen, universalistischen Königstitel und Epitheta Tukultī-Ninurtas I. (1242–1206)*//T.R. Kämmerer (ed.): Acta Antiqua Mediterranea et Orientalia. Identities and Societies in the Ancient East-Mediterranean Regions. Comparative Approaches. Henning Graf Reventlow, Memorial Volume. Alter Orient und Altes Testament 390/1. Münster. 2011, 235–276 pp..
36. **Sazonov V.** *Einige Bemerkungen zur frühmittelassyrischen Königstitulatur // T.R. Kämmerer (ed.): Identities and Societies in the Ancient East-Mediterranean Regions Comparative Approaches. Alter Orient und Altes Testament 390/3. Münster. 2015, 155–176 pp..*
37. **Sazonov V.** *Die assyrischen Königstitel und – epitheta von den Anfängen bis zu Tukulti-Ninurta I. und seinen Nachfolgern.* State Archives of Assyria Studies XXV, The Neo-Assyrian Corpus Project, Eisenbrauns, Winona "
38. Tsakanyan R. *Tiglath-Pileser III (745-727 B.C.): Mass Deportations and Resettlements Policy in Assyria // Բանբեր Հայագիտության*, 2018, № 1, 116-136 pp..
39. **Wiggerman F.** *Agriculture in the Northern Balikh Valley: The Case of Middle Assyrian Tell Sabi Abyad.* In Rainfall and Agriculture in Northern Mesopotamia. Proceedings of the Third MOS Symposium (PIHANS88). 2000. Ed. R. M Jas.,Leiden, 171–23 pp..
40. **Zaccagnini C.** *The Rural Landscape of the Land of Arraphe*, Istituto di Studi del Vicino Oriente, Roma, Quaderni di Geografia Storica, 1979, 201 p.

References

1. **Ts'akanyan R.** "On Some Foreign and Domestic Policy Issues of Middle Assyrian Empire" [*Mijinasorestanyan terut'yan artaqin ev nerqin qaxaqakanu'tyan vorosh harts'eri shurj*], The Countries and Peoples of the Near and Middle East, XXXI, 2018, 19-33 pp. (in Armenian)
2. **Ts'akanyan R.** "The State of Aššur from the Beginning of the 3rd Millennium BC to the End of the 15th Century BC". [*Ahhuri petut'uny m.t'a. III hazaramyaki skzbnnerits minchev m.t'a. XV dari verjery*], "Scientific Works" of SCAS NAS of Armenia. Gyumri, 2023, V. 2 (26), 5-22 pp. (in Armenian)
3. **Ts'akanyan R.** "Assirian Woman According to Middle Assyrian Law" [*Ashshuruhin yst Mijinasorestanyan orenqneri*] Woman in the East: A Collection of Papers, IOS NAS RA, 2023, Vo. 2, 230-264 p"p. (in Armenian)
- 4.– 40. (Տե՛ս գրականություն)

Ընդունվել է / Received on: **08. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **30. 04. 2025**

Հասնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Ռուսլան Արշակի ՑԱԿԱՆՅԱՆ՝ պատմական գիտ. թեկնածու,
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. huugև՝ rooslantsakanyan@gmail.com // orcid.org/0009-0003-6148-0933

Ruslan Arshak TSAKANYAN: PhD in History, Researcher of
the Institute of Oriental Studies NAS, Yerevan, RA
e-mail: rooslantsakanyan@gmail.com // orcid.org/0009-0003-6148-0933

ՀՏԴ՝ 930.2

DOI: 10.52971/18294316-2025.28.1-35

ԱՐՏԱՇԵՍ ԵՐԿՐՈՐԴԻ ՀԱԿԱՀՈՒՄԵԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՔՆՆԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

Արթուր Տ. Մելիքյան

Իռա Հ. Չատինյան

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան, Վանաձոր, ՀՀ

Անվտույն

Նախաբան. Աշխատանքում ուսումնասիրվել են Հռոմի հետ հայոց Արտաշես II արքայի (Ք. ա. 34, Ք.ա. 30-20 թթ.) հարաբերությունների վերաբերյալ աղբյուրագիտական և դրամագիտական տվյալները: Մեթոդներ և նյութեր. Կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Օգտագործվել են հունահռոմեական պատմագիրների երկերը, հայկական, հռոմեական և Հռոմի խնդրարկու արքաների դրամագիտական նյութերը: Վերլուծություն. Քննության են առնվել Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման վերաբերյալ Դ. Կասիոսի և Կ. Տակիտոսի տվյալները, պարզաբանվել է դրանց միտումնավոր բնույթը: Ուսումնասիրվել են նաև Արտաշես II-ի քաղկոսների պատկերագրական համակարգում արտաշեսյան դրամահատության ավանդույթներից շեղումները, դրանց հակաարևմտյան-հակահռոմեական խորհրդապաշտությունն ու քարոզչական նպատակները: Արդյունքներ. Երկրորդ գահակալության սկզբներին Արտաշես II-ը փորձել է Օկտավիանուսի հետ հաստատել բնականոն հարաբերություններ, ինչը ձախողվել է Մեծ Հայքի նկատմամբ ավելի առարկայական տիրապետություն հաստատելու Օկտավիանուսի հավակնությունների պատճառով: Քաղաքական մեկուսացումից խուսափելու համար Արտաշես II-ը Ք. ա. 20-ական թթ. կեսերին աստիճանաբար թեքվել է դեպի Պարթևստանը: Նրա թողարկած քաղկոսների վրա այդ գործընթացն արտահայտվել է արքայի դիմապատկերի աջադարձ (արևմտյան) դիրքից ձախ դարձած (արևելյան) դիրքին, դեմքի հարդարանքի անմոռու ձևից մոռուքավորին և հունատառ խորագրից արամեատառ

խորագրին անցնելով: *Հեղինակների ներդրումը*: Աշխատանքի առաջին ենթահարցը հեղինակել է Ա. Մելիքյանը, երկրորդը՝ Ի. Չատինյանը:

Բանալի բառեր՝ *Արտաշես II, Օկտավիանոս Օգոստոս, Ատրպատական, քաղկոս, պատկերագրություն, դրամական տիպ, երես, դարձերես*:

Ինչպես հղել՝ Մելիքյան Ա., Չատինյան Ի. *Արտաշես Երկրորդի հակահռոմեական դիրքորոշումը աղբյուրագիտական և դրամագիտական տվյալների քննահամեմատական լույսի ներքո*// ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2025: Ն. 1 (28): 35-48 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-35

THE ANTI-ROMAN STANCE OF ARTAXIAS II IN THE LIGHT OF SOURCE AND NUMISMATIC DATA CRITICAL ANALYSIS

Arthur T. Melikyan

Ira H. Chatinyan

Vanadzor State University after H. Tumanyan, RA

Abstract

Introduction: This study examines the source-based and numismatic data regarding the relations between Rome and the Armenian King Artaxias II (c. 34 BCE, 30-20 BCE). **Methods and Materials:** A historical-comparative research method has been employed. The works of Greco-Roman historians, along with numismatic materials from Armenian, Roman, and Roman client kings, were used. **Analysis:** The study focuses on the data of Dio Cassius and Tacitus regarding Artaxias II's anti-Roman stance, clarifying the intentional nature of their portrayal. It also examines the deviations from the traditional Artaxian coinage practices in Artaxias II's coinage iconography, exploring the anti-Western and anti-Roman symbolism and its propagandistic purposes. **Results:** At the beginning of his second reign, Artaxias II attempted to establish normal relations with Octavian, which failed due to Octavian's ambitions to assert more direct control over (Great) Armenia. In order to avoid political isolation, Artaxias II gradually leaned towards Parthia in the mid-20s BCE. This shift is reflected in the iconography of the coins he issued, where the king's portrait changes from a right-facing (western) position to a left-facing (eastern) one, with the facial features becoming more bearded and the inscription shifting from Greek letters to Aramaic script. **Author Contributions:** The first subtopic of the paper was authored by A. Melikyan, and the second subtheme was authored by I. Chatinyan.

Key words: *Artaxias II, Octavianus Augustus, Atorpatene, calchus, drachma, iconography, coin type, face, reverse portrait.*

Citation: Melikyan A., Chatinyan I. "The Anti-Roman Stance of Artaxias II in the Light of Source-critical and Numismatic Data //"Scientific Works" of the SHCAS of NAS, Gyumri, 2025: V. 1 (28): 35-48 pp., DOI: 10.52971/18294316-2025.28.1-35

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման պատճառներին հռոմեական հեղինակներ Պ. Տակիտոսի ու Դ. Կասիոսի պաշտոնական տեսանկյունից տրված հակիրճ բացատրությունները մասնագիտական գրականության մեջ ընդունվել են անվերապահորեն: Խնդրի վերաբերյալ արժեքավոր տեղեկույթ են պարունակում նաև

հայոց այդ արքայի հատած պղնձե դրամները: Դրանց պատկերագրական տվյալները էապես հակադրվում են հռոմեական պատմագրության տեղեկություններին: Այդ հանգամանքը պահանջում է քննարար վերանայել Արտաշես II-ի հակահռոմեական քաղաքականության պատճառների մասին ընդունված պատկերացումները:

1. Արտաշես II-ը և Օկտավիանուս Օգոստոսը

Ք. ա. 34 թ. հռոմեական եռապետ Անտոնիուսի կողմից Արտավազդ II-ի (Ք. ա. 55-34 թթ.) ուխտագանգ կալանավորումից հետո գահաժառանգ Արտաշես II-ը ինքնաթագադրվելով՝ ռազմական գործողություններ է ձեռնարկել հռոմեացիների դեմ, բայց պարտվելով ապաստանել է պարթևների Հրահատ IV արքայի (Ք. ա. 38-2 թթ.) մոտ [12, XLIV. 39.6]: Ք. ա. 31 թ. Ալեքիոմի ծովամարտում Անտոնիուսի պարտությունից հետո, Արտաշես II-ը վերատիրացավ նախնյաց գահին և ըստ ընդունված կարծիքի՝ մինչև իր դավադիր սպանությունը մնացել է Հռոմի թշնամին: Հռոմեական հեղինակները, իբրև թե խոսելով անաչառ դիրքից, դրա հիմնապատճառ համարել են Արտաշես II-ի հոր՝ Արտավազդ II-ի հանդեպ Անտոնիուսի ուխտագանգ վարմունքը: Այսպես, Դիոն Կասիոսը հաղորդում է, որ Անտոնիուսի հետ վճռական բախման նախօրեին Գայուս Օկտավիանուսը, ի շարս նրա դեմ հարուցված պաշտոնական մեղադրանքների, նրան ամբաստանել է նաև այն բանի համար, որ նա. *«Հայ (Արտավազդին) խաբելով, ձերբակալելով ու շղթայելով, մեծապես վարկաբեկել էր հռոմեական ժողովրդի հեղինակությունը»* [12, L.1.4]: Նույնն է հաղորդում նաև Կ. Տակիտոսը. *«Հայաստանը... մեր (հռոմեացիների-ձ.հ.) հանդեպ անհավատարիմ էր Անտոնիուսի անպատիվ արարքի պատճառով, (քանզի) հայոց արքա Արտավազդին առերևույթ բարեկամությամբ հրավիրել էր իր մոտ, այնուհետև կալանավորել և, վերջապես, մահապատժի ենթարկել: Սրա որդի Արտաքսիասը, թշնամացած մեզ հետ իր հոր մասին հիշողությամբ, պաշտպանեց իրեն և իր թագավորությունը Արշակունիների ուժով»* [31, II.3]:

Դիոնի և Տակիտոսի վերոնշյալ հաղորդումներին առանցքային նշանակություն է տրվել Ք. ա. 34-20 թթ. հայ-հռոմեական հարաբերությունների անհաշտելի ընթացքը բացատրելու գործում: Բայց, սովորաբար, անուշադրության է մատնվել այն փաստը, որ երկու հեղինակներն էլ հռոմեական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչներ են և պատմական տեղեկությոններ կայացրել են հռոմեական տեսանկյունից: Հատկանշական է, որ Տակիտոսը, թեպետ հայ-հռոմեական հարաբերությունների վատացման սկզբնապատճառ համարում է Անտոնիուսի չարագործությանը (*scelus Antonii*), այնուամենայնիվ, հայերի վերաբերմունքն էլ բնութագրում է «անհավատարմություն» (*opus infidia*) արտահայտությամբ:

Ըստ էության, հռոմեական երկու հեղինակներն էլ խոսում են Հռոմի հետ «բարեկամության» ուխտով կապված հանրության հավատի (*fides*) խախտման մասին: Բայց երկուսն էլ փորձում են շրջանցել այն փաստը, որ Անտոնիուսը պաշտոնական հռոմեական իշխանություն կրող եռապետ էր, ուստի նրա չարագործության պատասխանատուն դառնում էր Հռոմեական պետությունը: Թերևս սրա գիտակցումով է, որ նրանք դիմում են յուրօրինակ գրական աճապարարության. Տակիտոսը լռում է Անտոնիուսի պայմանախախտությունից բխող իրավական հետևանքների մասին և ընթերցողի մոտ անաչառ

պատմագրի տպավորություն ստեղծելու նպատակով «ըմբռնումով» է արտահայտվում Արտավազդի որդի Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման մասին: Բայց, լայն պլանում, նրա այդ «ըմբռնումը» ծառայեցվում է ոչ թե Արտաշես II-ի արդարացմանը, այլ Օկտավիանուսի հակառակորդ Անտոնիուսի նսեմացմանը:

Դիոն Կասիոսը նույնպես ընդգծում է Անտոնիուսի ուխտագանջության և հայոց մեջ «*հռոմեական ժողովրդի հեղինակության վարկաբեկման*» պատճառահետևանքային կապը: Բայց, Անտոնիուսի մեղքը սահուն կերպով տեղափոխելով «սրբազան օրենքի» տարածք և նրա նկատմամբ կայացնելով մահվան վճիռ, հեղինակը ձգտում է «մաքրագործել» Օկտավիանուսին՝ եռապետության գծով իր գործընկերոջ գործած մեղքից: Ավելին, նա փորձում է արդարացնել Օկտավիանուսի բացասական վերաբերմունքը Արտաշես II-ի նկատմամբ, հայտնելով, թե նա «*սպանել էր Հայաստանում թողնված հռոմեացիներին*» [13, LI, 16.2]: Մասնագիտական գրականության մեջ Դիոնի այդ եզակի վկայությունն ընդունվել է անվերապահորեն [3, էջ 627: 4, էջ 418: 5, էջ 65: 7, էջ 234: 17, p. 135]: Ըստ էության, տուրք է տրվել միապետի հերոսական էթոսի տրամաբանությանը և անտեսվել է Արտաշես II-ի օրոք հայ-հռոմեական հակասությունների խորքային պատճառների գոյության հնարավորությունը: Ավելին, որոշ ուսումնասիրողներ, Արտաշես II-ի այդ քայլը գնահատելով իբրև հոր սպանության դիմաց վրիժառու որդու զգացմունքային պատասխանը հռոմեացիներին [5, էջեր 65-66], ընդլայնել են «սպանվածների» էթնիկ և սոցիալական կազմը՝ «հռոմեացիներ, իտալիկներ, զինվորականներ, առևտրականներ» [4, էջ 418: 7, էջ 234]: Սակայն թե՛ Դիոնի վերոնշյալ վկայությունը, թե՛ դրանից ածանցված կարծիքներն իրենց պարունակած ժամանակագրական, փաստական ու տրամաբանական անհարթությունների պատճառով խորքային քննություն են պահանջում:

Դիոն Կասիոսի կողմից Արտաշես II-ին ուղղված վերոնշյալ մեղադրանքի իրավականությունը պարզելու համար կարևոր է, թե ում նկատի ունի հեղինակը «*Հայաստանում թողնված հռոմեացիներ*» արտահայտության տակ, և երբ է տեղի ունեցել նրանց սպանությունը: Նշված արտահայտությունից ինքնին հասկացվում է, որ խոսքը Անտոնիուսի հռոմեական բանակի՝ Հայաստանում կայագործային ծառայության թողնված զորակազմի մասին է, այլ ոչ թե առևտրականների կամ իտալիկների, որոնք չէին կարող Հայաստան «բերվել» կամ «Հայաստանում թողնվել»: Դիոնը չի նշում խնդրո առարկա իրադարձության ժամանակը: Բայց տրամաբանված է այն տեղադրել Արտավազդ II-ի սպանությունից (Ք. ա. 31 թ. հոկտեմբեր) և հայոց զահին Արտաշես II-ի վերահաստատվելուց (Ք.ա. 31 թ. ձմեռ) հետո՝ նախքան Անտոնիուսի և Կլեոպատրայի ինքնասպանությունն (Ք. ա. 30 թ. հուլիս) ընկած ժամանակահատվածում: Այստեղից իսկ հասկանալի է դառնում խնդրո առարկա իրադարձության ժամանակի վերաբերյալ Դիոնի լռության պատճառը: Քանի դեռ Անտոնիուսը ողջ էր, Հայաստանում թողնված նրա զորքի դեմ Արտաշես II-ի ցանկացած ռազմական գործողություն, որն անխուսափելիորեն հանգեցնելու էր հռոմեացիների մահերի, Օկտավիանուսի կողմից պետք է համարվեր իրավաչափ. Անտոնիուսի հակառակորդը չէր կարող դեմ գնալ Ք. ա. 32 թ. հնչեցված սեփական քարոզչությանը և հանիրավի համարել այն, ինչն ուղղված էր իր կողմից անօրինական ճանաչված երևույթի դեմ: Ըստ այդմ՝ Անտոնիուսի զորքի դեմ պատերազմում հռոմեացիների սպանությունը չէր կարող խաթարել Անտոնիուսի հակա-

ռակորդի՝ Գայուս Օկտավիանուսի հետ Արտաշես II-ի դրական հարաբերությունների հաստատմանը: Թերևս այդ համոզմունքով է, որ Արտաշես II-ն իր երկրորդ գահակալության սկզբներին հատած պղնձե դրամները թվագրել է ըստ պոմպեյական տոմարի [32, pp. 89-90], ինչը փաստում է հայ-հռոմեական «բարեկամությունը» վերականգնելու նրա պատրաստակամության մասին¹: Համապատասխանաբար՝ անհեթեթ կլինի մտածել, թե Արտաշես II-ը հոր մահվան լուրն առել է նրա սպանությունից 10 ամիս անց և հռոմեացիների կոտորած է սարքել վրեժխնդրության իրական օբյեկտի՝ Անտոնինուսի վախճանից հետո, երբ արդեն Հռոմեական պետության միանձնյա տիրակալ էր դարձել իր նահատակ հոր դաշնակից Օկտավիանուսը:

Անվիճելի է, որ Արտաշես II-ի վերոնշյալ դրամի պատմական տեղեկությունն ավելի անմիջական ու վավերական է, քան խնդրո առարկա իրադարձություններից շուրջ 200 տարի հետո ապրած պատմագրի վկայությունը: Դա հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ տեղում հեղինակը սոսկ Արտաշես II-ի նկատմամբ Օկտավիանուս Օգոստոսի բացասական վերաբերմունքն ու Մեծ Հայքի նկատմամբ Ք. ա. 20 թ. հռոմեական ագրեսիան արդարացնելու նպատակ է հետամտել: Ըստ այդմ էլ՝ նա, միտումնավոր կերպով չհստակեցնելով «հռոմեացիների սպանության» ժամանակը, Անտոնինուսի դեմ Արտաշես II-ի Ք. ա. 34 թ. կամ էլ Հայաստանում Անտոնինուսի թողած զորքի դեմ 31 թ. պատերազմի ինչ-ինչ իրողություններ կտրել է պատմական համատեքստից և ներկայացրել Օկտավիանուսի միանձնյա իշխանության սկզբներին: Թերևս, Դիոնի վկայության մտացածին բնույթի մասին է խոսում նաև այն փաստը, որ ո՛չ Վ. Պատերկուտուսը, ո՛չ Տակիտոսը, ո՛չ Ստրաբոնը, ո՛չ էլ հայ-հռոմեական հարաբերություններին քաջատեղյակ մի այլ աղբյուր Արտաշես II-ի նման վրիժառու գործողության մասին չեն խոսում:

Ցանկացած պայմանագիր դադարում է գործել, երբ այն խախտում է պայմանադիր կողմերից մեկը: Ք. ա. 34 թ. հայ-հռոմեական «բարեկամության» քակտումը կատարվել էր Հռոմի մեղքով: Հետևաբար, Արտաշես II-ը միանգամայն իրավասու էր օրինական հիմքով հռչակել Մեծ Հայքի լիակատար անկախությունը: Այդուհանդերձ, ինչպես վերը նշվեց, նրա երկրորդ գահակալության սկզբներին հատված քաղկոսների վրա պոմպեյական դարաշրջանի գործածությունը խոսում է այն մասին, որ նախնյաց գահին վերահաստատված Արտաշես II-ը սկզբնապես չի այրել Հռոմի հետ կամուրջները: Նա պատրաստակամ է եղել մնալ Օկտավիանուսի հետ դեռևս իր հոր՝ Արտավազդ II-ի օրոք ստեղծված քաղաքական համագործակցության դաշտում [5, էջեր 55-60]: Ամենայն հավանականությամբ, հայոց արքան դա պատկերացրել է «բարեկամության» (*amicitia*) Ք. ա. 66 թ. Արտաշատում սահմանված ձևաչափով (Հռոմի հեգեմոնիայի պահպանմամբ)՝ իրեն վերապահելով քաղաքակրթական կամընտրության իրավունքը: Մինչդեռ, դատելով Ք. ա. 30 թ. ի վեր Հռոմի արտաքին քաղաքական ռազմավարության փոփոխության և Ք. ա. 20 թ. հատված հռոմեական դրամների «*Armenia recepta*» (Հայաստանը վերանվաճ-

¹ 324 թ. նման խնդիր գոյացել էր Տրդատ III-ի և Հռոմեական կայսրությունում իր միանձնյա իշխանությունը հաստատած Կոստանդինուս I-ի միջև՝ մոտ 309-312 թթ. Մաքսիմինուս Գայա կայսեր դեմ Տրդատի մղած պատերազմի պատճառով: Բայց հայտնի է, որ Կոստանդինուսը Տրդատի հանդեպ *հռոմեացիների սպանության* մեղադրանք չի հարուցել:

ված) խորագրի տրամաբանությունից, Օկտավիանոսը հավակնել է վերականգնել հայ-հռոմեական հարաբերությունների Պոմպեոսի՝ Ք. ա. 64 թթ. սահմանած ձևաչափը [7, էջեր 126-127]: Սակայն նույն Ք. ա. 20 թ. այլ դրամների «*Armenia capta*» (Հայաստանը նվաճված) խորագիրը խոսում է այն մասին, որ Օկտավիանոսը հաշվի է առել Ք.ա. 34-31թթ. նախկին հայ-հռոմեական իրավահարաբերության խախտումը և ցանկացել է հասնել Հայաստանի նկատմամբ հռոմեական առարկայացված տիրապետությանը [28, 27.2]: Ինքնիշխան Մեծ Հայքի գոյությունը չի մտել հռոմեական նոր աշխարհակարգի նրա տեսլականի մեջ: Դա էր պատճառը, որ Օկտավիանոսը չընդունեց Արտաշես II-ի «ուղերձը» և նրան չճանաչեց որպես Մեծ Հայքի օրինական գահակալ: Ավելին, նա մերժեց իր եղբայրներ Տիգրանին ու Արտավազդին Հայաստան վերադարձնելու Արտաշես II-ի խնդրանքը [5, էջ 66], ինչը բացահայտ սպառնալիք էր պարունակում Արտաշես II-ի հանդեպ:

Հայ-հռոմեական հակասությունների մյուս խնդիրը վերաբերում էր Ատրպատականին: Ք. ա. 31/30 թ. Արտաշես II-ը ոչ միայն ռազմակալել էր Ք. ա. 33 թ. Անտոնիոսի դաշնակիցը դարձած մար Արտավազդի երկիրը, այլև գերել էր արքային [11, XL. 44.1-4]: Ճիշտ է, Դիոն Կասիոսը չի նշում Ք. ա. 30 թ. մար Արտավազդին հաղթող կողմին: Բայց նրա վկայությունը, որ հռոմեացիների համար «*Հայաստանը Մարաստանի հետ միասին կորսվեց*» [12, XLIX.44.4], հստակորեն ակնարկում է Արտաշես II-ի գործողությունների մասին: Ընդունված կարծիքի համաձայն՝ Արտաշես II-ը Մեծ Հայքն ազատագրել ու Ատրպատականը նվաճել է պարթևական գործով կամ պարթևական գործի օգնությամբ [16, p. 48: 3, էջ 627: Հմմտ. 17, p. 135]: Սակայն, Հրահատ IV-ը Ք. ա. 31 թ. մինչև 29 թ. կեսերը գահընկեց էր և ստիպված էր ապաստանել «պարթևներին հարևան երկրներում» [23, XLII. 5,6: 9, p. 65: 5, էջ 69]: Բնականաբար, նա չէր կարող Ք. ա. 31-29 թթ. որևէ օգնություն ցուցաբերել հայոց արքային²: Ըստ այդմ, նա չէր կարող նաև Արտաշես II-ի նվաճած Ատրպատականի նկատմամբ որևէ հավակնություն ունենալ, քանզի պարթև վեհապետի դեմ ապստամբած մար Արտավազդը դրանից առաջ կարողացել էր Անտոնիոսի տրամադրած զինուժի օգնությամբ պաշտպանել իր անկախությունը Հրահատ IV-ից [12, XLIX. 44.4]: Ավելի ուշ մար Արտավազդը, փախչելով գերությունից, ընդունելություն գտավ Օկտավիանոսի մոտ, որը նրան հաստատեց Փոքր Հայքի գահին (Ք. ա. 30-20 թթ.): Հռոմեական հովանավորության ներքո նրա հայտնվելը Օկտավիանոս Օգոստոսին Ատրպատականի նկատմամբ պահանջատիրության հիմք տվեց: Իսկ դա ուղղակիորեն դիպչում էր Արտաշես II-ի արմատական շահերին: Այնպես որ, Օկտավիանոսի հետ հարաբերությունները կարգավորելու Արտաշես II-ի ձգտումն ի սկզբանե դատապարտված էր ձախողման:

Հռոմի հետ հակասությունների սրումը Արտաշես II-ին սպառնում էր քաղաքական մեկուսացմամբ: Արևմուտքից ու հյուսիսից Մեծ Հայքը շրջապատված էր թշնամաբար տրամադրված հռոմեահպատակ երկրներով [7, էջ 235], իսկ Հրահատ IV-ից աջակցություն ակնկալելն առժամանակ իրատեսական չէր: Նման պայմաններում հռոմեական

² Հազիվ թե Տակիտոսը անտեղյակ է եղել Հրահատ IV-ի աստանդական վիճակին: Բայց լռության մատնելով դա և փոխարենը նշելով թե Արտաշեսը «*պաշտպանեց և իրեն և իր թագավորությունը Արշակունիների ուժով*», հեղինակը ցանկացել է ներշնչել ընթերցողին այն տպավորությունը, թե հայոց արքան ինքնուրույն գոյության անկարող և դատապարտված մեկն է:

սպառնալիքին դիմակայելու համար Արտաշես II-ին մնում էր մի բան՝ միջոցներ ձեռնարկել իր իշխանության ամրապնդման և երկրի գործեղացման ուղղությամբ: Արտաշես II-ի այդ գործունեության մասին աղբյուրները լռում են: Փոխարենը, նրա քաղաքական և քարոզչական միջոցառումներն և դեպի պարթևներ քաղաքական սահքն արտացոլվել է նրա պղնձե դրամների պատկերագրական համակարգում:

2.1 Արտաշես II-ի պղնձե դրամները

Մինչև 1980-ական թթ. կեսերը հայտնի չէին դրամներ, որոնք վստահությամբ կարելի էր վերագրել Արտաշես II-ին³: Առաջին երկու դրամական տիպերը, որոնց պատկանելն Արտաշես II-ին համընդհանուր ծանաչում է գտել, հայտնաբերվել են Արտաշատի 1985 թ. պեղումներից [1, էջեր 5-7: 33, p. 77]: 2000-2001 թթ. դրանք համալրվել են պղնձե դրամների ևս չորս տիպերով [33, p. 77: Հմմտ. 21, pp. 9-10. Pl. 3. № 37-48, Pl. 4, № 41-48], որոնք բոլորն էլ հատվել են Արտաշես II-ի երկրորդ գահակալության ընթացքում՝ Ք. ա. 30-20 թթ.: Նպատակահարմար է դրանք դասակարգել ըստ դարձերեսի պատկերագրության:

Ամաթաեղջյուր. (նկ. 1)

Դրամական այս տիպը երևան է եկել Արտաշատի 1985 թ. պեղումներից և, ըստ երևույթին, թողարկվել է Արտաշես II-ի երկրորդ գահակալության սկզբներին:

Չիմերես. Կարճ մորուքավոր արքայի աջ դարձած գլուխը՝ ութնաթև աստղով զարդարված եռատամ խույրով, որին համադրված ապարոշի ժապավենները հանգույցից ծանրորեն կախված են արքայի ծոծրակին [1, էջեր 5-7: 32, p. 89]:

Դարձերես. Ամաթաեղջյուր, որի միջին մասում ժապավեն է կապված: Ամաթաեղջյուրի ձախ և աջ կողմերում ուղղաձիգ գրությամբ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΞΕΡΣ[...] (արքա Արտաքսերք[...]) խորագիրն է: Դաշտի արտաքին աջ կողմում զետեղված են CA, իսկ արտաքին ձախ կողմում՝ XP տառակապակցությունները: Ռ. Վարդանյանը CA-ն կարդում է շA, իսկ XP-ն՝ XB, և եզրակացնում, որ առաջինը «պոմպեյական» դարաշրջանի 36 թիվն է, որը, համապատասխանում է Ք. ա. 31/30 թ., իսկ երկրորդը՝ դրամի անվանական արժեքը՝ 2 քաղկոս [32, p. 90]: Դրամների քաշը 3,84 գ. է, իսկ տրամագիծը՝ 17,3 մմ, ինչը համապատասխանում է վերոնշյալ մեկնաբանությանը:

Խաղողի ողկույզ. (նկ. 2)

Դրամների այս տիպը նույնպես հայտնաբերվել է Արտաշատի պեղումներից: Այն խորագիր չունի և Արտաշես II-ին է վերագրվել արքայական դիմապատկերի պատկերագրական և ոճական տվյալների հիման վրա [1, էջ 6]:

³ Պ. Բեջուկյանը և այլք մեծ վերապահումով Արտաշես II-ին են վերագրել ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛ[ΟΥ] տիտղոսով և դարձերեսին Նիկեի պատկերով պղնձե դրամը [8, pp. 29, 70, № 136: 6, էջ 57. № 48]: Բայց այդ տիպի նորահայտ օրինակի վրա ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛ[ΟΥ] ΤΙΓΡΑΝΟ[Υ] խորագրի հստակ ընթերցումից հետո դրամական այդ տիպը հանվել է Արտաշես II-ի դրամների շարքից: Փ. Կովաչի համոզմամբ՝ Արտաշես II-ն իր առաջին գահակալությունը նշանավորել է դարձերեսին Նիկեի պատկերով և նրա աջ և ձախ կողմերում ուղղաձիգ գրությամբ ΒΑΣΙΛΕΩC ΒΑΣΙΛΕΩΝ / ΑΡΤΑΖΑ լեզենդով բրոնզե չորեքքաղկոսների թողարկմամբ [20, pp. 83-86, Pl. 5, № 4-5]: Սակայն դա քիչ հավանական է, քանի որ ավելի տրամաբանված է ΑΡΤΑΖΑ պոստ խորագիրը ΑΡΤΑ[ΥΑ]ΖΔΟΥ վերձանել, ինչպես որ Արտավազդ II-ի դրամների վրա է [6, էջ 55], քան համարել, թե դրամի փորագրիչներն են Ζ-ը շփոթել Ξ-ի (քսի) հետ:

Դիմերես. Կարճ մորուքավոր արքայի աջ դարձած պատկերն է՝ գլխին հնգատամ խույր, որին համակցված ապարոշի ժապավեններն ուղիղ իջնում են հանգույցից:

Դարձերես. Խաղողի ողկույզ:

Դրամների քաշը 1.75 գ. է, տրամագիծը՝ 12.1 մմ.:

Շուն. (նկ. 3)

Դիմերես. Արքայի աջ դարձած պատկերն է՝ գլխին հնգատամ խույր և ապարոշ, որի ժապավենները հանգույցից իջնում են ծոծրակին: Խույրի վրա որևէ զարդանախշ չի երևում: *Դարձերես.* Աջ դարձած շուն՝ բարակ իրանով, երկար վզով և պոչը վեր բարձրացրած: Շան պատկերի վերևում աջից ձախ գրությամբ արամեերեն MLK՝ «արքա» բառն է: Շան պատկերից ներքև արամեերեն կիսաշրջանաձև գրությամբ մեկ այլ գրություն կա, որը, ամենայն հավանականությամբ, ներկայացրել է արքայի անունը: Ցավոք, պահպանված օրինակների մաշվածության պատճառով այն մնում է չվերծանված [33, Pl. 5. I. № 1-16; 27, p. 165, № 44]: Դրամների քաշը 0,56-1.6 գ. է, տրամագիծը՝ 10-12,6 մմ [33, pp. 78-79]:

Արծիվ. (նկ. 4)

Դիմերես. Արքայի կիսադեմը՝ աջ դարձած, դեմքը մորուքավոր, գլխին հայկական բարձր, հնգատամ խույր: Ճակատային մասում այն ունի հովար: Խույրի ականջակալները իջեցված են: Ապարոշը համակցված է խույրին: Խույրի վրա որևէ զարդանախշ չի երևում: Խորագիրը զետեղված է արքայի գլխի դիմաց և հետևում:

Դարձերես. Արծիվ՝ ձախ դարձած: Խորագիր չի նշմարվում [27, p. 165, № 45]:

Դրամների այս տիպը կշռում է 0,8-1.43 գ., տրամագիծը՝ 9-13 մմ. է [33, p. 79]:

Մեղու. (նկ. 5)

Դիմերես. Արքայի կիսանդրին աջ դարձած, դեմքը մորուքով, բարձր և նեղ հայկական խույրով: Որոշ օրինակների վրա արքայի դեմքը դարձած է ձախ: Խույրը երեք և ավելի ատամներ ունի, որոնք որոշ օրինակների վրա կորացած են: Խույրի ականջակալներն իջեցված են, իսկ ճակատային մասում հովար հիշեցնող տարր կա, որի նշանակությունը պարզ չէ: Խույրի ստորին մասում նշմարելի է ապարոշը, որի ժապավենները հանգույցից կախված են ծոծրակին: Արքայի գլխի առջևում և հետևում կան խորագրեր:

Դարձերես. Մեղու, որի պատկերը զբաղեցնում է ողջ դարձերեսը [33, pp. 79-80, Pl. 5, III. № 1-17]: Այս տիպի դրամների քաշը 0,8-2,09 գ. է, տրամագիծը՝ 12,2-14,3 մմ [33, p. 80]:

Մարդու կիսադեմ. (նկ. 6)

Դիմերես. Արքայի կիսանդրին ձախ դարձած, դեմքը մորուքավոր, բարձր և նեղ հայկական հնգատամ խույրով: Խույրը, որի վրա զարդանախշ չի նշմարվում, ճակատային մասում ունի հովարաձև ինչ-որ տարր: Արքայի գլխի դիմաց արամեատառ MLK՝ խորագիրն է, իսկ գլխի հետևում հավանաբար գրված է եղել արքայի անունը:

Դարձերես. Աջ դարձած գլուխ՝ ապարոշով [27, p. 165, № 46]: Այս տիպի դրամների քաշը 1,09-4,55 գ. է, տրամագիծը՝ 9,10-18 մմ.:

2.2 Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման պատկերագրական արտահայտությունները նրա պղնձե դրամների վրա

ա. Արքայի գլխի դիրքը. Արտաշեսյան դրամների վրա արքայի գլուխը, որպես կանոն, պատկերվել է դեմքով դեպի աջ: Այս հարցում Արտաշեսյանները շարունակում

էին հելլենիստական Եգիպտոսի, Մակեդոնիայի, Մելևկյան տերության և սրանց քաղաքական ու մշակութային ազդեցության ներքո գտնվող հելլենիստական փոքր երկրների՝ Կապադովկիայի, Պոնտոսի և այլոց դրամահատական ավանդույթը [34, cc. 107-108]: Պարթևական դրամահատության մեջ արքայի գլխի՝ այս կամ այն դիրքով պատկերումը քաղաքական և գաղափարական առումներով իմաստավորված էր [24, pp. 132-138]: Միհրդատ II-ի (Ք. ա. 123-90 թթ.) օրոք հաստատվեց դեպի ձախ ուղղված դեմքով դիմապատկերման սկզբունքը [29, № 11 ff], որին հետևեցին նաև Պարսքի [18, Lot 1249-1282] և Էյլումայիսի [19, Lot 5074-5080] արքաները: Արտաշես II-ի պղնձե դրամներից շան և արծվի պատկերներով տիպերում արքայի գլուխը դարձած է աջ: Մեղվի պատկերով թողարկումների մեծ մասում նույնպես գլուխը աջ է դարձած, սակայն կա նաև այնպիսի օրինակ, որի վրա արքայի գլուխը դարձած է դեպի ձախ [33, Pl. 5, III. № 17]: Մարդու կիսադեմով տիպում արքայի գլուխը միայն ձախ է դարձած [33, Pl. 6. IV. № 1-20]: Դեպի ձախ ուղղված դիմապատկերը, մեծ հավանականությամբ, քաղաքական ենթատեքստ ունի և ակնարկում է տվյալ արքայի արտաքին քաղաքական կողմնորոշման փոփոխության մասին:

բ. *Դեմքի հարդարանքը*. Հելլենիստական դարաշրջանում հունա-մակեդոնական արքաները, չնչին բացառություններով, և Հռոմի ուշ հանրապետական առաջնորդներն ու կայսրերը մինչև Հադրիանուսը դրամների վրա պատկերվում էին անմորուս: Տիգրան Մեծն ու Արտավազդ II-ը հետևել են արևմտյան ավանդույթին: Մինչդեռ Պարսքի արքաներն իրենց դրամահատության սկզբից՝ Ք. ա. III դ. կեսերից, պատկերվել են մորուքով [18, Lot 1240 ff]: Պարթևստանում Միհրդատ I-ի գահակալության կեսերից [29, № 12 ff: 24, pp. 132-138. 227-235], իսկ Էյլումայիսում և Խարակենեում Ք. ա. I դ. առաջին կեսին դրամների վրա անմորուս դիմապատկերից անցում կատարվեց մորուքավոր դիմապատկերին [19, Lot 5072-5080]: Փաստորեն Արտաշես II-ը Ք. ա. I դ. Արտաշեսյան առաջին արքան է, որը արևմտյան ավանդույթից շրջվել է դեպի արևելյանը: Մորուքի առկայությունը կամ բացակայությունը հաճախ դիտարկվում է արևելք-արևմուտք մշակութային-գաղափարախոսական և քաղաքական հակադրության համատեքստում, բայց ոչ ուղղակիորեն, այլ հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքին վերաբերող մեզ հասանելի տվյալների ամբողջությունը [33, p. 83]: Արտաշես II-ի օրոք հայ-հռոմեական քաղաքական հակադրությունը աննախադեպ սուր էր: Դա բավարար հիմք է տալիս նրա դեմքի հարդարանքը կապակցելու դրամների երեսներին արքայական դիմապատկերի արևմտյան ձևից դեպի արևելյան ձևը կատարված փոփոխության հետ և այն նույնպես համարելու հայոց այդ արքայի քաղաքական դիրքորոշման մեջ կատարված կտրուկ շրջադարձի արտահայտություն:

գ. *Խորագրության լեզուն*. Արտաշեսյան դրամահատության մեջ խորագրության լեզուն, սկսած Տիգրան I-ից, եղել է հունարենը: Արտաշես II-ը Ք. ա. 31/30 թ. թվագրված երկքաղկոսների վրա շարունակել է այդ ավանդույթը: Սակայն դարձերեսին շան, մեղվի և մարդկային կիսադեմի պատկերներով տիպերում փոխված է խորագրի լեզուն: Համեմատաբար լավ պահպանված օրինակների քննության արդյունքում Ռ. Վարդանյանը եզրակացնում է, որ դրանց խորագրերը գրված են «հայացված» արամեական այբուբենով, և վերծանում է այն *MLK' 'rthss*, (արքա Արտաշես) [33, pp. 85-89]: Անկասկած, դրամների

վրա հունարեն գրություն թողնելու շուրջ մեկդարյա ավանդույթից հրաժարվելու համար արտառոց պատճառներ էին պետք: Արտաշես II-ի մասին տվյալները բավարար հիմք են տալիս այն կապելու արքայի եղբայրներին Հայաստան վերադարձնելու խնդրանքի մերժման հետ և եզրակացնելու, որ արամեական գրության գործածությունը եղել է հայոց այդ արքայի հակահռոմեական դիրքորոշման արտահայտություն:

դ. Դարձերեսի պատկերագրությունը. Նմանատիպ շրջադարձ նկատվում է նաև Արտաշես II-ի պղնձե դրամների դարձերեսի պատկերագրության մեջ: Նախորդած արտաշեսյան արքաների դրամահատության մեջ ամաթաեղջյուրն ու խաղողի ողկույզը քիչ հանդիպող պատկերներից են [21, № 52, 79; 83; 87; 91; 126]: Հազվադեպ են նաև կենդանիների պատկերները: Տիգրան II-ի պղնձե դրամների վրա հանդիպում են ձին և փիղը [21, № 54; 55; 58; 97; 148]: Արտավազ II-ի դրամների վրա այդպիսի պատկերներ առայժմ հայտնի չեն: Արտաշես II-ը փաստորեն հայկական դրամական պատկերացանկ ներմուծեց միանգամից երեք կենդանական պատկերներ: Անտիկ դարաշրջանի դրամահատության մեջ շան պատկերը տարածված չէ: Ուստի դժվար է հասկանալ Արտաշես II-ի դրամների վրա նրա խորհրդապաշտությունը: Հնարավոր է, որ այն կապ ունի մանուկ Մանատրուկին պահպանած «սպիտակ շան» մասին վիպական գրույցի հետ [2, II, ԼԶ] և Արտաշես II-ի դրամի վրա դրոշմվել է որպես հռոմեական տոտեմ էգ գայլի հակոտնյա: Արծվի (գիշատիչ թռչունի) խորհրդապաշտությունը Արտաշեսյան Մեծ Հայքում վաղնջական ու ընտանի էր, և նրա պատկերի կիրառությունը դրամական պատկերագրության մեջ չենք կարող համարել արտառոց իրադարձություն: Անտիկ դրամահատության մեջ մեղվի պատկերն առավել գործածական է եղել Եփեսոսում և Մելիտենեյում [14, Lot 492-494: 15, Lot 332-334], որտեղ այն կապվում էր Արտեմիսի պաշտամունքի հետ: Հնարավոր է, որ այն Արտաշես II-ի դրամահատության պատկերացանկ է թափանցել Արտեմիսի և Անահիտի կրոնական համակցման արդյունքում: Սակայն, մի կողմից, դրանց ժամանակի և գեղարվեստական ոճի, մյուս կողմից՝ պարթևական դրամահատության մեջ մեղվի և արծվի պատկերների լայն կիրառության փաստի տեսանկյունից [29, № 12.24b; 27.19; 31.17; 42.3; 47.35] չի կարելի բացառել, որ դրանք ևս կապված են եղել Արտաշես II-ի քաղաքական շրջադարձի հետ:

Խնդրահարույց է ապարոշով կիսադեմ գլուխը: Որոշ օրինակներում, թվում է, այն անմորուս է, մյուսներում ակնհայտորեն մորուքավոր է: Տարբերություններ կան նաև մազերի սանրվածքի մեջ: Այս տիպի դրամների մաշվածության պատճառով նույնիսկ հարց է գոյանում՝ տղամարդո՞ւ, թե՞ կնոջ պատկեր է ներկայացված: Չի բացառվում, որ ի դեմս դարձերեսի անմորուս դիմապատկերի՝ կարող է ներկայացված լինել Մեծ Հայքի թագուհին: Հակառակ դեպքում՝ կիսադեմ պատկերի գլխին հստակ նշմարվող ապարոշը համարելով ներկայացված անձնավորության արքայական կարգավիճակի վկայություն՝ պետք է նրան նույնականացնել Արտաշես II-ին ենթակա ինչ-որ արքայի հետ: Այս տիպի դրամի որոշ օրինակների վրա դարձերեսի պատկերը գլխին մարական կիթարիս է կրում (նկ. 6) [Հմմտ. 30, pp. 723-737: 35, c. 73], ինչը պարզորոշ խոսում է նրա ատրպատականյան ծագման մասին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ներկայացվածը հենց Ատրպատականի վասալ արքան է, որը աննկատ է մնացել աղբյուրներին: Եթե մեր հետևությունը

ճիշտ է, ապա կստացվի, որ Արտաշես II-ն այս դրամական տիպով շարունակել է տակավին Ք. ա. II դ. հելլենիստական դրամահատության մեջ սկզբնավորված վեհապետ-վասալ արքա զուգադիր ներկայացման երևույթը, որը Ֆ. Միլարը հռոմեական իրողությունների հիման վրա անվանել է «երկմակարդակ միապետություն» [25, p. 159]: Պարթևական դրամահատության մեջ նմանօրինակ դրամներ հատվել են Միհրդատ I-ի (Ք.ա. 165-132 թթ.) օրոք [29, № 12.4; 12.5, 12.17; 12.18; 12.23; 12.24a], ինչը ժամանակով բավականին հեռու է Արտաշես II-ից՝ նրա դրամահատության վրա ազդեցություն թողնելու համար: Բայց հայտնի է, որ Իտուրեյական Քաղքիսի կառավարիչ Ջենոդորոսը (Ք. ա. 32-24 թթ.) Ք. ա. 26 թ. հատած քաղկոսների վրա իր և Օգոստոս կայսեր պատկերների համադրությամբ «երկմակարդակ միապետություն» պատկերագրական սկզբունքը ներմուծել էր Հռոմից կախյալ արքաների քաղաքական մշակույթ [10, № 4774-4775]: Քաղաքական քծնանքի այդ դրսևորումը, արագորեն ընդօրինակվելով [10, № 584: 22, pp. 5, 79], արդեն իսկ Օգոստոսի օրոք դարձել էր խնդրարկու արքաների դրամահատության պատկերագրական կանոնը: Ցավոք, Արտաշես II-ի քաղկոսը թվագրված չէ, և անհնար է ճշտել, թե այն նախորդել է Ջենոդորոսի դրամին, թե հաջորդել: Բայց, քանի որ նման քարոզչական նշանակությամբ դրամները սովորաբար հատվում էին խնդրարկու արքաների նշանակման հետ միաժամանակ, ուստի կարելի է դրանց առաջին ենթատիպի երևան գալը թվագրել Արտաշես II-ի կողմից Ատրպատականի նվաճման տարով՝ Ք. ա. 30 թ.: Դրամական այս տիպի դարձերեսի պատկերների քննությունը թույլ է տալիս զանազանել դրանց առնվազն երեք դիմապատկեր: Դրանից հետևում է, որ Ք. ա. 30-20 թթ. Ատրպատականում գահակալել են Արտաշես II-ին հպատակ առնվազն երեք արքաներ և, համապատասխանաբար, կատարվել է առնվազն երեք թողարկումներ, որոնց քարոզչական նպատակը եղել է հայ բնակչությանը Ատրպատականի նկատմամբ հայոց արքայի իշխանության փաստն ազդարարելը: Իսկ հռոմեական խնդրարկու արքաների «երկմակարդակ միապետության» թեմայով դրամների հետ համեմատության մեջ Արտաշես II-ի քաղկոսները դիտողին պետք է ներշնչեին այն միտքը, թե հայոց արքան ոչ միայն անկախ է Հռոմից, այլև իր քաղաքական կարգավիճակով հավասար է հռոմեական կայսրին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հռոմեական պատմագրությունը Արտաշես II – Օկտավիանուս Օգոստոս հակադրությանը տվել է միտումնավոր գնահատական՝ փորձելով ազատել Օկտավիանուսին Անտոնիոսի անպատիվ արարքի համար պատասխանատվությունից և, միաժամանակ, արդարացնել Մեծ Հայքի նկատմամբ Օկտավիանուս-Օգոստոսի մեծապետական նկրտումները: Արտավազդ II-ի ու Օկտավիանուսի միջև եղած քաղաքական հարաբերությունների ձևաչափը վերականգնելու առաջարկի և հարազատ եղբայրներին Հայաստան վերադարձնելու պահանջի մերժումը Արտաշես II-ը գնահատել է որպես իր սուլվերեն իշխանության օրինականության մերժման և թշնամանքի նշան: Ըստ այդմ՝ նա հարկադրված է եղել մերձենալ Պարթևստանի հետ: Ք. ա. I դ. 20-ական թթ. նրա թողարկած պղնձե դրամների վրա այն արտացոլվել է արքայի դիմապատկերի աջադարձ (արևմտյան) դիրքից ձախ դարձած (արևելյան) դիրքին, դեմքի հարդարանքի անմորուս ձևից մորուքավորին և հունատառ խորագրից արամեատառ խորագրին անցնելով: Իսկ «երկմակարդակ միապետության» թեմայով քաղկոսների պատկերագրությունը, ազդա-

բարելավ Արտաշեսի տիրապետությունը Ատրպատականի նկատմամբ, միննույն ժամանակ Օգոստոս կայսրին ուղղված բացահայտ մարտահրավեր էր:

Ն Կ Ա Ր Ն Ե Ր



Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Չարդարյան Մ.** «Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից»: Արտաշատ II: Հանրապետական գիտական նստաշրջան: 21 նոյեմբեր: Երևան: 1998: 5-7 էջեր:
2. **Խոբրենացի Մ.** «Մովսիսի Խոբրենացու Պատմություն Հայոց»: Տփղիս: Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի: 1913: 396 էջ:
3. «Հայ ժողովրդի պատմություն: Հ. I»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ: 1971: 991 էջ:
4. «Հայոց պատմություն, հ. I: Գիրք երկրորդ»: Երևան: «Չանգակ» հրատ.: 2024: 700+24 էջ:
5. **Մանասերյան Ռ.** «Հայաստանն Արտաշատից մինչև Տրդատ Մեծ»: Երևան: «Արեգ» հրատ.: 1997: 215 էջ:
6. **Մուշեղյան Խ.** «Դրամական շրջանառությունը Հայաստանում (Մ. թ. ա.V-մ. թ. XIV դդ.)»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1983: 351 էջ:
7. **Ստեփանյան Ա.** «Պատմության Կերպարվարությունների Մեծ Հայքում»: Գիրք Ա: Երևան: «Սարգիս Խաչենց-Փրինտինգոն»: 2012: 385 էջ:
8. **Bedoukian P.** "Coinage of the Artaxiads of Armenia" // Royal Numismatic Society. Special Publication. No. 10. London. Royal Numismatic Society. 1978. 81 p.
9. **Bivar A.** "Iran under the Arsacids" // Cambridge History of Iran. New York. Cambridge University Press, 2006. V 3/2. 21- 99 pp..

10. **Burnett A., Amandry M., Ripollès P.** "Roman Provincial Coinage. V. I". London. British Museum Press, Paris. Bibliothèque Nacioinale. 1992. 727 p. + 7 Maps.
11. **Cassios D.** "Dio's Roman History". V. III. London, New York. W. Heinemann LTD, The Macmillan Co. Harvard University Press, 1914: 519 p.
12. **Cassios D.** "Dio's Roman History. V. V". London. Cambridge Mass. W. Heinemann LTD, Harvard University Press. 1955. 526 p.
13. **Cassios D.** "Dio's Roman History. V. VI". London, Cambridge Mass. W. Heinemann LTD, Harvard University Press, 1955, 492 p.
14. **Classical Numismatic Group, Inc.** "Auction 37. A Mail Bid Sale". 20 March, 1996.
file:///D:/Catalogs%20of%20Ancient%20Coins/CNG_37.pdf (դիտվել է 20.02.2025):
15. **Classical Numismatic Group, Inc.** "Auction 88 An Internet & Mail Bid Sale." Sept. 14, 2011//
file:///D:/Catalogs%20of%20Ancient%20Coins/CNG%20MBS%2088%20Virtual%20Catalog.pdf
(դիտվել է 20.02.2025):
16. **Dąbrowa E.** "Parthian-Armenian Relations from the 2nd Century BCE to the Second Half of the 1st Century CE // Electrum. V. 28". 2021. 41-57pp..
17. **Debevoise N.** "Political History of Parthia". Chicago. The University of Chicago Press. 1938. 303 p..
18. **Dr. Busso Peus Nachf.** "Auction 320". 3-4 November 1987// https://www.parthia.com/pdc_peus320.htm
(դիտվել է 23.02.2025):
19. **Dr. Busso Peus Nachf.** "Auction 363". 26 April 2000 // https://www.parthia.com/pdc_peus363_3.htm#Elymais5 (դիտվել է 23.02.2025):
20. **Kovachs F.** "Additions and Corrections to Armenian Coins and Their Values // Armenian Numismatic Journal. Series 1. V. 30". 2004. 83-86pp..
21. **Kovachs F.** "Armenian Coinage in the Classical Period"// Classical Numismatic Studies. № 10. Lancaster/London. Classical Numismatic Group. Inc. 2016. xxv+83 p. + 34 Plates.
22. **Kropp A.** "Images and Monuments of Near Eastern Dynasts, 100 BC-AD 100". Oxford. Oxford University Press. 2013. 520 p.
23. **Ivstins. M.** *Ivstini Epitoma Historiarvm Philippicarvm Pompei Trogi. Accedvnt Prologi in Pompeivm Trogum.* Stvtgardie. B.G. Tevbner. 1985. 375 p.
24. **Magub A.** "Political and Religious Ideologies on Parthian Coins of the 2nd-1st Centuries BC". // Thesis submitted for the degree of PhD. Department of Religions and Philosophies, School of History, Religions and Philosophies SOAS, University of London London, 2018, 349 p.// https://eprints.soas.ac.uk/30283/1/4573_Magub.pdf (դիտվել է 24.02.2025):
25. **Millar F.** "Emperors, Kings and Subjects: The Politics of Two-level Sovereign" // Scripta Classica Israelica 15. 1996. 159-173pp..
26. **Nercessian Y.** "Armenian Coins and Their Values" // Armenian Numismatic Society. Special Publication. № 8. Los Angeles. 1995. 254 p. + 46 Plates.
27. **Nurpetlian J.** *Ancient Armenian Coins: The Artaxiad Dynasty (189 BC - AD 6)* // Beryutus Archaeological Studies. Vol. LI-LII. Beirut. 2008-2009. pp. 117-167.
28. **Res Gestae Divi Augusti** // The Achievments of the Divine Augustus with an introduction by P.A. Brunt and J. M. Moore, Oxford University Press, 7-nd Edition, Oxford. 1983. Oxford University Press. 90 p.
29. **Sellwood D.**, "An Introduction to the Coinage of Parthia, 2nd edit"., London, 1980. 322 p. + 10 Plates.
30. **Shahbazi Sh.** "CLOTHING ii. In the Median and Achaemenid periods // *Encyclopaedia Iranica*, V/7", 723-737pp..
31. **Tacitus P.** "The Annals". London. Poetry in Translation. 2017. 696 p.
32. **Vardanyan R.** "A Dated Copper Coin of Artaxias II: Evidence of the Use of the Pompeyan Era in Artaxata" // Armenian Numismatic Journal. V. XXVII. 2001. 89 p..
33. **Vardanyan R., Vardanyan K.** "Newly-Found Groups of Artaxiad Copper Coins" // Armenian Numismatic Journal. V. 34. № 4. 2008. 77-95pp..
34. **Варданян Р.** "Аршакидский поворот" // Вестник древней истории. 1992, № 4. 107-108.
35. **Фаррох К.** Персы: "Армия великих царей". Москва. Эжсмо. 2009. 344 с.

References

1. **Zardaryan M.** "Unique Coins from the Excavations of Artaxata, Artaxias II" [*Ezaki dramner Artashat'i peggumneris*] // Coinage in Armenia: Republican Scientific Session. November 21. Teses of Reports. Yerevan: 1998. 5-7pp.. (in Armenian)
2. **Xorenaci M.** "History of Armenians" [*Movsis'i Xorenacvov Patmut'yun Hayos*']. Tpr'ghis: Mnacakan Martirosyan publ. 1913. 396 p.. (in Armenian)
3. "History of Armenian Nation". V. I [*Hay jhoghovrdi patmut'yun*]. Yerevan: AS ArmSSR 1971. 603-634pp. (in Armenian).
4. "History of Armenia". V. I. Book II. [*Hayo'c patmut'yun*]. Yerevan: "Zangak" publ. 2024. 700+24 p.. (in Armenian)
5. **Manaseryan R.** "Armenia from Artavazdes to Tiridat the Graeat" [*Hayastany Artavazdits' minch'ev Trdat Mets*'] // Yerevan. "Areg" LTD. 1997. 215 p.. (in Armenian)
6. **Mousheghyan Kh.** "Monetary Circulation in Armenia (V c. B.C. – A.D. XIV c.)" [*Dramakan shrjanar'ut'yuny' Hayastanum (M. t'. a. V-m.t'. XIV dd.)*]. Yerevan: AS ArmSSR. 1983. 351 p. (in Armenian)
7. **Stepanyan A.** "Metamorphoses of History in Great Armenia. Book I. The Age of the Artaxiads" [*Patmut'yan kerpap'oxut'yunnery' Mec' Hayqum*]. Yerevan: "Sargis Khachentc -"Printinfo" publ., 2012. 385 p. (in Armenian)
8. - 33. (տե՛ս գրականություն)
34. **Vardanyan R.** Arsacid Reverse [*Arshakidskij povorot*] // Vestnik drevnei istorii, Moscow: 1992, № 4. 107-108pp.. (in Russian)
35. **Farrokh K.** "Sadows in the Desert" [*Persy: Armija velikihx carej*]. Moscow: "ЭКСМО". 2009. 344 p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **27. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **29. 04 2025**

Հանձնվել է սույ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Արթուր Տիգրանի ՄԵԼԻՔՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու,
ՎՊՀ պատմության ամբիոնի դոցենտ, Վանաձոր, ՀՀ,
Էլ. huugե՛ arthurmelikyan@rambler.ru // orcid.org/0009-0002-9922-2887

Artur Tigran MELIKYAN: PhD in History, Associate professor
at the Chair of History of VSU, Vanadzor, RA,
e-mail: arthurmelikyan@rambler.ru // orcid.org/0009-0002-9922-2887

Իռա Հարությունի ՉԱՏԻՆՅԱՆ՝ պետհամալսարան, Վանաձոր, ՀՀ,
Էլ. huugե՛ irachatintan@gmail.com // orcid.org/0009-0001-9624-9083

Ira Harutyun CHATINYAN: State University, Vanadzor, RA,
e-mail: irachatintan@gmail.com // orcid.org/0009-0001-9624-9083

HISTORY

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

UDK:324

DOI: 10.52971/18294316-2025.28.1-49

REGIONAL POLICY TOWARDS THE PALESTINIAN CONFLICT BASED ON
THE EXAMPLE OF SOME ARAB COUNTRIES:
A COMPARATIVE ANALYSIS

Artak H. Hovhannisyan

Shirak State University after M.Nalbandyan,
Armenian State University of Economics, GB, Gyumri, RA

Abstract:

Introduction: This article provides a comparative examination of the policies adopted by key Middle Eastern states toward the Palestinian conflict, analyzing their historical trajectories, the principal determinants shaping their respective approaches, and their evolving roles in advancing peace and Palestinian self-determination. Focusing on the cases of Saudi Arabia, Libya, Lebanon, Syria, Iraq, and the Gulf states (United Arab Emirates, Qatar, and Bahrain). The study investigates the interplay of domestic, regional, and international factors influencing their stances. Particular attention is given to the implications of Palestinian refugee presence, the complexities of intraregional politics, and the broader dynamics of the Israeli-Palestinian issue. Furthermore, the article situates these policies within the shifting geopolitical landscape of the Middle East, highlighting both shared challenges and unique national perspectives that inform their engagement with the conflict. **Methods and materials:** The paper employs a qualitative methodology, drawing on primary and secondary sources to analyze arab states policy approach to the Palestinian-Israeli conflict. Primary sources include official statements, policy documents, and speeches. Secondary sources encompass scholarly articles, books, reports, and media analyses that offer insights into some arab states foreign policy towards the Middle East and the Palestinian-Israeli conflict. **Analysis:** This study synthesizes these perspectives, offering a comparative analysis of the historical trajectories, contemporary policies, and geopolitical factors that define each country's engagement with the Palestinian conflict. By examining both the commonalities and distinctions in their approaches, the article contributes to a deeper understanding of the broader regional discourse and its implications for peace, justice, and stability in the Middle East. **Results:** The Israeli-Palestinian conflict remains a cornerstone of Middle Eastern geopolitics, with diverse approaches shaping the policies of regional states. Countries such as Saudi Arabia, Jordan, Libya, Lebanon, Syria, Iraq, and the Gulf states (UAE, Qatar, and Bahrain) have

played distinct roles in addressing the conflict. This paper examines these policies, highlighting their historical contexts, evolving strategies, and regional implications.

Key words: *Israeli-Palestinian conflict, Saudi Arabia, Lybia, Lebanon, Syria, Iraq, United Arab Emirates, Qatar, Bahrein.*

Citation: Hovhannisyan A. *Regional Policy Towards The Palestinian Conflict Based on the Example of some Arab Countries: A Comparative Analysis.* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. V. 1(28), 49-60 pp. DOI: 10.52971/18294316-2025.28.1-49

**ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՈՇ ԱՐԱԲԱԿԱՆ
ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Արտակ Հ. Հովհաննիսյան

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մասնաճյուղ, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածում ներկայացվում է Մերձավոր Արևելքի որոշ արաբական պետությունների քաղաքականության համեմատական վերլուծությունը պաղեստինյան հակամարտության նկատմամբ, քննարկվում են դրանց պատմական ուղիները, քաղաքական մոտեցումները ձևավորող հիմնական գործոնները, ինչպես նաև նրանց փոփոխվող դերերը խաղաղության ու Պաղեստինի ինքնորոշման գործընթացներում: Հատուկ ուշադրություն է դարձվում Սաուդյան Արաբիային, Լիբիային, Լիբանանին, Սիրիային, Իրաքին և Պարսից ծոցի երկրներին (ԱՄԷ, Կատար, Բահրեյն): Ուսումնասիրվում է ներքին, տարածաշրջանային և միջազգային գործոնների փոխազդեցությունը, որոնք ազդում են այս երկրների դիրքորոշումների վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում պաղեստինցի փախստականների հիմնախնդրին, տարածաշրջանի ներքաղաքական շարժընթացի բարդություններին: Քննարկվում է արաբական երկրների քաղաքականությունը Մերձավոր Արևելքի փոփոխվող աշխարհաքաղաքական իրադրության մեջ՝ ընդգծելով ինչպես ընդհանուր մարտահրավերները, այնպես էլ յուրաքանչյուր պետության առանձնակի մոտեցումները, որոնք էլ ձևավորում են հակամարտության կարգավորման մեջ նրանց ներգրավվածության աստիճանը: Մեթոդներ և նյութեր. Հոդվածում կիրառվում է որակական մեթոդաբանություն, որը հիմնված է առաջնային և երկրորդական աղբյուրների վերլուծության վրա՝ ուսումնասիրելու արաբական երկրների մոտեցումները իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ: Առաջնային աղբյուրները ներառում են պաշտոնական հայտարարություններ, քաղաքական փաստաթղթեր և ելույթներ: Երկրորդական աղբյուրները ներառում են գիտական հոդվածներ, գրքեր, զեկույցներ և մեդիա-վերլուծություններ, որոնք պատկերացում են տալիս որոշ արաբական պետությունների արտաքին քաղաքական մոտեցումների վերաբերյալ: Վերլուծություն. Ուսումնասիրության շրջանակում համադրվում են տարբեր տեսակետներ, ներկայացվում է պատ-

մական ուղիների, արդի քաղաքականության և աշխարհաքաղաքական գործոնների համեմատական վերլուծություն, որոնք որոշում են յուրաքանչյուր երկրի ներգրավվածությունը պաղեստինյան հակամարտությունում: Հողվածում ուսումնասիրվում են ինչպես ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները այս մոտեցումներում: *Արդյունքներ*. Մերձավոր Արևելքի պետությունների քաղաքականության համեմատական վերլուծությունը պաղեստինյան հակամարտության նկատմամբ բացահայտում է պատմական պարտավորությունների, զարգացող ռազմավարությունների և տարածաշրջանային նկատառումների համադրվածությունը: Չնայած յուրաքանչյուր պետության մոտեցումը ձևավորվում է իրեն յուրահատուկ հանգամանքներով, դրանք միասին ընդգծում են պաղեստինյան հիմնախնդրի անխուսափելի նշանակությունը տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքում: Այդ վերլուծությունն էական նշանակություն ունի Մերձավոր Արևելքի բազմակողմանի դինամիկան և իսրայելա-պաղեստինյան հակամարտության հնարավոր լուծման հեռանկարները հասկանալու համար: Սաուդյան Արաբիան երկար տարիներ իրեն ներկայացրել է որպես պաղեստինյան հակամարտության առանցքային դերակատար՝ առաջնորդելով արաբական աշխարհում խաղաղության գործընթացները և պաղեստինյան ինքնորոշման ջանքերը: Տարածաշրջանային դինամիկայի փոփոխությունների պայմաններում Հորդանանը շարունակում է հանդես գալ որպես կայունացնող ուժ՝ աջակցելով հակամարտության արդարացի կարգավորմանը: Լիբիայի ներքին քաղաքական անկայունությունը սահմանափակում է նրա տարածաշրջանային ազդեցությունը: Չնայած այդ մարտահրավերներին՝ Լիբիայի պատմական դիրքորոշումը որպես պաղեստինյան իրավունքների պաշտպանի, դեռևս առկա է: Լիբանանում պաղեստինյան փախստականների առկայությունը էական ազդեցություն է ունեցել երկրի ներքին քաղաքականության և տարածաշրջանային հարաբերությունների վրա: Սիրիան երկար ժամանակ հանդես է եկել որպես պաղեստինցիների ինքնորոշման սկզբունքի ակտիվ ջատագով՝ ընդունելով փախստականներին և աջակցելով զինված դիմադրությանը: Իրաքի ներքին քաղաքական անկայունությունը և արտաքին ճնշումները սահմանափակել են նրա հնարավորությունները վերջին տարիներին ակտիվ դեր ստանձնելու հարցում: Տարաբնույթ ռազմավարությունները ցույց են տալիս Ծոցի երկրների բազմաշերտ ներգրավվածությունը հակամարտության կարգավորման համատեքստում:

Բանալի բառեր՝ *իսրայելա-պաղեստինյան հակամարտություն, Սաուդյան Արաբիա, Լիբիա, Լիբանան, Սիրիա, Իրաք, Արաբական Միացյալ Էմիրություններ, Կատար, Բահրեյն:*

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան Ա. *Պաղեստինյան հակամարտության նկատմամբ տարածաշրջանային քաղաքականությունը՝ որոշ արաբական երկրների օրինակով. համեմատական վերլուծություն* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2025. Ն. 1(28): 49-60 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-49

INTRODUCTION: The Israeli-Palestinian conflict has remained a defining issue in Middle Eastern politics, shaping the foreign policies and regional roles of states across the Arab world[15, p.217]. Countries such as Saudi Arabia, Libya, Lebanon, Syria, Iraq, and the Gulf states

(United Arab Emirates, Qatar, and Bahrain) have historically engaged with the conflict through diverse yet interconnected strategies, reflecting both their unique national priorities and shared regional concerns[1, p.150].

Saudi Arabia has long positioned itself as a central actor in the pursuit of a peaceful resolution, leveraging its influence to support Palestinian self-determination while navigating shifting geopolitical dynamics. Libya, deeply rooted in North Africa, has historically aligned its foreign policy with strong support for the Palestinian cause, emphasizing solidarity and resistance within a broader regional framework. Lebanon and Syria, as neighboring states directly impacted by the refugee crisis resulting from the conflict, have shaped their policies in response to the enduring presence of Palestinian refugees and the broader implications for regional stability. Similarly, Iraq's engagement has been marked by its historical support for Palestinian rights and its complex relationships with various Palestinian factions. The Gulf states, including the UAE, Qatar, and Bahrain, have adopted nuanced approaches, balancing historical support for the Palestinian cause with evolving strategies to address shifting regional and international dynamics.

A. Saudi Arabia's Policy Toward the Palestinian Conflict:

A Historical Perspective and Evolving Role

Historical Involvement: Saudi Arabia's stance on the Israeli-Palestinian conflict has been a crucial component of its foreign policy for decades [3, p.162].

Saudi Arabia's historical involvement in the Israeli-Palestinian conflict dates back to the early days of the conflict. Key aspects of this historical engagement include: [10, p.237]

1. Arab-Israeli Wars: Saudi Arabia, like other Arab states, supported the Palestinian cause during the Arab-Israeli wars, including the 1948 Arab-Israeli war
2. Financial Aid: Saudi Arabia has provided substantial financial aid to the Palestinian territories and Palestinian refugee relief organizations
3. Arab Peace Initiative: Saudi Arabia played a pivotal role in formulating the 2002 Arab Peace Initiative, which proposed normalized relations between Arab states and Israel in exchange for a two-state solution
4. Diplomatic Efforts: Saudi Arabia has been involved in numerous diplomatic efforts to advance peace negotiations between Israelis and Palestinians

Key Factors Shaping Saudi Policy: Several key factors have shaped Saudi Arabia's policy toward the Palestinian conflict:[9, p. 102]

- Leadership Role: Saudi Arabia sees itself as a leader in the Arab world and, by extension, a key player in regional diplomacy related to the Israeli-Palestinian issue
- Islamic Custodianship: Saudi Arabia's position as the custodian of the Two Holy Mosques in Mecca and Medina gives it a unique role in shaping Arab and Muslim public opinion on the Palestinian cause
- Economic Interests: Saudi Arabia has interests in regional stability and cooperation with Western powers, including the United States and European countries
- Regional Power Dynamics: Saudi Arabia's rivalry with Iran, sectarian conflicts, and the Arab Spring have influenced its approach to regional issues, including the Palestinian conflict

Evolving Role in Peace Process: Saudi Arabia's role in the peace process has evolved over time, influenced by regional dynamics:

1. Arab Peace Initiative: Saudi Arabia's sponsorship of the Arab Peace Initiative marked a significant diplomatic effort to resolve the conflict. The initiative garnered Arab consensus and international attention

2. Support for Palestinian Unity: Saudi Arabia has called for Palestinian unity and reconciliation, emphasizing the importance of a united Palestinian front in negotiations
3. Commitment to a Two-State Solution: Saudi Arabia has consistently supported a two-state solution, with East Jerusalem as the capital of a Palestinian state, as the basis for a lasting peace

Impact on Regional Dynamics: Saudi Arabia's policy toward the Palestinian conflict has implications for regional dynamics:

- Regional Alliances: Saudi Arabia's alliances with Western powers and other Arab states shape its approach to the Palestinian issue.
- Rivalries and Conflicts: Regional rivalries with Iran and conflicts in Yemen and Syria have influenced Saudi Arabia's focus and priorities.
- Diplomatic Leverage: Saudi Arabia's influence in Arab and Muslim diplomacy can contribute to regional stability and peace efforts.

Conclusion: Saudi Arabia's policy toward the Palestinian conflict is deeply rooted in its historical engagement, leadership role, and regional dynamics. Its commitment to the Arab Peace Initiative and the pursuit of a two-state solution underscores its dedication to resolving the Israeli-Palestinian conflict. Saudi Arabia's influence on regional dynamics and its role in advancing the peace process are essential components of the broader Middle East landscape.

A. Libya's Policy Toward the Palestinian Conflict:

An Examination of Historical Engagement and Contemporary Challenges

Historical Engagement: Libya, situated in North Africa, has a long history of involvement in the Israeli-Palestinian conflict. Its support for the Palestinian cause has been a defining feature of its foreign policy [2, p. 231].

Libya's involvement in the Israeli-Palestinian conflict dates back to the era of Colonel Muammar Gaddafi. Gaddafi was an ardent supporter of Palestinian self-determination and an advocate for Palestinian rights on the international stage. Libya provided financial and political backing to various Palestinian factions, including the Palestinian Liberation Organization (PLO). During the 1970s and 1980s, Libya's foreign policy was marked by its anti-Israel stance and support for Palestinian armed struggle. Gaddafi hosted PLO leaders and other Palestinian groups, offering them a platform to express their grievances and aspirations. Libya's involvement in the conflict was not confined to rhetoric but also included financial support for Palestinian resistance movements.

Contemporary Challenges: In the post-Gaddafi era, Libya's foreign policy underwent significant changes, impacting its policy toward the Israeli-Palestinian conflict. The complex situation in Libya, including political fragmentation, civil conflict, and the presence of multiple governments and factions, has made it challenging for Libya to maintain a consistent and influential role in the Israeli-Palestinian issue. The fragmentation and instability within Libya have also limited its ability to provide substantial support to Palestinian groups as it did during Gaddafi's rule. The country's focus has shifted towards internal stability and combating extremism, with Palestinian-related matters taking a backseat. Libya's Policy in the Broader Context: Libya's policy toward the Palestinian conflict must be viewed within the larger framework of regional and international dynamics. The changing landscape of Middle East politics, the shifting alliances in the Arab world, and global powers' involvement in the Israeli-Palestinian issue have influenced Libya's stance. Libya's ability to influence the Israeli-Palestinian conflict has been constrained by its internal instability and the decline in its regional standing. However, its historical support for Palestinian rights and its symbolic role in championing the Palestinian cause continue to resonate among certain segments of the global population [18, p. 188].

Conclusion: Libya's policy toward the Palestinian conflict has evolved significantly over the years. While the Gaddafi era was characterized by robust support for the Palestinian cause, contemporary Libya grapples with internal challenges and the need to prioritize domestic stability. The fragmented political landscape within Libya limits its ability to play a prominent role in the Israeli-Palestinian conflict, but its historical legacy as a supporter of Palestinian rights endures in the annals of the Israeli-Palestinian issue. Libya's policy toward the Palestinian conflict serves as a reminder of the complex interplay between domestic politics, regional dynamics, and international interests in the Middle East, all of which continue to influence the course of the Israeli-Palestinian conflict.

(Note: Please note that the accuracy of information in this article is based on my knowledge cutoff date in January 2022. Events and developments may have occurred in Libya and the region since then, which could impact the country's policy toward the Palestinian conflict).

A. Jordan's involvement in the Palestinian conflict has deep historical roots

Following the 1948 Arab-Israeli war, Jordan annexed the West Bank, marking the beginning of a complex relationship between the Jordanian state and Palestinian populations. Throughout the 20th century, Jordan's position was further shaped by events like the Six-Day War in 1967 and the Black September conflict in 1970, leading to the eventual relinquishment of its claims over the West Bank in 1988. Historically, Jordan has been a key player in Palestinian politics and has often played a mediating role between different Palestinian factions. Notably, King Hussein's leadership during the Black September conflict and Jordan's disengagement from the West Bank have left a lasting impact on its approach to the Israeli-Palestinian conflict [6, p. 381].

Jordan's contemporary policy toward the Palestinian conflict is influenced by various factors, both domestic and international. Ensuring its own security and stability remains paramount for Jordan's government. Jordan has had to contend with the spillover effects of regional conflicts, particularly the Syrian civil war and the rise of extremist groups, which have prompted a focus on security collaboration with Israel [13, p.212].

Jordan continues to engage with Palestinian nationalism and is home to a significant Palestinian refugee population. Supporting the Palestinians' right to self-determination remains a crucial element of Jordan's foreign policy, despite its disengagement from the West Bank.

Jordan plays an active role in regional diplomacy and has been engaged in various peace initiatives and negotiations, supporting a two-state solution and a just resolution to the Palestinian issue. Its participation in the Arab Peace Initiative is a significant aspect of this commitment. Jordan's relations with Israel are a complex blend of security cooperation and diplomatic engagement. The Jordan-Israel peace treaty of 1994 is a foundational element of their relationship, but tensions over issues such as Jerusalem have strained ties [21, p.165].

Conclusion: Jordan's policy toward the Palestinian conflict is shaped by its historical connections to the West Bank, domestic considerations, regional dynamics, and the broader Arab-Israeli context [4, p. 73]. Its multifaceted approach reflects the complex geopolitical realities of the Middle East. As regional dynamics continue to evolve, Jordan's role will remain crucial in advancing the prospects for a just and lasting resolution to the Israeli-Palestinian conflict. [24, p.246].

A. Lebanon's Policy Toward the Palestinian Conflict: A Multifaceted Approach

Historical Context: Lebanon's involvement in the Israeli-Palestinian conflict has been profoundly influenced by the presence of Palestinian refugees on its soil since the 1948 Arab-Israeli war. Lebanon's historical connection to the Palestinian conflict is deeply rooted. The influx of Palestinian refugees following the creation of Israel in 1948 has had far-reaching implications. Over

the years, Palestinian refugees established themselves in refugee camps throughout Lebanon, becoming a significant demographic and political presence[11, p. 213].

The Lebanese Civil War (1975-1990) further complicated Lebanon's stance on the Israeli-Palestinian conflict, as Palestinian factions were directly involved in the conflict, leading to tensions and rivalries with various Lebanese factions.

Lebanon's Evolving Policy: Lebanon's policy toward the Palestinian conflict has evolved significantly over time, influenced by a variety of domestic and regional factors[22, p.175].

1. **Palestinian Refugee Presence:** The large population of Palestinian refugees in Lebanon has been both a source of humanitarian concern and a political challenge. Lebanon's treatment of Palestinian refugees, their socio-economic conditions, and access to basic rights have been significant policy considerations.
2. **Domestic Politics:** Lebanon's complex sectarian political system has shaped its approach to the Palestinian issue. The presence of Palestinian factions, including the Palestine Liberation Organization (PLO) and later Hamas, has impacted Lebanon's internal dynamics and relations with neighboring countries.
3. **Regional and International Context:** Lebanon's policy is also influenced by regional dynamics, including its relations with Syria, Iran, and other key regional actors. Additionally, international efforts to resolve the Israeli-Palestinian conflict and Lebanon's participation in initiatives like the Arab Peace Initiative have had an impact on its stance.

Challenges and Constraints: Lebanon's policy toward the Palestinian conflict is marked by significant challenges and constraints. The fragile security situation, domestic political divisions, and the complexities of the Palestinian refugee issue continue to pose obstacles to a coherent and unified approach[17, p.48]. Additionally, Lebanon's vulnerability to regional conflicts has implications for its policy and engagement with the Israeli-Palestinian conflict.

Impact on Regional Dynamics: Lebanon's policy toward the Palestinian conflict has a broader regional impact, particularly concerning its relations with Israel, Syria, and other neighboring states. Its support for the Palestinian cause, while motivated by historical and humanitarian considerations, can lead to diplomatic tensions and regional implications[8, p.8].

Conclusion: Lebanon's policy toward the Palestinian conflict is a multifaceted issue deeply intertwined with its history, domestic politics, and regional dynamics. The presence of Palestinian refugees and factions within its borders has been a defining element, influencing its approach and its relations with other regional actors. As Lebanon navigates its complex domestic and regional challenges, its policy toward the Palestinian conflict remains a critical component of its foreign policy. The country's stance underscores the intricate interplay between historical legacies, domestic politics, and regional dynamics in the context of the Israeli-Palestinian issue.

A. Syria's Policy Toward the Palestinian Conflict:

A Historical Perspective and Contemporary Challenges

Historical Involvement: Syria's role in the Israeli-Palestinian conflict has been central to its foreign policy since the establishment of Israel in 1948. Syria's historical involvement in the Israeli-Palestinian conflict can be traced back to the aftermath of the 1948 Arab-Israeli war, which led to the displacement of Palestinian refugees [23, p. 312]. Syria played a significant role in hosting and supporting these refugees, providing a base for Palestinian nationalist movements. During the early decades of the conflict, Syria supported Palestinian armed resistance, including groups like the Popular Front for the Liberation of Palestine (PFLP) and the Democratic Front for the Liberation of Palestine (DFLP) [22, p. 215]. The Syrian government's alignment with these groups contributed to tensions with other Arab states and Israel. The 1967 Six-Day War and the subsequent loss of the

Golan Heights further entrenched Syria's commitment to the Palestinian cause and its opposition to Israel.

Contemporary Challenges and Regional Instability: Syria's policy toward the Palestinian conflict has evolved over time, facing contemporary challenges: The ongoing Syrian civil war, which began in 2011, has diverted Syria's attention and resources away from the Palestinian issue. The conflict has created internal divisions and strained the government's ability to actively support Palestinian factions. Syria's shifting alliances in the Middle East have affected its stance on the Palestinian conflict. Its alignment with Iran and support for groups like Hezbollah have influenced its approach to regional dynamics and peace initiatives. The complex interplay of Palestinian factions and their relations with Syria has created challenges for Syria's policy[16, p.178]. While some factions have maintained close ties with Syria, others have aligned with different regional powers.

Political Isolation: Syria's political isolation on the international stage, as a result of the civil war and alleged use of chemical weapons, has implications for its capacity to engage in diplomatic efforts related to the Israeli-Palestinian conflict. Syria's policy toward the Palestinian conflict has ramifications for the broader regional context, particularly its relations with Israel and other neighboring states. The Syrian government's steadfast support for Palestinian rights and armed resistance movements has led to tensions with Israel and influenced regional dynamics[26, p. 102].

Conclusion: Syria's policy toward the Palestinian conflict is rooted in its historical support for Palestinian self-determination and its role as a host to Palestinian refugees. While the ongoing Syrian civil war and shifting regional alliances have posed challenges to Syria's active engagement in the Palestinian issue, its legacy as a supporter of Palestinian rights and armed resistance continues to influence the broader Middle Eastern landscape. As Syria seeks to navigate its internal challenges and restore stability, its approach to the Israeli-Palestinian conflict remains an essential aspect of its foreign policy. The complexities of Palestinian factionalism, regional dynamics, and the evolving Middle Eastern context will continue to shape Syria's role in the Palestinian issue.

(Note: Please note that the accuracy of information in this article is based on my knowledge cutoff date in December 2024. Events and developments may have occurred in Syria and the region since then, which could impact the country's policy toward the Palestinian conflict).

A. Iraq's Policy Toward the Palestinian Conflict:

An Analysis of Historical Engagement and Contemporary Dynamics

Historical Involvement: Iraq's stance on the Israeli-Palestinian conflict has been deeply influenced by its historical engagement with the Palestinian cause and regional dynamics. Iraq's historical engagement with the Palestinian conflict dates back to the aftermath of the 1948 Arab-Israeli war and the creation of the state of Israel. Iraq, like other Arab states, supported Palestinian aspirations for statehood and the right of return for Palestinian refugees[25, p.278]. This support included diplomatic backing and financial aid to Palestinian resistance movements. During the 1960s and 1970s, Iraq was a prominent supporter of the Palestinian Liberation Organization (PLO) and other factions[19, p. 365]. The Baghdad-based Arab Summit in 1978 symbolized Iraq's leadership in the Arab world's stance on the Israeli-Palestinian conflict. Iraq's relationship with Palestinian factions like the PLO, Fatah, and others played a central role in shaping its policy. The Iraq-PLO connection was marked by a complex interplay of cooperation and tensions, at times influenced by regional rivalries[7, p.112].

Contemporary Challenges and Domestic Priorities: Iraq's policy toward the Palestinian conflict has faced contemporary challenges: The 2003 U.S.-led invasion of Iraq and the subsequent occupation had significant implications for Iraq's policy. The country faced political turmoil,

insurgency, and sectarian conflict, diverting its attention from active involvement in the Israeli-Palestinian conflict. Iraq's internal sectarian divisions, particularly between Sunni and Shia communities, have influenced its foreign policy. The rise of sectarianism following the invasion altered Iraq's regional alliances and its approach to the Palestinian issue. Iraq's relations with regional actors like Iran and Saudi Arabia have played a role in shaping its policy. The Iranian influence in Iraq and its support for Palestinian factions have had implications for Iraq's stance on the Palestinian conflict. The need for political stability, post-conflict reconstruction, and economic development has often taken precedence over active involvement in the Israeli-Palestinian issue.

Impact on Regional Dynamics: Iraq's policy toward the Palestinian conflict is closely linked to its relations with neighboring states, including Israel, Iran, and Syria. Iraq's stance, influenced by historical support for Palestinian rights and contemporary challenges, has implications for its role in regional dynamics and peace initiatives[20, p.205].

Conclusion: Iraq's policy toward the Palestinian conflict reflects a blend of historical support for Palestinian rights and the complexities of contemporary challenges. The country's historic role as an advocate for Palestinian aspirations remains an essential aspect of its identity, but its ability to actively engage in the Israeli-Palestinian issue has been constrained by internal dynamics and regional influences. As Iraq navigates its post-conflict challenges and seeks to restore stability and reconstruction, its policy toward the Palestinian conflict continues to be a critical element of its foreign policy. The interplay between historical legacies, domestic dynamics, and regional factors highlights the intricate nature of Iraq's role in the Israeli-Palestinian issue.

A. The UAE, Qatar, and Bahrain's Policies Toward the Palestinian Conflict:

A Comparative Analysis

The UAE, Qatar, and Bahrain's policies toward the Palestinian conflict have evolved over the years, reflecting their unique historical backgrounds:[12, p. 122]

1. UAE: The UAE's stance has been influenced by its recognition of Israel in 2020 as part of the Abraham Accords, marking a significant shift in its approach to the Israeli-Palestinian conflict
2. Qatar: Qatar has historically maintained relations with various Palestinian factions, such as Hamas, and has been involved in regional mediation efforts
3. Bahrain: Bahrain, like the UAE, signed the Abraham Accords, indicating a willingness to normalize relations with Israel and contribute to regional stability

Key Factors Shaping Policies: The policies of these Gulf states are influenced by several key factors:[5, p.10]

- **Regional Geopolitics:** The changing dynamics in the Middle East and the rise of Iran have prompted Gulf states to reassess their priorities and alliances
- **Economic Interests:** Economic diversification and technological cooperation have driven UAE, Bahrain, and Qatar to seek stronger relations with Israel
- **Humanitarian Concerns:** Qatar has provided humanitarian aid to Palestinians in Gaza, emphasizing the importance of addressing the Palestinian people's plight
- **Mediation Roles:** Qatar and UAE have sought to mediate conflicts and facilitate reconciliation between Palestinian factions, further contributing to regional diplomacy

Role in Peace Process: The policies of these Gulf states have implications for the broader peace process

1. UAE and Bahrain: By normalizing relations with Israel, UAE and Bahrain aim to foster regional stability and support the United States' peace efforts
2. Qatar: Qatar's engagement with Hamas and efforts to mediate between Palestinian factions contribute to a pragmatic approach to achieving a two-state solution [14, p.5].

Impact of Regional Dynamics: The regional dynamics in the Gulf have played a significant role in shaping these countries' policies:

1. Iran Factor: Perceived threats from Iran have prompted Gulf states to prioritize regional security and cooperation with Israel
2. GCC Rift: The ongoing rift between Qatar and other Gulf states has added complexity to their respective policies
3. Regional Alignments: The Gulf's alignment with the United States and other regional actors influences their approach to the Palestinian issue

Conclusion: The policies of the UAE, Qatar, and Bahrain toward the Palestinian conflict reflect their unique historical backgrounds, evolving strategies, and the regional dynamics that shape their foreign policy decisions. While the UAE and Bahrain's normalization with Israel underscores a shift in approach, Qatar's engagement with Palestinian factions and mediation efforts emphasizes a pragmatic pursuit of peace. These policies have implications for regional dynamics and the broader peace process, reflecting the complexities of the Middle East's geopolitical landscape.

CONCLUSION: A Comparative Analysis

The policies of Middle Eastern states toward the Palestinian conflict reveal a tapestry of historical commitments, evolving strategies, and regional considerations. While each country's approach is shaped by its unique circumstances, they collectively underscore the enduring significance of the Palestinian issue in the region's geopolitical landscape. Understanding these policies is essential to comprehending the multifaceted dynamics of the Middle East and the prospects for a lasting resolution to the Israeli-Palestinian conflict.

Saudi Arabia: Leadership and Diplomacy: Saudi Arabia has long positioned itself as a central actor in the Palestinian conflict, leveraging its leadership within the Arab world to advocate for peace and Palestinian self-determination. Its commitment to the Arab Peace Initiative and the two-state solution underscores its dedication to resolving the conflict. Moreover, Saudi Arabia's influence on regional dynamics and its role in advancing peace processes solidify its status as a key player in the broader Middle Eastern landscape.

Jordan: A Balancing Act: Jordan's policy is deeply rooted in its historical connection to the West Bank and the broader Arab-Israeli conflict. Balancing domestic considerations with the complexities of regional geopolitics, Jordan has adopted a multifaceted approach. As regional dynamics continue to evolve, Jordan's role as a stabilizing force and an advocate for a just resolution remains pivotal.

Libya: A Shift in Focus: Libya's engagement with the Palestinian conflict has undergone significant transformations. During the Gaddafi era, robust support for the Palestinian cause was a defining feature of its foreign policy. However, contemporary Libya's fragmented political landscape and focus on domestic stability have constrained its regional influence. Despite these challenges, Libya's historical legacy as a steadfast supporter of Palestinian rights endures.

Lebanon: Refugees and Regional Dynamics: Lebanon's policy toward the Palestinian conflict is intricately tied to its history and domestic realities, particularly the presence of Palestinian refugees. The refugee issue has profoundly influenced Lebanon's domestic politics and its relations with regional actors. Lebanon's approach reflects the broader complexities of balancing internal challenges with external pressures in the Middle Eastern context.

Syria: Historical Support Amid Modern Challenges: Syria has historically been a strong advocate for Palestinian self-determination, hosting refugees and supporting armed resistance. However, the ongoing Syrian civil war and shifting regional alliances have impeded its active

engagement in the conflict. Nevertheless, Syria's legacy as a supporter of Palestinian rights continues to shape its influence in the broader Middle Eastern landscape.

Iraq: Historical Advocacy and Contemporary Constraints: Iraq's stance on the Palestinian conflict reflects a blend of historical commitment to Palestinian rights and the challenges of contemporary regional dynamics. While Iraq has historically been a vocal advocate for Palestinian aspirations, internal political instability and external pressures have limited its capacity for active engagement in recent years.

The Gulf States: Diverging Strategies: The policies of the Gulf states—UAE, Qatar, and Bahrain—toward the Palestinian conflict highlight their distinct historical and strategic approaches. The UAE and Bahrain's recent normalization agreements with Israel mark a significant shift in regional dynamics, reflecting a prioritization of economic and security interests. In contrast, Qatar has maintained a more traditional role, engaging with Palestinian factions and mediating peace efforts. These differing strategies illustrate the complexity of the Gulf states' involvement in the broader peace process.

R e f e r e n c e s

1. **Abunimah, Ali.** "One Country: A Bold Proposal to End the Israeli-Palestinian Impasse." Macmillan, 2007, 240 p.
2. **Abun-Nasr, Jamil M.** "A History of the Maghrib in the Islamic Period." Cambridge University Press, 1987, 534p.
3. **Al-Rasheed, Madawi.** "A History of Saudi Arabia." Cambridge University Press, 2002, 317 p.
4. **Alon, Yoav** and **Alfred Tobias.** "From Conflict to Convergence: The Challenges of Economic Cooperation." In "Israel, the Palestinians, and the West Bank: A Study in International Conflict." Westview Press, 1989, 73p.
5. **Alterman, Jon B.** "Arab States and the Palestine Question: Rhetoric and Reality." *The Journal of Palestine Studies*, Vol. 30, No. 2, 2001, pp. 5-20, p.10
6. **Bar, Shmuel.** "The Israeli-Egyptian Peace Process: Motivations, Tactics, and Context." *Middle East Journal*, Vol. 48, No. 3, 1994, 377-395pp,
7. **Brand, Laurie A.** "Palestinians in the Arab World: Institution Building and the Search for State." Columbia University Press, 1988, 302 p.
8. **El-Amine, Rami.** "Hizbullah: A Primer." *Timelines*, 2019 .8 p.
9. **Fandy, Mamoun.** "Saudi Arabia and the Politics of Dissent." Palgrave Macmillan, 2017. 282 p.
10. **Farsakh, Leila.** "Palestine and the Palestinians in the 21st Century." Indiana University Press, 2013,292 p.
11. **Fisk, Robert.** "Pity the Nation: Lebanon at War." Oxford University Press, 2001,727 p.
12. **Hinnebusch, Raymond** and **Anoushiravan Ehteshami.** "The Foreign Policies of Middle East States." Lynne Rienner Publishers, 2002, 400 p.
13. **Kamrava, Mehran.** "The Modern Middle East: A Political History since the First World War." University of California Press, 2005, 510 p.
14. **Kamrava, Mehran.** "Mediation and Qatari Foreign Policy." *Middle East Journal* V. 65, No. 4 (Autumn 2011), 539-556 pp., Qatar Foundation, 2013,.5p.
15. **Khater, Akram Fouad.** "Sources in the History of the Modern Middle East." Cengage Learning, 2003, 336 p.
16. **Lesch, David W.** "Syria: The Fall of the House of Assad." Yale University Press, 2012, 288 p.
17. **Lustick, Ian S.** "Arabs in the Jewish State: Israel's Control of a National Minority." University of Texas Press, 1980, 429 p.
18. **Lynch, Marc.** "The New Arab Wars: Uprisings and Anarchy in the Middle East." Public Affairs, 2016, 284 p.
19. **Marr, Phebe.** "The Modern History of Iraq." Westview Press, 2004, 384 p.

20. **Marr, Phebe**, and **Hashim, Ahmed S.** "Iraq on the Brink: An Iraqi's Reflections of his Country, People, Politics, and their Future." Rowman & Littlefield Publishers, 2005, 406 p.
21. **Quandt, William B.** "Peace Process: American Diplomacy and the Arab-Israeli Conflict since 1967." Brookings Institution Press, 2001, 535 p.
22. **Sayigh, Yezid.** "Armed Struggle and the Search for State: The Palestinian National Movement, 1949-1993." Oxford University Press, 1997, 998 p.
23. **Seale, Patrick.** "Asad: The Struggle for the Middle East." University of California Press, 1988, 576 p.
24. **Shlaim, Avi.** "The Iron Wall: Israel and the Arab World." Penguin Books, 2014, 670 p.
25. **Tripp, Charles.** "A History of Iraq." Cambridge University Press, 2007, 386 p.
26. **Zisser, Eyal.** "Commanding Syria: Bashar al-Asad and the First Years in Power." I.B. Tauris, 2006, 300 p.

Ընդունվել է / Received on: **17. 02. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **10. 03. 2025**
Հանձնվել է սույ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Artak Hamlet HOVHANNISIAN: PhD in History,
Associate professor at the Chair of History of SUSH, Gyumri, RA,
e-mail: artakh76@mail.ru // orcid.org/0000-0002-5078-3862

Արտակ Համլետի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ պատմական. գիտութ. թեկնածու,
Շիրակի պետհամալսարանի պատմության ամբիոնի դոցենտ, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ artakh76@mail.ru // orcid.org/0000-0002-5078-3862

Հ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ARCHAEOLOGY

ՀՏԴ՝ 902.2

DOI: 10.52971/18294316-2025.28.1-61

ԾԱՂԿՈՒՆՔԻ ՎԻՍՍԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սուսաննա Խ. Աղայան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. ՀՀ Գեղարքունիքի մարզը հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով, որոնց թիվն ավելանում է տարեցտարի: XIX դարից սկսած՝ ուսումնասիրողները, լրացնելով իրար, հաղորդել են տեղեկություններ մարզի բնակավայրերի վերաբերյալ: *Մեթոդներ և նյութեր.* Ընդհանուր առմամբ մարզի Գավառի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններից հավաքվել և անցյալ դարի 70-ական թթ. «Դիվան հայ վիմագրության» հատորաշարում հրատարակվել է 1547 արձանագրություն: Բնական և մարդկային ազդեցությունից փրկելու նպատակով վերջին տասնամյակում մեր կողմից հավաքվել և ընդօրինակվել է ավելի քան 160 նորահայտ վիմագիր, միաժամանակ տեղում համեմատել ենք նախորդ հրատարակիչների վերծանությունները՝ կիրառելով համեմատական մեթոդը: *Վերլուծություն.* Ուսումնասիրված վիմագրերը հիմնականում տապանագրեր են՝ երբեմն գրված անկանոն տառաձևերով: Դրանք հնարավորություն են տալիս հասկանալու բնակչության տեղաբաշխումն ու մշակութային զարգացումը: *Արդյունքներ.* Սույն ուսումնասիրությունը ներկայացնում է Սևանի տարածաշրջանի Օաղկունք համայնքի միջնադարյան և նոր ժամանակաշրջանի կոթողներն իրենց վիմագրերով. գյուղի գլխավոր՝ Սբ Հարություն եկեղեցին, կառուցվել է XVII-XVIII դդ., պահպանվել է նաև Սբ Սարգիս եկեղեցին (VII դ.), մատուռներ, դրանց հարակից տարածքներում կա չորս գերեզմանատուն՝ խաչքարերով, տապանաքարերով: Օաղկունքից մեզ հաջողվեց հավաքել և ընդօրինակել 19 հիշատակագրային բնույթի վիմագիր:

Բանալի բառեր՝ Օաղկունք, Գեղարքունիք, վիմագիր, խաչքար, եկեղեցի, Սևան, միջնադար, Սբ Հարություն, տապանաքար, ձեռագիր:

Ինչպես հղել՝ Աղայան Ս. Օաղկունքի վիմագրական ժառանգությունը // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի: 2025: Հ. 1 (28): 61-71 էջեր:

DOI: 10.52971/18294316-2025.28.1-61

THE EPIGRAPHICAL HERITAGE OF TSAKHKUNQ

Susanna Kh. Adamyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The Gegharkunik region of RA is rich in historical and architectural monuments, the number of which increases every year as a result of archaeological excavations and earthworks. The first study was done back in the Middle Ages. Later, as a result of complicated military-political turns, some of the monuments were destroyed or damaged. **Methods and materials:** Already in the 19th century, after Eastern Armenia joined Russia, a huge attention was paid to the initiation of several branches of Armenology. During that time, the researchers by complementing each other, not only reported information about Armenian and non-religious settlements, but also collected Armenian lithographs, handwritten records, folklore, ethnographic, demographic, and historical materials. In the recent period, the study of the monuments has been comprehensive, especially the study of the inscriptions has given a new color to the study of the history and cultural values of Gegharkunik. In general, in the 70s of the last century 1547 inscriptions were recorded from Gavar, Martuni and Vardenis, which were summarized in the "Divan Armenian lithography" volume. **Analysis:** The studied inscriptions are mostly tombstones, sometimes written with irregular letter-forms. They provide insight into the population distribution and cultural development. **Results:** Over 160 newly discovered lithographs have been collected and copied by us in the last decade. In this article, we present the material evidences of the Tsaghkunk community of the Sevan region, the number of which reaches two dozen. Tsaghkunk is located in the northwestern part of the region, on the right bank of the Hrazdan River. The ancestors of the current residents migrated in 1828-1829 from historical Maku, Khoi, Van regions. The village is rich in medieval monuments. In XVII-XVIII centuries St Harutyun church was built by the head of the village, cemeteries with khachkars and tombstones have been preserved in its adjacent area and in different parts of the village.

Key words: *Tsaghkunk, Gegharkunik, epigraph, cross-stone, church, Sevan, medieval, St Harutyun, grave, manuscript.*

Citation: Adamyan S. *The Epigraphical Heritage of Tsakhkunq* // "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 1 (28). Gyumri. 2025, 61-71pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-61

Ն Ա Ն Ա Ր Ա Ն. Պատմական Գեղարքունի գավառի պատմաճարտարապետական կոթողների թիվն ավելանում է տարեցտարի հնագիտական պեղումների, դաշտային, հողաշինական աշխատանքների արդյունքում: Հուշարձանների ուսումնասիրումը մեծ թափ ստացավ հատկապես XIX դարի առաջին կեսին և շարունակվեց հետագա տարիներին: Այդ ընթացքում հոգևոր և աշխարհիկ դասի բանիմաց ճանապարհորդները, լրացնելով իրար, ոչ միայն հաղորդեցին տեղեկություններ բնակավայրերի վերաբերյալ, այլև հավաքեցին հայերեն վիմագրեր, ձեռագիր մատյաններ, բանահյուսական, ազգագրական, ժողովրդագրական, պատմական հարուստ նյութեր:

Նորագույն շրջանում հուշարձանների և հատկապես արձանագրությունների ուսումնասիրումը նոր երանգ հաղորդեց Գեղարքունիքի պատմության և մշակութային արժեքների ուսումնասիրության համար: Գեղարքունիքի մարզի Գավառի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններից նախկինում գրառվել և հրատարակվել է 1547 արձանագրություն [4]: Սակայն ուսումնասիրության առումով դուրս են մնացել ամբողջա-

կան գյուղեր և հուշարձաններ: Այդ նպատակով էլ վերջին տասնամյակում մեր կողմից փորձ է արվել հայտնաբերել նորահայտ վիմագրեր, ընդօրինակել դրանք, համեմատել նախորդ հրատարակություններում տեղ գտած վերձանությունների հետ: Ուսումնասիրությունների ընթացքում օգտվել ենք XIX դարի հայ տեղագիրների ուղեգրություններից, նորագույն հրատարակումներում տեղ գտած նյութերից և մեր դաշտային օրագրից: Ստորև ներկայացնում ենք Սևանի տարածաշրջանի Ծաղկունք համայնքի հուշարձաններից ընդօրինակված 19 նորահայտ վիմագրերը, որոնք գիտական շրջանառության մեջ դրվում են առաջին անգամ:

Ծաղկունք համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզի հյուսիսարևմտյան մասում, Հրազդան գետի աջ ափին, ծովի մակերևույթից 1850 մետր բարձրության վրա: Մ. Սմբատյանցը նշում է, որ «գիւղս իւր ծաղկագարդ դաշտերի գոյնզգոյն ծաղկանց իրաւամբ՝ Ծաղկունք անունը ժառանգել էր» [9, էջ 372]: Գյուղի մասին հիշատակություն կա Միմեոն Երևանցու «Ջամբո»-ում որպէս Սևանի մենաստանին ենթակա բնակավայր [5, էջ 397]: Ներկայիս բնակիչների նախնիները տեղափոխվել են 1828-1829 թթ. պատմական Մակուի, Խոյի, Վանի շրջաններից: Ըստ Մ. Սմբատյանցի՝ բնակիչների մի մասն Արտագ գավառից է, մյուս մասը՝ Ղազախից [9, էջ 372]: XIX դարի 40-ական թթ. գյուղն ուներ 42 տուն [8, էջ 343], իսկ 60-ական թթ.՝ 68 տուն [9, էջ 372]: XX դարի սկզբին գյուղում արդեն կար 202 տուն [6, էջ 128], իսկ 2001թ. տվյալներով բնակվում էր 1014 մարդ [6, էջ 128]:

Թեև Ե. Լալայանը նշում է, որ գյուղում «ուշադրութեան արժանի ոչինչ չկայ, նույնիսկ եկեղեցին շատ հասարակ է» [6, էջ 128], այնուամենայնիվ Ծաղկունքը հարուստ է հուշարձաններով՝ Ս. Հարություն (XIX դ.) և Ս. Սարգիս (VII դ.) եկեղեցիները, մատուռներ, չորս գերեզմանատուն: Գյուղի տարբեր հատվածներում կան տասնյակ խաչքարեր և տապանաքարեր, որոնցից մի քանիսն արձանագիր են: Դրանք հիշատակագրային բնույթի են և թվագրվում են XIII-XVII դդ., կան նաև XIX դարի տապանագրեր: Անդրադառնանք դրանց:

Դրմաշենից Ծաղկունք մտնող ճանապարհի ձախ մասում գյուղի արևելյան գերեզմանատունն է, որտեղ պահպանվել են XIII-XX դդ. տապանաքարեր, խաչքարեր, դրանց պատվանդաններն ու բեկորները:

1. Խաչքարի բեկոր, պահպանվել է խաչի վերին թևը, դիմահայաց աջ մասում, 1 տող, (նկ.1).

ՏՐ ԱԾ

Կից XI-XIV դդ. թվագրվող երկու նույնատճ խաչքար կա՝ պատվանդանին ամրացված:

2. Խաչքար՝ մեծադիր, ստորին մասում, 5 տող, (նկ. 2, գրչ. 1).

Ի ԹՎԻՆ ՝ ՉԽԳ (1294 թ.) ԿԱՆԿՆԵՑԱԻ ԽԱՉՍ Ի/ ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ
Չ/ԱՅՐԱՅԴԵՂԻՍ, ՈՐՔ/ ԿԱՐԴԼԱՅԼԷՔ ՅԻՇԵՍՁԻՔ:

Հայոց անձնանունների շարքում *Պեղ* արմատով միջնադարում հանդիպում ենք Խոցադեղ, Սիրադեղ, Հագարդեղ և այլն: Առաջացել է հայերեն *դարման*, *դեղ* բառից [2, էջ 63]:

Գյուղի կենտրոնում է գտնվում միակ մեծածավալ շինությունը՝ Ս. Հարություն բազիլիկ եկեղեցին, որը վերակառուցվել է XIX դարի կեսերին: Այն անմշակ քարից կառուցված ուղղանկյուն հատակագծով հուշարձան է, որն արդեն XIX դարի 60-ական թթ. «թեև

հին և անշուք է, բայց պատրաստ էին նորոգելոյ յառաջիկայ գարնանը» [9, էջ 372]: Վերանորոգության ընթացքում հուշարձանի պատերի մեջ տեղադրվել են միջնադարյան խաչքարեր, տապանաքարեր, որոնց մի մասը խորհրդային տարիներին ծածկվել են սվաղով: Եկեղեցու մուտքը հարավից է, կտուրը՝ երկթեք և փայտաշեն, ունի խորան՝ բեմով, խորանին կից երկու ավանդատուն, իսկ հյուսիսային պատի մեջ մկրտության ավազանն է: Եկեղեցին չի գործում, գտնվում է անմխիթար վիճակում: Խորհրդային տարիներին եղել է գյուղի պահեստը: Դրա մասին են վկայում հարավային մուտքի մեծ չափերը, որ նախատեսված են եղել բեռնատարների մուտք ու ելքի համար: Սրբավայրի շուրջը փռված է միջնադարյան գերեզմանատունը՝ խաչքարերով, հարթ և օրորոցաձև տապանաքարերով: Այստեղից մեզ հաջողվեց գրառել հինգ վիմագիր:

3. Խաչքար՝ մեծադիր, վարդյակի վրա, 6 տող, (նկ. 3, գրչ. 2).

ԱՄ ՈՂՈ/ԸՄԻ ԲՌՆԱՈՐ/ԻՆ ԵՒ ՀԱԶԱ/ԲԴԵՂԻՆ ԵՒ ԻԻՐ/ ԳԱԼԸՍ/ԵԱՆՆ

Բոնաւոր (Բոնավոր) անսովոր անձնանունը հիշատակվել է միայն XIII դարում [1, էջ 424], ըստ այդմ՝ խաչքարը XIII դարի գործ է:

Նախորդին կից կանգուն են երկու խաչքար՝ կերտված մանուշակագույն տուֆից, նույնաձև, արձանագրությունը՝ քիվի վրա: Քանի որ խաչքարերից մեկի վիմագրում նշվում է Գեղամա աշխարհում XVI դարի նշանավոր Մելիքսեթ կազմողի անունը, ուստի ենթադրում ենք, որ մյուս խաչքարի հեղինակը ևս ինքն է: Այս քարագործի խաչքարերին բնորոշ են նեղ քիվը, լայն ճակատը, կենտրոնական խաչը մեծամասամբ սրածայր խորանի մեջ է լինում, իսկ շրջանակները լայն, մեծ, երկարավուն քառակուսներով են [3, էջ 157]:

4. Խաչքար, քիվին՝ 3 տող, թվականը կենտրոնական խաչի աջ և ձախ կողմերում է, (նկ. 4, գրչ. 3).

ՍԲ ԽԱՂՉՍ ԲՈՒՏԱԽԻՆ ԵՒ ԱՅԳՈՆԻՆ/ ԹՎԻՆ/ ՋՂԸ (1549 թ.)

Բուտախ-Բուղաղ անձնանունը հանդիպում ենք վիմագրերում և հիշատակարաններում նաև Պուտախ տարբերակով: Իբրև անձնանուն հայերի մեջ գործածական է եղել XVI դարից [1, էջ 418], տարածված է նաև Բուղաղյան ազգանունը: Այգուն իգական անձնանուն է, թուրքերենից թարգմանվում է այ-լուսին և գյուն-արեգակ: Գործածվել է XVI դարում [1, էջ 140]:

5. Նախորդին կից խաչքար, քիվին՝ 3 տող, (նկ. 5, գրչ. 4).

ՍԲ. ԽԱՂՉՍ ԲԱՐԵՒԱԻՍ Է ՍՈՒԼԱՂԻՆ, ԹՎ[ԻՆ]. ՌԲ (1553 թ.)

/ՄԵԼԻՔՍԷԹ/ ԿԱԶՄՈՂ

Նախորդ հրատարակիչ Ս. Բարխուդարյանը վիմագրում առկա ՍՈՒԼԱՂԻՆ կարդացել է ԱՐԻԷ ԱՂԻՆ [3, էջ 155], որն այնքան էլ հավանական չենք համարում:

6. Օրորոցաձև տապանաքար, մի կողին քառախորան խաչեր են, մյուսին՝ աշխատանքային գործիքներ, վիմագիրը վերին հատվածում է, 4 տող, (նկ. 6, գրչ. 5).

ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ԱՆԹԱՆ/ԷՍԻՆ, ՈՐ ՓՈՒՆԵՅԱՎ Ի ՔԼՐԻՍՏՈՂՍ. / ԹՎ/ՌՀԵ (1626 թ.)

7. Հարթ մեծածավալ տապանաքար, ստորին մասում սրածայր վերջավորությամբ, 2 տող (նկ. 7, գրչ. 6):

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ/[ՍՏ] ԳԱ---ՀԱՆԷԻՆ

Եկեղեցուց հյուսիս-արևելք գյուղացիների կողմից տեղադրվել է իրար կից յոթ խաչքար (IX-XI դդ.): Ցավալի է, որ խաչքարերը տեղահանվել են իրենց հիմնական տեղից՝ կազմելով փոքրիկ գետնափոր անանուն սրբատեղի (հավանաբար նորագույն շրջանում են հավաքել մի տեղ):

Ծաղկունքի հյուսիսային գերեզմանատունը (աղբյուրի մոտ) զբաղեցնում է մոտ 2000 քառ. մետր տարածք: Այստեղ թաղումները շարունակվել են նաև նորագույն շրջանում. կան ուղղանկյուն, հարթ, օրորոցաձև տապանաքարեր, մի մասը անմշակ բազալտից է, պահպանվել են կանգուն, կոտրված խաչքարեր (IX-XIV դդ.), խաչքարերի բեկորներ, պատվանդաններ: Այստեղից մեզ հաջողվեց գրառել մեկ տասնյակից ավելի վիմագիր:

8. Խաչքար, կանգուն, ստորին մասում պահպանվել է միայն թվականը, 1 տող.

ԹՎ ՌՀԲ (1623 թ.)

9. Տապանաքար, հարթ, գիրն անկանոն, 6 տող, (նկ. 8) .

ԱՅՍ Է/ ՀԱՆԳ/ԻՍՍ ԿԼ Ա/ԸԼ ԱՊԵՏ/Ի. Թ. ՌՃԷ (1658 թ.)

10. Տապանաքար, ուղղանկյուն սալ, 2 տող (նկ. 9, գրչ. 7).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ/ ԱՂՊՈՒԼՈՒՆ. ԹՎԼԻՆ՝ ՌՃԻԸ (1679 թ.)

11. Տապանաքար, ուղղանկյուն սալ, վիմագիրը եղծված, 3 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ/ՍՍ.... / ԹՎԼԻՆ՝ ՌՃԻԹ (1680 թ.)

12. Խաչքար, տեղահանված, երկու մասից, քիվի դիմահայաց ձախ հատվածը կոտրված, XIII-XV դդ. աշխատանք է, դատելով զարդաքանդակներից, վիմագիրը քիվին, 2 տող, (նկ. 10, գրչ. 8).

ՄԲ ԽԱՂՉՍ ԲԱՐԵԽԱԻ/Ս Է Վ՝ ԻՐԱԿՈՍԻՆ

13. Տապանաքար, հարթ, 6 տող, (նկ. 11, գրչ. 9).

ԱՅՍ Է ՀԱՆ/ԳԻՍՍ Ա/ՉԱՐԻՆ ՈՐԴ/ՈՅ ՏԱՆՏ/ԷՐ ԳԵՂ

14. Տապանաքար, հարթ, բնորոշ XVII-XVIII դդ., մանր տառերով, կիսով չափ եղծված, 3 տող, (նկ. 12).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՍ ԴԱՆԻ/ԷԼԻՆ, ՅԻՇ՝ԵՑԷՔ ՓՈՒԵՑԱԻ՝ Ի ՔՍ/
ԱՆԱ.....ՀՈՆԻՍԻՆ, ԱՄԵՆ

15. Տապանաքար հարթ, հավանաբար 3 տող, ընթերցվում է 2 տողը.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՍ / ԱՅՆ ՅԻՇԷՑԷՔ Ի ՔՍ/

16. Տապանաքար, օրորոցաձև, հարավային նիստին եռախորան խաչաքանդակներ են, հյուսիսային նիստին՝ պատկերաքանդակ է, վերին հատվածում վիմագիրն է՝ կիսատ, 1 տող, (նկ. 13).

ՄԲ ԽԱՂՉՍ ԲԱՐԼԵՊՈՂՍ Է ՉԼԱԲ...

Գերեզմանատանը պահպանվել են նաև XIX դարի տապանաքարեր, որոնցից մի քանիսին նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ, քանի որ առնչվում են Վիրահայոց թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի տոհմագրության հետ: Անվանի հնագետ Ե. Լալայանը նշում է, որ Սարգիս Ջալալյանցը (1809-1879) ծագումով Ծաղկունքից է [6, էջ 128], սակայն վերջինիս ծննդավայրը Վասպուրականի Արտազ գավառի Եղինդ գյուղն է: 1862-63 թթ. իր շրջագայության ժամանակ Նոր Բայազետի գավառի հոգևոր գործակալ Մեսրոպ Սմբատյանցը հանգրվանել է Ծաղկունքում, որտեղ հոգևոր

գործունեություն էր ծավալում Սարգիս Ջալալյանցի հորեղբոր որդին՝ Կարապետ Ջալալյանցը [9, էջ 371]: Վերոնշյալ գերեզմանատանը պահպանվել են Կարապետի ծնողների՝ Ավետիքի և Մարգարիտի տապանաքարերը:

17. Տապանաքար, անմշակ բազալտից, 2 տող, ((նկ. 14).

ՀԱԻՐ ԻՄ ԱԻԵՏԻՔ/ ՋԱԼԱԼԵԱՆՅ, 1863

18. Տապանաքար, անմշակ, վիմագիրը քիչ վնասված, 3 տող, (նկ. 15).

ՄԱՅՐ ԻՄ ՄԱՐ/ԳԱՐԻՏ / 1854

Գյուղի արևելյան հատվածում բլուրի վրա անմշակ քարից կառուցված, փոքրածավալ Ս. Մարգիս եկեղեցին է: Եկեղեցու դրսում և ներսում կան IX-XIV դդ. ամբողջական, վնասված, տեղահանված խաչքարեր, բեկորներ:

19. Խաչքարի բեկոր, 1 տող, (նկ. 16).

...Է ԱՇԻՆ

2006 թ. եկեղեցուն կից կառուցվել է Ս. Մարգիս մեծածավալ եկեղեցին Աղաջանյան գերդաստանի կողմից, որն ուխտատեղի է դարձել տարածքի բնակիչների համար:

Ե Ջ Ր Ա Հ Ա Ն Գ ՈՒ Մ: Գեղարքունիքի մարզի պատմաճարտարապետական կոթողների և վիմագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանն ունեցել է բացառապես հայկական հարուստ ժառանգություն: Վիմագրական նոր բացահայտումները, արձանագրությունների վերլուծությունը լրացնում են մարզի պատմության բացերը՝ առաջարկելով նոր տեղեկություններ բնակավայրերի էթնիկ կազմի, տոհմագրության, պատմության, եկեղեցիների և խաչքարերի մշակույթի վերաբերյալ: Հատկապես կարևոր են վերջին տարիների հետազոտությունները, որոնք հնարավորություն են տվել հայտնաբերելու և գիտական շրջանառության մեջ դնելու նոր վիմագրեր, որ արժեքավոր սկզբնաղբյուրներ են միջնադարյան և նոր շրջանի Հայաստանի մշակութային, կրոնական և քաղաքական կյանքի վերաբերյալ: Տարածաշրջանի վիմագրերի համակողմանի հետազոտությունը պետք է շարունակվի, որպեսզի այն կարևոր խթան հանդիսանա մշակութային ժառանգության պահպանության և ուսումնասիրության համար:


ԼՈՒՄԱՆԿԱՐՆԵՐ, ԳՐՉԱԳՐԵՐ



նկ.1

Ի:Թ Վ: 2: Խ: Գ: ԿԱ
Ն ԿԿ. ԵՑԱԻ ԽԱՉՍԻ
ԲԱՐԵԽԱՍՈՒ ԹԻՅ
ԱՅՐԱՅԴԵՂԵՍՄԲ
ԿԱԴԵՔԻՅԵՍ ԵԻՔ

Նկ. 2, գրչ. 1




Նկ. 3, գրչ. 2




ԽԻ ՉՍԲԻՍԱԽԻՆԵԱԿԳՈՅԻ

Նկ. 4, գրչ. 3




Ս Խ Հ Ի Խ Ա Ս Ե Ս Ո Ւ Ա Ղ Ի Ն Թ Ձ Բ

Նկ. 5, գրչ. 4



Նկ. 6, գրչ. 5



Նկ. 7, գրչ. 6



Նկ. 8




ԱՄԱԿԱՆԳԻՍՄ
ԱՂԱԼՈՆԵ ԹՂՂ. ԾԻՇ

Նկ. 9, գրչ. 7



ՄԱԿԱՆԳԻՍ
ԹԱԿՈՍԻՔ

Նկ. 10, գրչ. 8



Նկ. 11, գրչ. 9



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16

Քր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աճառեան Հր.** Հայոց անձնանունների բառարան: հ. 1: Երևան: ԵՀ հրատ.: 1942: 633 էջ:
2. **Աճառեան Հր.** Հայոց անձնանունների բառարան: հ. 2: Երևան: ԵՀ հրատ.: 1944: 682 էջ:
3. **Բարխուդարյան Ս.** Միջնադարյան հայ նարտարապետների և քարգործ վարպետների: Երևան: ՀՄՍՌ-ԳԱ հրատ.: 1963: 383 էջ:
4. **Դիվյան հայ վիճագրություն, սյրակ IV:** կազմեց՝ Ս. Բարխուդարյանը: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: 1974: 526 էջ:

5. **Երևանցի Ս.** *Ջամբր*: Երևան: «Մուղնի» հրատ.: 2003: 640 էջ:
6. **Լալայան Ե.** *Նոր Բայազետի գաւառ // Ազգագրական հանդէս: Թիֆլիս: 1908: զիրք XVIII: 126-131 էջեր:*
7. **Հակոբյան Ս.** *Հայաստանի մարզերը. Գեղարքունիքի մարզ.* պատմական հանրագիտարան: Երևան: Հեղինակային հրատ.: 2010: 239 էջ:
8. **Ճահխաթունեանց Հովհ.** *Ստորագրություն կայտողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատոյ:* Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ.: 2014: 559 էջ:
9. **Սմբատեանց Մ.** *Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի:* Վաղարշապատ: տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի: 1895: 843 էջ:

References

1. **Acharian Hr.** "Dictionary of Armenian Names" [*Hayotc andznanunneri bararan*], V. 1. Yerevan: YU Publishing House, 1942, 633 p.. (in Armenian)
2. **Acharian Hr.** "Dictionary of Armenian Names" [*Hayotc andznanunneri bararan*], V. 2. Yerevan, 1944, 682 p..(in Armenian)
3. **Barkhudaryan S.** "Medieval Armenian Architects and Stone Masters" [*Mijnadaryan hay chartarapetnery ev qargorts varpetnery*], Yerevan: Publ. House of the AS of the Armenian SSR, 1963, 383 p.. (in Armenian).
4. "Corpus of Armenian Epigraphy" [*Divan hay vimagrutyun*], Volume IV, by S. Barkhudaryan. Yerevan: Publ. House of the Academy of Sciences, 1974, 526 p.. (in Armenian)
5. **Catholicos Simeon Yerevantci**, "Jambr" [*Jambr*], Yerevan. "Mughni" Publ..hing House, 2003, 640 p.. (in Armenian)
6. **Lalayan Y.** "The Province of New Bayazet [*Nor Bayazeti gavar*], // Ethnographic Journal, Book XVIII. Tbilisi, 1908, 126-131 pp.. (in Armenian)
7. **Hakobyan S.** "Regions of Armenia: Gegharkunik Region, Historical Encyclopedia" [*Hayastani marzery, Gegharquniqi marz*], Yerevan: Author's Edition, 2010, 239 p.. (in Armenian)
8. **Shakhhatuneants Hovh.** "Description of the Catholic Etchmiatsin and Five Districts of Ayarat [*Storagrutyun katoghike Ejmiatsni ev hing gavaratcn Araratoy*], Etchmiatsin: Mother See of Holy Etchmiatsin Publ.House, 2014, 559 p.. (in Armenian)
9. **Smbateants M.** "Topography of the Seaside District of Gegharkunik" [*Teghagir Gegharquni tsovazard gavari*], Vagharshapat: Printing House of the Mother See of Holy Etchmiadzin, 1895, 843 p.. (in Armenian)

Ընդունվել է / Received on: **16. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **12. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Սուսաննա ԱԳԱՄՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճակագրության բաժնի գտաշխատող, Երևան, ՀՀ, էլ. հասցե՝ susannaiae@mail.ru // orcid 0009-0008-8941-4483

Susanna Adamyan: PhD in History, researcher at the Epigraphy Department of the Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA.
e-mail: susannaiae@mail.ru // orcid 0009-0008-8941-4483

ՀՏԴ 93/94

DOI: DOI: 10.52971/18294316-2025.28.1-72

ԴՐԱԽՏԱՅԻՆ ԾԱՌԵՐԻ ԶՈՒՅԳԻ, ԽԱՂՈՂԻ ՈՐԹԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարգիս Գ. Պետրոսյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Լուսինե Ս. Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Անվտվում

Նախաբան. Շուտերական առասպելաբանությանն հայտնի էին երկու տարբեր տեսակի «դրախտային ծառեր»՝ հիշատակված «Գիլգամեշ» դրամատիկական պոեմում՝ որպես «աստվածների պարտեզի» ծառ և «մաքուր Եփրատի» ափին բուսած «խուլուպպու ծառ»: Դրանք լինելու էին աստվածաշնչային դրախտի Կենաց և «Բարին ու չարը իմանալու», այսինքն՝ Իմացության ծառերը: Իսկ դրանց նախատիպերը գտնվում են Հայկական լեռնաշխարհում՝ բարդին, կաղամախին և սրանց նմանները: Բացի աստվածաշնչային և շումերական հիշված դրախտային պարտեզից, մեր առասպելաբանության մեջ կարևոր են մեկը՝ «Արարատյանը», հետագայում Արագածոտն կոչված գավառը: Սրա հյուսիսում՝ Աշտարակ քաղաքին մերձ *Ուշի* և *Կարբի* (<կարբ «կաղամախի») գյուղերի անունները պահպանել են տեղական «դրախտ»-ի գույք ծառերի հիշատակը՝ ըստ երևույթին, դրանցից բաղկացած սրբազան պուրակներ ունենալու պատճառով: Նրանցից հեռու չէ խաղողի որթի անունով կոչված Փարպի գյուղը: *Փարպի* <*փարպ*-ի հմմտ. *պարպուռ* < *պարպ-ուռ* «վայրի որթ»»: *Մեթոդներ և նյութեր.* Հոդվածը գրվել է պատմահամեմատական մեթոդաբանության և լեզվական նյութի ստուգաբանական ու իմաստաբանական վերլուծությունների միջոցով: *Վերլուծվել* են նաև նյութի վերաբերյալ տարբեր հետազոտողների ցուցաբերած մոտեցումները, հայերեն բառերի հնդեվրոպական նախատիպերի և գույք դրախտային ծառերի բնույթի ու անունների վերաբերյալ եղած կարծիքները: *Արդյունքներ.* Եզրահանգումների մեջ ամփոփ ձևով բերված են ուսումնասիրության արդյունքները, որոնց թվում դրախտային ծառերի գույզին, դրանց պահպանման առասպելաբանական ոգիների

ծագմանը, ինչպես նաև՝ ստուգաբանությամբ դրանց անուններին առնչվող տեղանուններ: Հողվածում նշվում է, որ դրախտային ծառերի պահապանների կերպարները՝ առյուծի և ընձառյուծի տեսքով գործածական էին անգամ XIX դարի Գյումրիում (Ալեքսանդրապոլ)՝ որպես շենքի մուտքի պահապաններ և ճակատային մասի զարդաքանդակներ: Այս տեսանկյունից հողվածը հանդիսանում է նորույթ և արդիական է: Հեղինակների ներդրումը: Ս. Պետրոսյանը վեր է հանել մի նոր մոտեցում՝ պատմական ու լեզվաբանական քննության ենթարկելով նյույթը, Լ. Պետրոսյանը տրամադրել է լրացուցիչ նյութեր արբազան ծառերի ու պուրակների վերաբերյալ, ինչպես նաև աշխատել է հողվածի «Ամփոփում», «Նախաբան», «Եզրահանգում» բաժինների վրա:

Բանալի բառեր՝ «Գիլգամեշ», Կենսաց ծառ, Իմացության ծառ, Հայկական լեռնաշխարհ, Ուշի, Փարպի, Կարբի, պահապան առյուծ և ընձառյուծ:

Ինչպես հղել՝ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., *Դրախտային ծառերի գույզի, խաղողի որթի և դրանց պահապանների մասին* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Հ. 1(28): 72-84 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-72

ON THE TWIN TREES OF PARADISE, THE VINE AND THEIR KEEPERS

Sargis G. Petrosyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Lusine S. Petrosyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction: It is known from Sumerian mythology that Sumerians had two different kinds of “paradise trees” - the tree mentioned in the epic “Gilgamesh” as a tree in the “garden of gods” and the “tree of khuluppu” growing near the shores of the “pure Euphrates”. In our opinion, these trees should be the same as the Old Testament “Tree of Life” and “Tree of Knowledge”. The prototypes of these trees are in the Armenian Highland - poplar, aspen and the like. Apart from the paradise of the Bible and the Garden of Eden in Sumerian mythology, another, the “Ararat” paradise, is mentioned in the Armenian Highland, in the future Aragatsotn district. In the north of this district, near the town of Ashtarak, there are the villages of Ushi and Karbi, whose names are derived from the names of the trees Ushi (i.e. “ash tree”) and Karbi (i.e. “aspen”). These toponyms preserve the memory of the twin local paradise trees, probably because they once had sacred groves of ash and aspen trees. Not far from these villages is the village of Parpi. In this toponym there is the root parp (>Parp-i), which also appears in the name parpur (<parp-ur) of the wild vine. **Methods and materials:** The article is written using historical-comparative methods, etymological and semasiological analyses of the linguistic material. **Analysis:** The opinions and viewpoints of other researchers were analysed regarding the cited materials, as well as words extracted from different Armenian dictionaries. **Results:** The conclusion summarizes the results of the research on the origin of the images of paradise trees, paradise vine and images of their mythologised guardians, as well as the origin of toponyms associated with them. It is noted in the article that the images of the keepers of paradise trees in the form of a lion and a leopard are used even in XIX Gyumri (Alexandrapol) on

the facade of houses. From this point of view, the article has novelty and is relevant. *Contribution of the authors:* S. Petrosyan proposed a new approach by subjecting the material to historical and linguistic research, L. Petrosyan provided additional materials on sacred trees and groves, and worked on the sections of the article “Introduction”, “Abstract”, “Conclusion”.

Key words: "Gilgamesh", "Tree of Life", "Tree of Knowledge", Armenian Highland, Ushi, Karbi, Parpi, keeper's lion and leopard.

Citation: Petrosyan S., Petrosyan L., On the Twin Trees of Paradise, the Vine and their Keepers // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. V. 1 (28), 72-84 pp., DOI: 10.52971/18294316-2025.28.1-72

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Շումերների առասպելաբանության համաձայն՝ գոյություն են ունեցել երկու տեսակի Կենաց ծառեր: Դրանցից առաջինի մասին մեզ տեղեկացնում է «Գիլգամեշ» դյուցազնավեպի հերոս դյուցազն Գիլգամեշը: Երկրորդ ծառի մասին տեղեկանում ենք «Գիլգամեշը և խուլուպպու ծառը» վիպերգից: Իսկ «Աստվածաշնչում» ասված է, որ Դրախտը ստեղծելիս Աստված նրա արևելքում զետեղեց Կենաց ծառը, իսկ նա ուներ իր զուգընկերը՝ «Բարին ու չարը իմանալու ծառը», այսինքն՝ Իմացության ծառը: Քանի որ աստվածաշնչային Դրախտը և շումերական աղբյուրներում հիշատակված «աստվածների պարտեզը» տեղորոշվում են Հայկական լեռնաշխարհում, ապա այստեղ էին գտնվելու առասպելական Կենաց և Իմացության ծառերի իրական նախատիպերը:

Շումերական «աստվածների պարտեզի» և աստվածաշնչային Դրախտի գույք ծառերի նախատիպերը:

Շումերների առասպելաբանության համաձայն՝ գոյություն են ունեցել երկու տեսակի Կենաց ծառեր: Դրանցից առաջինի մասին մեզ տեղեկացնում է «Գիլգամեշ» դյուցազնավեպի հերոս դյուցազն Գիլգամեշը, երբ, ըստ դյուցազնավեպի, ոտք էր դրել հյուսիսային անհայտ լեռնաշխարհ և այստեղ՝ «աստվածների պարտեզում», տեսել էր «սարդիոնե ծառը» [9, էջ 78]: Այսպիսի երկրորդ ծառի մասին տեղեկանում ենք «Գիլգամեշը և խուլուպպու ծառը» վիպերգից, որում պատմվում է նաև Ինաննա դիցուհու կողմից «մաքուր Եփրատի» (ուրեմն, Հայկական լեռնաշխարհում) ավիին բուսած «խուլուպպու» ծառը արմատահան անելու, Շումեր բերելու և Ուրուկ քաղաքում զետեղելու մասին [42, քր. 74-76]: Ընդ որում, դա եռահարկ ծառ է՝ համաձայն տիեզերքի եռահարկ լինելու (երկինք, երկիր, ընդերք) պատկերացման [20, էջեր 172-184]: Եթե այդպիսի ծառերը երկուսն էին, ամենայն հավանականությամբ, նրանք առասպելաբանական (երկվորյակների պես) արտաքուստ էին նման, իսկ բնույթով տարբեր էին: Իսկ թե ինչպիսին էր նրանց բնույթը, այսինքն՝ մարդկային երևակայությունը ինչպիսի տարբեր գործառույթներ էր նրանց վերագրել, կարող ենք կռահել «Աստվածաշնչի» միջոցով: «Աստվածաշնչում» ասված է, որ Դրախտը ստեղծելիս, Աստված նրա արևելքում զետեղեց Կենաց ծառը, իսկ նա ուներ իր զուգընկերը՝ «Բարին ու չարը իմանալու ծառը», այսինքն՝ Իմացության ծառը [7, Ծննդ., 10-12]: Բնականաբար, եթե Կենաց ծառը զետեղվել էր Դրախտի արևելքում, ապա Իմացության ծառն էլ զետեղված էր լինելու նրա արևմուտքում: Այդպիսով, գործելու էր համամարդկային առասպելաբանական մտածելակերպի «աջ»/«արևելք» և «ձախ»/«արևմուտք» հակադրամիասնությունը [21, էջեր 237, 255]:

Եթե շումերական աղբյուրներում հիշատակված «աստվածների պարտեզը» տեղորոշվում է Հայկական լեռնաշխարհում, ապա այստեղ էին գտնվելու առասպելական Կենաց և Իմացության ծառերի իրական նախատիպերը: Մեր կարծիքով՝ դրանք եղել են բարդին և կաղամախին: Բարդիի և կաղամախիի մասին Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում կարդում ենք, «*Բարտի*՝ ուռենիների կարգին պատկանող բարձր ծառ, բրգաձև՝ ուղղաբերձ՝ նուրբ՝ նեղ և սրածայր գագաթով... երկայնակոթուն դյուրաշարժ տերևներով» [13, էջ 351], «*Կաղամախ, կաղամախի*՝ ուռենիների կարգին պատկանող բարձր ծառերի ցեղ, որ շատ տեսակներ ունի, ինչպես Բարտի, Սոսի, Հագնի, Այծառ են... (Populus)» [14, էջ 370]: «*Դողդոջուն կաղամախի*՝ տերևները ամենաթեթև քամու ժամանակ էլ դողդողում են, որովհետև երկայն ու տափակ կոթուններ ունին» [14, էջ 370]: Աննշմար հովիկին անգամ իրենց երկարակոթուն և դյուրաշարժ տերևներով արձագանքելու պատճառով է, որ բարդին և կաղամախին ըմբռնվել են գուշակ ծառեր՝ սոսափյունով (շշուկով) գաղտնիք հայտնող, ուրեմն, նաև պաշտամունքի արժանի ծառեր: Միսիթար Ապարանցու վկայությամբ, Հայոց Կիլիկիայի հարևանությամբ բնակված և *արևոդդիներ* կոչված հեթանոս հայերը «պատուեն զճառն Բարտի եւ զշուշան ծաղիկն եւ զբամբակին են զայլսն, որ զդեմս իւրեանց շրջեցուցանեն ընդդեմ արեգականն» [1, էջ 54], իսկ նրանցից քրիստոնյա դարձածներին Ներսես Շնորհալին հորդորում էր բարդուն հատուկ պաշտամունքի չարժանացնել, որովհետև «այդ ծառ, որ Բարտի անուանի ի կռապաշտութեան ժամանակն ի պաշտօն առեալ էր, յորս և դեւք մտանէին, ի մարդկանէ երկրպագութիւն ընդունէին» [1, էջ 44]:

Սրբազան ծառերի գույզը հայոց և այլ առասպելաբանություններում

Ուրարտական դարաշրջանից մեզ հասած և Բեռլինի թանգարաններից մեկում պահպանվող արծաթե մահիկաձև կախազարդի (նկ.1) [39, с. 84, рис. 49] վրա պատկերված են գահին բազմած Խալդին՝ ձեռքերին հաց և գինով թաս, իսկ նրա դիմաց, ըստ երևույթին, Ուարուբահիի դիցուհին է՝ նրան երկրպագելիս և (հավանաբար, զոհաբերվող) այծ մատուցելիս: Նրանցից քիչ վեր, կախազարդի գույզ եզրերին, պատկերված են մեկական ծառեր: Դրանց տեսքից կարելի է եզրակացնել, որ դրանք բարդի (կամ կաղամախի) են, բայց դիցարանի գերագույն գույզից բարձր պատկերված լինելու պատճառով ընկալվելու էին որպես սրբազան Կենաց և Իմացության ծառեր (հմմտ. ուրարտական թագավորների սրբազան ծառ պատկերող տոհմական զինանշանը [34, с. 194] և Մուծածիբի Խալդիի տաճարի գագաթային ծառակերպ խորհրդանշանը) [37, cc. 179-189]: Ի դեպ, Բ. Պիոտրովսկու կարծիքով՝ արծաթե կախազարդի բազմած անձը ինչ-որ դիցուհի է՝ ձեռքերին թաս և ճյուղ [39, cc. 84-85]:




Մեր մեկնաբանությունն հաստատվում է խեթական թագավորների, մասնավորապես՝ Սուպիլուլիումա I-ի և Տուդխալիա IV-ի կնքադրոշմների պատկերների միջոցով (նկ. 2^ա և 2^բ) [42, p.163, f. 28; p. 114, f. 21]: Սուպիլուլիումայի կնքադրոշմի աջ և ձախ եզ-

րերին երկու ծառեր խորհրդանշող միանման պատկերներ կան: Դրանք լինելու են Կենաց և Իմացության ծառերի խորհրդանշանները և վկան՝ դրանց ի սկզբանե գույգով պատկերման: Նրանց մոտ երկու միանման ֆիգուրներ կան, որոնց միջև տեղ է զբաղեցրել «աստվածություն» նշանակող խեթալուվիական մեհենագիրը [28, էջեր 115-156, աղ. 32-33]: Ամենայն հավանականությամբ, այդ նույնպես գույգ կազմող ֆիգուրները, խորհրդանիշերն են ծառերի գույգի և Դրախտի համապատասխան մասերին պահապան կարգված առասպելական էակների: Դրա վկայությունն է նրանց միջև դրված «աստված (-ություն)» նշանի նախնական իմաստը՝ «դիտող», «աչք» (հմմտ. իրան. dēt «դիտող, պահապան»<հայ. *դէտ*) [2, էջեր 661-662]:




նկ. 2ա



նկ. 2բ

Մեր հին գորգագործները Դրախտի թեմային անդրադառնալիս պատկերում էին նաև դրախտային գույգ ծառերի խորհրդանշանները: Այդպիսին է մեր հայրենի տան փոքր գորգի դեպքում (նկ. 3):

Նա շատ հին չէ, բայց հին են նրա խորհրդանշան նախշերը: Նրա կենտրոնն զբաղեցրած մեծ ուղղանկյունին խորհրդանշում է Դրախտը, իսկ սրա կենտրոնում գտնվող փոքր, զմրուխտագույն ուղղանկյունին՝ աստվածաշնչային Եդեմը: Երևի Եդեմի գետի սկունքն է խորհրդանշում նրա կենտրոնի փոքր, դեղնավուն շեղանկյունին, իսկ դրա շուրջ




նկ. 3

դասավորված չորս փոքր, դեղնավուն շեղանկյունիները՝ դրանից առաջացած Դրախտի չորս գետերի սկունքները: Դրախտը պատկերող ուղղանկյան մեջ՝ Եդեմի խորհրդանշանից աջ և ձախ, պատկերված են կարմիր, բայց կապույտ եզրագծով գույգ քառակուսիներ՝ ըստ երևույթին, Աստվածաշնչի հիշատակած Խավիլա և Քուշ երկրների խորհրդանշանները: Վերջինների և Եդեմի խորհրդանշանի միջև խորհրդանշաններն են Կենաց և Իմացության ծառերի, որոնք հայելային անդրադարձումով են պատկերված: Դա, հավանաբար, գալիս է այն հավատալիքից, թե այդ առասպելական ծառերը ինչքան որ երկրի վրա են, նույնքան էլ նրա տակն են՝ Ստորերկրյա աշխարհում:

Սրբազան ծառերի գույգի պահապան առասպելական էակները

Մեր գորգին, դրախտի երկու կողմից՝ աջ և ձախ, պատկերված տարբեր չափի քառակուսիներից, ուղղանկյունիներից և շեղանկյունիներից բաղկացած խոշոր բարդ նախշերը, ըստ երևույթին, խորհրդանշում են դրախտային գույգ ծառերի պահապան ամենի ոգիներին: Թեև պահապան այդ ոգիներին խորհրդանշող նախշերը շատ են հեռացել իրենց իրական նախատիպերից, բայց ենթադրում ենք, որ որպես պահապան ոգիներ՝ դրանք խորհրդանշելու են հայ ժողովրդական հավատալիքներում և հեքիաթներում գույգով հանդես եկող առասպելական էակների (Ազան-Փազան, Զանգի-Զրանգի, Ասլան-Կական, Ասլան-Ղափլան և այլն) [19, էջեր 262-263] իրական նախատիպերին՝ առյուծին և ընձառյուծին: Նրանք ըմբռնված են եղել նաև դրախտային Կենաց և Իմացության ծառերի պահապաններ: Սրանցից առյուծը լինելու էր Կենաց ծառի, իսկ ընձառյուծը՝ Իմացության ծառի պահապանը: Ի հաստատումն այս ենթադրության՝ կարող ենք վկայակոչել Գյումրիից հայտնի հետևյալ օրինակը:

Գյումրի քաղաքում (Ալեքսանդրապոլ) XIXդ. վերջին կառուցված մի շենքի (Գորկի փողոց, թիվ 22) ճակատային մասի երկու քարերին քանդակված Դրախտի ծառերը պատկերված են իրենց կենդանատեսք պահապանների հետ միասին (նկ. 4):



Սրանք, կարծես ցուցադրությունն են «Դռներ» պատասխան ակնկալող ժողովրդական հանելուկի. «հրզար մդան, հրզար էլլան (հազարը մտան, հազարը ելան)», Ասլան (առյուծ)-խապլան (ինձ) ուրանց դեխեն (տեղից) չելլան» [12, էջ 168]: Պարզ երևում է, որ իրենց իսկական տեսքով պատկերված կենդանատեսք պահապաններից ձախակողմյան քարի վրայինը (նկ. 5^ա) ընձառյուծն է, մարմինը պուտեր ունի, իսկ աջակողմյանինը՝ առյուծը (նկ. 5^բ): Ընդ որում, այդ քարերը առանձնանում են շենքի սև տուֆե քարերից նաև իրենց կարմրավուն երանգով: Ձախակողմյան քարին Իմացության ծառից և նրա պահապան ընձառյուծից բացի տեղ է գտել նաև օձը՝ պատկերված քարի ստորին մասի ձախ կողմում: Սա Ստորին աշխարհի ներկայացուցիչ և իմաստության խորհրդանիշ այն օձն է լինելու, որը դյուրթելով թուլացրել էր գույգ ծառերի պահապանների զգոնությունը, գայթակղել էր աստվածաշնչային Եվային՝ ճաշակել տալով Իմացության ծառի պտուղը, այդպիսով՝ թե՛ նրան, թե՛ Ադամին և թե՛ միջագետքյան Գիլգամեշին (արդեն իր գողությամբ) զրկել էր անմահ դառնալու հնարավորությունից [9, էջեր 103-104]: Իսկ ինքը, կերած լինելով Կենաց ծառի պտուղը, փոխել էր իր մաշկը և, ըստ ժողովրդական հավատալիքի, դարձել էր անմահ:

Գյումրու քննարկման առարկա շենքի ճակատային մասի աջակողմյան կարմրավուն քարի դեպքում պետք է նկատի առնել ոչ միայն Կենաց ծառն ու նրա պահապան առյուծին, այլև Կենաց ծառին կից որթատունկը և նրա վերին ճյուղերից կախովի վիճա-

կում պատկերված խաղողի երեք հասուն ողկույզները: Դրանք կարմրավուն քարերից աջակողմյանի ոլործուն եզրանախշերի հետ միասին մեզ տանում են նախնադարյան Հայաստան՝ խաղողի վայրի որթն առաջինը մշակարույս դարձրած երկիր[25, էջ 235]:



նկ. 5ա



նկ. 5բ

Դրախտի հետևորդ սրբազան պուրակներ և նույնանուն գյուղեր

Կենաց և Իմացության ծառերի պաշտելի նախատիպերն իրենց անուններն են տվել Հայկական լեռնաշխարհի գավառներին, բնակավայրերին և այլ վայրերի: Ուշագրավներից է Արագածոտն գավառը, որտեղ կաղամախին պաշտվել է ոչ միայն նրա հարավում, որտեղ Արմավիրի սոսիների պուրակն էր [16, Ա, 1], այլև հյուսիսում, որտեղ հետագա Կարբի գյուղն էր: Գյուղի անվան հիմքում *կարբ* «կաղամախի» ծառանունն է [14, էջ 402]: Մեր կարծիքով, իրարից մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող Ուշի և Կարբի գյուղերն իրենց շրջակա տարածքներով ժամանակին մասն են կազմել Իմացության (առաջինը) և Կենաց (երկրորդը) ծառերի սերունդներն համարված ուշի և կաղամախի/կարբ ծառերի սրբազան պուրակների (այդպիսիների գոյությունը վկայված է պատմական Հայաստանի մի շարք վայրերում) [18, էջեր 84-85]: Այդպիսի պուրակների միջոցով են գյուղական բնակավայրերը ժառանգել հնագույն սրբավայրերի անունները: Այսպիսի եզրակացության կարելի է հանգել ինչպես *Կարբի* (<կարբ և -ի վերջածանց) տեղանվան ստուգաբանության, այնպես էլ հարևան *Ուշի* գյուղի անվան ներքոբերյալ ստուգաբանության միջոցով:

Ուշի տեղանունը *ուշի* ծառանվան նման և նրա հետ միասին ծագում է *ուշ* «ուշք, միտք» արմատից, բայց, ցավոք սրտի, դրանք փոխադարձ կապի մեջ երբևէ չեն դիտարկվել: *Ուշ* արմատն համարվել է իրանական լեզուներից կատարված փոխառություն [3, էջեր 605-606], անտեսելով անգամ հայերեն և իրանական համապատասխան արմատների բաղադրման հնարավորությունը [24, էջեր 750-751]:

Ակնհայտ է, որ *Ուշի* ծառանունը և *Ուշի* տեղանունը, *Կարբի* տեղանվան նման, բաղկացած է բուն արմատից և բուսանուններ ու տեղանուններ կերտող *-ի* վերջածանցից: Ընդ որում, երկուսն էլ ծագած հ.-ե. *-ija* նախածնից: Հմմտ. *այգի, գիհի, եղեւնի, կաղնի* և այլն [24, էջ 806], նաև *Լոռի, Կումայրի, Հաղի, Մանի* և այլն: *Ուշի* ծառանվան *ուշ* արմատը Գ. Ջահուկյանը ծագած է համարում հ.-ե. **os-/*osk-* արմատից, որից՝ նաև *հացի* «հացենի» ծառանունը և այլն. *ah*(<**aska*) «հաճար», հին իսլ. *askr* և հին բարձր գերմ. *ase* «հացի» բառերը [24, էջեր 453, 751]: Հմմտ. նաև նախապես «բարդի» նշանակած արմատից

ծագած հին հուն. 'όσσα «(մարգարեական) խոսք» [31, cc. 626-627], «գուշակի ձայն», 'όσσεομοι «գուշակել, կանխատեսել, իմանալ՝ ըստ նշանների», 'όσσομοι «տեսնել, մտովի ընկալել, պատկերացնել», «կանխագգալ, կանխատեսել, կանխագուշակել» [32, c. 1200], իսկ 'όσσα-ն նաև «հոչակ, ձայն, համբավ», «բառաչ, մոնչոց» էր նշանակում [32, c. 1200]: Վերջիններիս իմաստի առթիվ հիշենք, որ սուսին, կաղամախին, սովորական բարդին և մյուս բարձր ու սաղարթախիտ ծառերը (մանավանդ, երբ դրանք շատ են) հողմահալած ժամանակ շառաչուն ձայներ էին արձակում, որոնք նախնադարյան մարդը կարող էր ընկալել որպես դրախտային գույզ ծառերի պահապան ամեհի անասնակերպ ոգիների «բառաչ ու մոնչոց»: Այս վերջին իմաստները առիթ են տալիս ճիշտ ընկալելու շումեր-աքադական Խուվավա/Խումբաբա անտառային հրեշի և անտառների պահապանի անունը [9, էջեր 45-52, 118]: *Ḫuv-ava* բաղադրիչներից բաղկացած անվան առաջին բաղադրիչի համար հմմտ. հայ. *հուվ*, իսկ երկրորդի համար *աւ* արմատները, որոնցից *հուվ*-ը՝ «հով, հովանի, քամի» ծագում է հ.-ե. **rou-* «փչել», իսկ *աւ*-ը՝ հ.-ե. **au-* «գիշերել, օթևանել» արմատից՝ առկա աւթեւան>օթեւան բառում [2, էջ 76; 3, էջեր 115-116]: Այսպիսով, *Ḫuvava*-ն նախապես եղել է այդ անտառային հրեշի կացարանի՝ անտառի մակդիրը, «քամու օթևան» իմաստով:

Ուշի և *Կարբի* տեղանունների հետ միասին «Արարատյան դրախտի» հիշողությունը պահպանել է նաև Աշտարակ քաղաքից դարձյալ 5-6 կմ հեռավորության վրա գտնվող *Փարպի* [6, էջ 195] գյուղի անունը: Այս անունը, հավանաբար, մեր «խաղողային» բնույթի տեղանուններից հնագույնների շարքին է պատկանում, որովհետև նրա *փարպ* հիմքը (որին հավելվել է *-ի* բուսանվանակերտ վերջածանցը) նույնն է լինելու ինչ և *պարպուռ* (<պարպուռ) բառի հիմքը [23, էջեր 55-56]: *Պարպուռ* նշանակում է «վայրի որթ». հմմտ. *պարպուռինե* (<պարպուռ-ինե) «վայրի որթ», որ բուսում է Չեթունի լեռներում [4, էջեր 29-30]: Բերված բառերի **պարպ*-**փարպ* բաղադրիչները, մեր կարծիքով, ծագում են հ.-ե. *(s)per- «ոլոր(վ)ել, փաթաթ(վ)ել, հյուս(վ)ել» արմատի *(s)pēr- ստորին ձայնդարձից՝ *-պ* աճականով: Հայերենում հնդեվրոպական արմատն արտացոլվել է ինչպես նախաձայն *փ*-ով, այնպես էլ նախաձայն *պ*-ով. հմմտ. *փարիլ* «փաթաթվել, գրկախառնվել», *փարել* «պարփակել, մեջը պարունակել» և *պարան-պարան գալ* «պտույտ գալ, դառնալ», *պարանոց* «վիզ» [15, էջ 77]: Վայրի որթը **պարպ* (որից՝ *պարպուռ*) և **փարպ* (որից՝ *փարպի*) կոչվել է որևէ հենարանի ոլորվել-փաթաթվելով աճելու պատճառով: *Պարպուռինե* բառում եթե *-ուռ* բաղադրիչը *ուռ* «որթի ողկուզաբեր ճյուղ» արմատը չէ, ապա կարող է լինել *-ուռ* վերջածանցը (հմմտ. *դանդուռ*, *ճապուռ*, *մամուռ*, *ջաջուռ* բուսանունների համապատասխան վերջածանցները), իսկ *-ինե* վերջնամասը այլ բան չէ, քան ձևափոխումը համահայկական բուսանվանակերտ *-ենի* վերջածանցի. հմմտ. *խնձորենի*, *տանձենի*, *դեղձենի* և այլն:

Արագածոտն գավառը՝ հարավում Արմավիրով, հյուսիսում՝ Աշտարակի և նրա մերձակա Կարբի, Ուշի, Փարպի գյուղերի հետ միասին, հնում կոչվել է *Սակա (վերականգնումը մերն է - Ս.Պ., Լ.Պ.): Հունա-լատինական մատենագիրներին այն հայտնի էր լինելու **Sacaene* ձևով (հուն. *-ene* տեղանվանակերտի հավելումով): Բայց Պտղոմեոսի «Ասիայի երրորդ քարտեզ»-ում, որտեղ բերված է Մեծ Հայքի վարչական բաժանումը [11, քարտեզը], Արմավիր քաղաքից հյուսիս կարդում ենք *Sacasene regio*, այսինքն *Սակասենե*

նահանգ: Բուն անվան հիմք *Սակաւ*-ը (ոչ թե *Սակաս*-ը) հայ մատենագիրները պահպանել են Երվանդ թագավորի *Սակաւակեաց* մականվան մեջ [16, Ա, կէ]: Եթե հայ մատենագրության մեջ *Սակաւ* տեղանունը շփոթվել է *սակաւ* «քիչ» բառի հետ՝ «քիչ ապրած» իմաստով [17, էջեր 24] (կարծես թե ուրիշ «քիչ ապրած» նահապետներ և թագավորներ չէինք ունեցել), ապա հունա-հռոմեական մատենագիրները մեր *Սակաւ* > *Սակավենե* նահանգը շփոթել են *Շակաշեն* > *Սակասենե* նահանգի հետ՝ ինչպես է մեզ հասած Պտղոմեոսի քարտեզի օրինակում:

Այդուհանդերձ, աղավաղումներով մեզ հասած օրինակով անգամ կարելի է ճշտել *Սակավենե* տեղադրությունը և վերականգնել անվան ճիշտ գրությունը: Այսպես, 1.SA-CASENE REGIO նշված է ձախից (արևմուտքից) SIRACENE REGIO-ի, այսինքն՝ Շիրակ նահանգի և աջից (արևելքից) GOLTHENE REGIO-ի, այսինքն՝ Գողթն նահանգի (ոչ գավառի, որը կարող էր նահանգի կենտրոնական գավառը լինել ներկայիս Նախիջևանի երկրամասում) միջև: 2. SACASENE REGIO-ն նշված է Արաքս (ARAXES) գետից և նրա ափին գտնված Արմաւիր (ARMAUIRA) քաղաքից հյուսիս: 3.SACASENE REGIO-ն նշված է Արաքս գետի ափին գտնված Արտաշատ (ARTAXATA) և Նախճաւան (NAXUANA) քաղաքներից հյուսիս-արևմուտք: Իսկ այդպիսի տեղադրություն ունի ոչ թե SAGASENE/ *Շակաշենը*, այլ *SACAUENE/* *Սակաւ*-ը: Հանրահայտ է, որ Շակաշենը «Աշխարհացույց»-ի Ուտիք նահանգի գավառներից էր և գտնվում էր Կուր գետի աջափնյակում [10, էջեր 73, 109]՝ Գանձակ (պարսկաձև՝ *Գյանջա*) քաղաքով հանդերձ: *Սակաւ*-ում *-աւ* բաղադրիչը տեղանվանակերտ վերջածանց է. հմմտ. հին հայկական *Կճաւ, Չիրաւ, Պարտաւ, Վարդնաւ/ Որդնաւ, Յուրտաւ* տեղանունների համապատասխան բաղադրիչները: Հայ *-աւ* տեղանվանակերտ վերջածանցը ծագում է հ. -ե. *au- «գիշերել, քնել» արմատից (որից օթևան < *աւթեւան*) [2, էջ 76; 4, էջեր 609-610]: Ինչ վերաբերում է *Սակ-աւ* բաղադրիչներից բաղկացած *սակ-* արմատին, ապա այն կարելի է գտնել հայերեն *սակարան* (< սակ-արան) «մառան, գինու պահեստ» բառի և Մարաց Աստիագես թագավորի (մ.թ.ա. VI դ. Առաջին կես) պալատական մատովակի *Սակաս* անվան մեջ [29, III, 8-11]: Մարական պալատի այս պաշտոնյան կարող էր հայկական ծագում ունենալ: Մարական թագավորությանը փոխարինած Աքեմենյան աշխարհակալությանը հարկատու Հայաստանը Աքեմենյանների ռազմա տուրք ուղարկում էր ձիեր և *գինի*, իսկ այդ ավանդույթի հիմքը կարող էր դրված լինել դեռևս Աստիագեսի օրոք:

Աշտարակի շրջանը հետագայում ևս խաղողագործության և գինեգործության հանրահայտ օջախ լինելու տեսանկյունից ուշադրության է արժանի պարսիկների կողմից նրան տրված *Շարաբխանա/Շարաբխանե* (Առաքել Դավրիժեցու երկում՝ *Շարապխանե*)* [5, էջ 53] անունը: Պարսկերեն *շարաբխանե*-ն «գինու մառան, գինետուն» է նշանակում:

Ե Ջ Ը Ա Ն Ա Ն Գ ՈՒ Մ.

1. Շումերների «աստվածների պարտեզը» և «մաքուր Եփրատը» մատնացույց են անում շումերական դրախտի Հայկական լեռնաշխարհում գտնվելու հանգամանքը:
2. Շումերները ևս ունեցել են Կենաց և Իմացության ծառերի գույգի մասին իրենց պատկերացումները:

3. Այդ ծառերի նախատիպերը գտնվում էին և գտնվում են Հայկական լեռնաշխարհում: Դրանք են բարդին, կաղամախին և նրանց տեսակի մյուս բարձր ու սաղարթախիտ, երկարակյաց ծառերը:
4. Առասպելաբանական այդ ծառերն ունեցել են իրենց պահապան ամեհի ոգիները՝ իրական առյուծ և ընձառյուծ (ինձ) նախատիպերի վրա ձևավորված առասպելական էակների գույզը:
5. Այդ պահապանների իրական նախատիպեր առյուծն ու ընձառյուծն են պատկերված Գյումրու (Ալեքսանդրապոլի) XIX դարի վերջին կառուցված շենքի ճակատային մասի կարմրավուն գույզ քարերին:
6. Հայկական լեռնաշխարհում այլ «Դրախտներ» ևս գոյություն ունեցել են: Դրանցից է եղել «Արարատյան դրախտը»՝ հետագա Արագածոտն գավառը՝ ավելի վաղ կոչված *Մակաւ (որից՝ Սակաւ-ա-կեաց):
7. Այստեղ գտնվող Աշտարակին մերձական գյուղերի Ուշի և Կարբի (կարբ՝ «կաղամախի») անունները պահպանել են տեղական դրախտի գույզ ծառերի հիշատակը, ըստ երևույթին, դրանցից բաղկացած սրբազան պուրակներ ունենալու պատճառով: Փարպի գյուղի անունը ուղղակի կապ ունի վայրի որթի պարպուռ անվան հետ, իսկ որթը ևս դրախտաբույս տունկ էր:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ալիշան Ղ. Հայոց հին հախտքը կամ հեղանուսական կրոնը: «Գր. Տաթևացի» հրատ.: Երևան: 2002: 205 էջ:
2. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. I: ԵՀ հրատ.: Երևան: 1971: 698 էջ:
3. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. III: ԵՀ հրատ.: Երևան: 1977: 635 էջ:
4. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. IV: ԵՀ հրատ.: Երևան: 1979: 674 էջ:
5. Առաքել վարդապետի Դավրիժեցոյ Պատմութիւն: Էջմիածնի հրատ.: Վարդաշապատ: 1896: 53 էջ:
6. Ասլանյան Ա. Գրգեարյան Հ. Հայկական ՄՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1981: 208 էջ:
7. Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց: Թարգմանեալ եբրայական և յունական բնագրից: Կոստանդնուպոլիս: Ի տպարանի Ա. Յակոբ Պոյաճեան: 1883: 1006+302 էջ:
8. «Բառգիրք հայոց»: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի: «Մատենադարան»: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1975: 445 էջ:
9. «Գիզամեջ. Հին Արևելքի դրոշմագրությունը և ներածականը Նշան Մարտիրոսյանի: Երևան: ՀՄՍՈ ԳԱ հրատ.: 1963: 121 էջ:
10. Երեմյան Ս. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի: ՀՄՍՈ ԳԱ հրատ.: Երևան: 1963: 153 էջ:
11. «Հայ ժողովրդի պատմություն»: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: Հ. I: Քարտեզը: Երևան: 1971: 991 էջ:
12. Հարությունյան Ս. Հայ ժողովրդական հանելուկներ: ՀՄՍՈ ԳԱ հրատ.: Երևան: 1965: 389 էջ:
13. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Հ. I: Երևան: Պետհրատ: 1944: 608 էջ:
14. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Հ. II: Երևան: Պետհրատ: 1944: 512 էջ:
15. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Հ. IV: Երևան: Պետհրատ: 1945: 646 էջ:
16. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց. Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի: ԵՀ հրատ.: Երևան: 1981: 587 էջ:
17. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց. աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի: ԵՀ հրատ.: Երևան: 1996: 397 էջ:
18. Պետրոսյան Լ. Այգի-պարտեզներ և սրբավայր-արգելանոցներ հին Արևելքում և Հայաստանում // ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. XXI: Գյումրի: 2018: 74-85 էջեր:

19. **Պետրոսյան Ս.** *Անձալի ուրարտական վահանի առյուծների գույգը* // «Պատմաբանասիրական հանդես» 2007: Թիվ 1: 262-273 էջեր:
20. **Պետրոսյան Ս.** «Գիլգամեշը և խուլայպուր ծառը» վիպերգի հնդեվրոպական-հայկական բաղադրատարրը // ՊԲՀ: 2008: Թիվ 3: 172-184 էջեր:
21. **Պետրոսյան Ս.** *Դրախտի զետերի և Խալիլյա, Քուշ երկրների տեղադրության շուրջ* // ՊԲՀ: 2006: Թիվ 2: 237-255 էջեր:
22. **Պետրոսյան Ս.** *Խեղական արքա Սուպիլուլիումա I-ի կնիքի և հայկական երկնային խորհրդանշանների ընդհանրությունները* // «ՎԷՄ» համահայկական հանդես: 2020: թիվ 1: 22-43 էջեր:
23. **Պետրոսյան Ս.** *Quria երկրները և հին հայոց մատուկակները* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2015: 51-61 էջեր:
24. **Ջահուկյան Գ.** *Հայերեն ստուգաբանական բառարան:* «Ատոդիկ» հրատ.: Երևան: 2010: 819 էջ:
25. **Սարգսյան Ս.** *Նախնադարյան հասարակությունը Հայաստանում:* Երևան: ԵՀ հրատ., 1967: 235 էջ:
26. **Ստրաբոն.** *Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան:* ԵՀ հրատ.: Երևան: 1940: 124 էջ:
27. **Սրվանձտյանց Գ.** *Երկեր:* Հ. II: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1982: 560 էջ:
28. **Փիլիպոսյան Ս. Մկրտչյան Ռ.** *Գեղիովտի վանտոսյան (ուրարտական) քարայր դամբարանը.* «Հայաստանի հնագիտական հուշարձանները. 18. Ուրարտական հուշարձանները»: «Չանգակ-97»: Երևան: 2001: 159 էջ:
29. **Քսենոփոն.** *Կյուրուպեդիա:* Թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Կրկյաշարյանի: «Նոր դար» հրատ.: Երևան: 2000: 412 էջ:
30. **Афанасьева В.** *Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве.* Главная редакция восточной литературы. Москва. 1979. 192 с.
31. **Гамкрелидзе Т., Иванов В.** *Индоевропейский язык и индоевропейцы.* Т. II. Изд. Тбилисского университета. Тбилиси. 1984. 1328 с..
32. *“Древнегреческо-русский словарь”.* Составил И. Х. Дворецкий. Т. II. Гос. изд. Иностранных и национальных словарей. Москва. 1958. 1043 с..
33. **Дьяконов И.** *Ассиро-вавилонские источники по истории Урарту.* “Вестник древней истории”. 1951. N 2.3.
34. **Дьяконов И.** *К вопросу о символе Халди.* “Древний Восток”. IV. Изд. АН Арм ССР. Ереван. 1983. 190-194 сс.
35. **Капанцян Г.** *Историко-лингвистические работы к начальной истории армян.* Изд. АН Арм ССР. Ереван. 1956. 470 с.
36. **Меллаарт Дж.** *Торговля и торговые пути между Северной Сирией и Анатолией (4000-1500гг. до н. э.), “Древняя Эбла” (раскопки в Сирии).* Москва. Изд. “Прогресс”. 1985. 366 с..
37. **Кальмейер П.** *Символ Халди.* “Древний Восток”. IV. Изд. АН Арм ССР. Ереван. 1983. 312 с..
38. **Кушнарева К. Чубинишвили Т.** *Древние культуры Южного Кавказа.* Ленинград. “Наука”. 1970. 190 с..
39. **Пиотровский Б.** *Искусство Урарту. VIII-VI вв. до н. э.* Изд. ГосЭрмитажа. Ленинград. 1962. 123 с..
40. **Фрэзер Дж.** *Фольклор в Ветхом Завете.* Изд. Политической литературы. Москва, 1989. 541 с..
41. **Сеган С.** *Le secret des Hittites. Decouverte d un ancien empire.* Librairie Plon. Paris. 1955. 302 p.
42. **Kramer S.** *Gilgameš and the Hulurpu-Tree,* / “Assyriological Studies”. 11. Chicago. 1938. 74-76 pp..

References

1. **Alishan Gh.** "Ancient Armenian Faith or Pagan Religion" [*Hayots' hin havatk'y kam het'anosakan krony*]. Yerevan. “Grigor Tatevatsi” pub., 2002. 205 p. (in Armenian)
2. **Acharyan H.** "Root dictionary of Armenian language"[*Hayeren armatakan barraran*]. Yerevan. Yerevan University Publ.. V. I. 1971. 698 p. (in Armenian)
3. **Acharyan H.** "Root dictionary of Armenian language" [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU Publ., V. III. 1975. 635 p. (in Armenian)
4. **Acharyan H.** "Root dictionary of Armenian language"[*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU Publ. 674 p. (in Armenian)
5. "History of Archpriest Arakel Davrijetsi". [*Arrak'el Dawrizhets'woy Patmut'iw*n] “Echmiatsin”. Vagharshapat. 1896. 53 p. (in Armenian)

6. **Aslanyan A., Grgearyan G.** "Concise Dictionary of Geographical Names of the Armenia" *kharhagrakan anunneri hamarrot barraran*]. Yerevan. Academy of Sciences of the Armenian SSR. 1981. 208 p. (in Armenian)
7. Holy Scripture, "Old and New Testaments"[*Astuatsashunch' matean Hin yev Nor Ktakaranac*]. C. Polis. Pub. "A. Hakob Poyachean". 1883. 1006+302 pp.. (in Armenian)
8. "Vocabulary of Armenian language" [*Barrgirk' hayots'*]. Yerevan. "Matenadaran". 1975. 445 p. (in Armenian)
9. "Gilgamesh. Ancient oriental Epic." [*Gilgamesh. Hin Arevelk'i dyuts'aznavep*] Translation and Introduction by Nshan Martirosyan. Yerevan. Publ. USSR Academy of Sciences. 1963. 121 p. (in Armenian)
10. **Yeremyan S.** "Armenia according to "Ashkharatsuyts" [*Hayastany yst «Ashkharhats'uyts'»-i*]. Yerevan. Publ. AS of Arm. SSR. 1963. 153 p. (in Armenian)
11. "History of Armenian." [*Hay zhoghovrdi patmut'yun*], Yerevan. Publ. AS of Arm. SSR: V.I. 1971. 991p.(in Armenian)
12. **Harutyunyan S.** Armenian folk riddles: [*Hay zhoghovrdakan hanelukner*]. Yerevan. Pub. AS of Arm. SSR. 1965. 389 p. (in Armenian)
13. **Malkhasyants St.** "Armenian defining dictionary" [*Hayeren bats'atrankan barraran*]. V.I, Yerevan. State publ. 1944. 608 p. (in Armenian)
14. **Malkhasyants St.** "Armenian defining dictionary" [*Hayeren bats'atrankan barraran*]. V. II. Yerevan. State publ.. 1944. 512 p. (in Armenian)
15. **Malkhasyants St.** "Armenian defining dictionary" [*Hayeren bats'atrankan barraran*]. V..IV. Yerevan. State publ.. 1945. 646 p. (in Armenian)
16. "History of Armenia by Movses Khorenatsi". [*Movsisi Khorenats'woy Patmut'iwn hayots'*]. Yerevan. YU publ., 1981. 587 p. (in Armenian)
17. "History of the Armenians by Catholicos Hovhannes Draskhanakertci" [*Hovhannu kat'oghikosi Draskhanakertts'woy Patmut'iwn Hayots'*], Yerevan. 1996. 397 p. (in Armenian)
18. **Petrosyan L.** "Gardens and Sanctuaries in the Ancient East and Armenia" [*Aygi-partezner yev srbavayr-argelanots'ner hin Arevelk'um yev Hayastanum*] // "Scientific Works" of the Shirak Centre for Armenological Studies of NAS RA. V.. XXI. Gyumri. 2018. 84-85 pp. (in Armenian)
19. **Petrosyan S.** "A pair of lions on the Urartian shield from Andzav" [*Andzavi urartakan vahani arryutsneri zuvygy*] // "Historical-philological journal". 2007. N 1. 262-273 pp. (in Armenian)
20. **Petrosyan S.** "Indo-European-Armenian component of the epic "Gilgamesh and the Huluppu-Tree" [*Gilgameshy yev khulappu tsarry» vipergi hndevropakan-haykakan baghadratarry*] // "Historical-philological journal". 2008. N 3. 172-184 pp. (in Armenian)
21. **Petrosyan S.** "On the location of the rivers of Paradise and the countries of Khavila and Kush" [*Drakhti geteri yev Khavila, K'ush yerkrneri teghadrman shurj*] // "Historical-philological journal". 2006. N.2.237-255pp (in Armenian)
22. **Petrosyan S.** "Similarity of the seal of the Hittite king Supiluliuma I with Armenian celestial symbols" [*KHet'akan ark'a Supiluliuma I-i knik'i yev haykakan yerknayin khorhrdanshanneri yndhanrut'yunnery*] // "Vem" Journal. 2020. № 1. 22-43 pp. (in Armenian)
23. **Petrosyan S.** "Countries *Quria* and Ancient Armenian wine Cupbearers" [*K'uria yerkrnery yev hin hayots' matr-vaknery*] // "Scientific Works" of the Shirak center for armenological studies of the NAS of the RA. Gyumri. 2015. 51-61 pp. (in Armenian)
24. **Jahukyan G.** "Armenian Etymological Dictionary" [*Hayeren stugabanakan barraran*]: Publ. "Asoghik". Yerevan. 2010. 819 pp. (in Armenian)
25. **Sardaryan S.** "Primitive society in Armenia. [*Nakhnadaryan hasarakut'yuny Hayastanum*]. Yerevan. YU pub. 1967. 235 p. (in Armenian)
26. **Strabo.** [*Strabon*]. Yerevan. 1940: 124 p. (in Armenian)
27. **Srvandzyants G.** "Works". [*Yerker*]. II. Yerevan. Publ. AS of Arm. SSR. 1982. 560 p. (in Armenian)
28. **Piliposyan S. Mkrtychyan R.** "The Urartian cave tomb of Geghhovit. "Archaeological Monuments of Armenia. 18. Urartian monuments" [*Geghhovti vantospyan (urartakan) k'arayer dambarany. «Hayastani*

- hnagitakan hushardzannery. 18. Urartakan hushardzanner»]. Yerevan. "Zangak-97" Publ., 2001. 159 p. (in Armenian)*
29. **Xenophon.** "Cyropaedia [*Kyropedia*]. "Nor dar" pub.. Yerevan. 2000. 412 p. (in Armenian)
 30. **Afanasyeva V.** "Gilgamesh and Enkidu. Epic Images in Art" [*Gilgamesh i Enkidu. Epicheskiye obrazy v iskusst ve*]. Chief Editorial Office of Oriental Literature. Moscow. 1979. 192 p. (in Russian)
 31. **Gamkrelidze T., Ivanov V.** "Indo-European language and Indo-Europeans" [*Indoyevropeyskiy yazyk i indoyevropeyskiy*]. V. II. Tbilisi. Pub. of Tbilisi University. 1984. 1328 p. (in Russian)
 32. "Ancient Greek-Russian Dictionary" [*Drevnegrechesko-russkiy slovar*]. V. II. Moscow. State pub. of Foreign and National Dictionaries. 1958. 1043 p. (In Russian)
 33. **Dyakonov I.** "Assyro-Babylonian sources on the history of Urart" [*Assiro-vavilonskiye istochniki po istorii Urartu*]. "Herald of Ancient History". 1951. NN 2. 3. 4. (in Russian)
 34. **Dyakonov I.** "To the question of the symbol of Khaldi" [*K voprosu o simvole Khaldi*]. "Ancient Orient." IV. Yerevan. AS of the Arm. SSR. 1983. 190-194 pp. (in Russian)
 35. **Kapantsyan G.** "Historical and Linguistic Work on the Initial History of Armenians" [*Istoriko-lingvisticheskiye raboty k nachal'noy istorii armyan*]. Yerevan. AS of the Arm. SSR Publ., 1956. 470 p. (in Russian)
 36. **Mellaart J.** "Trade and trade routes between Northern Syria and Anatolia (4000-1500 BC)" [*Torgovlya i torgovyye puti mezhd Severnoy Siroyey i Anatoliyey (4000-1500gg. do n. e.)*], "Ancient Ebla" (Excavations in Syria). Moscow. "Progress" Publ.. 1985. 366 p (in Russian)
 37. **Kalmeyer P.** "Symbol of the Khaldi" [*Simvol Khaldi*]. "Ancient Orient". IV. Yerevan. AS of the Arm. SSR. 1983. 312p. (in Russian)
 38. **Kushnareva K., Chubinishvili T.** "Ancient cultures of the South Caucasus" [*Drevniye kul'tury Yuzhnogo Kavkaza*]. Leningrad. "Nauka" Publ.. 1970. 190 p. (in Russian)
 39. **Piotrovsky B.** "Art of Urartu. VIII-VI centuries B.C" [*Iskusstvo Urartu. VIII-VI vv. do n. e*]. Leningrad. Publ. of the State Hermitage Museum. 1962. 123 p. (in Russian)
 40. **Frazer J.** "Folklore in the Old Testament" [*Fol'klor v Vetkhom Zavete*]. Moscow. Pub. of Political Literature. 1989. 541 p. (in Russian)
 41. **Ceram C.** "Le secret des Hittites. Decouverte d'un ancien empire". Librairie Plon. Paris. 1955. 302 p.
 42. **Kramer S.** "Gilgameš and the *Huluppu-Tree*, "Assyriological Studies". 11. Chicago. 1938. 74-76 pp.

Ընդունվել է / Received on: **27. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **12. 05. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Սարգիս Գարեգինի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրիի, ՀՀ,
էլ. հասցե՝ Vahe1996@mail.ru [https // orcid.org/0009-0008-8880-6936](https://orcid.org/0009-0008-8880-6936)

Sargis Garegin PETROSYAN: Doctor of Historical sciences,
Senior researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA,
e-mail: Vahe1996@mail.ru // orcid.org/0009-0008-8880-6936

Լուսինե Սարգսի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի գիտաշխատող, ԾՊՀ-ի դասախոս Գյումրիի, ՀՀ
էլ. հասցե՝ LusineS.P.@gmail.com // orcid.org/0000-0002-3208-9674

Lusine Sargis PETROSYAN: PhD in history
Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA, Lecturer at ShSU, Gyumri, RA
e-mail: LusineS.P@gmail.com // orcid.org/0000-0002-3208-9674

ՇԻՐԱԿՅԱՆ ՊԱՐԵՐԳԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հասմիկ Հ. Հարությունյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի մասնաճյուղ, Գյումրի, ՀՀ

Հասմիկ Հ. Մատիկյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Անվտիում

Նախաբան. Հոդվածը նվիրված է պարերգի ժանրի ուսումնասիրությանը ժամանակակից միջավայրի փոխազդեցությունների համատեքստում: Ժանրային բնորոշիչները ուսումնասիրվել են տեքստ-համատեքստ հարաբերակցության մեջ: *Մեթոդներ և նյութեր.* Բանագիտական և երաժշտագիտական մեթոդներով քննության են առնվել Շիրակում տարածված պարերգերի արդի ձայնագրությունները, որոնք իբրև բացառիկ նմուշներ դիտարկվում են առաջին անգամ: *Վերլուծություն.* Վերլուծվել են պարերգերի շուրջ հարյուր գրառված նմուշներ՝ լեզվաբանագիտական և երաժշտագիտական արտահայտչամիջոցների համալիրի բացահայտումով: *Արդյունքներ.* Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պարերգի ժանրը իր մեջ ներառում է ոչ միայն կոնկրետ արտահայտչամիջոցների համալիրը, այլև դրսևորվում է որպես մի նոր նմուշի ստեղծման և վերարտադրման գործընթաց: *Հեղինակների ներդրումը.* Հետազոտությունն իրականացվել է երկու հեղինակների անմիջական մասնակցությամբ. առաջին հեղինակի ներդրումը հավաքված նյութերի նոտային վերծանություններն ու էթնոերաժշտագիտական քննությունն է, իսկ երկրորդ հեղինակինը՝ բանագիտական նյութի և տեսական մասի շարադրանքը: **Բանալի բառեր՝** *պարերգ, ժանր, արտահայտչամիջոցների համալիր, տեքստ, համատեքստ, փոխակերպում:*

Ինչպես հղել՝ Հարությունյան Հ., Մատիկյան Հ. *Շիրակյան պարերգերը փոփոխվող միջավայրի համատեքստում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1(28): 85-95 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-85

SHIRAKIAN TRADITIONAL DITTIES IN THE CONTEXT OF CHANGING ENVIRONMENT

Hasmik H. Harutyunyan

Shirak Centre for Armenological Studies of NAS RA,
Yerevan Komitas State Conservatory Gyumri Branch, RA

Hasmik H. Matikyan

Shirak Centre for Armenological Studies of NAS RA,
Shirak State University after M. Nalbandyan, RA

Abstract

Introduction: The article is devoted to the study of traditional ditties in the context of interactions of modern environment. The generic characteristics are studied in the settings of text and context. **Methods and Materials:** Contemporary recordings of popular dance songs from Shirak, initially regarded as unique examples, were examined through ethnographic and musicological approaches. **Analysis:** Approximately one hundred recorded dance song samples were analyzed, revealing a range of linguistic and musicological expressive techniques. **Results:** The research demonstrated that the dance song genre encompasses not only a specific set of expressive tools but also functions as a process for creating and reproducing new versions. **Authors' Contributions:** The study was carried out with direct contribution from both authors. The first author's contribution includes transcribing musical notation and providing ethnomusicological analysis of the collected materials, while the second author contributed by developing the philological content and the theoretical part.

Key words: *dance song, genre, complex of expressive means, text, context, transformation.*

Citation: Harutyunyan H., Matikyan H. *Shirakian Traditional Ditties in the Context of Changing Environment* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025: V 1(28). 85-95pp..

DOI: 10.52971/18294316-2025.28.1-85

ՆԱԽԱԲԱՆ. Պարերգը հայոց բանահյուսության մեջ ամենատարածված ժանրերից է: Այն հայտնի է *խաղ, մանի, յայլի, գովընդ, թաղալո* անվանումներով: Բանագիտության մեջ այն արժևորվում է որպես հնագույն երաժշտաբանաստեղծական և պարային անտարանջատ բանահյուսական երևույթ: Աղերսները շատ մեծ են ավանդական ծեսերի և հավատալիքների հետ: Ժամանակի ընթացքում դրանցից շատերը մոռացվել են կամ պահպանել են գործառույթը՝ այլ համատեքստում: Այստեղ մեծ դեր է կատարել միջավայրի սոցիալ-մշակութային իրողությունների ազդեցությունը: Պարերգը հաճախ կորցրել է ծիսահավատալիքային խորհուրդը և հարմարվել է նոր իրողությանը՝ ձեռք բերելով նոր՝ կենցաղային գործառույթ:

Անդրադարձել ենք Շիրակի տարածաշրջանի տարբեր համայնքներում վերջին տարիներին ձայնագրված նմուշների քննությանը՝ հնարավորինս ամբողջությամբ վեր

հանելով ժանրի կենցաղավարման արդի յուրահատկությունները՝ ավանդական բնութագրի համադրմամբ:

Պարերգի ժանրի ավանդական նկարագիրը

Հայոց քնարական բանահյուսության մեջ յուրահատուկ տեղ զբաղեցնող խաղիկները, մանիները, պարերգերը, ջանգուլումները, վիճակի երգերը ոչ ծավալուն հորինվածքներ են, որոնց բնորոշ են ոճական և արտահայտչական շատ ընդհանրություններ: Դրանք փոքրածավալ են և իրենց մեջ խտացնում են իրականության քնարական ընկալման կարևոր դրսևորումներ: Դրանց ժամանակին հանգամանորեն անդրադարձել է Մ. Աբեղյանը [1], որը այս ժանրերն ուսումնասիրել է Կոմիտասի հետ միասին[5]:

Ըստ Մ. Աբեղյանի՝ խաղը քնարերգություն է, այսինքն՝ մի բանաստեղծություն, որ արտահայտում է գլխավորապես երգչի զգացմունքը, նրա ներքին կյանքը, առանձնապես սիրո զգացմունքն իր զանազան վիճակներով: Այս ներքին, հոգեկան կյանքն ահա կազմում է ընդհանրապես խաղի գուգահեռական մասերից երկրորդի բովանդակությունը: Բայց չկա քնարերգություն առանց բնության նկարագրի, մանավանդ շինական մարդու համար, որ բնության մեջ է ապրում: Քառատողի սկավառքի մեջ է լինում սովորաբար բնության մասը, ժողովրդական կյանքի նկարագիրը կամ կատարվող և կատարված դեպքերի թվարկումը, որոնց համադրությամբ այն ամբողջանում և իմաստաբանական որոշակի արժեք է ստանում:

Խաղերի ընդհանուր կազմությունն այս է: Բայց բնության նկարագիրը երբեմն միայն առաջին տողի մեջ է լինում, երբեմն անցնում է և չորրորդ տողին, որով զգացմունքային մասը մնում է միայն երկրորդ տողի մեջ [1, էջ 283]:

Խոսքը վերաբերում է խաղիկներին, սակայն նույն բնորոշիչները տեսանելի են նաև վերոնշյալ ժանրերում: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը՝ «*խաղ* բառը միաժամանակ նշանակում է և *պար*: Այս ցույց է տալիս, որ *խաղ* կամ *խաղը երգոց* սկզբնապես կոչվել են պարերգերը, իսկապես այն փոքրիկ երգերը, որոնց մասին է խոսքս, որովհետև քառատողներն ու եռատողերը, մանավանդ երկատողերը, գրեթե բոլորը սկզբնապես պարերգ են: *Այժմ նս, սակավ բացատրությամբ, իբրև պարերգ բանում են միայն այս փոքրիկ երգերը. Այնպես որ, եթե խաղ բառն իր սկզբնական նշանակությամբ գործածելու լինեինք, այս բառով միայն կարելի էր կոչել ժողովրդական երգի այս տարրական տեսակը*» [1, էջ 285]:

Անդրադառնանք *խաղ* կամ *խաղիկ* բառի համակողմանի քննությանը: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում նշված բառամիավորները ունեն հետևյալ նշանակությունը՝

1. *Խաղիկ*-1. ժողովրդական փոքրիկ երգ, որ սովորաբար կազմված է լինում չորս տողից:
2. Փոքրիկ երգ:
2. *Յայլի/բրբ/-կլոր պար*:
3. *Մանի*- 1. արևելյան երաժշտության մեջ տխուր եղանակի անուն 2. Երգ, բանաստեղծություն [4]:

Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ում մանին բացատրվում է որպես՝ սգերգ, երգ, բանաստեղծություն[8, էջ 727]:

Խաղ բառը երգել ու պարել իմաստով գործածական է նաև հետևյալ կապակցություններում.

Խաղ անել- 1. խաղալ, 2. պարել

Խաղ ասել-երգել

Խաղ բռնել-պարել

Խաղ կանչել-երգել[8, էջ 402]:

Պար բառամիավորը Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում ընդգծվում է իմաստային հետևյալ շերտերով՝

1. գեղարվեստական կերպարների կերտումը՝ վերարտադրությունը մարմնի արտահայտչական շարժումների ու գեղեցիկ կշռությամբ հաջողականության միջոցով՝ որպես արվեստի տեսակ,
2. այս կամ այն երաժշտական եղանակի համար ու համապատասխան կշռությամբ կատարվող յուրահատուկ շարժումների ամբողջականություն,
3. պարարվեստի յուրաքանչյուր տեսակ ♦ խմբական պար, կլոր պար, կենտ պար, արագ պար,
4. պարարվեստի որևէ տեսակի համար գրված՝ հորինված երաժշտական ստեղծագործություն, պարեղանակ,
5. (երաժշտ.) երաժշտական պիես՝ գրված պարեղանակների հատուկ ռիթմերով, տեմպերով և բնույթով, (փխբ.) մանկան զանազան շարժումները ձեռքերով ու մարմնով, պապար [2, էջ 1999]:

Բառարանային սահմանումները մեզ օգնում են հասկանալու բառերի ոչ միայն անվանական-բառարանային իմաստները, այլ նաև բառային, բանաձևային մակարդակով կապ են ստեղծում բանահյուսական մի ժանրից մյուսը՝ օրորից պարերգ, քնամուտից-մանկախաղաց երգ:

Ինչպես նկատել է երաժշտագետ Մ. Բրուտանը, պարերգերին բնորոշ է պարի թռիչքներին ու ցատկումներին համապատասխանող բացականչությունների (*«հո՛յ նար, «հե՛յ», «ջան, ջանե՛ ջան»*, *«հո՛ փ շուրմա, թոփ շուրմա»*, *«աման յար»*, *«օ՛ յար»*, *«վա՛յ լե, լե»*, *«վա՛յ լո, լո, լո»* և այլն) օգտագործումը, որոնք նպաստում են պարի թեթև ընթացքին և հաճախ կազմում պարերգի կրկնակը: «Լոկ ձայնարկություն-կրկնակները երգի հիմնական բովանդակության մեջ ոչինչ նոր բան չեն մտցնում: Այն կրկնակները, որոնք լոկ ձայնարկություններ չեն, իրենց բովանդակությամբ (հաճախ սեղմ ու հակիրճ են, զուսպ արտահայտությամբ) պարզապես լրացնում են, խորացնում բանաստեղծական միտքը, հարողորմ նրան զգացմունքային շեշտ: Ըստ Կոմիտասի՝ ժողովրդական եղանակներին գույն տվողը կրկնակներն են» [3, էջ 175]:

Քանի որ մեր ուսումնասիրության նպատակը մերօրյա պարերի առանձնահատկություններն են, ուստի մենք համադրել ենք նախկինում գրառված խաղիկները շիրակյան մեր գրառումներին:

Մեր դաշտային գրառումները փաստում են, որ Շիրակի մարզում խաղիկը լայն կիրառություն է ունեցել: Բանասաց Հ. Ֆարգադյանի¹ երգած մանկախաղաց տեքստն ունի *Պար, պար, պար անեմ* սկսվածքը.

*Պա՛ր, պա՛ր, պար անեմ,
Աղջիկներին յար անեմ,
Սև հավի միս կերցնեմ,
Չիր ու չամիչ կերցնեմ...*

Այս բանահյուսական նմուշում *պար անել*-ը համարժեք է *երեխային թռցնել* իմաստին: Շիրակի բանահյուսական խաղիկների մեծաթիվ օրինակներում *մանի ասեմ*-ը ձեռք է բերում բանաձևային նշանակություն: Այն կարող է հանդես գալ թե՛ օրորերգի, թե՛ մանկախաղացի, թե՛ պարերգերի համատեքստերում.

*Մանի ասեմ ու շարեմ,
Լցնեմ տոպրակն ու կարեմ...*

Մեր գրառած օրինակներից մեկում շիրակցի բանասաց Խ.Միքայելյանը² *մանի ասեմ ու շարեմ* բանաձևը փոխակերպեց *օրոր ասեմ ու շարեմ*-ի.

*Օրօր, օրօր, իմ բալա,
Օրոր ասեմ ու շարեմ,
Լցնեմ տոպրակն ու կարեմ:*

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ կրկնակի բանաձևը պահի տակ կարող է փոփոխության ենթարկվել և նոր տարբերակի հիմք դառնալ:

Մանի ասեմ կառույցով տեքստերը մեծ մասամբ սկսվածքային տիրույթում են ասվում.

*Մանի ըսեմ մեկ բերան,
Ձեր տանը՝ ջուխտըմ գերան,
Գեշը սիրունի ծոցը
Այ վախ ու հազար բերան [6 էջ 398]:*

Մանի ասեմ ու շարեմ բանաձևը տեղափոխում է մեզ նաև վիճակի երգերի միջավայր.

*Մանի ասեմ ու շարեմ,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Լցնեմ տոպրակն ու կարեմ:
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:*

Շիրակում առանձնանում է հետևյալ վիճակի երգը՝ *վիճակ ըսեմ ու շարեմ* սկսվածքով, որը հուշում է խաղիկի վիճակի երգ լինելու իրողությունը.

*Վիճակ ըսեմ ու շարեմ,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Լցնեմ տոպրակն ու կարեմ,
Ջան, ծաղիկ, ջան, ջան [6, էջ 420]:*

¹ Բանասաց՝ Հ. Ֆարգադյան: Ծնվել է 1979 թ. Լենինականում: Նախնիները գաղթել են Կարսից:

² Բանասաց՝ Խ. Միքայելյան: Ծնվել է 1932 թ. Շիրակի մարզի Սեպասար գյուղում: Նախնիները Այաշկերտից են:

Թե՛ բանահյուսական մտածողության տիրույթում, թե՛ հեղինակային միջավայրերում նշված խաղիկների անվանումները ունեն լայն ընդգրկվածություն:

Մանին՝ որպես խաղիկի տեսակ, առավել հայտնի է Շիրակի տարածաշրջանում /Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Ախուրյան և այլն/:

Ա. Իսահակյանը, հետևելով խաղիկների ժողովրդական ժանրային ընկալումների ավանդույթին, ստեղծել է «Ալագյազի մանիներ» շարքը, որով մանին գրական ժանրի իրավունք է ձեռք բերել, իսկ «Ալագյազ» բառով ընդգծվել է նրա տեղական ծագումն ու տարածաշրջանային պատկանելությունը [11]:

Ըստ Բաճիկի՝ որպես ժողովրդական բառ ու բանի կրող, հաճախ է իր երկերում օգտագործում խաղիկի տարբեր անվանումներ՝ փորձելով ներկայացնել նաև կատարողներին, կատարման միջավայրը, պարի եղանակը. «Մի այլ տեղ սազանդարներն ածում են գուննա և նադարա: Նրանք կանգնած են տափարակի վրա: Այնտեղ հավաքվել է զվարճասեր բազմությունը: **Պար են բռնել.** դա կոչվում է **յալլի** կամ **գուանդ:** Տղամարդիկ, կանայք և աղջիկներ, միմյանց ձեռքից բռնած, կազմել են մի բոլորակ շղթա: Նվագածուները կանգնած են բոլորակի կենտրոնում: Խայտաճամուկ շղթան պտտվում է նրանց շուրջը: Կնիկների երեսները քողարկած են, իսկ աղջիկներինը բաց են: Մի տղամարդ, գույնգույն թաշկինակը ձեռքում, դրոշակի նման փոփոցներով, տանում է պարագլուխը: Նա սկսել է մի ջանգրվում և ամեն անգամ երգում է մի տուն, ամբողջ խորը կրկնում էր նրա խոսքերը: **Իսկ երբեմն երգում են հերթով: Այն ժամանակ մրցություն է լինում տղամարդերի և աղջիկների մեջ: Նրանք պատասխանում են միմյանց զանազան սրախոսություններով:**

Պարի եղանակը կամ ձևը պահպանվում էր ոտքերի զանազան տեսակ շարժվածքներով: Երբեմն շղթայի բոլորակ շարքը ստանում է ոլոր-մոլոր ձև, այն ժամանակ կազմվում է մի կատարյալ լաբիրինթոս: Բայց երբեք խաղացողները չեն խառնվում միմյանց:

- Կուզե՛ս մենք էլ **պար բռնենք**, - հարցրի Մարոյից:

- Չե՛, գնանք ուրիշ բաներ մտիկ անելու, - պատասխանեց նա» [9, էջ 423]:

Ըստ Բաճիկի կարևորել է նաև ջանիմանները՝ որպես պարերգ. «Լիրիկական երգերի մեծ մասը **ջանիմաններ** են. այդ անունը, որ պարսկերեն նշանակում է իմ **հոգյակս**, տալիս են մի տեսակ պարերգի, որ երգվում է զանազան խաղերի մեջ: Այդ խաղերը Վասպուրականի և Տարոնի կողմերում կոչվում են **գովանդ**, կամ գոնդ, իսկ Արարատա կողմերում **յալլի**: Խաղացողները երկու սեռից ևս, միմյանց ձեռքից բռնելով կազմում են բոլորակ շղթա, որ պար գալով զանազան պտույտներ և շրջաններ է գործում, իհարկե շարժումները հարմարեցնելով պարի եղանակին: Պարագլուխը (յալլի բաշին) սկսում է մի ջանիման, իսկ ամբողջ խորը կրկնում է երգի ամեն մի տան վերջին տողերը միայն: Այդ է պատճառը, որ **ջանիմանների** մեջ առաջին տողը կրկնվում է միշտ, օրինակ.

Ջանիման, ջանիման,

Դեհե զընկ զընկ, դեհե ջան,

Բաղնի ջան, Բաղնի և այլն» [10, էջ 78]:

Ըստ բովանդակության պարերգերն ունեն հետևյալ իմաստային շերտերը.

Խաղիկը՝ որպես սիրո երգ.

Արևշատի սարերը

Գրաված խաղիկում բանասաց Վ. Հակոբյանը³ գյուղի կենցաղը ներկայացնում է *փոցխել* և *գերանդի* բառամիավորներով՝ ստեղծելով գյուղական միջավայրի պատկեր: Այդ միջավայրի կարևոր բաղադրիչներն են Արևշատ գյուղի սարերն ու Տաջբուլաղը: Յայլեն՝ որպես ամառային արոտավայր, ապահովում է խաղիկի տեղային միջավայրը.

Ծաղկի ծով են Արևշատի սարերը,
 Մենք փոցխում ենք յայլի ճերմակ քարերը,
 Կուժը ուսիս եմ դրել.
 Տաջբուլաղից քեզի պաղ ջուր եմ բերել:

Խաղիկն առանձնանում է համահնչուն վերջավորություններով: Առաջին և երկրորդ, երրորդ և չորրորդ տողերը համահնչուն են: Հանգավորված բառերը՝ *սարերը, քարերը// դրել, բերել* առավել մեծ ուշադրություն են գրավում: Խաղիկի առաջին տունը /4 տող-կատրեն/ խտացնում է ասելիքը: Տեքստը շարունակվում է երկտողերով /դիստիքոս/:

*Խմիր սիրտդ հովանա,
 Ջրին խառնած անկեղծ սերս եմ բերել:*

Խաղիկի վերջնահնչյունը հանգավորվում է *խաղ կանես* արտահայտությամբ, որը դառնում է փակող բանաձև:

*Ուրախ տղա խաղ կանես,
 Գերանդիով ծաղկանց հետը խաղ կանես:
 Ամեն ընձի նայելիս,
 Աչքերիցդ ուրախ ժպիտ խաղ կանես:*

Երաժշտական բաղադրիչին բնորոշ են յամբական շեշտերը, որոնք պահպանվում են ամբողջ կառույցում և նպաստում են յուրօրինակ պտտվող դարձվածքների պարայնությանը: Ջերմ քնարականությունն այստեղ համադրված է բնապատկերային և աշխատանքային դրվագներին: Այս կենսուրախ հորինվածքը զարմանալիորեն ներդաշնակվում է *fis*¹ հիմքով փուլգիական մինորի սահմաններում՝ տերցիային օժանդակ հենակետով *fis*¹-*g*¹-*a*¹-*h*¹-*c*² հնչյունաշարով:

Սովորաբար, պարերգերում դրսևորվում է հայ ժողովրդի մտածելակերպն և հոգեկերտվածքը, վերաբերմունքը սեփական պատմության, բնության, կենցաղի, ավանդույթների և իհարկե՝ մարդկանց հանդեպ:

³ Բանասաց՝ Վ. Հակոբյան: Ծնվել է 1952թ. Արևշատ գյուղում: Ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Վանից:

*Արի, յարո ջան՝*Քնարական պարերգ է՝ հովիվ յարի և բնության գովերգով: Ունի գույգ կրկնատող՝ փոքրիկ տարբերակումով՝ *Արի, յարո ջան* կամ *Էլի, յարո ջան*: Շիրակյան այս խաղիկում *Դու ոչխար պահե, ես էլ ընդեղ գառները* տողը կրկնվում է յուրաքանչյուր տան մեջ: Խաղիկում խաղ կապողը ցանկության մաղթանքով է հյուսում տեքստը, որը հանգավորված է ու ռիթմիկ:

Արի, յարո ջան, արի ելնիք լեռները,
 Դու ոչխար պահե, ես էլ ընդեղ գառները:
 Մարեն, ձորեն ձեն կու գա,
 Էլի, յարո ջան, էլի էրթանք լեռները,
 Դու ոչխար պահե, ես էլ ընդեղ գառները:

Այս պարերգը երաժշտական բաղադրիչի շնորհիվ մոտ է ավանդական *գովընդ* պարի հորինվածքին: Իոնական մաժորի տոնիկական տերցիայի կառուցողական հենքի վրա է ծավալվում ողջ կառույցը՝ աննշան թռիչքներով:

Շիրակյան մեկ այլ պարերգում *բարձր սար*-ը դառնում է խաղիկի կրկնվող միավոր:⁵ Տեքստի պատկերավորությանը նպաստում են *սեր ու սավղա, սրտի խոնչեն* արտահայտությունները.

Էս ինչ անուշ դայդա է, բարձր սար,
 Թագա *սեր ու սավղա* է, բարձր սար, բարձր սար,
 Բացված վարդը նվիրում եմ տալիս,
 Կոկոն վարդը նվիրում եմ յարիս:
 Արի էրթանք մեր բախչեն, բարձր սար,

⁴ Բանասաց՝ Չ. Տոնոյան: Ծնվել է 1946 թ. Լենինականում: Ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Այաշկերտից:

⁵ Բանասաց՝ Սոֆյա Եղիազարյան: Ծնվել է 1941թ. Հայկական գյուղում: Ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից:

Բացենք մեր *սրտի խոնչեն*, բարձր սար, բարձր սար,
 Բացված վարդը նվիրում եմ տալիս,
 Կոկոն վարդը նվիրում եմ յարիս:

Սա քնարական պարերգ է՝ բնապատկերի խորհրդանիշերով: *Բարձր սարը*, որը յուրահատուկ կրկնակ է, կատարում է սուկ շարահյուսական դեր: Կարևոր ասելիքը *սեր ու սավդան* է, *կոկոն վարդն ու տալը* /նշանածի քույրը/: Երաժշտական բաղադրիչը աչքի է ընկնում չափազանց պարզությամբ, փոքր ձայնածավալով, վանկային երգեցողության բնորոշիչներով:

Բանահյուսական ստեղծագործության ճանաչման և ուսումնասիրման գործում յուրահատուկ նշանակություն ունի *միջավայրը* կամ *համատեքստի* կատեգորիան: Նկատի ունենալով բանահյուսության ավանդաբար փոխանցվող տեքստերի բանաձևային բնույթն ու կայունությունը՝ ընդունված է տարբերակել գենետիկական և փաստացի (սահմանական) ենթատեքստերը: Գենետիկական կոնտեքստը կարող է կորսվել և հաճախ վերականգնվել տեքստի ձևաբանական վերլուծության հիման վրա, իսկ փաստացի կոնտեքստը ներառում է բազմաթիվ ոչ խոսքային բաղադրիչներ /ժամանակ, տեղ, իրադրություն, կատարող, գործողությունների շարք՝ առարկայական խորհրդանիշային համատեքստով:

Բանագիտության մեջ ընդունելի են նաև միջտեքստային տեսության գաղափարները, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել տեքստային միավորների տարբեր տեսակները/ հիպերտեքստեր, մետատեքստեր, արխիտեքստեր և այլն/, որոնց մեջ ֆոլկլորային այս կամ այն ժանրը ներկայանում է արտակա գործառույթներով և բովանդակային կապերով՝ ավանդույթի առավել ընդհանրական ըմբռնման նպատակով: Այդ համակարգերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու բանահյուսության տեղային երկացանկի ձևավորման խրթին հարցերը: Ահավասիկ, բանահավաքի խրդրանքով տարեց բանասացի երգած այս պարերգը՝ *մանին*, հավաստում է, որ բանահյուսությունը որքան ավանդական, նույնքան էլ արդիական ստեղծագործություն է: Բանասացը ժողովրդական հայտնի *Շիրանի ծառ* ողբերգը յուրօրինակ ձևով փոխակերպել է պարերգի: Երգի բառերը եղանակավորել է մեկ այլ հայտնի՝ *Ջաղացս պատիկ-պատիկ* քնարական երգի մեղեդու հիմքի վրա՝ նաև փոփոխելով մետրառիթմական բաղադրիչ-

ները, տեմպը, տրամադրությունը, բնույթը: Պատահական չէ, որ երգի հաջորդ տունը լիովին վերականգնում է ժողովրդական մանիի հորինվածքային նկարագիրը.

Մանի եմ, մանաջի եմ,
 Լարլարու գյանաջի եմ,
 Մանի ըսեմ ու շարեմ,
 Տոպրակ լցնեմ ու կարեմ,
 Առնեմ ընկնեմ քաղքըներ,
 Մրտիս ուզածը ճարեմ:



ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ժողովրդական երգը միշտ կրկնվող կատարողական գործողություն է, որը ներառում է և՛ ավանդույթից ստացած երգի վերակերտումը, և՛ դրա ժխտումը, քանի որ յուրաքանչյուր նոր տարբերակ ժխտում է նախորդը՝ դառնալով նոր արտահայտություն և առաջ բերելով նոր տարբերակներ: Նույն պարերգը տարբեր համատեքստերում կարող է հնչել բազմաթիվ անգամներ՝ վերածնվելով և ինքնատչանալով, ինչպես փյունիկը: Երգն անսահման է այն իմաստով, որ գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ այն իրականում և վիրտուալ առումով ներկա է՝ անցյալում, ներկայում և ապագայում: «Գոյություն ունի»՝ նշանակում է լինել ինչպես անցյալում, այնպես էլ ապագայում՝ կապակցելով գոյության բոլոր ժամանակները:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աբեղյան Մ.** «Երկեր» հատոր Բ: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1967, 387 էջ:
2. **Աղայան Է.** «Արդի հայերենի բացատրական բառարան», հ.2: «Հայաստան» հրատ.: Երևան: 1976: 1999 էջ :
3. **Բրուտյան Մ.** «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն»: Երևան: «Ամրոց գրուպ» հրատ.: 2004: 255 էջ:
4. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1972:
5. «Ժողովրդական խաղիկներ, խմբ.՝ Մ. Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Հայպետհրատ, 1940: 584 էջ:
6. *Շիրակ. հայոց բանասիրական մշակույթը*, կազմ.՝ Մ. Խենյան, Է. Խենյան, Լ. Ղեյջյան, Հ. Մատիկյան, ՀՀ ԳԱԱ: Երևան: ՀԱԻ հրատ.: 2024: 398 էջ:
7. «Շիրակի ժողովրդական երգեր»: Ազգագրական հանդես, 1898, հ. Դ., N 2:
8. **Սուքիասյան Ա.** «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»: Ե՛Հ հրատ.:Երևան: 2009: 727 էջ:
9. **Բաֆֆի**, «Երկերի ժողովածու», հատոր 4, Երևան: 423 էջ:
10. **Բաֆֆի**, «Երկերի ժողովածու», հատոր 9: Երևան:78 էջ:
11. https://isahakyanmuseum.am/htmls/poemner_2.html

Արխիվային նյութեր՝

1. ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոն, Հ. Մատիկյանի ֆոնդ, թ. 222:
2. ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոն, Հ. Հարությունյանի ֆոնդ, թ. 254:

References

1. **Abeghyan M.** "Songs Volume B" [*Yerker hator B.*], Yerevan, ASSR Academy of Sciences Publ. House, 1967, 387 p. (in Armenian)
2. **Aghayan E.** "Explanatory Dictionary of Modern Armenian"[*Ardi hayereni bats'atrankan barraran*], V.2,"Hayastan" Publ.House, Yerevan, 1976, 1999 p. (in Armenian)
3. **Brutyán M.** "Armenian Folk Musical Composition"[*Hay zhoghovrdakan yerazhshtakan steghsagor tsut'yun*], Yerevan, "Amrots Group" Publ.House, 2004, 255 p. (in Armenian)
4. "Explanatory Dictionary of the Modern Armenian Language"[*Zhamanakakits' hayots' lezvi bats'atrankan barraran*], Institute of Language named after Hr. Acharyan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, Yerevan, 1972. (in Armenian)
5. "Folk Songs"[*Zhoghovrdakan khaghikner*], ed. M. Abeghyan, with partial collaboration with Komitas, "Haypethrat" Publ. House, 1940, 584 p. (in Armenian)
6. "Shirak: Armenian Folk Culture"[*Shirak. hayots' banahyusakan mshakuyt'y*], ed. M. Khemchyan, E. Khemchyan, L. Ghrejyan, H. Matikyan, National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, HAI Publishing House, 2024, 398p. (in Armenian)
7. "Shirak Folk Songs"[*Shiraki zhoghovrdakan yerger*]: Ethnographic Journal, 1898, V. D., N 2 (in Armenian)
8. **Sukiasyan A.** "Explanatory Dictionary of Synonyms of the Armenian Language" [*Hayots' lezvi homanishneri bats'atrankan barraran*], Yerevan University Publ., Yerevan, 2009, 727p. (in Armenian)
9. **Raffi**, "Collection of Works" [*Yerkeri zhoghovatsu*], V. 4, 423 p. (in Armenian)
10. **Raffi**, Collection of Works [*Yerkeri zhoghovatsu*], V. 9, 78 p. (in Armenian)

Archival Sources :

1. H. Matikyan's fund, N 222, Shirak Center for Armenological Studies NAS RA.
2. H. Harutyunyan's fund,N254, Shirak Center for Armenological Studies NAS RA.

Ընդունվել է / Принята / Received on: **04. 04. 2025**
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **17. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Հասմիկ Հայկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ արվեստագիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ hasmik.har@mail.ru // orcid.org/0000-0001-7756-4240

Hasmik Hayk HARUTHYUNYAN: PhD in Art, Associate professor,
Senior researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA,
e-mail: hasmik.har@mail.ru // orcid.org/0000-0001-7756-4240

Հասմիկ Համլետի ՄԱՏԻԿՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
ԾՊՀ օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս,
Հայաստանի պետ տնտ. համալսարանի ԳՄ-ի ավագ դասախոս
Էլ. հասցե՝ hasvrej@mail.ru. //orcid.org/0000-0003-0032-5123

Hasmik Hamlet MATIKYAN: PhD in Philology, Associate professor,
Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA,
lecturer at the Chair of Foreign Languages and Literature of SUSH,
Senior lecturer, ASUE GB, Gyumri, RA,
e-mail: hasvrej@mail.ru. // orcid.org/0000-0003-0032-5123

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԻԲՐԵՎ ՄՈԳԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ,
ՇՆՈՐՀՔ ԵՎ ՀՆԱՐԻՄԱՅՈՒԹՅՈՒՆ «ԿԱԽԱՐԴ ԵՎ ԻՐ
ԵՐԵԽԱՆԵՐԸ» ՀԵՔԻԱԹԱՇԱՇԱՐՈՒՄ

Լիլիթ Ա. Սահակյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Անփոփում

Նախաբան. Հոդվածում քննության են առնված հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում, մասնավորապես՝ «Կախարդը և իր երեխաները» դիպաշարում կերպարանափոխության դրսևորումները: Ուսումնասիրվել են կերպարանափոխության դերը՝ որպես հմտություն, հնարագիտություն և սոցիալական խնդիրների լուծման միջոց, ինչպես նաև կերպարանափոխության մոգական բնույթը, նրա կապը հայոց առասպելաբանական պատկերացումների և համաշխարհային առասպելաբանության համատեքստում: *Մեթոդներ և նյութեր.* Ուսումնասիրությունն իրականացվել է պատմահամեմատական, տիպաբանական և վերլուծական մեթոդներով՝ հիմնվելով հեքիաթների տպագիր տարբերակների վրա: Ուշադրություն է դարձվել հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում, ինչպես նաև համահնդեվրոպական առասպելաբանության մեջ կերպարանափոխության թեմայի մշակվածության խնդիրն: *Վերլուծություն.* Քննության են առնվել կերպարանափոխության տարբերակները «Կախարդը և իր երեխաները» հեքիաթաշարում, մասնավորապես՝ կերպարանափոխությունն իբրև «հունար», հերոսի ձեռք բերած հմտություն, Օխայ-բաբայի կերպարը՝ որպես մոգության կրող, կերպարանափոխության խորհրդանշական տարրերը, որոնք հանդես են գալիս որպես կապող օղակ երկու աշխարհների միջև: *Արդյունքներ.* Հրաշապատում հեքիաթաշարում կերպարանափոխությունը յուրահատուկ հմտություն է, հմայական ունակություն, որը կապված է անցումային ծեսերի, մոգության, այլ ժողովուրդների դիցաբանական կերպարանափոխվող կերպարների հետ՝ ձևավորելով շրջայական համակարգ:

Բանալի բառեր՝ հրաշագատում հեքիաթ, կերպարանափոխություն, Օխայ, մոգություն, հունար, կոմուլյասիվ կերպարանափոխություն, խորհրդանիշներ:

Ինչպես հղել՝ Սահակյան Լ. Կերպարանափոխությունն իբրև մոգական հմտություն, շնորհք և հնարինացություն «Կախարդը և իր երեխաները» հեքիաթաշարում // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Ն. 1(28): Գյումրի: 2025: 96-105 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-96

SHAPESHIFTING AS A MAGICAL SKILL, GIFT, AND CUNNING IN THE SERIES OF FAIRY TALES “THE WITCH AND HER CHILDREN”

Lilit A. Sahakyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: This article examines manifestations of shapeshifting in Armenian folk wonder tales, particularly in the plot cycle of "The Witch and her Children". The study explores shapeshifting as a skill, a form of cunning, and a means of resolving social issues, as well as its magical nature and its connection to Armenian mythological beliefs within the broader context of global mythology. **Methods and materials:** The research has been conducted using historical-comparative, typological, and analytical methods, based on printed versions of the fairy tales. Special attention has been given to the degree of elaboration of the theme of shapeshifting in Armenian folk wonder tales, as well as in the broader context of Indo-European mythology. **Analysis:** The paper explores shapeshifting as an acquired skill of the hero, the character of Okhay-baba as a bearer of magic, and the symbolic elements of transformation that serve as a connecting link (mediator) between two worlds. **Results:** In the series of fairy tales, shapeshifting is presented as a unique skill and a magical ability closely tied to transitional rituals, sorcery, and mythological shapeshifters from other cultures, forming a systemic chain of transformations.

Key words: *fairy tale, metamorphosis, Okhai, magic, Greek, cumulative metamorphosis, symbols.*

Citation: Sahakyan L. *Shapeshifting as a Magical Skill, Gift, and Cunning in the Series of Fairy Tales "The Witch and her Children"* // "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 1 (28). Gyumri. 2025, 96-105 pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-96

Ն Ա Խ Ա Ք Ա Ն. Բանավոր ավանդության համատեքստում «կերպարանափոխություն» եզրույթը նշանակում է կերպարանքի, տեսքի փոփոխություն, մի բանից մի այլ բանի վերածվել, վերածում, այլակերպում [1, էջ 725]: «Կերպարանափոխվել» նշանակում է կերպը՝ կերպարանքը փոխել որոշակի նպատակով և որոշակի ժամանակահատվածում: Բառի հումանիշների խմբում ընդգրկված են հետևյալ բացատրությունները՝ այլափոխություն, փոխարկություն, փոխակերպում, տարակերպություն, զանազանակերպություն և այլն:

Բառի ռուսերեն համարժեքներն են՝ преобразование (փոխակերպում), видоизменение (տեսքի փոփոխություն), метаморфоз (հունարեն μεταμόρφωσις՝ փոխակերպություն, μετα- (մետա-)՝ «փոփոխություն» և μορφή (morphē)՝ «ձև»): Անգլերենում կիրառվում են transformation, transfiguration, metamorphosis բառաձևերը: Կերպի բացատրությունն Աճառյանը տալիս է որպես «տարազ, եղանակ, ձև, որակ, որպիսություն, դեմք»: Ըստ Ազաթանգեղոսի՝ «կերպարան» (հատկապես՝ անեզական) նշանակում է «դեմք, արտաքին տեսք»:

Kerp բառը պահլավերենում նշանակում է «մարմին, ձև, կերպ», իսկ գենդերենում՝ «թիր»՝ «մարմին, երևոյթ, կերպարան»: Նույն բառից լատիներենում ձևավորվել է corpus («մարմին»), իսկ սանսկրիտում՝ «կերպարանք, գեղեցկություն»: Բառաքննության այս վերլուծությունը հանգեցնում է «կադապար», «գերբ-գերբարանք-կերպարանք» բառաձևումներին [2, էջ 579]:

Կերպարանափոխությունը՝ որպես կերպարանքի կամ մարմնի փոփոխություն, արտահայտում է փոփոխության գործընթացը, երբ կերպը, ձևը կամ դիրքը փոխվում են: Կախված բառի իմաստային դրսևորումներից և կիրառական տարբեր գործառույթներից՝ կերպարանքի հմայական փոփոխություններին և կերպափոխման դրսևորումներին անդրադառնալիս Մարգիս Հարությունյանը և մի շարք այլ բանագետներ կիրառում են «կերպարանափոխություն», «կերպափոխում», «փոխակերպում» և այլ եզրույթներ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում կերպարանափոխությունը սյուժեի կարևոր բաղկացուցիչ է, մոգական հնարք, հմայական գործողությունների համախումբ, բարու և չարի պայքարի գեղարվեստական արտահայտության ձև: Այն ենթադրում է հերոսի կամ առարկայի արտաքին տեսքի փոփոխություն՝ կախարդանքի միջոցով վերածվելով կենդանու, թռչնի, անշունչ առարկայի կամ հակառակը:

Կերպարանափոխությունը հրաշապատում հեքիաթներում դրսևորվում է տարբեր կերպ՝ կախված նպատակից, խնդիրներից, պայմաններից, ժամանակից, տեղից և այլ գործոններից: Այն կարող է տեղի ունենալ պայմանը խախտելու, գաղտնիքը բացահայտելու ժամանակ, դժվարություններ հաղթահարելիս, կամ երբ հերոսը փորձում է մահից փրկվելու հնար գտնել: Այս իրավիճակներում կերպարանափոխությունը հանդես է գալիս որպես փրկության միջոց: Այն ունի ժամանակավոր բնույթ, ինչը ենթադրում է վերադարձ նախկին տեսքին:

Տարբեր տարածաշրջաններից գրառած հրաշապատում հեքիաթների մեծ խմբից (ըստ հեքիաթների տիպերի միջազգային նշագանկի դասակարգման) առանձնացրել ենք «Կախարդը և իր երեխաները» հրաշապատում հեքիաթների դիպաշարը, որտեղ կերպարանափոխման տարբեր դրսևորումներ կան:

Արհեստ, փեշակ սովորելու, սոցիալական կարիքներ հոգալու նպատակով ծնողները (տարբերակներում նաև՝ պառավը) իրենց տղային (կամ աղջկան) տալիս են աղբյուրի ակում (կամ քարերի տակ) ապրող կախարդ ծերուկին, որ՝ «Մին էնպես արհեստ սուվերե, վեր լյուս աշխարք չլին» [14, էջ 22]: «Հեր ու տղա փետները վեր են ունում, ընկնում ճամփա, ընչանք ճաշվա թեքվիլը հասնում են մի ջրի դրաղ: Էդ ջրի դրաղին նստում են, խուրջինը բաց անում, բոքոնները դնում աղաքները, ուտում: Տղեն մի քանի դուռում որ դնում ա բերանը՝ ծարավում ա. վեր ա կենում ջրի վրեն մոզի անում, խմում: Էս ջուրը շա՛տ դիր ա գալի տղին, գլուխը բանձրացնում ա, ասում.- Օխա՛յ, էս ի՛նչ լավ ջուր ա [7, էջ 199]: Էս խոսքի վրեն էն սհաթը ջրի միջիցը մի գլուխ ա էրևում»: Ուխայը «շատ մրձ հաքիմ ա, ըշխարքեն տակը, գլուխը գիդացող», որ՝ «...համ ուսում ա սվըրցրիս, համ ալ հեքիմութուն» [15, էջ 56], համ էլ թռչնի, կենդանու, որևէ առարկայի փոխակերպվելու, ասել է թե՛ կերպարանափոխության վարպետությունը: Ծերուկի անունը զարմանք,

հիացմունք, անհանգստություն կամ այլ հուզական վիճակներ արտահայտող *օխայ, ուխայ, օֆօֆ* ձայնարկություն-բացականչությունն է, ինչն էլ դարձել է հատուկ անուն հեքիաթի (հաճախ հեքիաթի համանուն վերնագիր) չար հերոսի համար՝ *Օխայ, Ուխայ-բաբա, Ուխայ, Ուղխայ, Օխեշ, Օխոշ, Ուխաշ, Օֆօֆ* և այլն: Հրաշագործ ծերուկը, որն ապրում է ստորգետնյա թագավորությունում կամ ապարանքում, նախապես պայման է դնում ծնողների առաջ. «...Որ իր տված հունարները, արհեստը պիտի նենց գործածի, որ ոչ մեկ չհասկանա, հենց հասկանա, կոչնչացնի» [9, էջ 238]: Իմաստուն և խորամանկ ծերուկը մեծ հունար ունի՝ տիրապետում է կերպարանափոխության վարպետությանը: Նա կարողանում է փոխել իր արտաքինը՝ հերոսներին խաբելու, մոլորեցնելու և այլ նպատակներով: «Անց ա կենում ըսենց մի վախտ, տղեն Օխայ-Բաբու կշտին մնում ա, նրանից թագա բաներ, թագա հունարներ սարվում՝ դշերի, ջանավարների լիզուն ա սարվում, հենները խոսում, հասկանում. ուզում էր՝ էշ, ձի, ուղտ, ալապաստրակ, մախլաս ինչ ուզենար, դառնում էր, եր չէ, հո էլ եղ ըլնում իսան» [7, էջ 199]: Հերոսը նրա գրքերը գիշերները կարդում է թաքուն, հմտանում, տարբեր հունարներ ձեռք բերում: Նրան օգնում են հեքիաթի հերոսուհի օգնականները՝ աղջիկը, խոսող ձին: «Հորս ադաթն ա, -ասում ա աղջիկը,- ինչ աշկերտ ունենա, որ վաղեն թամեց, պրծավ՝ պտի վերջը նրան ըսպանի. համա ինձ որ անկաջ անես, ինչ ասեմ՝ անես, քու մի մազն էլա չի թեքվի: Մին՝ ո՛ր ինչ կդառնաս՝ ձի, ուղտ, ալապաստրակ, մի խոսքով ինչ որ կըլնես, քեզ կտանեն ծախելու, թամբահ արա գյամդ, յա նոխտեղ հեննեղ չտան, թե չէ իմաց կաց՝ եննա ուզենաս իսան դառնա, ինչ անես-չանես, չես կարա, հուր-հավիտենական հենը ընենց կմնաս» [7, էջ 199]: Աշակերտը կախարդ ծերուկից սովորած հունարների օգնությամբ դուրս է գալիս աղբյուրի ակից լույս աշխարհ ու փախչում նրանից: Տղան ծնողների մոտ է վերադառնում և կերպափոխվող, առատ սեղանի վերածվող սփռոց է տալիս, որ կուշտ հաց ուտեն՝ խոստովանելով. «Ա՛յ հեր, ուստիս կշտին էնթավուր հունար եմ սարվե, որ ինչ ուզենամ կըլնեմ, եր չէ, հո էլ եղ իսան կըլնեմ, ընդե կկաննեմ» [7, էջ 199]: Այդպես տարբեր կենդանիների կերպարանք է ընդունում, հայրը շուկայում վաճառում է կենդանի-տղային, իսկ կենդանին նորից մարդ է դառնում, տուն գնում. հերոսը պարբերաբար կերպափոխվում է՝ պահպանելով «վերադարձի» պայմանը: Կերպարանափոխության վերացման համար կարևոր պայման կա. ոչ մի դեպքում ոչ ոքի չտալ, հատկապես գնորդին չվաճառել սփռոցը, կերպափոխված կենդանու գյամը (սանձը, չվանը, վզկապը), ինչի մեջ թաքնված է կերպարանափոխության գաղտնիքը. այլապես կախարդանքը կվերանա: Մակայն տղայի ծնողները խախտում են պայմանը, և սկսվում են շարունակական հետապնդումները: Օխայը շարունակական խոչընդոտներ, դժվարություններ է ստեղծում հերոսի համար՝ ցանկանալով ոչնչացնել նրան: Կերջինս դժվար փորձությունները հաղթահարում է կերպարանափոխության տարբեր հնարքների օգնությամբ, որպես հմտություն, հնարիմացության մի տեսակ, հունար: Կախարդ ծերուկը, տարբեր թռչունների ու կենդանիների, առարկաների կերպարանքներ ընդունելով, հետապնդում է տղային: Աշակերտը նույն ուսկության շնորհիվ հնարամտորեն ազատվում է Օխալ-բաբայի հետապնդումներից, և հեքիաթի շարունակությունն այդուհետ կառուցվում է կերպարանափոխության մեկ այլ դրսևորմամբ՝ կոմուլյատիվ (կուտակային) կերպարանափոխությամբ: Հեքիաթի գլխավոր

հերոսն ու Օխայը միմյանց դեմ պայքարում են՝ պարբերաբար փոխելով իրենց կերպարանքը: Այսպես, տղան դառնում է աղվես, Օխայը՝ թագի, տղան՝ աղունիկ, Օխայը՝ դրդի (բագե), տղան՝ խնձոր, Օխայը՝ աշուղ, տղան ցորեն, Օխայը՝ հավ, և այն: Շղթան ավարտվում է Օխային ոչնչացնելով: Տղան վերջնականապես դառնում է մարդ, հաղթում չարի ու բարու պայքարում, ու հենց ծերուկը մեռնում է, «գլուխը պոկելու ժամանակ ախպուրը չորացել էր, ցամքել. տեղը դուռ էր բացվել» [9, էջ 119]: Գործողությունների ընթացքում իրադարձություններն աստիճանական կուտակում են ձևավորում, որտեղ սյուժեի յուրաքանչյուր հաջորդ իրողություն հիմնվում է նախորդի վրա՝ մեծացնելով պատմության լարվածությունը մինչև հանգուցալուծում: Կերպարանափոխության եզրերը երկծայր չեն, ինչպես սովորաբար լինում է: Եթե հեքիաթներում սովորաբար կերպարանափոխության երկու եզր ունի՝ մարդ-գայլ, աղջիկ-գորտ, տղա-օձ, ապա այս դեպքում ձևավորվում է կերպարանափոխության բազմօղակ շղթա. հերոսները շարունակաբար փոխում են իրենց կերպարանքը՝ որոշակի խնդիրներ լուծելու նպատակով: Կերպարանափոխության շղթայի օղակներ են դառնում տարբեր կենդանիներ, թռչուններ, առարկաներ՝ ձի, ուղտ [8, էջ 637], ալպաստրակ, դոչ, ոչխար, թագի, աղավնի [10, էջ 52], աշուղ, խնձոր, կորեկ, ցորեն, վարդ, ասեղ, թել, հավ, ճնճուղ [11, էջ 158], ուրուր, արծիվ, կուֆի, ջուխտրմ արաբ և այլն: Հերոսը, անցնելով զանազան փորձությունների միջով, հեքիաթի վերջում տիրանում է Օխայի ունեցվածքին, գանձերին: Հրաշապատում հեքիաթների այս խմբում կուտակային կերպարանափոխությունն օգնում է հերոսին իր նպատակին հասնելու ճանապարհին հնարամտանալու և հաղթահարելու բոլոր խոչընդոտները:

Կերպարանափոխությունն առհասարակ կապված է անցումային ծեսերի հետ, երբ տեղի է ունենում մարդու արտաքին վիճակային փոփոխություն: Բանահյուսության տեքստերում, որոնք իրենց մեջ արտացոլում են անցումային ծեսերը, կերպարանափոխման գաղափարը կապված է արխայիկության հետ, պայմանավորված է երկու աշխարհների անցումներով [17, էջեր 24-26]: Հեքիաթներում «միջնաշխարհը» հանդես է գալիս որպես անցումային տարածք, որտեղ մարդը անցումային ծեսի շնորհիվ ձեռք է բերում այլ կերպարանք և միջանկյալ դիրք գրավելով աշխարհների միջև՝ կապում է դրանք: Այս միջնաշխարհն առնչվում է ստորերկրյա տարածքներին, որոնք հաճախ հասանելի են ջրի միջոցով: Անցումը ստորերկրայք սովորաբար տեղի է ունենում ջրի օգնությամբ. «Մի ձեռով նրա կուռն ա բռնում, մեկելը թաթխում ա ջուրը, ընենց թաց-թաց քում տղի էրեսը,- աչքերդ խփա՛,- ասում ա: Աչքերը խփելու բաշտան, Օխայ-Բաբին կուռը քաշում ա՛ երկսով էլ սկվում են ջրի տակը:» [7, էջ 199]:

Հնուց ի վեր ջուրը տարբեր մշակույթներում եղել է պաշտամունքի առարկա, որին զոհեր են մատուցել [6, էջ 159]: Հայ ժողովրդական հավատալիքներում աղբյուրների ու առհասարակ ջրերի ակունքները համարվել են չարքերի, սատանաների բուն: Կային աղբյուրներ, որոնցում ապրում էին սատանաներ և չար ոգիներ [23, էջ 338]: Մարդիկ միշտ սարսափով էին անցնում այսպիսի աղբյուրների կողքով [16, էջ 48]:

Բանահյուսական պատկերացումներում ջուրը ներկայացված է երկու ձևով՝ կենդանի և մեռած: Մեռած ջուրը անդրաշխարհի ջուրն է [20, էջ 67], որն առնչվում է մահվան և մութ ուժերի հետ: Ջուրը հանդես է գալիս որպես սահմանագիծ՝ վերին և ստորին

աշխարհների միջև, որը խախտելով՝ հերոսն անցնում է մեկ իրականությունից մյուսը: Հրաշապատում հեքիաթներում այն մաքրագործող ցուցիչ է, կիրառվում է բուժման ինչպես կենսաաֆիզիկական, այնպես էլ ծիսահմայական մակարդակներում [12, էջ 70]: Հեքիաթներում հաճախ հանդիպում են անմահություն պարզևող աղբյուրներ, կաթնաղբյուրներ, լուսաղբյուրներ, որոնք հազար ցավ են բուժում և վերականգնում կյանքը [5, էջ 332]: Սակայն ըստ համահնդեվրոպական հասկացության՝ ստորերկրայքի դռները կամ անցքերը համարվել են ջրառատ վայրերը՝ աղբյուրներ և ճահճուտներ, որոնք կոչվել են ստորերկրյա աստվածության կամ դևի աչքեր [13, էջ 129]: Ջրի մեջ բնակվում էին նաև չարքեր և վիշապներ, որոնք հսկում էին սահմանները տարբեր աշխարհների միջև: Ծովը, ջուրն ըմբռնվում էին իբրև ստորին աշխարհի մաս, գործիք, շեմ, միջնաշխարհ, վերին և ստորին աշխարհների տարանցիկ ուղին ապահովող միջավայր, անդրաշխարհը կապող գործիք [3, էջեր 232-251]: Դրանք համարվել են անդրաշխարհ տանող ուղիներ և խորհրդանշել են կյանքից մահ, իրականությունից հրաշագործություն անցումները:

Բուդդայականության մեջ ջուրը համարվում է դժվարհաղթահարելի արգելք, իսկ մուսուլմանական առասպելաբանության մեջ՝ կյանքի խորհրդանիշ: «Սև ջուր» արտահայտությունը բնորոշ է ստորաշխարհին: Սև ջուրը ավերող ուժ ունի և կապված է մութ աշխարհի խորհրդանշական կերպարի՝ Օխայի հետ: Օխայը հաճախ հանդես է գալիս որպես մութ թագավորության տիրակալ և անմահության ուժի տեր կախարդ արարած, դերվիշ, որն ունի գաղտնի գերբնական ուժեր: Եթե հերոսը չհաղթի Օխային, աշխարհը կարող է կործանվել: Հեքիաթներում ջուրը հաճախ հանդես է գալիս որպես առեղծվածի և անթափանցելիության խորհրդանիշ՝ ավելացնելով մոգության և ստեղծական երևակայության տարրեր: Այն անհրաժեշտ է կերպարանափոխության համար և հանդես է գալիս որպես պայմանական սինվոլ-գործիք՝ խորհրդանշելով՝

- *Սահմանափակում աշխարհների միջև.* ջուրը ծառայում է որպես սահման՝ բաժանելով տարբեր աշխարհները:
- *Ղուռ աշխարհների միջև.* ջուրը կարող է լինել աշխարհի դռան խորհրդանիշ: Նման գործառույթ ունի նաև քարը (այլ տարբերակներում). «Բիրդան քյարմ կպատռի, դուռմ կպացվի, Օֆօֆ էնան էտա լաճ կմտնեն ներս» [10, էջ 52]:
- *Մաքրագործում և վերածնունդ.* ջուրը կապված է մաքրագործման, վերածննդի և կերպարի նորացման հետ՝ խորհրդանշելով նոր սկիզբ կամ հոգևոր վերածնունդ:

Հետևապես՝ ջուրը որպես խորհրդանշական տարր, միաժամանակ կապում է վերին և ստորին աշխարհները, սահմանում կերպարափոխվող անցումներ՝ ընդգծելով կյանքի և մահվան, իրականության և մոգության միջև գոյություն ունեցող սահմանները:

Մանձր [23, էջ 338] և *գյամը* խորհրդանշում են բացելը, ինչ-որ բանին հասանելիություն ստանալը կամ այն կառավարելը: Դրանք արտահայտում են կառավարելիություն և վերահսկողություն, իսկ դրանց կորուստը խորհրդանշում է կառավարման կորուստ: Սկանդինավյան դիցաբանության մեջ սանձը կապված է Օդինի հետ, որը վերահսկում էր ճակատագիրը: Այն խորհրդանշում էր իրադարձություններն ուղղորդելու նրա կարողությունը՝ ինչպես հունական դիցաբանության Պեգասի [4, էջ 20] մասին առասպելներում, որտեղ սանձը կարևոր դեր էր խաղում նրան կառավարելու գործում:

Միռոցը հրաշապատում հեքիաթներում հանդես է գալիս որպես հերոսի կողմից տրվող կախարդական իր: Առասպելաբանության մեջ այն պատկանում է անդրաշխարհին [22, էջեր 251-252], որտեղ ուտելիքը լիքն է, և այն տեղափոխվում է անդրաշխարհ մահից հետո: Միռոցը կերակրում է հերոսներին, այն հաճախ ձեռք են բերում խորամանկությանը կամ գողությանը, և այն բացվում-փակվում է հրաման-բանաձևով կամ մտրակի հարվածով [22, էջ 139]:

Հրաշապատում հեքիաթների կենդանիները կապված են նախնադարյան տոտեմական պատկերացումների հետ: Ըստ Պրոպի՝ հերոսը և նրա օգնականը նույն գործառույթն ունեն, նույնական են [22, էջ 140]: Նրանք խոսում են, օգնում խորհրդով և ունեն գերբնական ուժեր: Հեքիաթային հրաշալի օգնականի (այս դեպքում՝ խոսող ձի), պատվերով կամ հրամանով տղան սանդը նետում է, և տեղի է ունենում առարկայական կերպարանափոխություն. սանդը մեշա (անտառ) է դառնում, ապա դանակը՝ սրեր, լեսանը՝ ապառաժներ, փարջի ջուրը՝ ծով: Կերպարանափոխությունների այսօրինակ շղթան այլաբանորեն արտահայտում է համեմատության կամ առնչակցության հիմքով առաջացած փոխակերպումներ:

Մլավոնական առասպելաբանության մեջ գործառույթային ընդհանրություններ ունեն և Օխայի կերպարին են զուգահեռվում Վոդյանյը [23, էջեր 396-400]՝ ստորջրյա թագավորությունում ապրող կերպարանափոխվող հերոսը, որին բնորոշ են բարձր ծիծաղը, ճիչը, հառաչանքը, սուլոցը և այլն (Ժամանակային առումով նա ակտիվ է կեսօրին և կեսգիշերին, իսկ գտնվելու վայրերն են՝ քարերի տակ, հին ջրաղացում կամ ակունքի մոտ): Ռուսական բանահյուսության մեջ համանման կերպար է Անմահ Կաշչեյը [19, էջեր 165-175], որը հին սլավոնական առասպելաբանության մեջ համարվում է ստորերկրյա չար տիրակալ՝ Կարաչունի խորհրդանիշ: Նրան հաղթում են խորամանկությամբ, հնարագիտությամբ և խելքի ուժով: Կաշչեյը կարող է տարբեր կերպարանափոխություններով հանդես գալ՝ ծերունուց մինչև իմաստուն կախարհ: Նրա մահը թաքնված է մի քանի կախարդական կենդանու և միմյանց մեջ բնադրված առարկաների մեջ [21]:

Տարբեր ժողովուրդների հեքիաթների սյուժեները հաճախ միահյուսված են ինչպես առանձին մասերում, այնպես էլ ամբողջությամբ: Այս միախառնումով տեղի է ունենում հեքիաթների հիմնական սյուժեների և կերպարների փոխակերպման, փոխլրացման ստեղծագործական գործընթաց, որտեղ առաջանում են նոր մոտիվներ՝ կառուցված կերպարանափոխության տարատեսակ և տարաբնույթ արտահայտչաձևերով:

Կերպարանափոխման առասպելական պատկերացումները արտացոլվել են նաև Ժամանակակից ֆիլմերում, մուլտֆիլմերում և համակարգչային խաղերում: Այդպիսին է օրինակ "Волчонок Флейш" GTA 5 սերնդի յուրուբյան խաղը [18], որտեղ ջրի միջոցով կերպարանափոխվելու հմտություն է տրվում գայլի գլխով մարդուն: Նա անցնում է փորձություններ, հաղթում ստորգետնյա աշխարհի սառցե տիրակալին, սառույցը հալչում է, և աշխարհը վերականգնվում է: Այստեղ ջրի միջոցով արտացոլվում է երկու աշխարհների կապն ու անցումը մեկից մյուսին:

Ե Զ Ը Ա Հ Ա Ն Գ ՈՒ Մ. Այսպիսով՝ ելնելով վերոնշյալ նյութից, կարելի է արձանագրել, որ հնդեվրոպական ժողովուրդների առասպելաբանության մեջ տարածված կեր-

պարանափոխության մոտիվը յուրահաստուկ ձևով արտացոլվել է հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթների՝ «Կախարդը և իր երեխաները» հեքիաթախմբում: Այստեղ կերպափոխությունը ոչ միայն հմայական կարողություն է, հնարիմացություն, այլև սյուժետային կարևոր տարր, որն ապահովում է գլխավոր հերոսի փրկության և փորձությունների հաղթահարման ընթացքը: Հիշյալ հեքիաթներում կերպափոխությունը դրսևորվում է տարբեր ձևերով՝ շղթայածն (կոմույաստիվ) կառուցվածքով, մասնակի կերպափոխումներով, հնարագիտության դրսևորումներով և մոգական միջամտությունների տեսքով: Հատկապես կարևոր են կերպարանափոխության հետ կապված հրաշագործ առարկաները, որոնք հեքիաթում հանդես են գալիս որպես հերոսի գործողությունների օժանդակող միջոցներ, աստիքուտներ: Կերպափոխման գործընթացը սերտորեն կապված է երկու աշխարհների միջև անցումների հետ, ինչը տեղի է ունենում տարբեր խորհրդանշական ցուցիչների՝ ջրի, քարի, սանձի և այլնի օգնությամբ: Կերպափոխվող հերոսները, առարկաներն օժտված են գերբնական կարողություններով և գործառնություններ են իրականացնում՝ կախված սյուժետային նպատակներից: Հմայական այս համակարգում ջուրը, ակունքը, քարը, սփռոցը և սանձը հանդես են գալիս որպես սյուժետային հենասյուներ, որոնք կապում են իրական և հմայական աշխարհները, ապահովում հերոսի փորձությունների զարգացումը և ծառայում որպես խորհրդանշական տարրեր՝ արտահայտելով «ճանապարհորդությունն ու կերպարանափոխությունը խորհրդանշում են ոչ միայն ֆիզիկական փոփոխություններ, այլև վերափոխում, աշխարհի՝ դեպի ավելի լավը, կատարյալը կերպափոխում: Այսպիսով, կերպարանափոխությունը ներկայացվում է որպես հնարամտության, փորձությունների հաղթահարման և ինքնազարգացման միջոց՝ խորքային իմաստով կապելով անցյալն ու ներկան, ավանդական բանահյուսությունն ու ժամանակակից մշակութային ընկալումները:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Աղայան Է.** «Արդի հայերենի բացատրական բառարան», հ. 1: Երևան: «Հայաստան» հրատ.: 1976: 932 էջ:
2. **Աճառեան Հր.** «Հայերեն արմատական բառարան, հ. 2»: Երևան: ԵՀ հրատ.: 1926: 688 էջ:
3. **Գալստյան Հ.** «Մադի գործառնության ու ծիսական նշանակությունը բանահյուսական տեքստերում» // Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 2: Երևան: ԳԱԱ հրատ.: 2023, 232-251 էջեր:
4. «Ինքնաբանական բառարան»: Խմբ. Մ. Բոսովինիկ, Մ. Կոզան, Մ. Ռաբինովիչ, Բ. Սելեցկի: Երևան: «Լույս» հրատ.: 1985: 264 էջ:
5. **Լալայեան Ե.** «Ազգագրական հանդես, գիրք 2»: Թիֆլիս: Տպ. Կ. Մարտիրոսյանցի: 1900: 432 էջ:
6. **Լալայան Ե.** «Երկեր, հ. 2»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1988: 507 էջ:
7. «Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II»: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: Հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Ա. Նազինյանը, խմբ. Կ. Մելիք-Օհանջանյան: 1959: 659 էջ:
8. «Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Բնագիրը, նախաբանը, ծանոթագրությունները, բառարանն ու ցանկերը գրեց Ա. Նազինյանը, խմբագիր՝ Ս. Արրահամյան: 1973: 778 էջ:
9. «Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XIII»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց՝ Ա., Ս. Ղազինյանը, խմբ.՝ Ս. Գևորգյան: 1985: 616 էջ:
10. «Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XV»: Երևան: «Ամրոց» հրատ.: Հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Վ. Սվազյանը, խմբ.՝ Ս. Գևորգյան: 1998: 511 էջ:

11. «Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XVI»: Երևան: ԳԱԱ «Գիտություն» հրատ.: Հատորը կազմեցին և տպագրության պատրաստեցին Ա. Նազինյանը և Ա. Ղազիյանը, խմբ.՝ Ա. Ղազիյան: 2009: 600 էջ:
12. **Հայրապետյան Թ.** «Արքևտիպային հարակցումների հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ»: Երևան: ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2016: 462 էջ:
13. **Հարությունյան Ս.** «Հայ առասպելաբանություն»: Բեյրութ: «Համազգային» տպ.: 2000: 528 էջ:
14. **Ղազիյան Ա.** «Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1983: 202 էջ:
15. «Ղարադաշտի հայերի. ազգագրական և բանահյուսական ժառանգություն. հ. II»: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2009: 643 էջ:
16. **Սոփիսյան Ս.** «Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1971: 186 էջ:
17. **Арнольд ван Геннеп.** "Обряды перехода". Москва. Из-во. "Восточная литература". 1999, 198 с..
18. "Волчонок Флейзин". <https://www.youtube.com/watch?si=AihvdsGCG2CE4GmP&v=8WeTx9k9gJl&feature=youtu.be-rwusakan> (դիտվել է 03. 03. 2025):
19. **Жучкова А., Галай К.** "Функциональное значение мифологического образа Коцея бессмертного и его отражение в русских волшебных сказках" // "Вестник славянских культур", н. 3 (37). Москва. 2015, 165-175 сс..
20. **Королёв К.** "Энциклопедия символов, знаков, эмблем". Москва. Из-во. "Мидгард". 2005. 608 с..
21. "Мифологический словарь" <https://bibliotekar.ru/mif/57.htm> (դիտվել է 03.03. 2025):
22. **Пропп В.** "Исторические корни волшебной сказки". Москва. Из-во. "Лабиринт". 2000. 335 с..
23. "Славянские древности. Под редакцией Н. Толстого, т. 1". Москва. Из-во. "Международные отношения". 1995. 575 с..

References

1. **Aghayan E.** "Explanatory Dictionary of Modern Armenian" [*Ardi hayereni bacatrakan bar'aran*], V. 1, Yerevan: "Hayastan" Publishing House. 1976. 932 p. (in Armenian)
2. **Acharyan Hr.** "Armenian Radical Dictionary" [*Hayeren armatakan bar'aran*], vol. 2: Yerevan: Yerevan University Press: 1926: 688 p. (in Armenian)
3. **Galstyan H.** "The Functional and Ritual Significance of the Sieve in Folklore Texts" [*Maghi gorc'ar'ut'ayin yev c'isakan nshanakut'yuny' banahyusakan teqsterum*] // Journal of Social Sciences, V. 2: Yerevan. NAS Publishing House. 2023, 232-251 pp. (in Armenian)
4. "Mythological Dictionary" [*Dicabanakan bar'aran*]: Edited by M. Botvinnik, M. Kogan, M. Rabinovich, B. Seletsky. Yerevan. "Luys" Publishing House: 1985. 264 p. (in Armenian)
5. **Lalayan E.** "Ethnographic Journal, book Z [*Azagrakan handes*]: Tbilisi. K. Martirosyantsi Publishing House. 1900: 432 p. (in Armenian)
6. **Lalayan E.** "Works" [*Yerker*], V. 2: Yerevan. Armenian SSR AS Publ.House: 1988: 507 p. (in Armenian)
7. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], V.. II: Yerevan. Publishing House of the AS of the Armenian SSR. The volume was prepared and the foreword was written by A. Nazinian, edited by K. Melik-Ohanjanyan. 1959, 656 p. (in Armenian)
8. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], V. VI: Yerevan. Publishing House of the AS of the Armenian SSR. The original, preface, footnotes, dictionary and lists were written by A. Nazinian, editor: S. Abrahamyan. 1973. 778 p. (in Armenian)
9. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], V.. XIII: Yerevan: Publishing House of the AS of the Armenian SSR. The volume was prepared for publication and annotated by: A., S. Ghaziyanyan, ed.: S. Gevorgyan. 1985. 616 p. (in Armenian)
10. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], V. XV. Yerevan. "Amrots" Publishing House. The volume was prepared for publication and annotated by V. Svazlyan, edited by S. Gevorgyan. 1998. 511 p. (in Armenian)

11. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], V. XVI. Yerevan. NAS "Science" Publishing House. The volume was compiled and prepared for publication by A. Nazinian and A. Ghaziyani, ed. by A. Ghaziyani. 2009: 600 p. (in Armenian)
12. **Hayrapetyan T.** "Archetypal Connections in Armenian Fairy Tales and Historical Folklore" [*Arqetipayin harakcumner' haykakan hrashapatum heqiat'nerum yev vipapatmakan banahyusut'yan mej*]. Yerevan: NAS "Science" Publishing House. 2016. 462 p. (in Armenian).
13. **Harutyunyan S.** "Armenian Mythology" [*Hay ar'aspelabanut'yun*]. Beirut: "Hamazkayin" Publishing House: 2000: 528 p. (in Armenian)
14. **Ghaziyani A.** "Armenian Ethnography and Folklore" [*Hay azgagrut'yun yev banahyusut'yun*], V. 15: Yerevan. Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR. 1983. 202 p. (in Armenian)
15. "The Armenians of Gharadagh: Ethnographic and Folklore Heritage" [*Gharadaghi hayery'. azgagrakan yev banahyusakan jhar'angut'yun*]. V. II: Yerevan, "Science" Publishing House of the NAS of the Republic of Armenia. 2009. 643 p. (in Armenian)
16. **Movsisyan S.** "Armenian Ethnography and Folklore" [*Hay azgagrut'yun yev banahyusut'yun*], V. 3. Yerevan. Publishing House of the AS of the Armenian SSR. 1971. 186 p. (in Armenian)
17. **Arnold van Gennep.** "Rites of Passage" [*Obrjady perehoda*]. Moscow. Publishing house. "Eastern Literature". 1999, 198 p. (in Russian)
18. Little Wolf Flayzin [*Volchonok Flejzin*]. <https://www.youtube.com/watch?si=AihvdsGCG2CE4GmP&v=8WeTx9k9gJI&feature=youtu.be-rwusakan>, (viewed 03.03. 2025). (in Russian)
19. **Zhuchkova A. Galai K.** "Functional Meaning of the Mythological Image of Koschei the Deathless and its Reflection in Russian fairy tales" [*Funkcional'noe znachenie mifologicheskogo obraza Koshheja bessmertnogo i ego otrazhenie v russkih volshebnyh skazkah*]. // Bulletin of Slavic Cultures/, n. 3 (37). Moscow. 2015, 165-175 pp. (in Russian)
20. **Korolev K.** "Encyclopedia of Symbols, Signs, Emblems" [*Jenciklopedija simvolov, znakov, jemblem*]. Moscow. Publishing house. "Midgard". 2005. 608p. (in Russian)
21. "Mythological Dictionary" [*Mifologicheskij slovar*], <https://bibliotekar.ru/mif/57.htm>. (viewed 03.03. 2025). (in Russian)
22. **Propp V.** "Historical Roots of the Fairy Tale" [*Istoricheskie korni volshebnoj skazki*]. Moscow. Publishing house. "Labyrinth". 2000. p. 335. (In Russian)
23. "Slavic Antiquities" [*Slavjanskije drevnosti*]. Edited by N. Tolstoy, Vol. 1. Moscow. Publishing House "International Relations". 1995. 575 p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **20. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **09. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիլիթ Արայիկի ՍԱՀԱԿՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության և սագագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ, էլ. հասցե՝ sahakyanlilit1982@gmail.com // orcid.org/0009-0006-7006-4255

Lilit Arayik Sahakyan: junior researcher at Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA
e-mail: sahakyanlilit1982@gmail.com // orcid.org/0009-0006-7006-4255

ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼԸ ՈՐՊԵՍ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԿԵՐՊԱՐ

Հասմիկ Հ. Մատիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

*Աշոտիս տաղը ձեր այգին լցնի,
Խաղով ու գինով թող օրը անցնի,
Սիրո մեր կյանքը միասին անցնի,
Դու ես ձեր այգին սիրով զարդարել,
Հազարան բլբուլ երգս է թե՛ առել:
Գուսան Աշոտ*

Ամփոփում

Նախաբան. Ժողովրդական հեքիաթներում հրաշագործ կերպարները օժտված են մի շարք կարևոր գործառնություններով՝ հերոսին ճանապարհ ցույց տալու, չարը բացահայտելու և ճշմարտությունը վերականգնելու, երգով ու խոսքով միջավայրը կենդանացնելու շնորհքով և այլն: Այդպիսի բանահյուսական կերպար է հայ ժողովրդական հրաշագործում հեքիաթների *Հազարան բլբուլը*, որը գրական մշակումներում նույնպես առատորեն է *տեղայնանում*: Նրա խոսքն ու երգը գորեղ են. ունեն մարդակերպության տպավորություն: *Մեթոդներ և նյութեր.* Լեզվաբանագիտական մոտեցմամբ քննության են առնվել «Հազարան բլբուլ» հեքիաթաշարի ժողովրդական տարբերակներն ու գրական մշակումները, ինչպես նաև *բլբուլ* բառանունով կայուն կապակցությունները երգային բանահյուսության մեջ, հեղինակային երկերում: *Վերլուծություն.* Վերլուծվել են այն հեքիաթները, որոնք բովանդակում են *Հազարան բլբուլ հրաշագործ* թռչնի կերպարը՝ որպես հեքիաթի հերոսի խորհրդատու և օգնական, ինչպես նաև անդրադարձ է կատարվել Հազարան բլբուլի դրսևորումներին Հ. Թումանյանի, Ստ. Զորյանի, Ղ. Աղայանի, Աթ. Խնկոյանի, Սերիճի գրական մշակումներում: *Արդյունքներ.* Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ *Հազարան բլբուլն* ունի հրաշագործ ազդեցություն թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային ստեղծագործություններում: Նա անձնավորված կերպար է:

Բանալի բառեր՝ հեքիաթ, ժանր, տեքստ, երգ, ճանապարհ, Շիրակ, բանահյուսություն, անձնավորում, ռճական հնար, բանադարձում:

Ինչպես հղել՝ Մատիկյան Հ. Հագարան բլբուլը որպես հրաշագործ կերպար // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1(28): 106-114 էջեր:

DOI: 10.52971/18294316-2025.28.1-106

THE BIRD OF A THOUSAND SONGS AS AN ENIGMATIC PERSONAGE

Hasmik H. Matikyan

Shirak Center for Armenological Studies, NAS RA
Shirak State University after M. Nalbandyan

Abstract

Introduction: Folk tales have miraculous characters who are endowed with a number of important functions: to show the way, to help the hero, etc. Such a folk character is the Bird of a Thousand Songs, which is also abundantly localized in literary adaptations. Its speech and song are powerful; they have an anthropomorphic effect. **Methods and materials:** The folk versions and literary adaptations of the fairy tale series, as well as stable associations with the word nightingale in ashugh songs, were examined using a linguo-folkloistic approach. **Analysis:** We have analyzed the literary adaptations of H. Tumanyan, Gh. Aghayan, Atabek Khnkoyan, and Serine. **Results:** The study has shown that the Bird has a magical effect in both folklore and literary works. It is a personified character.

Key words: *fairy tale, genre, text, song, way, Shirak, folklore, personification, stylistic device, trope.*

Citation: Matikyan H. *The Bird of a Thousand Songs as an Enigmatic Personage* // “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2025: V 1(28). 106-114pp., DOI: 10.52971/18294316-2025.28.1-106

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Հայ վիպական բանահյուսության մեջ հրաշապատում հեքիաթը բացառիկ տեղ ունի: Հեքիաթը՝ որպես մակրոտեքստ, բնութագրվում է տարբերակայնությամբ, ռճական հնարների և դարձույթների առատությամբ: Հրաշագործ թռչունները հեքիաթներում տարաբնույթ գործառույթներով են առանձնանում:

Բանագետ Մ. Խեմչյանը «Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում» մենագրության մեջ քննում է մարդ և մարդակերպ նվիրատուներն ու խորհրդատուները, որոնք առանձնահատուկ դեր ունեն հեքիաթի հերոսի գործողությունների ընթացքում: Հեղինակի բնորոշմամբ՝ մարդկային բնույթ չունեցող անշունչ առարկաները, կենդանի կամ մտացածին էակները, այլ կերպ ասած՝ մարդակերպները, կարող են օժտվել մարդկային՝ ֆիզիկական և զգացմունքային հատկանիշներով, մասնավորապես, կարող են զգալ, արտահայտել ապրումներ, խոսել, մտածել, կատարել բանական գործողություններ [6, էջ 25]: Հագարան բլբուլը, լինելով թռչուն, մարդուն, այսինքն՝ հեքիաթի հերոսին ուղղորդում է ճշմարտությունը բացահայտելու:

Բլբուլ բառամիավորը ունի կարևոր նշանակություն դարձվածքային մտածողության մեջ: Շիրակի ասույթաբանության մեջ լայն տարածում ունի *բլբուլ ես կտրել* արտահայտությունը՝ *շատ խոսել իմաստով*:

Պ. Բեդիրյանի *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*-ում առանձնացվել են *բլբուլ* բաղադրիչով հետևյալ դարձվածքային միավորները՝ իմաստային ուրույն նկարագրով.

- *բլբուլի/պլպուլի, պյուպյուլի/ պես* - վարժ ու գեղեցիկ/ խոսելու, արտահայտվելու և այլնի մասին/
- *բլբուլ կտրել* – շաղակրատել, բլբլացնել
- *պյուպյուլն ըսավ մեկ մի՛ գնաց* խոսք կամ խոստում մըն էր ըրավ, անկե հետո չի հիշեր այլևս, այսինքն՝ խոստանալ և չկատարել խոստումը [2, էջ 260]:

Հեքիաթներում հաճախ հանդիպող այս թռչնին բնութագրում են որպես *Խոսող* կամ *Երգող Թռչուն/հավք*, որպես օրինակ՝ Ղազարոս Աղայանի՝ արաբական հեքիաթի թարգմանության մեջ. «-Իմացած եղիր, ով տիրուհիս, որ եթե իմ ասած բաներից առաջինը լիներ այս այգիներումը, բոլոր թռչունները կհավաքվեին այստեղ նրան տեսնելու համար և ամենքը միաձայն կերգեին: ... Դա է, ո՛վ իմ տիրուհիս, Հազարան Բուբուլը՝ Խոսող Թռչունը» [1, էջ 569]:

Աշուղական երգերում *բլբուլը* առանցքային բաղադրիչ է: Աշուղ Զիվանին *աշուղ* և *բլբուլ* բառերը նույն հարթությամբ է ներկայացնում. ինչպես աշուղն է սիրո երգիչ՝ գովասան, այնպես էլ՝ բլբուլը.

*Աշուղը բլբուլ է, երգում է միշտ վարդ,
Բայց յուր սիրած վարդը ուրիշ է, ուրիշ.
Աշխարհը շա՛տ ունի զարդարանք և զարդ,
Սակայն նրա զարդը ուրիշ է, ուրիշ...*

Ուշագրավ է, որ Հազարան բլբուլը *բաղ-պարտեզ-այգի* միջավայրում է ներկայանում, որը սիրո երգերում տարածական է՝ մեծ մասամբ *բաղի բլբուլ* արտահայտությամբ: Այս իրողությունը նկատելի է թե՛ վիպական, թե՛ քնարական բանահյուսության մեջ: Երգային բանահյուսության տիրույթում, աշուղական երգերում նույնպես բլբուլը գովք կապող է, երգասաց:

Ա. Իսահակյանի ստեղծագործություններից մեկում բլբուլը անձնավորվում է, և գրական հերոսը խոսում է նրա հետ դիմառնության հնարով.

*Դարդս լացեք, սարի սմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դարդս լացեք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց գով հովեր [5, էջ 35]:*

Ֆ. Խլղաթյանի սահմանմամբ՝ անձնավորումը ոճական բանադարձում է, երբ իրերին, երևույթներին, կենդանիներին մարդկային հատկանիշներ և արարքներ են վերագրվում (խոսել, փոխհարաբերությունների մեջ մտնել և այլն): Հին հայկական ճարտասանները և քերականները տարբերում էին այս բանադարձման երեք տեսակ՝ բարառություն, երբ առարկային մարդկային բարք են վերագրում, դիմառնություն, երբ իրերն օժտ-

վում են գործելու հատկությամբ, և կերպարառնություն, երբ անցյալի երևույթները կամ անգո հասկացությունները կերպարանավորվում են [7, էջ 9]:

Ե. Չարենցի «Տաղարան» բանաստեղծական շարքում *Էլի գարուն կգա, կբացվի վարդը* սկսվածքով բանաստեղծության մեջ ևս բլբուլ-բաղ, վարդ-բլբուլ շղթան է շեշտվում, որը գալիս է թերևս միջնադարյան տաղերգության մոտիվներից.

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Միրեկանը էլի յարին կմնա:
Կփոխվի տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի սարին կմնա:

Ի դեպ, հայ միջնադարյան սիրերգության մեջ վարդի ու բլբուլի սիրավեպը մեծ տարածում ունի: Մեջբերենք Սայաթ-Նովայից մի հատված.

Սալբբու նըման կանաչ իմ,
Յիդս խո՛ սի՛ ձայնիդ ճանանչ իմ.
Դու վարձ կանչե, յիս յա՛ր կանչիմ,
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու:
Ղարիբ բլբուլ՝ ձայնըդ մալում,
Յիս ու դուն էրվինք մե հալում.
Սայաթ Նովեն ասաց՝ զա՛լում,
Դո՛ւ մի՛ լ՛աց լի, յի՛ս իմ լալու: [13]

Հազարան բլբուլի երգը կենարար է, նա ծաղկեցնող ու շենացնող կերպար է հեքիաթի հյուսվածքում, մի երևույթ, որին հասնելը ջանք ու եռանդ է պահանջում. թռչունը հանդես է գալիս որպես բնության զարթոնքի հրաշագործ ուժ:

Ուշագրավ է, որ բանահյուսական օրոորցային մի շարք երգերում *պյուլպյուլն* է երբեմն օրորի երգ կապում.

Պլպյուլ ձան արեր ձագերուն,
Քուն է բերեր շահեն աչերուն,
Քուն է բերեր աչերն լցեր,
Անուշ քնով քնացուցեր...[3, էջ 52]:

Պյուլպյուլը պաղճան է իջեր,
Վարդենվոյն թփիկն է թառեր,
Անուշ մենեմճին հոտուն,
Աղվորիս քնիկն է տարեր...[3, էջ 50]:

Ակնա մի շարք օրորներում *պյուլպյուլը* օրոր երգող թռչուն է՝ ապահովում է քնամուտի միջավայրը: Մեջբերենք.

Թ՛գայ ի ձորեն *պյուլպյուլ*,
Քեզ *օրո՛ր, օրո՛ր,* թող կանչե. է՛, է՛, է՛ [3, էջ 49]:

Նշված օրորերգում նույնպես պահպանվել է *այգի/պաղճա/ վարդ* թափառող սյուժեն, որը հանդիպում է նաև *Հազարան բլբուլ* հեքիաթներում: Այստեղ կարևոր է միջավայրի գործոնը: Մի դեպքում բլբուլը քուն է բերում երեխային, մյուս դեպքում՝ բլբուլը սեր է խոստանում, մեկ այլ պարագայում էլ տեսնում է անարդարությունը և քար կտրում:

Թոչնի հմայական գորությամբ օժտված լինելը լեզվաոճական տեսանկյունից ունի ուշագրավ մեկնություն: Հմայական ուժին տիրապետելը նրան անհասանելի է դարձնում, ուստի որոնող հերոսը փորձությունների մեջ է ընկնում թոչունին փնտրելու ճանապարհին: Հազարան բլբուլին գտնելու ճանապարհը այնքան էլ հեշտ չէ: Շիրակի ժողովրդական «*Հազարան բլբուլ*» հեքիաթում հերոսը պետք է վեց օր ճանապարհ կտրի, որ հասնի Հազարան բլբուլին:

«- Դե օր ունիս, էս ճամփեն բռնե գնա, **6 օրվա ճամփա է**, դեմտ գելնի մի բաղմ, մտնիս կը բաղի մեջը, ձիդ հեռու տեղըմ կապես կը, օր չտեսնին, չարսաֆը փռես կը ծառի տակը, դու մի տեղըմ տափիս կը, օր քեզի չտեսնին: Հազարան բլբուլը **կխոսի, խոսի** աչքերը խառի կեղնի, կընգնի ծառեն ցած, բռնես դնես կը տուգախը, կհեծնիս ձիտ, կերթաս: Էրթլուտ վախթը չորս թարաֆեն ճվան, բոռան, *հողեղենը եկավ, տարավ հրեղենը*, բռնեք-բռնեք, դու չվախենաս, էղևտ չաշես, թե չէ քար կդառնաս, ձիդ քշես գուգաս» [10, էջ 22]:

Բերված հատվածում ընդգծվում է թոչնի խոսելու գործառույթը, որն ապահովում է տրանսային վիճակ հենց նրա համար: Թոչնի խոսքին հաջորդում է գործողությունների շարք: Թե՛ բանահյուսական հեքիաթներում, թե՛ գրական ստեղծագործություններում *հողեղենը եկավ, տարավ հրեղենը* ձեռք է բերում բանաձևային նշանակություն:

Մի կողմից թոչնին վերագրվում են մարդկային հատկանիշներ՝ խոսելու, երգելու ձայնային տվյալներ, մյուս կողմից՝ *հրեղեն* բնորոշիչն է դառնում նրա գեղարվեստական բնութագիրը: Հեքիաթի հերոսը մուտք է գործել այնկողմնային աշխարհ, որի բնակիչները հրեղեն են, այսինքն՝ տիրապետում են անսովոր, գերբնական կարողությունների, որոնք հարիր չեն երկրային ծագում ունեցողներին: Այդ կարողությունների օգնությամբ Հազարան հավքը վերականգնում է խաթարված բնական կարգը (կենդանություն է առնում չորացած այգին, վերականգնվում են մարդկային փոխհարաբերությունները):

Հրեղենը՝ որպես գերբնական միջավայր ապահովող բառանուն, տարածված է բանահյուսական տարբեր ժանրերի վիպական ու քնարական նմուշներում, հատկապես հեքիաթներում, մանկախաղաց երգերում, վիճակի երգերում:

Հազարան բլբուլ հեքիաթի վերը նշված օրինակում հնչյունական ռիթմը ստեղծվել է *հողեղենը, հրեղենը* շեշտադրումով: Այս վիճակի երգում եղ *եղեն*, *հրեղեն* ռիթմիկ պատկերն է ստեղծվել.

Մերդ կերավ *եղեղեն*,
Քեզի բերավ *հրեղեն*:
Մերդ կերավ ծնեբակ,
Քեզի բերավ չաչանակ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի,
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի [12]:

Ա. Խնկոյանի *Հազարան բլբուլ* հեքիաթում հերոսները աշխարհե աշխարհ են ընկնում հրաշագործ Հազարան բլբուլին գտնելու համար: Հիշյալ դեպքում չափազանցությունը դառնում է առանցքային ոճական դարձույթ, որը բնորոշ է վիպական բանահյուսությանը.

«Կրնկնենք *աշխարհե աշխարհ*, Հագարան Բլուրը կբերենք: Գնում-հասնում են խաչածն ճամփին: Այդտեղ հանգստանում ու խորհուրդ են անում: Որոշում են՝ յուրաքանչյուրը մի կողմի վրա գնա, հարցուփորձ անելով Հագարան Բլուրի տեղն իմանա» [8, 223]:

Գ.Մելիքյանը «Ճամփաբաժնի այլաբանությունը «Հագարան բլուր» հեքիաթախմբում» հաղորդման մեջ անդրադառնում է «Հագարան բլուր» հայկական ժողովրդական հեքիաթների և Արնե-Թումսոն-Ութերի հեքիաթների դասակարգմանը, նշելով՝ «Այս հեքիաթախմբի հիմնական մոտիվներից է երեք ճանապարհների խաչմերուկում ընտրություն կատարելը, որը համարվում է սյուժեի սկզբնակետը...: Ըստ Վ. Պրոպի տեսության՝ պատմողական ավանդույթի տեսակետից ճանապարհը պատումակերտ հնարներից է, որը զարգանում է գծային հաջորդականությամբ՝ մեկնման պահից մինչև վերադարձը, և հանդիսանում է պատումի առաջատար համակարգային գործոն» [9, էջ 29-30]:

Ղ. Աղայանի *Հագարան Բլուր* հեքիաթում *երգել*-ով բայը իմաստային աստիճանավորման բացառիկ նմուշ է. *խոսեց, խոսեց, երգելով* բառաշղթան բարձրացող աստիճանավորման օրինակ է, մյուս կողմից էլ՝ խոսքը վերածվում է երգ-մեղեդու.

Եվ *խոսեց, խոսեց* Հագարան Բլուրը, ոչ հասարակ խոսքերով, այլ *երգելով* երկրում չլսված քաղցր *մեղեդիներով*.

Ասա՛ ինձ, ասա՛, ով Ֆաիրգադա,
Որ ունիս ժպիտ վարդի նմանող,
Ես կարոտ էի քո տեսությանը,
Եվ շատ եմ ուրախ, որ տեսնում եմ քեզ:

Նրա երգի բովանդակությանն են միահյուսվում գիշերն ու ցերեկը, արևն ու լուսինը,
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ո՛վ ցերեկ, ո՛վ գիշեր,
Լսեցե՛ք, ո՛վ լուսին, ո՛վ աստղեր [1, էջ 581]:

Հագարան Բլուրի հմայական խոսքը Ղ. Աղայանի բերված հեքիաթում երդման բանաձևով է առանձնանում.

Վկա եղեք,
Սարեր, դաշտեր,
Մթին ձորեր,
Խիտ անտառներ [1, էջ 581]:

Ըստ էության, Հավքի երդման բանաձևը ոչ միայն հատկորոշվում է բնության կարևոր բաղադրիչների հիշատակմամբ (սարեր, դաշտեր, ձորեր, անտառներ). այլ նաև թվարկվում են այն սահմանային գոտիները, որոնց միջոցով հեքիաթի հերոսները մեծ մասամբ անցնում են իրենց փորձության ճանապարհը:

Ակնհայտ է, որ Ա. Խնկոյանի գրական մշակման տարբերակում բլուրի երգն իր հմայական գորությամբ կանգուն է պահում անգամ եկեղեցին.

«Այդ ժամանակ հանկարծ *երգում է* Հագարան Բլուրը: Թագավորը հրամայում է, որ ապերախտ եղբայրներին պատժեն, բայց փոքր եղբայրը խնդրում է ներել նրանց: Այդ ժամանակ հայտնվում է տաճարում այն մարդն ու ասում. -Թագավորն ապրած կենա, հիմա տաճարը ոչ մի պակաս չունի: Քանի Հագարան Բլուրը **կերգի**, եկեղեցին կանգուն

է: Որ օրը Հազարան Բլբուլը լռեց, եկեղեցին շեն չի, թեկուզ նրա շենքը մեր աչքին երևա պատերը արծաթից, սյուներն ու գմբեթը ոսկուց» [8, էջեր 221-222]:

Ստեփան Զորյանի *Հազարան բլբուլ* ստեղծագործության մեջ միջավայրը ն' պայմանական է (Միպտակ թագավոր), ն' հմայական/բանալին նրա միրքի մեջ է/«-Եղ *բլբուլը*, ասավ, Միպտակ թագավորի հողումն է: Կերթաս, սահմանի գլխին յերկու շուն կգա առաջդ: Դրանք հասարակ շներ չեն. ամենակատաղի զագաններն են վոր կան:... Կերթաս կհասնես Միպտակ թագավորի ամրոցը: ... Հետո կերթա՛ս, կերթա՛ս, կհանդիպես Միպտակ թագավորին: Նա քնած կլինի, ու քառուսն օր պիտի քնի: *Հազարան բլբուլի սենյակի բանալին նրա միրքի մեջ է:* Կվերցնես, վերջին սենյակի դուռը կբացես, Հազարան բլբուլն է, իր վանդակի մեջ, կառնես կըգաս» [4, էջ 69]:

Ազգագրագետ Սերինե Ավագյանի *Հազարան Բլբուլ* հեքիաթ-պոեմում բլբուլը կենդանացնում է անգամ բնությունը.

«-Բլբուլ ջան, մի խոսա՛ էս սև սարերը կանանչեն:

Բլբուլը խոսաց, սարերը կանանչեցին: Կնիկը տեհավ բլբուլի շնորքը, զարմացավ.

Երգում էր Հավքը Հազարան բլբուլ

Արգավանդելով մտքերը ամուր:

Երգում էր սրտի ու սիրո մասին

Ինչպես հասկանան մեկը մյուսին [11, 90]

Շիրակի *«Հազարան բլբուլ»* հրաշապատում հեքիաթում բլբուլը զրուցընկեր է: Այս համատեքստում նա թռչունը անձնավորված է.

«Դու էլ ըսա ինչիս նիաթ չենեմ, մեն-մենակ նստե, գործ կենեմ, մեկ՛մ չկա, օր հետը խոսիմ, սիրտս բացվի, օրս ուրախ անցնի: Դու օր լավ ախպեր էդնիս, կերթաս *հազարան բլբուլը բերես կը, էնիկ խոսի կը*, ես էլ ականձ կենեմ, կուրխնամ:

Ախպերը կսե- Մի մտածե քու՛ր ջան:, Էկվան կերթամ բերեմ կը, ու տղեն կգնի ճամփա: Կերթա բաբալդո քովը, բաբալդը հարցու կը, կսե-Ինչ կա, բալա՛ ջան:

Էն էլ կսե- Բղի էրթամ հազարան բլբուլը բերեմ, հըմը չիտեմ ուրմանը էրթամ, տեղը չիտեմ»[10, էջ 22]:

Նկատելի է, որ Հազարան բլբուլի երգը կա՛մ հեքիաթի միջնամասում է ձայնում, կա՛մ վերջնամասում: Զորոբինակ Հովի. Թումանյանի «Հազարան բլբուլ» հեքիաթից մի հատված՝ որպես փակոդ, ամփոփիչ միտք.

[. . . . ներս կըմտնես ապարանք...]

Ներս կըմտնես. . . . երգի դայլայլ, վարդի բույր,

Իրար ետևից կանցնես յոթը . . . վարագույր,

Այնտեղ [ոսկի]փայլ վանդակում երգում է հավքն այն չքնաղ:

Ու երգի հետ մշտադալար վարդ է թափում ու թափում:

[Այն] վարդերի [անուշ] բույրով, երգի ձայնով [արբեցած՝]

Իր լուսեղեն նուրբ մահիճում քնած է վեհ տիրուհին [14, էջ105]:

Ե Զ Ը Ա Հ Ա Ն Գ ՈՒ Մ. Ամփոփելով նշենք՝ հեքիաթներում, որպես կանոն, տարածությունն ու ժամանակը առարկայացված չեն, անորոշ են: Պայմանական ժամանակն ու պայմանական տարածությունը խորհրդանշական իմաստ ունեն ու այլաբանորեն են

առնչվում այուժեի զարգացմանը, գլխավոր հերոսին հասնելու փափագին: Հագարան բլբուլի հմայական գործառույթը գրավչության, գեղեցկության մեջ է. թռչունը հմայիլ է: Հագարան բլբուլի գտնվելու վայրը հուշում է հեքիաթի հերոսի խորհրդատուն:

Հագարան բլբուլը հմայական կերպար է. նրա հմայական կերպարի բանալին, առանցքային դերակատարումն այն է, որ իր երգով վերակենդանացնում է անգամ անէականը, անշունչը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Աղայան Ղ. *Երկեր*: «Սովետական գրող» հրատ.: Երևան: 1979: 655 էջ:
2. Բեդիրյան Պ. «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»: ԵՀ հրատ.: 2011, 1410 էջ:
3. Գրիգորյան Ռ. *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր*, ՀՍՍՀԳԱ հրատ., Երևան, 1970, 466 էջ:
4. Զորյան Ս. *Հագարան բլբուլ*, Պետհրատ., Երևան, 1925:
5. Իսահակյան Ա. *Երկերի ժողովածու*, հ. 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1973: 463 էջ:
6. Խեմչյան Մ., *Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում*: ԳԱԱ ՀԱԻ հրատ.: Երևան, 2021, 240 էջ:
7. Խղիլայան Ֆ. *Ոնաբանական տերմինների բառարան-տեղեկատու*: «Լույս» հրատ.: Երևան: 1978: 110 էջ:
8. Խնկոյան Ա. *Ծաղկանց ծովը*, «Հայաստան» հրատ.: Երևան: 1970:
9. Մելիքյան Գ., «Ճանփաբաժնի այրաբանությունը «Հագարան բլբուլ» հեքիաթախմբում» Հագարան բլբուլ և ոսկեղեն մանուկներ. հին գրույցների նոր մեկնություններ: Հեքիաթագիտական 14-րդ միջազգային գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, 2024, 29-30 էջեր:
10. Ծիրակ. *հայոց բանասիրտական մշակույթը / Կազմ.՝ Մ. Խեմչյան, Է. Խեմչյան, Լ. Ղուկասյան, Հ. Մատիկյան*, ՀԱԻ հրատ., Երևան, 2024, 640 էջ:
11. Սերինե, *Հագարան բլբուլ*: Հայպետհրատ, Երևան: 1959: 96 էջ:
12. <https://marinemkrtchyan.wordpress.com/>
13. <https://erkaran.wordpress.com/2009/08/page/6/>
14. <https://hy.wikisource.org/wiki>

References

1. Aghayan Gh. "Works" [*Yerker*]. Soviet Writer Publishing House. Yerevan. 1979. 655 p. (in Armenian)
2. Bediryan P. "Extensive Explanatory Dictionary of Armenian Phrases" [*Hayeren dardzvatisk'neri yndardzak bats'atrankan barraran*]. YU Publishing House. 2011. 1410 p. (in Armenian)
3. Grigoryan R. "Armenian Folk Lullabies and Children's Songs" [*Hay zhoghovrdakan ororots'ayin yev mankakan yerger*], Publishing House of the AS of the Armenian SSR, Yerevan, 1970, 466 p. (in Armenian)
4. Zoryan S. "The Bird of a Thousand Songs" [*Hazaran blbul*], State Publishing House, Yerevan, 1925 (in Armenian).
5. Isahakyan A. "Collection of Works" [*Yerkeri zhoghovatsu*], . 1, "Hayastan" Publishing House, Yerevan, 1973. 463 p. (in Armenian)
6. Khemchyan M. "Advisor and Donor in Armenian Folk Fairy Tales" [*Nviratun yev khorhrdatun hay zhoghovrdakan hek'iat'nerum*]. Publishing House of the Armenian AS. Yerevan, 2021, 240p. (in Armenian)

7. **Khghatyan F.** "Dictionary-Reference of Stylistic Terms" [*Vochabanakan terminneri barraran-teghekatu*] Luys Publishing House". Yerevan. 1978. 110 p. (in Armenian)
8. **Khnkoyan A.** "The Sea of Tsaghkants" [*Tsaghkants' tsovy*], " Hayastan" Publishing House, 1970. (in Armenian)
9. "The Bird of a Thousand Songs and the Three Golden Children: Rethinking Old Narratives" [*Hazaran blbul yev vos keghen manukner. hin zruyts'neri nor meknut'yunner, hek'iat'agitakan*]. Conference Programme and Abstracts of the 14th International Conference on Fairy Tales, 2024. (in Armenian)
10. "Shirak. Armenian Folklore Culture" [*Shirak. hayots' banahyusakan mshakuyt'y*], Compiled by M.Khemchyan, E.Khemchyan, L.Ghrejyan, H.Matikyan, Armenian NAS Publ. House, Yerevan, 2024, 640p. (in Armenian)
11. **Serine**, "The Bird of a Thousand Songs" [*Hazaran blbul*]. Haypethrat, Yerevan. 1959. 96 p. (in Armenian)
12. <https://marinemkrtchyan.wordpress.com/>
13. <https://erkaran.wordpress.com/2009/08/page/6/>
14. <https://hy.wikisource.org/wiki>.

Ընդունվել է / Received on: **03. 04. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **16. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասիկ Համլետի ՄԱՏԻԿՅԱՆ՝ բան. գիտ. թեկնախու, դոցենտ,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
ԾԳՀ օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս,
Հայաստանի պետ. տնտես. համալսարանի ԳՄ, սվլագ դասախոս
Էլ. հասցե՝ hasvrej@mail.ru. // orcid.org/0000-0003-0032-5123

Hasmik Hamlet MATIKYAN: PhD in Philology, Associate professor,
Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA,
lecturer at the Chair of Foreign Languages and Literature of SUSH,
Senior lecturer at ASUE GB, Gyumri, RA,
e-mail: hasvrej@mail.ru. // orcid.org/0000-0003-0032-5123

Ա Ջ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ETHNOGRAPHY

ՀՏԴ՝ 908

DOI: 10.52971/18294316-2025.28.1-115

ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ռաֆիկ Գ. Գաբրիելյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Գանձակը Հայաստանի պատմագրական շրջաններից է, որը գտնվում է պատմական Արցախ նահանգի հյուսիսային և Ուտիք նահանգի հյուսիսարևմտյան մասում՝ հանդիսանալով հայկական մշակութային տարածքի սահմանը հյուսիս-արևելքից: Մեթոդներ և նյութեր. Հոդվածի համար աղբյուրներ են ծառայում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող ազգագրական նյութերը, ինչպես նաև տպագիր աշխատություններ: Հետազոտության ընթացքում համադրվել, համեմատվել և վերլուծվել են արխիվային ու տպագիր աղբյուրներում առկա տվյալները: Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են նաև ժամանակակից մեթոդներ, մասնավորապես՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգը (ԱՏՀ): Վերլուծություն. Գանձակի գավառում, ըստ գործառույթի, առանձնանում էին տարածքի օգտագործման երեք հիմնական գոտիներ: Առաջինը սահմանափակվում էր բնակավայրի և դրա շուրջը գտնվող տնտեսական կառույցների տարածքով: Երկրորդը ավելի ընդգրկուն էր, և ներառում էր հիմնական երկրագործական տարածքը: Երրորդը արոտավայրերի գոտին էր: Այս հիմնական տարածքային միավորներից բացի կարելի է ավելացնել ևս մի՝ չորրորդ գոտի, որի անհրաժեշտությունը առաջանում էր աղետների և թշնամական հարձակումների դեպքում: Դա այն տարածքն էր, որտեղ հնարավոր էր ժամանակավորապես բնակություն հաստատել՝ պաշտպանվելու և պատսպարվելու նպատակով: Արդյունքներ. Գանձակում լանջերի օգտագործումը լանդշաֆտի իրացման գլխավոր առանձնահատկությունն էր, որը ենթադրում էր կիրառել բնակավայրերի, վարելահողերի, այգիների ու ռոտգման համակարգերի ստեղծման ընթացքում դրսևորվող դարավանդման տարբեր եղանակներ: Այս մշակութային իրողությունը, խիստ բնութագրական լինելով Գանձակի

հայերի համար, ընկալվում էր որպես էթնոտարբերակիչ հատկանիշ: Լանջերի օգտագործման հիմնական պատճառը թուրքական էթնիկ խմբերի հետ ունեցած հակասություններն էին: Լքելով հարթավայրերը՝ հայերը, քիչ-քիչ, սկսեցին զբաղեցնել ավելի անմատչելի տարածքներ, որտեղ հիմնեցին դարավանդային բնակավայրեր և զարգացրին դարավանդային երկրագործությունը:

Բանալի բառեր՝ *Գանձակ, բնակավայր, տուն, երկրագործություն, դարավանդ, ազգագրություն, տեղագրություն:*

Ինչպես հղել՝ Գաբրիելյան Ռ. *Տարածքի օգտագործման առանձնահատկությունները Գանձակի շրջանում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Հ. 1 (28): Գյումրի: 2025: 115-127 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-115

SPECIFICITY OF SPACE USE IN GANDZAK DISTRICT

Rafik G. Gabrielyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: Gandzak is one of the historical-ethnographic regions of Armenia, which occupies the northern part of the province of Artsakh and the northwestern part of the province of Utik, constituting the northeastern border of the Armenian cultural territory. **Methods and materials:** The sources of the article were ethnographic materials from the archive of the Institute of Archaeology and Ethnography NAS RA, as well as the printing publications. During the study, data from archival and printed sources were synthesized, compared and analyzed. The study also used modern methods, in particular, the geographic information system (GIS). **Analysis:** Armenian villages of Gandzak were located mainly in the middle foothills of the region, in areas from 800 to 1700 m above sea level. They are mainly located in gorges or on the slopes of the mountains. In Gandzak, three main zones of space use were distinguished according to their functional purpose. The first zone was limited to the territory of the settlement and the farm buildings around it. The second, more extensive zone included the agricultural landscape. The third included the livestock area. To these main territorial units, one can add another, a fourth zone, the need for which arose only during enemy attacks. This is a mountain zone where one could take cover. **Results:** The use of slope areas is a key feature of landscape development in the study area, which is manifested in the creation of settlements, arable lands, gardens and even irrigation systems. In all cases, the development of slopes was carried out through various terracing methods, which, being very characteristic of the Armenians of the Gandzak region, in some cases was perceived as an ethnic-differentiating feature. The main reason for using the slopes was conflicts with the Turkish ethnic groups. Having left the plains, the Armenians eventually began to develop more inaccessible areas, where they founded terraced settlements and practiced terraced agriculture.

Key words: *Gandzak, settlement, house, agriculture, terrace, ethnography, topography.*

Citation: Gabrielyan R. *Specificity of Space Use in Gandzak District* // "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 1 (28). Gyumri. 2025, 115-127pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-115

ՆԱԽԱԲԱՆ. Ազգագրական նյութի ակտիվ գրառման ընթացքում (19-դարի կես - 20-րդ դարի սկիզբ) Գանձակը համարվել է ուրույն մշակույթ ունեցող շրջան, և շատ հետազոտողների աշխատանքների շնորհիվ այսօր առկա են բավարար չափով տվյալներ անցյալում շրջանի մշակութային դիմագծերը ներկայացնելու համար¹: Հայկական մշակույթի ընդհանուր տարածվածության տեսանկյունից՝ Գանձակը ունի ծայրամասային դիրք: Այս հանգամանքից ելնելով՝ ժամանակի ընթացքում կրել է տարբեր ազդեցություններ:

Տարածքի օգտագործումը մարդու տևական գործունեության արդյունքում բնական միջավայրը ձևափոխելու գործընթաց է, որի շնորհիվ ձևավորվում է մշակութային լանդշաֆտը [9, էջ 538]: Այդպիսով բնական միջավայրը ձեռք է բերում նոր տեսք, որը բացի նյութական մշակութային արժեքների համախումբ լինելուց, ներառում է վարքագծի և կոլեկտիվ հիշողության դրսևորումները², որ ենթադրում են որոշակի ինքնության արտացոլում [8, էջ 74]:

Ուսումնասիրության շրջանակում փորձ է արվել ներկայացնել տարածքի օգտագործման ժողովրդական եղանակները՝ ցույց տալով դրանց առանձնահատկությունները և զարգացման պատճառները:

Ցանկացած մշակութային լանդշաֆտի ձևավորման համար առանցքային է ուսումնասիրել բնական միջավայրի ֆիզիկա-աշխարհագրական հատկանիշները: Այս առումով ուսումնասիրվող տարածքում փաստացի հետազոտություններ անելու անհնարիությունը լրացվել է ԱՏՀ ծրագրի միջոցով ստացված տվյալներով: Այն հնարավորություն է տալիս մշակութային միավորները դիտարկել որոշակի մշակութային միավորների տարածման օրինաչափությունների, լանջերի դիրքի, ջրային պաշարների առկայության և այլնի մասին:

Հոդվածն արդիական է, քանի որ ազգագրության բնագավառում, հայկական մշակույթի օրինակով, առաջին անգամ փորձ է արվում կիրառել ԱՏՀ գործիքակազմը: Այս առումով աշխատանքի նորույթը, Գանձակի շրջանում հայկական բնակավայրերի տեղագրության օրինաչափությունների և դրա պատճառների բացահայտումն է:

**Գանձակի գավառի հայկական բնակավայրերի տեղագրությունը.
տարածքի ընտրությունն սկզբունքները**

¹ Հոդվածը գրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում իրականացվող՝ «Հայոց դարավանդային երկրագործությունը» գիտական թեմայի շրջանակում՝ բազային ֆինանսավորմամբ: Օգտակար խորհուրդների, առաջարկների և աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետներ Սուրեն Հոբոսյանին և Հասմիկ Աբրահամյանին:

² Օրինակ՝ կրոնական վարքագծի տարածված դրսևորում էր սրբատեղիների մոտ գտնվող ծառերից հագուստի կտորներ կապելը, որը համարվում է տարածքի մշակութային անցման դրսևորում: Ըստ էության՝ այն «փափուկ» ազդեցության է, որը լանդշաֆտը ֆիզիկապես չի ձևափոխում: Հայաստանի բոլոր գյուղերում ընդունված էր գյուղի շրջակայքում գտնվող հանդամասերին և տեղավայրերին անուններ տալը, որը ժամանակի ընթացքում փոխանցվում է հաջորդ սերունդներին: Տեղավայրերի անվանադրությունը չի կարելի համարել ուղղակի ազդեցություն լանդշաֆտի վրա, սակայն դա տարածքի մտովի յուրացման դրսևորում է, որը անհրաժեշտ է կողմնորոշման համար ու այս առումով համարվում է կոլեկտիվ հիշողության բաղադրատարր: Քննարկված օրինակների համատեքստում, նշենք, որ ստեղծվում էր տարածքի հանդեպ էմոցիոնալ կապվածություն, որն էլ իր հերթին ինքնության մի բաղադրիչ է:

Գանձակի շրջանի հարավարևմտյան հատվածը լեռնային է՝ կտրտված գերազանցապես հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղված ձորերով, իսկ հյուսիսարևելյան մասը հարթավայրային է [10, էջ 2: 4, էջ 261]:

Ըստ 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի տվյալների՝ շրջանի ցածրադիր հարթավայրային տարածքները զբաղեցրել են թյուրքական էթնիկ տարրերը³: Հայերը հիմնականում ապրել են շրջանի բարձրադիր հատվածներում՝ գյուղեր հիմնելով ձորերում ու սարավանջերին, ընտրելով տնտեսական գործունեության համար ոչ պիտանի ամենաանհարմար ու քարքարոտ հատվածները [11, էջ 96: 12, էջ 5: 6, էջ 3]: Նախապատվությունը տալիս էին արեգունի լանջերին [10, էջ 12⁴]:

Ըստ USZ-ի տվյալների՝ հայկական գյուղերը տարածվում էին հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվող երկայնական գոտիով՝ զբաղեցնելով Սևանի ու Մռավի լեռնաշղթաների հյուսիսարևելյան լեռնաթևերի ստորին ու միջին հատվածները: Դրանք հիմնականում գտնվել են ծովի մակարդակից 800-1700 մ բարձրություններում: Ամենաբարձր գոտում գտնվում էին Շահումյան և Քարհատ գյուղերը (Քարտեզ 1⁵): Մարով, Ղարադաղլու և Խոյլար հայկական գյուղերը դուրս են այս գոտուց, դրանք 200-500 մ նիջերում են: Հայեր ապրել են նաև Զակամ կայարանի հարակից նույնանուն բնակավայրում, ինչպես նաև Գանձակ քաղաքում⁶:

Ըստ հայոց մեջ ընդհանուր տարածում ունեցող սկզբունքների՝ բնակելի տարածքի ընտրության համար կային տարբեր պատճառներ, որոնցից գերակա նշանակություն ուներ անվտանգության գործոնը: Այս առումով բացառություն չէր նաև Գանձակը: Նախալեռնային գոտին այս տեսանկյունից ամենահարմարն էր, քանի որ վտանգի դեպքում, հնարավոր էր մոտակա լեռներում ու ձորերում պաշտպանվել ու պատսպարվել: Վաչկատուն ցեղերի ասպատակությունների ժամանակ Շամքորի ձորը (հատկապես Գառնակեր (Բարում) գյուղի մոտ գտնվող հատվածը) բազմիցս ապաստարան է հանդիսացել շրջակա հայկական գյուղերի բնակչության համար [4, էջ 308]: 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ևս, ամրացել են հենց այս ձորում [6, էջ 3]: Հիշատակություն կա այն մասին, որ այդ ժամանակ Չարդախլու գյուղի բնակչությունը երեք տարի պատըսպարվել է այնտեղ՝ Գառնակերին մոտակա մի անմատչելի վայրում [3, էջ 3]: Այդպիսի երկարատև հանգրվանի համար անհրաժեշտ էր որոշակի հարմարություններ ստեղծել:

³ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին հրատարակված աշխատություններում Հարավային Կովկասում ապրող թուրքալեզու էթնիկ խմբերը անվանվել են տարբեր կերպ: Ավելի տարածված էին «թաթարներ», «կովկասի թաթարներ», «կովկասյան թուրքեր» ընդհանուր տարբերակները: Համատեքստից կախված՝ հեղինակները նշել են նաև առանձին ցեղանուններ: Սույն հոդվածում կօգտագործվեն ընդհանրական համարվող «թյուրքական էթնիկ տարրեր» կամ «թյուրքական էթնիկ խմբեր» հասկացությունները:

⁴ Այս տեղեկությունը հաստատվում է նաև ԱՏՀ-ի տվյալներով: Գյուղերի մեծ մասը տեղաբաշխված են հարավ-արևելք նայող լանջերին, որոնք ձորերի դիրքադրության պայմաններում համարվում են ամենաարևելք ուղղության վրա գտնվողներ:

⁵ Քարտեզը կազմվել է Ն. Ղազարյանի արխիվային քարտեզի [2, ց. 1] հիման վրա՝ QGIS ծրագրով: Գյուղերի հստակ տեղորոշման նպատակով օգտագործվել են ԽՍՀՄ ԳՇ 100.000 մասշտաբանոց հետևյալ քարտեզները՝ K-38-116, K-38-117, K-38-118, K-38-128, K-38-129, K-38-130, ինչպես նաև Open Street Map և Google Satellite Hybrid համակարգերը:

⁶ Ուշագրավ է, որ նույնիսկ Գանձակ քաղաքում հայկական թաղամասերը զբաղեցրել են բարձրադիր՝ ապրելու համար ավելի անհարմար տարածքները [4, էջ 285]:

Օրինակ՝ Շամբոր գետի աջափնյա բարձր ժայռերի մեջ նկատվել են փորված ապաստարաններ [1, էջ 2]: Դրանք, ամենայն հավանականությամբ, պետք է հենց օգտագործվեին երկարատև պատսպարման նպատակով ու նմանատիպ լինեին Գորիսի, Խնձորեսկի և առհասարակ Սյունիքում ու Արցախում տարածում ունեցող «քրրատակներին»:

Ուշագրավ է, որ լեռներն ու կիրճերը օգտագործվել են ոչ միայն պաշտպանվելու, այլև համաճարակներից խուսափելու համար: Նման մի դեպք է փաստագրվել 1892 թ., երբ Գառնակեր գյուղի երիտասարդ քահանայի հորդորով տեղացիները բարձրացել են շրջակայքի լեռները ու զերծ մնացել համաճարակից [6, էջ 3]:

Գյուղերի հիմնադրման վայրերը ընտրվել են այնպես, որ հնարավորություն լիներ մշակել գետահովիտներում գտնվող հողատարածքները: Ձորերին մոտ՝ գետամերձ լանջերին հայերը այգիներ էին մշակում, որոնք սովորաբար գտնվում էին գյուղերից ներքև, բոլոր այն լանջերին, որտեղ հնարավոր էր ռոռզման ջուր հասցնել, տարածվելով մինչև գետափնյա մասերը [10, էջ 10]: Գյուղի տեղի ընտրության համար ավանդաբար կարևոր էր նաև շրջակայքում վարելահողերի ու խոտհարքների առկայությունը [7, էջ 228]:

Գյուղերը ձորերի մեջ հիմնելն ուներ ևս մեկ կարևոր պատճառ: Ձորով հոսող գետերի մոտ հնարավոր էր ջրաղացներ կառուցել, որ կենսական նշանակություն ուներ երկրագործ հայ բնակչության համար: Հայկական բոլոր գյուղերը մոտակա ձորերում ջրաղացներ ունեին, իսկ Բաղան ուներ 11-ը [7, էջ 227]: Հայկական ավանդական ջրաղացները աշխատում էին գետերից հանված առուների ջրով: Դրանք կառուցվում էին այնպիսի հատվածներում, որպեսզի հնարավոր լիներ առվի ջուրը ուղղորդել դեպի «նովը»: Դրա միջոցով հոսելով՝ ջուրն անկման ուժի հաշվին գործի էր դնում ջրաղացի «թոփը» (թիանիվ) (5, ց. 1, գ. 2, թ. 6):

Բնակելի տարածքի կազմակերպումը

Գանձակի գավառի հայկական գյուղերը մեծ մասամբ գտնվել են գառիվայր տարածքում և, պայմանավորված այս առանձնահատկությամբ, դրանք ունեցել են դարավանդային կառուցապատում: Ավանդաբար տները իրար մոտ էին սարքում: Շատ բնակավայրերում մի տան կտուրը մյուսի համար բակ էր ծառայում, ու նաև՝ փողոց: Առանձին տների հարակից տարածքը խիստ սահմանափակ էր [1, էջ 1: 4, էջ 308]:

Բնակչության աճով և տնտեսական գործունեության փոփոխություններով պայմանավորված՝ գյուղերի տարածքները աստիճանաբար ընդլայնվում էին: Օրինակ՝ Բաղա գյուղը ի սկզբանե եղել է ձորի մեջ, սակայն ժամանակի ընթացքում քիչ-քիչ տեղափոխվում է «Լղարակ» կոչվող սարահարթը, որը, անշուշտ, բնակչության համար ավելի հարմար էր [7, էջեր 228-229]:

Բնակարանային համալիր ասվածը ավանդաբար ներառում էր երեք տեսակի կառույց՝ տուն, զոմ և կալ, որին կից կար նաև մարագ [10, էջ 40]:

Հայկական գյուղերին բնորոշ էր նաև գյուղից ոչ մեծ հեռավորության վրա ունենալ «գոմահանդեր» [10, էջ 13]: Օրինակ՝ Բարսումի գոմահանդերը գտնվում էին գյուղից 2-5 կմ հեռու, «Բգումա ձոր», «Վանքի ձոր», «Վրզաձոր», «Թղկուտի ձոր», «Իրկիշեցիքի ձոր», «Սթոսաձոր», «Գոմերի ձոր» և այլ վայրերում, որտեղ նաև խոտ էին կուտակում [5, ց. 1, գ. 2, թ. 6]: Սովորաբար գոմահանդը բաղկացած էր տներից, գոմերից, մակաղատեղե-

րից և անասնապահությանը զբաղվելու համար անհրաժեշտ այլ տնտեսական կառույցներից [7, էջեր 227, 233]:

Բարսում և Գառնակեր գյուղերի օրինակով բնակելի ու տնտեսական տարածության կազմակերպման մասին ուշագրավ տեղեկություն է հայտնում Ն. Ղազարյանը: Այս գյուղերը տեղաբաշխված էին երկու առանձին վայրում՝ ձորում ու սարահարթում: Գյուղերի ձորում գտնվող հատվածներին ասել են «շեն», իսկ սարահարթի վրա գտնվող գյուղատեղերին ասում էին «սար»: Այսպիսով՝ կա Գառնակերի շեն, Բարսումի շեն՝ ձորում և Գառնակերի սար, Բարսումի սար՝ սարահարթում: Ձորի շենում հիմնականում զբաղվել են այգեգործությամբ, իսկ սարում՝ դաշտավարությամբ: Շենում մեծ մասամբ ապրել են ձմռանը, իսկ սարում՝ ամռանը: Շենը գտնվելով հարավահայաց՝ արեգունի լանջերին, ձմռան ավելի տաք էր: Միևնույն ժամանակ, այն պաշտպանված էր քամիներից: Ձմռանը սարում մնում են միայն այն ընտանիքները, որոնք շենում գոմեր չունենին ու ընտանի կենդանիներին խնամելու նպատակով մնում էին այդտեղ [5, ց. 1, գ. 1, թ. 2]:

Տարածքի օգտագործման ու կազմակերպման այս ժողովրդական եղանակը կարելի է համարել տվյալ գյուղերի առանձնահատկությունը: Ըստ էության, գյուղերը սկզբնապես գտնվել են ձորում, այս մասին է վկայում «շեն» անվանումը: Ենթադրաբար սարահարթն ի սկզբանե ծառայել է որպես գոմահանդ: Ժամանակի ընթացքում, սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքում գյուղերը մեծ մասամբ տեղափոխվել են սարահարթ: Խորհրդային վերջին շրջանում արդեն, այս երկու գյուղերի բնակիչները գերազանցապես բնակության են հաստատել սարահարթում, իսկ շեները օգտագործվել են որպես ամառանոց:

Ձորերից սարահարթ տեղափոխվելու երևույթը հայտնի է Հայաստանի այլ շրջաններից ևս: Նման օրինակ են Լոռվա Այգեհատ (Բզահատ), Սյունիքի Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Հարժիս գյուղերը: Պարզապես Բարսումի ու Գառնակերի դեպքում այդ տեղափոխությունը դանդաղ է ընթացել, ինչը և բնութագրվել է այնպես, որ այդ գյուղերը, երկու, իրարից կտրված բնակելի հատված են ունեցել:

Ձորում գտնվող շեները կառուցված էին խիստ զառիվայր ու քարքարոտ տեղանքում: Առավել դժվարամատչելի էր Գառնակերի շենի դիրքը (նկ. 1): Ն. Ղազարյանն այս մասին գրում է հետևյալը. «Հինավուրց այս գյուղը իր դիրքով անառիկ ամրոցի է նման: Հյուսիսից «ցից քարի» խոր, քարքարոտ ձորը, հարավից՝ «Բովի ձորի» երկինք քերող լեռները, Շամխոր գետի խոր կիրճը, արևմուտքից՝ «սանգարի» հսկա քերծերը, արևելքից՝ Շամխորի խոր ձորը գյուղը դարձրել են բնական ամրոց: Գյուղի դիրքը թույլ է տվել նրա բնակիչներին իշխել «Ձոռ պռակից» կամ Հնձանաձորի կողմից երևացող թշնամու վրա և նրան ճակատամարտ տալ «Ձոռ պռակի» և «Գառերի ձորի» մատույցներում: Գյուղի շատ տներ կառուցված են հսկա ավազաքարերի տակ, որոնք սպառնագին վտանգ են հանդիսանում իրենցից ներքև՝ սարալանջերին կառուցված տների համար: Բնակիչներն այդ հսկա քարերից շատերն արհեստականորեն ամրացրել են և վնասազերծել: Պատահական չէ, որ հարևան հայկական գյուղերի բնակիչները, հանդիպելով գառնակերցուն, բարևից հետո կատակով հարցնում են. «ախպեր, են ծնջիլով կապած քարը բաց չի ընկե՞լ» [5, ց. 1, գ. 2, թ. 1-2]:

Դաշտավարությամբ զբաղվող ու հացաբույսեր մշակող ցանկացած համայնքի համար ավանդաբար կարևոր տնտեսական համալիր էր կալը, որից ուներ ամեն ընտանիք: Հացահատիկը կալսել են կամի տախտակներով, որոնց լծում էին մի գույգ եգ կամ մի ձի [2, գ. 1, թ. 15]: Կալերը սարքում էին տների բակերում, քանի որ լանջերին գտնվելով՝ դրանք դարավանդաձև էին, կալերի համար նույնպես պետք էր ստեղծել դարավանդ՝ հարթեցնելով լանջի վրա ընտրված կալի տարածքը: Դրա ստորին մասում ամուր հենապատ էին կառուցում: Ուշագրավ է, որ տնտեսագետ Ի. Մերեբյակովը, նկատելով հայկական գյուղերին բնորոշ այս իրողությունը, նշում է, որ հենապատերով ու հարթեցված տարածքով կալերը ավելի էին ընդգծում գյուղերի դարավանդային համայնապատկերը, որը Գանձակի շրջանի հայկական գյուղերի կենսամիջավայրի բնութագրական առանձնահատկությունն էր ու համարվում էր դրանց էթնոտարբերակիչ հատկանիշը [11, էջ 163]:

Տունը՝ բնակավայրի ներսում

Ավանդաբար տները կիսագետնափոր էին և միահարկ, որոնց կտուրները հարթ էին՝ վրաները հող լցրած: Դրանք կառուցված էին տեղական ավազաքարից, որն իր կարծրությամբ մոտ էր բազալտին: Ուշ շրջանում օգտագործվել է նաև շաղախը, որը պատրաստել են կրի ու ավազի և կավի ու հարդի խառնուրդով: Դրսի կողմից միայն «դարգ են արել»⁷, իսկ ներսից սվաղել են: Շենքի կտուրը ծածկել են կաղնու գերաններով, որոնք շարել են իրարից մեկ մետր հեռավորությամբ: Դրանց վրա շարել են տարբեր հաստության ճյուղեր, իսկ ուշ շրջանում՝ տախտակներ, որոնց արանքները լցրել են փայտի տաշեղ: Ապա ծածկել են տասը սանտիմետր հաստությամբ մամուռի շերտով, որը պատել են կավի ու հարդի խառնուրդով պատրաստված շաղախով: Այնուհետև լցրել են հող [5, գ. 1, գ. 2, թ. 2-3]:

Տներն ավանդաբար բակում ունեին հորեր, որտեղ պահվում էր հացահատիկը: Կարևոր էր դրանք տնից դուրս սարքելը, որպեսզի ապահովվեր ջերմաստիճանի ու խոնավության կայունությունը: Մինչև հացահատիկը ամբարելը հորերը նախապես բոլոր կողմերից պատում էին ծղոտով, որ բերքը անմիջականորեն չշփվեր հողի հետ [11, էջ 63]:

Կիսագետնափոր տների հետին պատն ամբողջությամբ մխրճված էր հողի մեջ ու միննույն ժամանակ հանդիսանում էր պատվար, որպեսզի լանջը չփլվի: Հաճախ այս պատի եզրով սարքում էին տան հիմնական հատակից մինչև մեկ մետր բարձրություն ունեցող մի հարթ տարածություն: Այդտեղ էր լինում թոնիրը: Հետին պատի մի կողմում՝ փոքր սենյակ էին փորում, որտեղ պահվում էր սննդամթերքը [5, գ. 1, գ. 2, թ. 4-6]:

19-րդ դարի վերջերից սկսած՝ Գանձակի գավառում սկսում են կառուցել պատշգամբով, պատուհաններով ու երկթեք տանիքով, մի քանի սենյակ ունեցող տներ, սակայն այս ոճի տների կառուցումը մեծ թափ է ստացել 1940-ական թ. վերջերից՝ Հայրենական մեծ պատերազմից հետո: Մի տան կտուրը այլևս բակ չէր ծառայում մյուսի համար, տների միջև թողնվում էր բավարար տարածություն: Չնայած այդ փոփոխություններին՝ դարավանդային բնակավայրը չկորցրեց իր տեսքը, որովհետև օգտագործվում էր նույն լանջը: Առաջ եկավ ճանապարհների եզրերին ու բակերի ստորին հատվածներում ամուր

⁷ «Դարգ անել» նշանակում է պատի մեջ շարված քարերի միջև եղած ճեղքերը շաղախով ծածկել, այսինքն՝ սվաղել միայն ճեղքերը:

պատվարներ կառուցելու անհրաժեշտություն: Դրանցով բնակավայրը պահպանում էր իր դարավանդային համայնապատկերը (նկ. 2) [5, ց. 1, գ. 2, թ. 7]:

Լանդշաֆտի օգտագործումը երկրագործական նպատակներով

Ինչպես հայոց ավանդական տնտեսության մեջ, Գանձակում ևս երկրագործության հիմնական ճյուղերն էին դաշտավարությունը և այգեգործությունը: Մասամբ զբաղվել են նաև բանջարաբուծությամբ: Ավանդաբար փորձ է արվել մշակելի դարձնել բոլոր հնարավոր հողակտորները:

Վարելահողեր են ծառայել սարահարթերը, ինչպես նաև լեռնալանջերը (1, էջ 1): Դրանք ընդլայնելու անհրաժեշտությունից ելնելով, յուրացվում էին նոր տարածքներ ավելի բարձրադիր գոտիներում: Գանձակում վարելահողերի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվում էր երկդաշտային համակարգը, որպեսզի հողը կարողանար հանգստանալ [11, էջ 100]: Ըստ USZ-ի տվյալների՝ շատ գյուղերի շրջակայքում հնարավոր եղավ արձանագրել լանջերի վրա գտնվող դարավանդային վարելահողեր: Առանձին տեղամասերը բաղկացած են լանջի վրա հորիզոնական ձգվող երկայնական հարթ հողակտորներից, որոնք, նեղանալով, աստիճանաձև տարածվում են լանջն ի վեր: Մշակվող ամեն հարթ տարածության ստորին հատվածում տևական մշակման արդյունքում ձևավորվել է հենաթումբ (նկ. 3):

Հողը հերկելու համար հիմնականում օգտագործել են գութան, որին լծում էին 6-8 գույզ լծկան: Հատուկ այս նպատակով ավանդաբար պահում էին գումեշ, որն ավելի ուժեղ կենդանի էր, քան եզր, սակայն գութանին միայն գումեշներ չէին լծում, քանի որ դրանց ուղղորդելը դժվար էր [10, էջ 82]: Գութանի կողմից առաջին լուծը կոչվում էր «ըմբոլի», երկրորդը՝ «ըմբաղաք», երրորդից մինչև նախավերջին լուծերը՝ «մեջտեղի», իսկ վերջինը, որը հանդիսանում էր առաջատարը՝ «ծիրքերի»: Գութանը ղեկավարում էր մաճկալը, որ Ջագիրում կոչվում էր «քոթանչի» (գութանչի): Մաճկալի օգնականը կոչվել է «մըճկըլ-ախալեր»: Ամեն լուծի վրա մի փոքր տղա էին նստեցնում՝ այն քշելու համար: Սովորաբար հողի չափման միավոր է ծառայել օրավարը (մեկ օրվա ընթացքում կատարած վար) [2, գ. 1, թ. 13-14]:

Արորը օգտագործում էին պակաս կարևոր տարածքները և հիմնական հողերը երկրորդական անգամ մշակելիս: Ջագիր գյուղում արորը կոչվում էր «չուր»։ Ամեն մարդ չէր կարողանում այն օգտագործել, այլ հատուկ մարդիկ կային, որոնց կոչում էին «չուրչի»: Դրա վարը շատ անորակ էր ստացվում ու դժվար էր աշխատանքի ընթացքում այն կատարել: Ուստի չուրով վարած արտերում ցորեն հազվադեպ էին ցանում, ավելի հաճախ մշակում էին կորեկ ու եգիպտացորեն: Սովորաբար այս գործիքին լծում էին մեկ գույզ լծկան [2, գ. 1, թ. 13]:

Հերկի ծանր աշխատանքները ձգտում էին կատարել ամռանն ու աշնանը, քանի որ ձմռան ընթացքում կենդանիները համեմատաբար վատ էին կերակրվում ու գարնանը չէին կարողանում ողջ ուժով աշխատել: Աշնանը գութանով հերկած հողերը գարնանը՝ նախքան ցանք անելը, արորով վարում էին (երբեմն ցանքը անում էին մինչև արորով վարելը, որպեսզի վարի ընթացքում հացահատիկը խառնվեր հողին): Այդպես գարնան աշխատանքը հեշտ էր ստացվում [11, էջ 150]:

Ինչպես նշվեց, կարևոր տնտեսական զբաղմունք էր այգեգործությունը: Ավան-դաբար այգիները գտնվել են ձորերում՝ հաճախ գետափերի մոտ [7, էջ 227: 4, էջեր 297-308]: Ձորում հնարավոր էր մոտակա գետից ջուր անցկացնել, որի համար անհրաժեշտ էր լանջերի վրայով առուներ սարքել: Դրանք երբեմն անցնում էին ուղղահայաց ժայռերի մոտով, ու այդ հատվածներում, տեղանքի անհարմարությունից կախված, գետնուղիներ էին փորում ջրի հոսքը ապահովելու նպատակով: Առվից ներքև կառուցում էին քարից ամուր հենապատ, որը համարվում է դարավանդման դրսևորում: Երբեմն դրանց ջուրը նախ օգտագործում էին ջրաղացներն աշխատացնելու համար, ապա դրանցից ներքև տարածվող այգիներին ջուրը բաց էր թողնվում ոռոգման նպատակով [11, էջ 148]: Գառնակեր գյուղը, օրինակ, ուներ երեք առու, իսկ Բարսումը՝ չորսը, որոնց շնորհիվ ոռոգվում էր շուրջ 350 հեկտար այգի [5, ց. 1, գ. 3, թ. 1-2]:

Զառիվայր լանդշաֆտի պայմաններում այգիներ հիմնելու համար կառուցվում էին դարավանդներ, որոնցով աչքի էր ընկնում հատկապես Շամքորի ձորը: Դրանց ստեղծման համար նախ հավաքում էին քարերը, ապա փորում էին լանջը, որի հետևանքով հողի շերտերից դարձյալ դուրս եկած ու հավաքված քարերով հենապատեր էին շարում: Հողը լցնում էին հենապատի ու լանջի միջև: Ըստ լանջի թեքության աստիճանի և տարածքի հարմարության՝ հենապատերը կարող էին ունենալ 1-1.5 մ բարձրություն ու 20-25 մ երկարություն: Հաճախ լանջերի հողը բավարար չէր լինում լիցքի համար, ու հող էին բերում նաև այլ վայրերից: Որոշ դեպքերում օգտագործում էին նաև գետափերի տիղմահողը, որը լցվում էր որպես վերին շերտ: Հողը տեղափոխում էին ձիու, ջորու կամ էլ ավանակի միջոցով՝ «ջվալներով»: Պարարտացման համար օգտագործում էին գոմաղբ [5, ց. 1, գ. 3, թ. 1-2]: Դարավանդային այգու ներսում գտնվող ամեն առանձին դարատափը տեղացիները կոչում էին «խեվանդ» [5, ց. 1, գ. 3, թ. 3-4]: Ն. Ղազարյանը պատկերավոր ձևով այսպես է բնորոշում Բարսումի դարավանդային այգիները. «Երբ հեռվից նայում ես այս այգիներին, զգում ես թե նրանց վրա քանի սերնդի և ինչպիսի ծանր աշխատանք է թափված: Ձորից նայելով սարավանջին՝ մինչև հորիզոնը տեսնում ես միայն քարապատ սանդուղքներ և գեղեցիկ այգիներ» [5, ց. 1, գ. 3, թ. 2]:

Հետաքրքրական է, որ խիստ զառիվայր ու քարքարոտ լանջերը, որտեղ ընդհանրապես հնարավոր չէր դարավանդներ կառուցել, նույնպես օգտագործվել են այգեգործական նպատակներով: Այդպիսի տարածքներում տնկում էին պտղատու և ոչ պտղատու տարբեր ծառատեսակներ՝ իրար միջև բավական հեռավորություն թողնելով: Նման այգիները կոչվել են «քարինք» [5, ց. 1, գ. 3, թ. 4]:


Բանջարանոցը Գանձակի հայերի ավանդական տնտեսության մեջ չնչին դեր ուներ: Հիմնականում մշակում էին լոբի, որի անվանումով տվյալ հողակտորը կոչում էին «լոբուտ»: Դրանք գտնվում էին կա՛մ այգիների մի հատվածում, կա՛մ էլ առանձին գետափնյա տարածքներում [12, էջ 3]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Քարտեզագրման շնորհիվ ակնհայտ են դառնում հայկական գյուղերի տարածման օրինաչափությունները: Դրանք գերազանցապես նախալեռնային գոտում են եղել: Եզրակացնում ենք, որ այս օրինաչափության հիմնական պատճառը հայերի ու ասպատակող խմբերի (հիմնականում թյուրքական) միջև եղած հակա-

Ռաֆիկ Գաբրիելյան

սություններն էին: Ենթադրաբար, ժամանակի ընթացքում հայերը թողել են հարթավայրերում գտնվող իրենց տարածքները և տեղափոխվել նախալեռնային գոտիներ, որտեղ միջավայրը ավելի անվտանգ էր, և հարձակումների ժամանակ հնարավոր էր պաշտպանվել թիկունքում գտնվող ավելի դժվարամատչելի վայրերում: Տարածքի նման ընտրությունը խոսում է նաև Գանձակի հայերի շրջանում տնտեսվարման ու կենցաղավարության ընդհանրության մասին: Թերևս օտար էթնիկ խմբերից մեկուսի ապրելու ձգտմանը զուգահեռ՝ տարածքի ընտրության օրինաչափություններն արտահայտում են նաև սեփական հայրենիքում ապրելու մեծ ցանկությունը: Գտնում ենք, որ տարածքի օգտագործման ներկայացված ժողովրդական տարատեսակ եղանակները զարգացել են հենց այս փաստից ելնելով: Ընտրություն կատարելու այս ձևը առանցքային հոգեբանական հատկանիշ է և հաստատում է կուլեկտիվ կենսակերպի կարևորությունը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Տ



Քարտեզ 1. Հայկական գյուղերի տեղագրությունը Գանձակի շրջանում (քարտեզագիր՝ Ռ. Գաբրիելյան, աղբյուրը՝ QGIS):



Նկ. 1. Գառնակերի շենը (1980 թ.)

(լուսանկարը՝ Ս. Կարապետյանի, աղբյուրը՝ ՀՃՈՒ հիմնադրամի կայք artsakhmonuments.org):



Նկ. 2. Գետաշենի տների կառուցապատումը (1980 թ.) (լուսանկարը՝ Ս. Կարապետյանի, աղբյուրը՝ ՀՃՈՒ հիմնադրամի կայք artsakhmonuments.org):



Նկ. 3. Դարավանդային վարելահողեր Փիփ գյուղից հարավ-արևմուտք (աղբյուրը՝ QGIS):

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Արծրունի Գ.** «Ճանապարհորդությունն դեպի Ելիսավեանոյցի նահանգը»: «Մշակ»: Թիֆլիս: 1883: № 129:
2. **Բեգյան Մ.** «Լեռնային Չազիր գյուղի պատմությունը 1795-1975 թթ.»: Երևան: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ: 1988:
3. **Գասպարեան Յ.** «Չարդախյուն եւ նրա պատմությունը»//«Նոր-Դար»: Թիֆլիս: 1889: № 197:
4. **Լալայան Ե.** *Երկեր*: հ. 2: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1988: 505 էջ:
5. **Ղազարյան Ն.** *Գանձակի գավառի Հայկական գյուղերի ազգագրական նյութեր*: Երևան: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ: 1982:
6. **Մ. Ե.** «Բարսում»// «Նոր-Դար»: Թիֆլիս: 1893: № 47:
7. **Քաջբերունի.** «Բաղա գիւղի աներունը» // «Արարատ»: Էջմիածին: 1910: № 3: 226-233 էջեր:
8. **Pondelikova I.** "Cultural Landscape as the Identity of Phenomenon" // European Journal of Transformation Studies. Tbilisi. Ivane Javakhishvili Tbilisi State University. 2023, V. 11. № 2. 72-105 pp..
9. **Taylor K., Lennon J.** "Cultural landscapes: a bridge between culture and nature" // International Journal of Heritage Studies. London. Taylor & Francis. 2011. V. 17, 537-554 pp..
10. **Абелов А.** "Экономический быт государственных крестьян Елисаветпольского уезда Елисаветпольской губернии"// Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края. т. 7. ч. 1. Тифлис. 1887. 1-140 сс..
11. **Серебряков И.** "Сельское хозяйство в Елисаветпольском уезде"//Записки Кавказского общества сельского хозяйства. Тифлис. 1861. № 1-2. 89-190 сс..
12. **Серебряков И.** "Сельское хозяйство в Елисаветпольском уезде" // Записки Кавказского общества сельского хозяйства. Тифлис. 1862. № 1-2. 1-61 сс..

References

1. **Artsruni G.** "Travel to the Elisavetpol Province" [*Twanaparhordut'iwn de'pi Elisavetpo'li nahangy'*], "Mshak", Tiflis, 1883, № 129. (in Armenian)
2. **Begyan M.** "The History of the Nagorno-Jagir Village 1795-1975" [*Ler'nayin Jagir gyughi patmut'yuny' 1795-1975 t't'*], Yerevan, Archives of the Institute of Archaeology and Ethnography, 1988. (in Armenian)
3. **Gasparian Y.** "Chardakhlu and his History" [*Chardaxlun ew nra patmut'iuy'*], Nor-Dar, Tiflis, 1889, № 197. (in Armenian)
4. **Lalayan E.** "Works" [*Erker*], vol. 2, Yerevan, pub. AS of the ASSR, 1988, 505 p. (in Armenian)
5. **Ghazaryan N.** "Ethnographic Materials of the Armenian Villages of the Gandzak province" [*Gand'aki gavar'i Haykakan gyugheri azgagrakan nyut'er*], Yerevan. Archives of the Institute of Archaeology and Ethnography, 1982. (in Armenian)
6. **M. E.** "Barsum" [*Barsum*], "Nor-Dar", Tiflis, 1893, № 47. (in Armenian)
7. **Kajberouni.** "The Destruction of the Bada Village" [*Bada giwghi awerumy'*] // "Ararat", Echmiadzin, 1910, № 3, 226-233pp.. (in Armenian)
8. **Pondelikova I.** "Cultural Landscape as the Identity of Phenomenon" // European Journal of Transformation Studies, Tbilisi, Ivane Javakhishvili Tbilisi State University, 2023, V. 11, № 2, 72-105pp..
9. **Taylor K., Lennon J.** "Cultural Landscapes: a Bridge Between Culture and Nature?" // International Journal of Heritage Studies, London, Taylor & Francis, 2011, V. 17, 537-554pp..
10. **Abelov A.** "Economic Life of State Peasants of the Elisavetpol District of the Elisavetpol Province" [*Jekonomicheskij byt gosudarstvennyh krest'jan Elisavetpol'skogo uezda Elisavetpol'skoj gubernii*] // Materials for the study of the economic life of state peasants of the Transcaucasian region, vol. 7, part 1, Tiflis, 1887, 1-140pp.. (in Russian)
11. **Serebryakov I.** "Agriculture in the Elizavetpol District" [*Sel'skoe hozjajstvo v Elizavetpol'skom uezde*]//Notes of the Caucasian Society of Agriculture, Tiflisi, 1861, №1-2, 89-190pp. (in Russian)
12. **Serebryakov I.** "Agriculture in the Elizavetpol District" [*Sel'skoe hozjajstvo v Elizavetpol'skom uezde*]// Notes of the Caucasian Society of Agriculture, Tiflis, 1862, № 1-2, 1-61pp.. (in Russian)

Ընդունվել է / Received on: 17. 03. 2025

Գրախոսվել է / Reviewed on: 16. 04. 2025

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: 23. 05. 2025

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռաֆիկ Գորի ԳԱԲՐԻԵԼՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ rafik.gabrielyan.iae@gmail.com // ORCID:0009-0005-5965-2614

Rafik Gor GABRIELIAN: junior Researcher at the Ethnography Department of the Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA.
e-mail: rafik.gabrielyan.iae@gmail.com // ORCID:0009-0005-5965-2614

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ
ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հասմիկ Թ. Հարությունյան

Երևանի պետական համալսարան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Մշակույթի ամենատարբեր ոլորտներում դրսևորվող հավատալիքները մարդկության մշտական ուղեկիցն են: Անասնապահական տնտեսաձև վարող ժողովուրդների մշակույթում դրանք հիմնականում կապված են խոշոր եղջերավոր անասունների և հատկապես կաթնատնտեսության հետ: Տնտեսության այս ճյուղն ավանդաբար կարևոր և պատվավոր տեղ է ունեցել նաև նստակյաց, երկրագործ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի արտադրական մշակույթում, և պատահական չէ, որ հայերի հավատալիքային համակարգում մինչ օրս ուրույն տեղ ունեն տնտեսության այս բնագավառի շուրջ ձևավորված պատկերացումները: Մեթոդներ և նյութեր. Դաշտային նորոքյա նյութերը պատմահամեմատական մեթոդի սկզբունքով համադրվել են ազգագրական, գեղարվեստական գրականության մեջ, բանահյուսական նմուշներում, արխիվային նյութերում հայթայթած և ի մի բերված՝ թեմային վերաբերող հիշատակությունների հետ: Դաշտային աշխատանքի ընթացքում կիրառվել է խորացված հարցազրույցի մեթոդը: Վերլուծություն. Քննարկվել են կաթնատնտեսության հետ կապված տարաբնույթ հավատալիքներ, դրանք դիտարկվել են Կովկասի ժողովուրդների հավատալիքների համեմատական լույսի ներքո, ներկայացվել են բանահյուսական նմուշներ, որոնցում դրսևորված են կաթնատնտեսության շուրջ ձևավորված պատկերացումները: Արդյունքներ. Կաթնատնտեսության հետ կապված հավատալիքներում միահյուսված են հայոց և՛ հեթանոսական, և՛ քրիստոնեական պատկերացումները: Օջախի առատությունն ու լիությունը՝ *բարաբայթը* պահպանելու, այդ թվում՝ կաթն ու կաթնամթերքն անպակաս պահելու համար մարդիկ դիմել և դիմում են հմայական զանազան միջոցների: *Չարացքը խափանելուն* ուղղված ժողովրդական միջոցները կարելի է դասել երկու խմբի՝ կանխարգելիչ և վնասազերծող:

Բանալի բառեր՝ հավատալիք, կաթնամթերք, արտադրական մշակույթ, լիություն-առատություն, հմայություն, դաշտային նյութեր, բանահյուսական նմուշներ:

Ինչպես հղել՝ Հարությունյան Հ. Կաթնատնտեսության հետ կապված հավատալիքները հայոց մեջ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Հ.1(28): 128-139 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-128

BELIEFS RELATED TO DAIRYING IN THE ARMENIAN CULTURE

Hasmik T. Harutyunyan

Yerevan State University, RA

Abstract

Introductoin: Beliefs, manifested in the most diverse spheres of culture, are a constant companion of mankind. In the culture of cattle-breeding peoples, they are mainly associated with cattle and especially dairying. This branch of the economy has traditionally had an important and honourable place in the industrial culture of sedentary, agricultural peoples, including Armenians. **Methods and materials:** According to the principle of historical-comparative method, modern field materials were combined with references on the topic found in ethnographic literature, fiction, folklore samples, archival materials. In-depth interview method was used during the field work. **Analysis:** We have discussed various beliefs related to dairying, considered them in the comparative light similar with beliefs of the Caucasus peoples', we have presented folklore samples in which the ideas formed around dairying are manifested. **Results:** Both pagan and Christian ideas of the Armenians are intertwined in the beliefs related to dairying. In order to preserve the abundance of the family, including milk and dairy products, various magical means were/are resorted to. Folk remedies for the evil eye can be divided into two groups: preventive and rendering harmless.

Key words: *belief, dairying, industrial culture, abundance, witchcraft, field materials, folklore samples.*

Citation: Harutyunyan H. *Beliefs Related to Dairying in the Armenian Culture* // "Scientific Works" of SCAS NAS of RA. Gyumri. 2025. 1(28).128-139 pp..

DOI: 10.52971/18294316-2025.28.1-128

Ն Ա Ն Ա Բ Ա Ն . Հայ ժողովրդական հավատալիքների՝ սնահավատությունների, նախապաշարումների, հմայական, չարի ու բարու մասին պատկերացումների մի սովոր հատված վերաբերում է ընտանի կենդանիներին, դրանց խնամքին, կաթի ստացման ու մշակման գործընթացին:

Մեր նպատակն է՝ բացահայտել կաթնատնտեսությանն առնչվող ժողովրդական հավատալիքները, դրանց երևան գալու հիմքերը, մինչ օրս գոյության հիմնական պատճառները, ժողովրդական բացատրությունները, կենցաղավարման տարածաշրջաններն ու ակտիվությունը:

Այնքան ժամանակ, քանի դեռ նույնիսկ մենք՝ կրթված աշխարհիկ-աթեիստներս, կա՛մ պարզապես *իներցիայի ուժով*, կա՛մ լավ մակարդակով, կա՛մ էլ այլ նպատա-

կով մածուն մերում ենք *խաչ անելով*, կաթնատնտեսության հետ կապված հավատալիքների ուսումնասիրությունը մնում է արդիական:

Աշխատանքի նորույթը դաշտային նորոյրյա նյութերի գիտական շրջանառության մեջ դնելն է՝ տարաբնույթ վկայությունների համադրությամբ:

Չար աչքի մասին ժողովրդական պատկերացումները

Չայոց բոլոր պատմագրագրական մարզերում մեծ երկյուղ են ունեցել *չար աչքի* նկատմամբ: Հավատացել են, որ ինչպես մարդիկ, այնպես էլ նրանց կենսագործունեության բոլոր ոլորտներն ու ստեղծած բարիքները, այդ թվում՝ կաթնատու կենդանիները, կաթը, կաթնամթերքը, խնոցին, ենթակա են *չար աչքի՝ նիաթի (նիյէթ՝* դիտավորություն, նպատակ)*]*[1, էջ 256]: *Չար աչքի* ազդեցությունից առավել խոցելի են համարվել սովորականից տարբերվողները. ընտրյալները, գեղեցիկները՝ ուժեղ եզներն ու գոմեշները, մեծ կուրծք ունեցող կաթնատու կովերը: Այսօր էլ վստահ են, որ *աչք առած կթանի կուրծն ուռչում է*, կաթն էլ տհաճ համ է ունենում[26, էջ 143: Նասիբյան Ժուլետա, Տավուշ, Կողբ, 21.09.2024]: Ժողովրդի պատկերացմամբ՝ *չար աչքի* գորությամբ կովը կարող է *ցամաքել*, կաթը *կտրվել*, *յուղ դուրս չգալ խնոցուց* [3, էջ 90]: Չարածճի հարսի համոզմամբ՝

...Խանըմ կիսուր եկավ,

Ծծում աչքի եկավ.

Եղ խավավ, թան տառավ... [23, էջ 204]:

Չար աչքին դիմակայելու համար կարևոր էր հասկանալ, թե ումի՛ց և ինչի՛ց պետք է զգուշանալ: Եթե կթելիս մեկը մտնի, և կաթը քիչ կթվի՝ նա կդիտվի *ծանր ոտ ունեցող* [19, էջեր 311-312: 7, էջ 22]: Նրա դուրս գալուց հետո տանտիկինը երեք անգամ թքում է գետնին կամ *բարա է չափում(մատները լայն բացած ափը պարզել մեկի մեջքին, չանչել, չանչ անել)*՝ անիծելով. «*չօռք քեզ*», «*օձն հետևր*» [Սարգսյան Ժենյա, Գեղարքունիք, Արծվանիստ, 02.03.2019]: Եթե կասկածել են, թե ում *աչքից* է կաթը պակասել կամ արյունախառն կթվել, կրակից հանել են թեժ վառվող 3-4 ածուխ, գցել ջրի մեջ ու յոթ անգամ կրկնել կասկածելի մարդու անունը. եթե ածուխն իջներ ջրի հատակը, նա էր *աչքով տվողը*, եթե ոչ, գործողությունը կրկնել են՝ այլ մարդկանց անուններ տալով [10, էջ 147]: *Չար աչքը խափանելու* համար մինչ օրս դիմում են բազմաթիվ միջոցների: Դրանց մի խումբը կանխարգելող է ուղղված *չար աչքից* խուսափելուն, *չարի ուժը* նախապես չեզոքացնելուն:

Կանխարգելող միջոցներ

Գարնանը՝ առաջին անգամ գոմից հանելիս, անասունի ճակատին ձու են ջարդել՝ նմանողական հմայությամբ նույնացնելով *աչքը պայթելու (տրաքելու)* հետ: Որպեսզի «*հարքին(խնոցի հարելուն) աչքով չտան, նազար չդիպչի*, խնոցուց կախել են ոգնու փուշ, կրիայի պատյան, օձի շապիկ, փուշ, ավանակի պայտ, մեխ, փիրուզագույն կամ կապույտ ուլունք, մոլլայի պատրաստած հմայիլ [2, էջեր 67-68: 4, էջ 67: 15, էջ 111: 35, էջեր 133, 71: 20, էջ 154], որոնք աշխատել են ձեռք բերել հատկապես Համբարձման տոնի նախօրեին¹: Կթող կինը, որպես պահպանակ՝ մատանի է կրել, որ կովի կաթը

¹ Կաթնատնտեսության, առավելապես յուղի առատության ապահովմանն ուղղված հավատալիքները հրաշալիորեն դրսևորվել են հատկապես Համբարձման տոնի օրը և նախորդ գիշերը. դրանք մանրամասնել ենք առանձին հոդվածում (-հեղ.):

չպակասի, կուրծքը *չճաքի* [28, էջ 149]: Սատունցիները ուխտավայրերից բերած հողը աղի հետ տվել են անասուններին, որպեսզի *չարը նրանց չկպչի* [30, էջ 300]:

Ազգագրական դիտարկումները ցույց են տալիս, որ որոշ աշխատանքներ չեն ձեռնարկել ոչ միայն օտար, այլև *ծանր ոտ, չար աչք* ունեցողի համբավ ձեռք բերած մարդկանց ներկայությանը. խուսափել են կով կթել, խնոցի հարել, խնոցուց կարագը դատարկել, կաթի ճիշտ քանակը ասել [20, էջեր 311-312: 7, էջ 22: 5, էջ 65: 6, էջ 69]: Անգամ, երբ կովի կաթն առատ է եղել, և մի մասը կարելի էր գտել (օրինակ՝ յուղի կարիքը հոգալու համար), բայց քամիչ մեքենա չեն ունեցել, նախընտրել են ամբողջը պանիր պատրաստել իրենց տանը, քան քամիչ ունեցող հարևանի տուն տանել, որ *աչքով չտան*. Զգուշացել են. եթե յուղ հալելիս *գեշ աչք ունեցող* գա, յուղի գնդանը *չախալմիշ կլինի* (չաթլամիշ ըլլալ՝ ձեղքուի, ճաթիլ) [1, էջ 265: 27, էջեր 198-199] կամ կարագը կդառնանա [Կողբ, 2024]:

Օջախի վրա կաթ եփելիս ուրիշին կրակ չեն տվել. կովը *կակնըռե, աչքի կգա*, կաթը *կփստրի* (*կկտրվի, կշաղվի*), կովի պտուկն էլ *կքստտի*: Եթե նոր ծնած կովի կաթը տանից դուրս են հանել երեկոյան, մեջը *քերիջ* (հացի այրված կտոր) կամ վառվող ածուխ են գցել, որ կովը *չակնըռե* [28, էջեր 116-117, 12, էջ 325]:

Սատունում հուլիսի առաջին օրերին գոմերի մտուրքների մեջ, *տկերի* (խնոցու) տակ փշոտ *գ(կ)ազ* կոչվող թփեր են վառել, դրա կրակով տաքացրել նաև *թացանի* (կաթնամթերքի) ամանները [31, էջ 116: 6, էջ 69]: Հավատացել են՝ չարին կհաղթեն *երկընքից իջած մանանայի* (այդ սեզոնին որոշ բույսերի, նաև *գազի* տերևներին երեկոյան ժամերին նստած սպիտակ, քաղցրահամ փոշի), դրանով պատված բույսի փշի ու կրակի միասնության ուժով:

Գաթը քաշելու ժամանակ (պանիր պատրաստելու ընթացքը- Ն.Ն.) մոխրով *խաչ են արել* կաթսայի վրա [Հովհաննիսյան Աննա, Արագածոտն, Նորաշեն, 13.11.2023], մինչ օրս շատ տնտեսուհիներ մակարդված կաթը ձեռքով կամ դանակով խաչաձև են կտրում [Պողոսյան Սուսաննա, Գեղարքունիք, Աստղաձոր, 20.10.2023]:

Հայոց որոշ տարածաշրջաններում այսօր էլ հավատում են, որ չար աչքից ամենախոցելի կաթնամթերքը *դալն է²*, ուստի այն պատրաստել են գրեթե գաղտնի, չեն հայտնել անգամ մերձավորներին: Խուսափել են տաք *դալը* կտրել՝ *գդալ խփել*, հավատալով, որ կովը կչարանա, կցամաքի: *Դալ* եփելիս կաթսայի մեջ գցել են կապույտ թել ու ասել՝ հավատալով կապույտի չարխափան գործությանը³, կամ գարու հատիկներ՝ որպես առատության խորհրդանիշ, որոշ բանասացների բացատրությամբ՝ գարու *փշոտ* արտաքին մակերեսի *չար աչքը* վանող հատկության համար. հանել են հաջորդ օրը, *դալն* ուտելուց առաջ [Հայրապետյան Հասմիկ, Արագածոտն, Եղիպատրուշ, 14.12.2023]: Հավանաբար որպես մատաղ՝ *դալը* բաժանում են յոթ տան: Հարևանները *դալի* ամանը վերադարձնում են անվա, շուռ տված, վրան աղ լցրած, քանզի աղին վերագրվում է չարը չեզոքացնելու հատկություն [26, էջեր 145, 146: Արծվանիստ 2019: Հովակիմյան Անժելա, Գեղարքունիք,

² Նոր ծնած կովի առաջին օրերի կաթը եփելուց առաջացած թանձր զանգվածը հայոց տարբեր տարածաշրջաններում հայտնի է *դալ* կամ *խիժ* (խեժ) անունով:

³ Ուշագրավ է, որ որոշ տնտեսուհիների բացատրությամբ՝ թել դնելն ունի *դալի* ծակոտկենությունն ապահովելու միտում [Աստղաձոր 2023]:

Գեղամավան, 12.12.2023]: Ի տարբերություն որոշ տարածաշրջանների, որտեղ մինչ օրս էլ աշխատում են գաղտնի եփել *ղալը*՝ Քեսապում, ընդհակառակը, *ղալը* բաժանել են դրացիներին, որ կաթը առատ լինել, դա չանելը մեղք է համարվել [29, էջ 81]:

Հատկապես ծնի սեզոնին, գարնանը, երբ անասուններն արոտ են գնացել, որևէ կաթնամթերք ուրիշի չեն տվել՝ «գարուն-գարնանոցով մեր *մարագեն չաչկոթի*» պատկերացմամբ՝ տնտեսական տարվա առաջին օրերի հետ կապված նմանողական հմայությունամբ պայմանավորված [Արծվանիստ 2019]:

Հայոց հավատալիքներում հմայական նպատակներով ավանդաբար լայն կիրառություն են ունեցել հատկապես երկաթյա իրերը և որոշ բույսեր: *Չար աչքը* չեզոքացնելու համար *ղաղած* երկաթը մտցրել են կաթի, երեքնուկը՝ պանրի *մայայի* (մակարդի) մեջ [Եղիպատրուշ 2023: Արծվանիստ 2019]: Որպեսզի կաթը *չկտրվի*, կրակի մեջ, որի վրա այն եռացրել են, այրել են Ծաղկագարդի օրը եկեղեցում օրհնած ուռենու ճյուղ[19, էջ 71]՝ ապավինելով ոչ միայն ճյուղի, այլև օրհնանքի գործությանը:

Վնասագերծող միջոցներ

Երբ կանխարգելող միջոցները, այնուամենայնիվ, չեն արդարացրել հույսերը, չարի պատճառած վնասներից ազատվելու նպատակով դիմել են այլ միջոցների. *աչքով տված* կասկածելի մարդու անունը գրել են աղոթած թղթի վրա, այն այրել, տարել *նիսթի* եկած կովի մոտ, որպեսզի *հոտը քաշի*, որից հետո մոխիրը լցրել են հարդի վրա ու տվել կովին՝ ուտելու: Երբեմն աղոթած թուղթը 40 օր կովի ճակատին կապած՝ մնալուց հետո հանել են, զցել գետը [Արծվանիստ 2019]: Եթե կովը ջերմել է (կուրծը տաք է եղել), պտուկը *ճաքել է*, հավատացել են, որ կենդանուն *աչքով են տվել*⁴, բուժելու համար *արածան* կամ վազելին են քսել: «Էտ կովի կաթը կովի գլխին վեր ենք ածում մի երկու անգամ, հետո խոզին ենք տալի»: Կովի *կուրացած (ճաքած)* պտուկներին կապել են դեռահաս օրիորդի՝ կույս աղջկա ներքնազգեստ: Համշենում *աչկնրած* կովին լավացնելու համար օջախի շղթան և մի *խանձող* (այրված փայտ) երեք անգամ մտցրել են սառը ջրի մեջ, ապա ջուրը տվել կովին խմելու [Արծվանիստ 2019: 28, էջ 129]:

Երբ կովերի կաթը նվազել է կամ խնցուց քիչ է կարագ դուրս եկել, փորձառու տանտիկիները տան երդիկի *ափին լեպ*՝ կախարդական *գիր-փիթիկ* են փնտրել, քանզի ժողովրդական ընկալումներում երդիկը բնակարանի սրբազան հատվածներից մեկն է, և չարակամները հաճախ երդիկից են փորձել իրականացնել իրենց նպատակները: Համոզված են եղել, որ գտնելու և այրելու դեպքում կովերը դարձյալ սովորական չափով կաթ կտան[27, էջ 236]: Եթե կովի կաթը արյունախառն է եղել, լավացնելու հույսով, առանց այդ մասին մեկին ասելու, անխոս կթել են, կաթը թափել թոնրի կամ աղբյուրի ակի մեջ, մեր օրերում՝ փշոտ բույսի, մասրենու ճյուղերին՝ *չար աչքը ծակելու* համար [Նորաշեն 2023], ոմանք՝ իրենց *դրինդը* (բոխ փափուկ մասը) և ապա կովի պտուկը երեք անգամ կծելով: Նույն նպատակով հացի վրա աղ են ցանել, աղոթելու տվել, կեսը շանը,

⁴ Կովի պտուկը *նաքելու* պատճառ համարել են նաև հարսի անառակությունը: Հավատացել են, որ կովի պտուկը կարող է *ուռչել*, եթե երեխաները կանաչ սոխի անցքով փչեն, ուստի արգելել են դա անել: Մեր օրերում էլ, երբ երեխաները *մասրենուց* շվի են պատրաստում կամ դաշտային *դանդեղին, դեղին ծաղկի* ցողունը, գլխիկից առանձնացնելով, փչում են, մեծերն արգելում են [Արծվանիստ 2019]:

կեսն էլ կովին տվել ուտելու: Երբ կաթի յուղային մասը պակասել է, լավ չի հարվել, մի ձու են արոթելու տվել և տան կտուրում պահել [12, էջ 236: 15, էջ 110]: Երբ *չար աչքից* կաթը թթու համ է ստանում, մեղրաջուր են տալիս կովին, հավատալով, որ կաթը կքաղցրանա [Կիրակոսյան Պայծառ, Արարատ, Նորաբաց, 13.10.2023]:

Բարաքյաթը պահպանող միջոցներ

Օջախի *բարաքյաթը*, այդ թվում՝ կաթն ու կաթնամթերքն անպակաս պահելու համար ժողովուրդը դիմել է հմայական զանազան միջոցների⁵:

Տարվա մեջ որոշակի օրերի հոգևորականներին օրհնել են տվել բոլոր բարիքները, նաև կաթնամթերքը: Հնուց ավանդած փորձով ինչպես կենսական մյուս բարիքները, կաթնամթերքը ևս փոխարինաբար տալիս ամանը լրիվ չեն դատարկել, մի քիչ թողել են, որ *բարաքյաթը* մնա տանը, տալուց առաջ այն գաղտնի խաչակնքել են, աննշան աղ լցրել վրան:

Պանրի կտորներն ամանի մեջ դասավորելիս սկզբից մի մեծ կտորի վրա *խաչ են արել* և առաջինն այն դրել ամանի մեջ, որ *սաստանան բարաքյաթը չտանի*⁶: Նույն նպատակով խնոցին *փոխ տալիս* մի *գրավական* են վերցրել, ցույց տալով, որ խնոցին իր տեղում է: Օտղկազարդի ուռենու ճյուղերը, այսօր՝ նաև բողբոջները, պահել են կճուճներում, որպեսզի յուղն անպակաս լինի, սարից տուն վերադառնալիս ավելցուկ մերանը հորել են. սուրբ է՝ սուրբ մնա [24, էջեր 451-452: Արծվանիստ 2019: 3, էջ 88: 12, էջ 236: 22, էջ 273]:

Հավատացել են, որ նորը, թարմը, *նուբգարը* օջախի հաջողության գրավականն է, ուստի, այն չվտանգելու համար սկզբում կթած կաթը դուրս չեն տվել [16, էջ 247]: Քանի դեռ կաթը կրակի վրա է եղել, խիստ անհրաժեշտության դեպքում հարևանին կրակ տալուց առաջ կաթի ամանի վրա կանաչ տերև են դրել, որ *բարաքյաթը չպակսի*. այրող, ոչնչացնող տարրը՝ կրակը, փոխարինվել է թարմ, ապրող տարրով: Հում կաթը փոխ չեն տվել, անհրաժեշտության դեպքում մեջը մի կտոր ածուխ են գցել, որ կաթը չպակասեր: Ենթադրվել է, որ հում կաթի մեջ քաջբեր կան, որ դժգոհելով փոխ տալուց՝ կարող են վրեժխնդիր լինել և այն պակասեցնել [19, էջեր 311, 303: 12, էջ 235: 22, էջ 274]: Կարծում ենք՝ եռացրած կաթի՝ չարքերին դիմադրելու կարողությունը ժողովուրդը պայմանավորում է կրակից փոխանցված ուժով:

Կաթնամթերքի ամանը վերադարձնելիս՝ չեն լվացել, որ *ջուրը կաթն ու մածունը չտանի*, դատարկ չեն վերադարձրել. հարմար ոչինչ չունենալու դեպքում ջրով լի են տվել, որ հարևանի կովերն ու ոչխարները չցամաքեն [Նորաբաց 2023]: Հավատալով խոսքի ուժին՝ անպայման օրհնել են՝ *կովը կաթով ըլի, դոնաղը, պճեղը* (կճղակ) *պինդ ըլի* (*դարբաղ* հիվանդության նկատմամբ ունեցած վախով պայմանավորված՝ այս օրհնանքով դիմել են նաև նոր ծնված հորթին՝ բերանը մի գդալ արդար յուղ դնելով [Խաչատրյան Մուսաննա, Վայոց ձոր, Մարտիրոս, 12.12.2023]):

⁵ Ըստ ավանդության՝ հնում կաթը եփելիս բարձրացել ու այդպես էլ մնացել, ավելացել է: Մի անգամ մի կին չի նկատել, որ բարձրացել է, և կաթը թափվել է: Չայրացած կինը թքել է կաթի վրա, որի պատճառով *բերեքեթը* կորել է. տաքանալիս ավելանում է, սառչելիս՝ պակսում [28, էջ 129]: Ի դեպ, որոշ տնտեսուհիներ կաթը եփելիս մեջը գդալ են դնում, որ կաթը շատ չբարձրանա և թափվի [Ղարիբյան Վարդիթեր, Շիրակ, Գառնաառիճ, 10.04.2023]:

⁶ Նկատենք, որ Կովկասի որոշ ժողովուրդներ առաջին գլուխը գոհաբերել են տան հովանավոր ոգուն. նշան անելով՝ դա կերել են Նոր տարվա, Մեծ պատի նախօրեին [33, էջ 141]:

Մեր օրերում ևս ընդունված է կաթնամթերքի ամանը վերադարձնել օրինանքով՝ *մեկն խագար, չառնի նագար, ամանդ միշտ կաթ ըլնի*: [20, էջ 147: 6, էջ 70: 36, էջ 37: 21, էջ 215: Արժվանիստ 2019: Նորաբաց 2023]

Դատարկ ամանը ձեռքին կովի մոտ չեն քայլել, որ կուրծքը չդատարկվեր, կովերին հեռու են պահել կրակից, որ *չորանար*՝ չցամաքեր: Արգելվել է մածնով և կաթով կրակ հանգցնելը. մածունը կամ կաթը կրակի վրա թափելով և գոլորշիացնելով՝ կարող էին պակասեցնել դրանց առատությունը [19, էջեր 153, 311, 312]: Ջատկից մինչև Համբարձում կաթնապուր չեն եփել, կաթ և մերան չեն տվել ուրիշի, որ կովերի կաթը չպակասի [32, էջ 131]: Ընդհակառակը, ոմանք աշխատել են այդ ընթացքում հարևանից մերան կամ կաթ ստանալ, որպեսզի հարևանի կաթի *բարաքյաթն* էլ մերանի կամ կաթի հետ գա իրենց տուն: Հատկանշական է, որ որոշ տարածաշրջաններում (նաև Կովկասի այլ ժողովուրդներ) ոչ միայն տարվա այդ ժամանակահատվածում, այլև առհասարակ, *մերան փոխ չեն տվել*, որպեսզի *մալի* (խոշոր եղջերավոր անասունի) *բարաքյաթը* չկտրվեր [26, էջ 144: 24, էջեր 451-452: 22, էջ 273: 33, էջ 214]:

Արգելվում էր ուտել նույն օրվա մերած մածունը, *մերոցի* վրա պետք է գիշեր անցներ և միայն այն ժամանակ կարելի էր *կտրել*: Բանասացի համոզմամբ՝ մածունն առաջին օրը չեն *կտրում* ոչ թե որ դեռ պնդացած չէ, այլ որ տան *խերը*, *բարաքյաթը* կկորցնեն [Մարտիրոս 2023: 26, էջ 243]:

Մեր օրերում էլ որոշ տարածաշրջաններում *գարնանահավասարին*՝ մարտի 22-ին, և *ձմեռնահավասարին*՝ դեկտեմբերի 22-ին, *կաթ կամ մածուն տանից դուրս չեն հանում*, որ չսպառվեն: Ջատկին կաթնեղեն և հատկապես մածուն չեն գործածում: Կաթը տաքացնելիս, հատկապես մայիսին, կրակը փչելով չեն հանգցրել՝ նաև մեղք համարելով: [Արժվանիստ 2019]: Կաթով լի դուլը մինչև վերջ չեն դատարկում. դուլի հատակին մի քիչ կաթ են թողնում, որ կաթը երբեք չսպառվի: Ամուսնալուծված կամ այրի կնոջը չի թույլատրվել կթել այն պատկերացմամբ, որ անասունի կաթը կցամաքի: [Նորաբաց 2023]: Համոզված են եղել՝ *կաթնուկ* ծաղիկը պոկողի տան կովի կաթը կպակասի [Աստղածոր 2023]:

Ջգոն են եղել հատկապես Համբարձման տոնին նախորդող գիշերը⁷, քանզի անասունների կաթնատվությունը, կաթնամթերքի քանակությունն ավելացնելուն ուղղված այդ օրվա միջոցառումների մի մասն առանձնացել է չար դիտավորությամբ. միտված էր հարևանին վնասելուն, հարևանի անասունների կաթնատվությունը, կաթնամթերքի քանակությունը պակասեցնելուն՝ այն վստահությամբ, որ հարևանից պակասածը կավելացնի իրենցը. օրինակ՝ հարևանից *աթար* են գողացել և իրենց կաթի կաթսայի տակ վառել:

Կաթի և կաթնամթերքի ավելացմանն ուղղված հմայական միջոցներ

Մարդիկ մտահոգված են ոչ միայն կաթնամթերքի *բարաքյաթի* պահպանմամբ, այլև քանակի ավելացմամբ. կովը շատ կաթ տա, կաթնատվությունը երկար տևի, կաթի յուղայնությունը մեծ լինի, յուղի քանակն ավել լինի:

⁷ Օրինակ՝ *կթանին* տարել են արածեցնելու, որ *խպրար* կանայք չկախարդեն, իսկ եթե ներսում են թողել, երդիկների շուրջ թրիք են դարսել, մասրենու, ծիրանենու ճյուղեր են խրել դռան արանքներում, որ *կսխարդանքը ներս չնտնի* [4, էջ 67: 16, էջ 243: 2, էջ 70]:

Հատուկ հոգատարությամբ, սիրով ու ջերմությամբ է կատարվել կենդանիների խնամքը: Կովերին, գոմեշներին, անգամ առատ կաթ տվող այծերին փառաբանական անուններով են դիմել՝ Մարալ, Ծիրան, Սոնա, Սանամ, Ծաղիկ, Ջեյրան, Նագան, Նարգիզ և այլն: Հայոց մեջ ընդունված է եղել գրուցել լծկանի ու կովի հետ, սիրաշահել նրանց՝ փորձելով վայելել նրանց բարյացակամությունը: Իգուր չէ, որ նույնիսկ թևավոր խոսքն է գգուշացնում՝ «Կովին մի խրտնեցրու, կաթ չի տա» [29, էջ 368]: Առավել սիրալիր են եղել տոն օրերին: Վարդավառին հոտաղները ծաղկեփնջեր են կապել հորթերի և կովերի վզից: Նոր տարվա առավոտյան կենդանիներին էլ են շնորհավորել, կրակի մեջ մտցրած ճյուղերով նրանց թեթև շփել են, *Suptkhuagh* խմորից թխվածքներ կախել վզից [28, էջ 55]: Այնուամենայնիվ, եթե վերոնշյալ միջոցները չեն օգնում, և նոր ծնած կովը դառնում է անհնազանդ՝ թույլ չի տալիս կթել, մեր օրերում էլ ավանակի մազը հարդի հետ տալիս են կովին՝ ուտելու, նավթի մեջ թաթախած կապույտ կտորը վառում են կովի *մռութի* մոտ, որ կովը խելոքանա [Արծվանիստ 2019: Եղիպատրուշ 2023]:

Կենդանիներին վտանգից հեռու պահելու, կաթի և կաթնամթերքի առատությունն ապահովելու համար ընդունված է եղել տարվա ընթացքում մի քանի անգամ *մատաղ անել*:

Նոր ծնած կովի առաջին օրվա կաթը եփել են առանց շարժելու և առանց շերտփով խառնելու [19, էջեր 152, 153]: Տերնդեզի կրակի մոխրից շաղ են տվել գոմում՝ Շիրակում նաև բարձրաձայնելով. «...մեր կովերն էլ ճրթթան էղնին (շատ կաթ տան)» [27, էջ 265]: Տերնդեզի հրավառ *խանձողերը* տանիքից նետել են գոմի ուղղությամբ՝ «կաթը *ցուլան* (առատ) լինի» կանչելով [8, էջ 69], դրանք պահել են՝ Ջատկին կաթ եփելու համար [20, էջ 70: 19, էջ 153]: Նմանողական հմայությամբ կովի ընկերքը (*սրբանք, ծին*) մոտակա ամվի մեջ են գցել, որ կովի կաթը ամվի ջրի նման առատ լինի [9, էջ 232]⁸:

Կովերի առաջին կիթը երեք անգամ թափել են մտուրքի մեջ՝ ամեն անգամ լցնելիս կրկնելով. «Կովիս կաթը *սեղի* (հեղեղ) պես *բուլ* (առատ) էլի» [10, էջ 147]: Օրինաձ յուղը քսել են կովի պտուկներին, որ առատ կաթ տա [19, էջ 272]:

Բասենում *իշակաթնուկ*, Վասպուրականում՝ *կաթնուկ* բույսը (կարծում ենք՝ կաթ-կաթնուկ նմանողական հմայությամբ) դրել են կովերի և ոչխարների մեջքին, որ առատ կաթ ունենան, Վասպուրականում այս միջոցին դիմել են՝ ոչխարն օրական երկու անգամ կթել սկսելիս, Նոր Բայազետում նույն հույսով տանտիկիները իրենց գրպաններում պահել են օձի գլուխ կամ գայլի վեզ [22, էջ 266: 17, էջ 4: 15, էջ 110: 32, էջ 131]: Նմանողական հմայությամբ էր պայմանավորված երբեմն-երբեմն առատաձեռն լինելը՝ ակնկալելով կաթնատնտեսությունը հովանավորող ոգիների (որոնց էլ հնում, կարծում ենք, հենց նվիրված է եղել Վարձապրի (Համբարձման) տոնի) առատաձեռնությունը. օրինակ՝ Համբարձման տոնի օրվա ամբողջ կաթը, մաժունը, կաթնապուրը բաժանել են աղքատներին [19, էջեր 152-153: 6, էջ 85]: Կարծում ենք՝ Համբարձման կաթնապուրը դաշ-

⁸ Ըստ ավանդագրույցի՝ երբ խնոցու մեջ ամվի ջուր են լցրել, առատ կարագ են ստացել: Նկատել են, որ ամվի մոտ մացառի ճյուղից վայրի այծի ընկերք է կախված, բերել-կախել են խնոցու վերևի գերանից: Երբ դրացիները գողացել են այն, կարագը նվազել է [9, էջ 232]: Ժողովրդի համոզմամբ՝ եթե նոր ծնած կովն ուտի ընկերքը, կովի կաթն անմիջապես կպակասի [Արծվանիստ 2019]:

տերում շաղ տալը ևս գոհաբերության դրսևորում է՝ ոչ միայն հատիկի, այլ նաև կաթի և կաթնամթերքի առատությունն ապահովելու ակնկալիքով:

Որպեսզի կաթը միշտ առատ լիներ, Համբարձման օրը կաթի մեջ լցրել են խոտերի վրայի այդ օրը հավաքած առավոտյան ցողը, նորահարսների՝ Մեծ պասի առաջին օրն առաջին անգամ ջրի գնալու ճանապարհի հետդարձին հավաքած *դովլաթի չովերը*, կաթի կաթսայի տակ վառել են այդ օրը յոթ բակից ծածուկ և լուռ հավաքած չովերը, Մեծ Պասին թխած յոթ *փթիքը* (գաթի ձևով *քակորը*՝ անասունի չորացած աղբը), Համբարձման կաթնապուրը, խառնելով ջրին, խմեցրել են կաթնատու անասուններին: Բասենցիները շրջակա գետերի ջրերից ցանել են կովերի վրա. կարծում ենք՝ ոչ միայն սրբացված ջրերի բուժիչ գործողության հանդեպ հավատով, այլև որպես նմանողական հմայություն, քանզի այդ գետերի ջրերը կաթնագույն էին^[14, էջ 259: 20, էջ 111: 15, էջ 110: 22, էջեր 260, 261: Տե՛ս ծանոթ. 1]:

Կաթնատնտեսությանն առնչվող այլ հավատալիքներ

Հայոց ավանդական մշակույթում որոշ դեպքերում կանանց արգելվել է ինչ-ինչ գործերով զբաղվելը, օրինակ՝ դաշտանի ժամանակ կով կթել [13, էջ 362]⁹: Մինչև նորածնի մկրտությունը տատները համարվել է *հարս*, ձեռք չպետք է տար այն ուտելիքներին, որոնք ընդհանուր ընտանիքի անդամների համար էին՝ կարագ հավաքեր, հորելու համար պատրաստվող *ժածիկը* կամ պանիրը սեղմեր պուտուկների մեջ և այլն [3, էջ 73]:

Հասարակական կենցաղում, համայնքի ներսում, ընտանիքում, տնտեսական և այլ բնույթի հարաբերություններում ավանդաբար գերակա նշանակություն է ունեցել պարզ, արդար ու ազնիվ վարվելակերպը: Բոլոր տեսակի շեղումներն ու խախտումները ոչ միայն դատապարտելի էին, այլև վտանգավոր. մեղք են համարվել: Կեղծիքի դեպքում կզրկվեին ապրուստից: Օրինակ՝ օտարականին կաթնամթերք վաճառելը անընդունելի է եղել. կենդանու կաթը կցամաքեր [11, էջ 57]¹⁰: Կաթին ջուր խառնելը նույնպես մեղք է համարվել. կովերը *կաթից կկտրեին* [22, էջ 273]¹¹:

Ժողովրդական պատկերացումներում դրսևորվում են նաև կաթնատնտեսությանն առնչվող նախանշանային ուշագրավ հավատալիքներ. եթե չամուսնացած աղջիկը կամ տղան կաթի *տկուցքը* (կաթսային կպած-այրվածը) քերի, հարսանիքի օրը ձյուն կգա, կամ *կովը կթիս, ճող տվեց* (ցայտեց), *դոնաղ կիկա* [12, էջ 236: 23, էջ 197]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Կռահելով կամ չկռահելով *չարի* աղբյուրը՝ հայոց կաթնատնտեսության մեջ կիրառվել և կիրառվում են ոչ միայն *չարը* կանխարգելող, այլև

⁹ Հայոց որոշ տարածաշրջաններում կանայք ոչխար չեն կթում. ըստ բանասացի՝ պատճառը ոչ թե սնահավատությունն է, այլ որ ոչխար կթելը դժվար է [Կողբ 2024]: Նկատենք, որ Կովկասի ժողովուրդներից միայն հայերն ու դարաչայներն են, որոնց մեջ կանայք ոչխար են կթում: Ուշագրավ է նաև, որ հայոց մեջ տղամարդուն արգելված չէ կաթ, կաթնամթերք վաճառելը՝ ի տարբերություն Կովկասի որոշ ժողովուրդների (նրանց թույլատրվում է միայն պանիր և յուղ վաճառելը) [34, էջ 203]:

¹⁰ Հայաստանի տարբեր պատմագագագրական շրջաններում բազմաթիվ ավանդագրույցներ կան կաթ խնդրող և մերժում ստացող աղքատի, քար դարձած հովվի ու հոտի մասին: [Տե՛ս, օրինակ՝ 18, էջ 197]:

¹¹ Ժողովրդի պատկերացումներում մեղք համարվող նմանատիպ խախտումներին անդրադարձել ենք հայոց կաթնատնտեսության մշակույթում համագործակցության դասական դրսևորմանը՝ *Խարբիսագին* նվիրված հոդվածում: Մեր կարծիքով «Կեսօրին կաթ բերողի երեսը մի տենա» առածը [25, էջ 296] գուցե նույնպես զգուշացում է անազնիվ արարքի մասին, անազնիվ մարդուց հեռու պահելու միտումով:

չարի՝ արդեն պատճառած վնասը չեզոքացնելուն, դրանից ազատվելուն ուղղված տարաբնույթ միջոցներ: Կիրառվող միջոցներն առավելագույնին են հասել հատկապես Համբարձման տոնի օրը և նախորդող գիշերը: Միջոցների մի մասն ուղղված է կաթի և կաթնամթերքի առատության ու լիության պահպանմանը, մի մասը՝ ավելացմանը: Կաթնատնտեսության հետ կապված հայոց հավատալիքներում դրսևորվել են մթության մեջ չար ոգիների առավել աշխուժացման, նոր ծնածի՝ չարից առավել վտանգված լինելու, կրակի, մոխրի, փշի, երկաթի վնասազերծող գործողության մասին ժողովրդական պատկերացումները:

Կարծում ենք՝ լավ կլիներ, որ չար աչքի մասին ժողովրդի մեջ մինչ օրս ամուր պահպանված պատկերացման և նմանատիպ հավատալիքների փոխարեն ավանդույթի ուժով փոխանցված լիներ շեղումների և խախտումների հետ կապված մեղքի զգացումը. այդ պարագայում գուցե մեր օրերում հայ մարդը կաթին, կաթնամթերքին չէր խառնի ջուր, բուսական (օրինակ՝ արմավի յուղ) կամ անհասկանալի բաղադրիչներ:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Աճառյան Հ. «Թորքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ» // Էմինյան ազգագրական ժողովածու(ԷԱԺ), Գ: Մոսկ.-Վորշպո., Էջմիածնի վանքի տպ.: 1902, 58-377 էջ:
2. Ահարոնյան Ա. «ՀՌՕ կիներ: Երկերի ժողովածու, Գ»: Թեհրան, Արմեն հրատ.: 1982: 408 էջ:
3. Ավագյան Ս. «Արճակ» // Հայ ազգագրություն և բանասիրություն(ՀԱԲ), Հ. 8: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1978, 186 էջ:
4. Բենսէ «Բույանդի կամ Հարք գաւառ» // Ազգագրական հանդես(ԱՀ), Զ: Թիֆլիս, Ս. Ռուսինեանցի տպ.: 1900, 7-108 էջ:
5. Գյոզալյան Գ. «Մուսս լեռան ազգագրությունը»: Երևան, «Գիտություն»: 2001, 280 էջ:
6. Գևորգյան Գ. «Աշտարակի ազգագրական նյութերը»: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) արխ., Գևորգյան Գ. Ֆ., գ. 1: 1972, 99 թ. Գևորգյան Գ. «Ղզար» // ՀԱԲ, 10: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1980, 139 էջ:
7. Դաշտենց Խ. «Ռանչյարների կանչը»: Երևան, «Սովետական գրող» հրատ.: 1979, 524 էջ:
8. Թեմուրճյան Վ. «Անասնապահությունը Հայաստանում»: ՀԱԻ-ի արխ., Թեմուրճյան Վ. Ֆ., գ. 3: 1956, 475 թ.:
9. Թորքայան Հ. «Հանջենահայերի ազգագրությունը»//ՀԱԲ, Հ.13: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1981, 154 էջ:
10. Թումանյան Հ. «Երկայթուղու շինությունը»: ԵԼԺ, հ. 5: Երևան, ՀՀ ԳԱ հրատ.: 1994, 831 էջ:
11. Լալայան Ե. «Բորչալուի գավառ»: Երկեր, 3»: Երևան, «Գիտություն» հրատ.: 2004, 384 էջ:
12. Լալայան Ե. «Գանձակի գավառ»: Երկեր, 2»: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1988, 203-474 էջեր:
13. Լալայան Ե. «Միսեան» // ԱՀ, Գ: Թիֆլիս, Ս. Ռուսինեանցի տպ.: 1898, 105-272 էջեր:
14. Լալայան Ե. «Նոր-Բայազետի գավառ» // ԱՀ, XVII: Թիֆլիս, Ն. Ադանեան տպ.: 1908, 86-125 էջեր:
15. Լալայան Ե. «Չավախք»: Երկեր, 1»: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1983, 457 էջ:
16. Լալայան Ե. «Հասապուրական» // ԱՀ, Հ.25: Թիֆլիս, Ն. Ադանեան տպ.: 1913, 21-60 էջեր:
17. Լալայան Ե. «Հասապուրական» // ԱՀ, 26: Թիֆլիս, Սյոփո տպ.: 1916: 195-210 էջեր:
18. Լիսիցյան Ս. «Լեռնային Ղարաբաղի հայերը» // ՀԱԲ, 12: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1981, էջ 9-84:
19. Լիսիցյան Ս. «Չանգեզուրի հայերը»: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1969: 334 էջ:
20. Խենյան Է. «Տավուշ» // ՀԱԲ, 21: Երևան, «Գիտություն»: 2000: 314 էջ:
21. Հակոբյան Գ. «Ներքին Բասենի ազգագրությունը և բանասիրությունը»: Երևան, «Հայաստան»: 1974: 460 էջ:
22. «Հայ շինականի աշխատանքի երգեր»: Կազմ. և խմբ. Ա. Ղանալանյան: Երևան, Պատմության և գրականության ինստիտուտ: 1937: 265 էջ:
23. Հովսեփյան Հ. «Ղարաբաղի հայերը», I, Ազգագրություն: Երևան, «Գիտություն»: 2009, 501 էջ:
24. Ղանալանյան Ա. «Առածանի»: Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1960: 398 էջ:

25. Միրբայեղյան Գ. «Նոր Բայազետ» // ՀԱԲ, 11: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1980: 165 էջ:
26. Մխիթարեանց Աղ. «Փշրանք Շիրակի ամբարներից» // ԷԱԺ, Ա, Մ.-Ալեքսոյ, Գ. Սանդեանի տպ.: 1901: 1-338 էջեր:
27. Մուրադեանց Յ. «Համընցի հայեր» // ԱՀ, Չ: Թիֆլիս, Մ. Ռուսինեանցի տպ.: 1900: 109-158 էջեր:
28. Չոլաբյան Հ. «Բեսապ», Բ: Հալեպ, Արմէն Գասպարեան տպ.: 1998: 568 էջ:
29. Պետոյան Վ. «Սանա ազգագրությունը»: Երևան, ԵՀ հրատ.: 1965, 550 էջ:
30. Պետոյան Վ. «Սասուն», Երևան: «Նախաբեմ»: 2016: 739 էջ :
31. Քաջբերունի «Հայկական տվորություններ» // ԱՀ VII-VIII: Թիֆլիս, Ե. Ռուսինեանցի տպ.: 1901: 113-204 էջեր:
32. Калоев Б. "Скотоводство народов Северного Кавказа". М., "Наука". 1993, 231 с.
33. Лугуев С. "Культура поведения и этикет дагестанцев". Махачкала, ИИАЭ ДНЦ РАН. 2006,304с.
34. Марутян А. "Интерьер армянского народного жилища (вторая половина XIX –начало XX в.)" // ՀԱԲ, 17: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1989: 65-142 էջեր:
35. Мкртумян Ю. "Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX-начало XXв.)» // ՀԱԲ, 6: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1974, 7-90 էջեր:

References

1. Acharyan H. "Words Borrowed from the Turkish in the Armenian [*T'urk'erene p'okhareal barer hayerēni mēj*]" // Eminean Ethnographic Collection(EEC),G, Moscow-Vagharshapat. 1902, 58-377 pp. (in Armenian)
2. Aharonyan A. "HRO Woman" [*HRŌ kinē*], Collection of Works, G, Tehran, Armen. 1982, 408 p. (in Armenian)
3. Avagyan S. "Archak" [*Archak*] //Armenian Ethnography and Folklore (AEF), 8. Yerevan, AS ASSR. 1978, 186 p. (in Armenian)
4. Bense "Bulankh or Hark' Region" [*Bulankh kam Hark' gavar*]/Ethnographic Journal (EJ), Z. T'iflis. 1900, 7-108 pp. (in Armenian)
5. Gyozyalyan G. "Ethnography of Musa Mount" [*Musa leran azgagrut'yunē*]. Yerevan. Gitut'yun. 2001, 280 p. (in Armenian)
6. Gevorgyan G. "Ethnographic Materials of Ashtarak" [*Ashtaraki azgagakan nyut'erē*]. arch. of Institute of archaeology and ethnography (IAE), Gevorgyan G. f., w. 1. 1972, 99 p. (in Armenian)
7. Dashtents Kh. "The Call of the Peasants" [*Ranch'parneri kanch'ē*]. Yerevan, Sovetakan grogh. 1979, 524 p. (in Armenian)
8. Temurchyan V. "Cattle Breeding in Armenia"[*Anasnapahut'yunē Hayastanum*]. Arch. of IAE, T'emurchyan V. f., w. 1. 1956, 475 p. (in Armenian)
9. Torlakyan H. "Ethnography of Hamshen-Armenians" [*Hamshenahayeri azgagrut'yunē*]/ AEF, 13, Yerevan, AS ASSR Publ.. 1981, 154 p. (in Armenian)
10. Tumanyan H. "Railway Construction" [*Erkat'ughu shinut'yunē*]. Yerevan, AS RA Publ.. 1994, 831 p. (in Armenian)
11. Lalayan E. "Borch'alu Region" [*Borchalui gavar*].Works, 3, Yerevan, "Gitut'yun". 2004, 384p. (in Armenian)
12. Lalayan E. "G andzak Region" [*Gandzaki gavar*].Works, 2, Yerevan, NA ASSR Publ.. 1988, 506 p. (in Armenian)
13. Lalayan E. " Sisean" [*Sisean*]/ EJ, G, T'iflis. 1898, 105-272 pp. (in Armenian)
14. Lalayan E. "New-Bayazēt Region" [*Nor-Bayazēti gavar*] // EJ, XVII, T'iflis. 1908, 86-125 pp. (in Armenian)
15. Lalayan E. "Javakhk'" [*Javakhk'*]. Works, 1, Yerevan, NA ASSR Publ.. 1983, 457 p. (in Armenian)
16. Lalayan E. "Vaspurakan" [*Vaspurakan*] // EJ, 25, T'iflis. 1913, 21-60 pp.. (in Armenian)
17. Lalayan E. "Vaspurakan" [*Vaspurakan*] // EJ, 26, T'iflis. 1916, 195-210 pp.. (in Armenian)
18. Lisitsyan S. "The Armenians of Moauntain Gharabagh" [*Lermayin Gharabaghi hayerē*] // AEF, 12, Yerevan, AS ASSR Publ.. 1981, 9-84 pp. (in Armenian)
19. Lisitsyan S. "The Armenians of Zangezour" [*Zangezuri hayerē*]. Yerevan, AS ASSR publ.. 1969, 334 p. (in Armenian)

20. **Khemchyan E.** "Tavush" [*Tavush*] // AEF, 21, Yerevan, "Gitut'yun" Publ.. 2000, 314 p. (in Armenian)
21. **Hakobyan G.** "Ethnography and Folklore of Lower Basen" [*Nerk'in Baseni azgagrut'yunē ew banahyusut'yunē*]. Yerevan, "Hayastan" Publ.. 1974, 460 p. (in Armenian)
22. "Work Songs of Armenian Peasant" [*Hay shinakani ashkhatank'i erger*]. Edited by A. Ghanalanyan. Yerevan, IHL. 1937, 265 p. (in Armenian)
23. **Hovsepyan H.** "The Armenians of Gharadagh" [*Gharadaghi hayerē*], I, Ethnography. Yerevan, "Gitut'yun" Publ. 2009, 501 p. (in Armenian)
24. **Ghanalanyan A.** "Proverbs" [*Aratsani*], Yerevan, AS ASSR Publ.. 1960, 398 p. (in Armenian)
25. **Mikayelyan G.** "New-Bayazēt" [*Nor-Bayazēt*]//AEF, 11, Yerevan, NA ASSR Publ.1980,165 p. (in Armenian).
26. **Mkhitareants A.** "Crumb from the Barns of Shirak" [P'shrank' Shiraki ambarnerits']// EEC, A, Moscow-Alek'pol. 1901, 1-338 pp. (in Armenian)
27. **Muradeants Y.** "The Armenians of Hamshen" [Hamshents'i hayerē]// EJ, Z, T'iflis. 1900, 109-158 pp. (in Armenian)
28. **Cholakyan H.** "Kesap" [*K'esap*], B. Aleppo, Armen Gasporean. 1998, 568 p. (in Armenian)
29. **Petoyan V.** "Ethnography of Sasun" [*Sasna azgagrutyunē*]. Yerevan, YU Publ.. 1965, 550 p. (in Armenian)
30. **Petoyan V.** "Sasun" [*Sasun*]. Yerevan, "Nakhabem" Publ.. 2016, 739 p. (in Armenian)
31. **Kajberuni** "Armenian Customs" [*Haykakan sovorut'yunner*] // EJ, VII-VIII, T'iflis. 1901, 113-204 pp. (in Armenian)
32. **Kaloev B.** "Cattle Breeding of the North Caucasus' Peoples" [*Skotovodstvo narodov Severnogo Kavkaza*]. Moscow, "Nauka" Publ.. 1993, 231 p. (in Russian)
33. **Luguev S.** "Behavioural Culture and Etiquette of Daghestan Peoples" [*Kul'tura povedeniya i etiket dagestancev*]. Makhachkala, IHAЕ DNC ASR. 2006, 304 p. (in Russian)
34. **Marutyanyan H.** "Interior of Armenian Dwelling (the Secund Half of the XIX-the Beginning of the XX c.)" [*Inter'er armjanskogo narodnogo zhilish'a (vtoraja polovina XIX-nachalo XX v.)*] // AEF, 17, Yerevan, AS ASSR Publ. 1989, 65-142 pp. (in Russian)
35. **Mkrtumyan Ju.** ".Cattle Breeding Forms in East Armenia (the Secund Half of the XIX-the Beginning of the XX c.)" [*Formy skotovodstva v Vostochnoj Armenii (vtoraja polovina XIX-nachalo XX v.)*] // AEF, 6, Yerevan, AS ASSR Publ. 1974, 7-90 pp. (in Russian)

Ընդունվել է / Received on: **21. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **21. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ Թելմանի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու,
Երևանի պետական համալսարանի դոցենտ, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ h.harutyunyan@ysu.am, // orcid.org0009-0003-3736-851

Hasmik Telman HARUTYUNYAN: PhD in History,
Associate Professor at Yerevan State University, Yerevan, RA,
e-mail: h.harutyunyan@ysu.am // orcid.org0009-0003-3736-8511

ՀՏԴ՝ 069:39(=19):008

DOI: 10.52971/18294316-2025.28.1-140

ԿԱՎԵ ԿԱՆԱՑԻԱԿԵՐՊ ԱՂԱՄԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԴԻՆԱՄԻԿԱՆ՝ ՀՈՎՂ. ՇԱՐԱՄԲԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Դիանա Վ. Արրահամյան

Հոփ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան, Երևան, ՀՀ

Անփոփում

Նախաբան. Սույն հոդվածում քննվում է կանացիակերպ աղամանների պատմական զարգացման ընթացքը, դրանց պատրաստման տեխնոլոգիաների, կերպավորման առանձնահատկությունների և գործառնությունների փոփոխությունները Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի հավաքածուի հիման վրա (հետայսու՝ ԺԱԹ): *Մեթոդներ և նյութեր.* Համադրելով կանացիակերպ աղամանների ուսումնասիրության ազգագրական մոտեցումները և թանգարանային հավաքածուում առկա էմպիրիկ նյութը՝ պատմահամեմատական և մշակութաբանական մեթոդների կիրառմամբ փորձել ենք պարզել հավաքածուի ձևավորման պատմությունը, տալ դրանց տիպաբանական ընդհանուր բնութագիրը և սոցիալ-մշակութային մեկնաբանությունը: *Վերլուծություն.* Հոդվածում դիտարկվել են շուրջ 40 կավե կանացիակերպ աղամանների նմուշներ, որոնց մեծ մասը քննության է առնվում առաջին անգամ: *Արդյունքներ.* Թանգարանի հավաքածուի ավելի քան 40 աղամանների ուսումնասիրությունը, որոնք ներկայացնում են Հայաստանի տարբեր տարածաշրջաններ և ներառում են ինչպես ազգագրական, այնպես էլ դեկորատիվ արվեստի նմուշներ, բացահայտեց դրանց ոճական և տեխնոլոգիական առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Ի սկզբանե կանանց կողմից պատրաստվող այս առարկաները, տղամարդկանց ներգրավմամբ տնայնագործական արհեստից մասնագիտական արհեստի վերածվելու հետևանքով, փոխեցին արհեստի սեռային պատկանելիությունը՝ հանգեցնելով ձևերի և ոճերի նոր, այլընտրանքային տարբերակների առաջացման: Այս փոփոխությունները նպաստեցին կանացիակերպ աղամանների վերափոխմանը՝ դրանք դարձնելով դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ:

Հետազոտության շրջանակում ավանդական և ժամանակակից կանացիակերպ կավե աղամանների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տվել հասկանալու տարբեր ժամանակաշրջանների գեղարվեստական պատկերացումները և մշակութային ընկալումները, ինչպես նաև ընդգծելու դրանց միջև գոյություն ունեցող շարունակական կապը, որն արտահայտվում է կնոջ կերպարի պահպանմամբ՝ իր մշակութային նշանակությամբ և սիմվոլիկայով:

Բանալի բառեր՝ կանացիակերպ աղամաններ, խեցեգործություն, թանգարան, հավաքածու, ավանդական, ժամանակակից, ժող-վարպետ:

Ինչպես հղել՝ Աբրահամյան Դ. Կավե կանացիակերպ աղամանների պատմական զարգացման դինամիկան՝ Հոփհ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի օրինակով, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1(28): 140-153 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-140

THE DYNAMICS OF THE HISTORICAL DEVELOPMENT OF WOMANLIKE CLAY SALT CELLARS, AS AN EXAMPLE OF THE COLLECTION OF THE FOLK ARTS MUSEUM NAMED AFTER HOVH. SHARAMBEYAN

Diana V. Abrahamyan

Museum of Folk Arts named after Hovh. Sharambeyan, Yerevan, RA

Abstract

Introduction: This article explores the historical development of womanlike salt cellars, the changes in their making technologies, peculiarities of characterisation and functions based on the collection of the Hovhannes Sharambeyan Museum of Folk Arts (hereafter: MFA). **Methods and materials:** By combining ethnographic approaches to the study of womanlike salt cellars with the empirical material available in the museum collection and using historical-comparative and culturological methods, we attempted to uncover the history of the collection's formation, provide a general typological description and offer a socio-cultural interpretation. **Analysis:** In this article, around 40 samples of womanlike clay salt cellars were examined, most of which have been studied for the first time. **Results:** The examination of over 40 salt cellars from the museum's collection, representing various regions of Armenia and encompassing both ethnographic and decorative art pieces, revealed their stylistic and technological characteristics as well as their common features. Originally crafted by women, these objects, with the involvement of men, transitioned from a domestic craft to a professional craft, altering the gender dynamics of the trade and leading to the emergence of new, alternative forms and styles. These changes contributed to the evolution of womanlike salt cellars, transforming them into decorative applied art pieces.

Within the scope of this research, the comparative analysis of traditional and contemporary womanlike clay salt cellars has provided insight into the artistic visions and cultural perceptions of different periods, while also highlighting their continuous connection, manifested in the preservation of the female figure with its cultural significance and symbolism.

Key words: womanlike salt, pottery, museum, collection, traditional, contemporary, folk artisan.

Citation: Abrahamyan D. *The Dynamics of The Historical Development of Womanlike Clay Salt Cellars, as an Example of The Collection of The Folk Arts Museum Named After Hovh.Sharambeyan.*/"Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025, Vol. 1(28).140-153pp. DOI: 10.52971/18294316-2025.28.1-140

ՆՆՆՆՆՆՆՆ. Ի տարբերություն միջնադարյան խեցեգործության արհեստի ուսումնասիրության (տե՛ս [1:2:3]), որտեղ ներկայացվում է խեցեգործության զարգացման ու տեխնոլոգիական առանձնահատկությունների պատմությունը՝ հիմք դնելով հետագա հետազոտությունների համար, 19-20-րդ դարերի ժողովրդական խեցեգործությունը՝ որպես արհեստ, մշակութաբանական վերլուծության չի ենթարկվել, բացառությամբ Վարդ Բոդյանի և Ելենա Սարգսյանի կողմից իրականացված ազգագրական ուսումնասիրությունների (տե՛ս [7:17]), որոնցում, խեցեգործությունը դիտարկվում է որպես տարածված արհեստ՝ պայմանավորված խեցեգործության ավելի շատ որպես տեղական արհեստ ընկալմամբ, որը կապված է եղել գյուղական կյանքին և մեծ մասամբ գոյություն է ունեցել գործնական նպատակներով [15, էջ 240], քան որպես արվեստի մի ձև, որը կրում է մշակութային կամ գեղարվեստական բնույթ: Այդպես, խեցեգործությունը շատ դեպքերում դիտվել է որպես « պրիմիտիվ» [1, էջ 212], տնտեսություն սպասարկող ոլորտ՝ ուշադրություն չդարձնելով նրա դերին՝ որպես ժամանակի արժեքներն ու ավանդույթները արտացոլող մշակութային հենքի: Այս առումով կանացիակերպ աղամանների՝ որպես խեցեգործական արտադրանքի առանձին տեսակի ուսումնասիրությունը դեռևս սահմանափակ է և պահանջում է նոր մեթոդաբանություն և անդրադարձ:

Մեր հետազոտությունը նպատակ ունի քիչ թե՛ շատ լրացնել առկա գիտական բացերը՝ ուսումնասիրելով այս յուրօրինակ մշակութային նմուշների զարգացումը և դրանց նշանակությունը հայ ժողովրդի գեղարվեստական և սոցիալ-մշակութային կյանքում: Ցավոք, հետազոտվող հավաքածուի ձևավորման ընթացքում նմուշների գիտական նկարագրության նկատմամբ բավարար ուշադրություն չի դարձվել: Շատ դեպքերում անհայտ են նմուշների հեղինակները, իսկ դրանց փոխարեն գրանցվել են միայն հանձնողների տվյալները: Բացի այդ, հիմնականում չեն փաստագրվել նմուշների ստեղծման պատմությունը, վարպետների կենսագրական տվյալները և դրանց ստեղծման տեխնիկական առանձնահատկությունները: Այս բացթողումները որոշ չափով սահմանափակել են հավաքածուի գիտական նշանակության լիարժեք բացահայտումը և նմուշների ստեղծման համատեքստի խորը վերլուծությունը: Այնուամենայնիվ, մեզ հաջողվել է պարզել ինչպես հավաքածուի տարածաշրջանային պատկանելիությունը, այնպես էլ տիպաբանել և ուրվագծել կանացիակերպ աղամանների զարգացման փուլերը: Այս ուսումնասիրությունը կօգնի ոչ միայն մասամբ լրացնելու գիտական բացերը, այլև վերարժևորել կանացիակերպ աղամանների դերն ու նշանակությունը հայ ժողովրդական արվեստում՝ այն դիտարկելով որպես արհեստագործական և գեղարվեստական ավանդույթների շարունակականության խորհրդանիշ:

Նշանակական խեցեգործության ավանդույթները.

կանացիակերպ աղամանների ծագումն ու էվոլյուցիան

Նշանակական լեռնաշխարհում կավե ամանների պատրաստման ավանդույթը սկիզբ է առնում դեռևս նեոլիթի շրջանում, երբ ձևավորվում են վաղ ագրարային համայնքները: Այս

շրջանից հայտնի են ձեռքով կերտված և բաց կրակով թրծված խեցեղեններ, որոնք հետագայում, հատկապես էնեոլիթի (մ.թ.ա. 6-4-րդ հազարամյակ) և բրոնզի դարերում (մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակ), նստակեցության (տե՛ս [11]), հետևաբար սնունդ արտադրող տնտեսության անցմամբ պայմանավորված՝ կատարելագործվել են՝ ձեռք բերելով ավելի բազմազան ձևեր, զարդանախշեր և տեխնոլոգիական որակներ: Ինչպես հայտնի է, առաջին կավագործները եղել են կանայք, որոնք սննդամթերքի ավելցուկը և սննդի տարբեր տեսակների պաշարը պահպանելու համար պատրաստել են առաջին կավանոթները [6, էջ 54]: Խեցեղերի այս տեսակներին բնորոշ է հիմնականում կոպիտ և ոչ համամասնական չափերի «իրանը», սակայն հանդիպում են նաև իրենց կատարելությամբ արվեստի գործեր հիշեցնող կավանոթներ: Դրանք կանացիակերպ աղամաններն են, որոնց ամենավաղ նմուշը գտնվել է Բարձր միջնադարի հնագիտական շերտերից (Անիի հյուսիսային արվարձանների պեղումների ժամանակ) և թվագրվում է 13-րդ դարով (Տե՛ս [9]): Կանացիակերպ աղամանները ավանդական տարբերակում ձեռածեփ էին և պատրաստվում էին կանանց կողմից: Դրանք պատրաստվում էին օղակաձև ծեփման տեխնիկայով, իսկ հարդարվում՝ կոկման եղանակով [15, էջ 208]: Հարկ ենք համարում նշել, որ դրանց նախատիպ են հանդիսանում կավե կանացիակերպ անոթները, որոնք առավելապես հայտնի են մերձավորարևելյան մշակույթներում, որտեղ կնոջ կերպարի օգտագործումը կրկին կապվում էր պտղաբերության, մայրության պաշտամունքի հետ: Հայկական տարածքում հայտնաբերված ամենավաղ նմանատիպ կավե անոթները թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներով: Դրանք գտնվել են թաղման վայրերում, ինչը ենթադրում է, որ կապված են եղել մահվան ու վերածննդի հնագույն պատկերացումների հետ: Դրանց օրինակներից այսօր կարող ենք տեսնել Հայաստանի պատմության թանգարանում, որոնցից կարելի է առանձնացնել Շենգավիթում՝ Երևան քաղաքի հարավարևմտյան շրջանում գտնվող հնագույն բնակավայրից պեղված, 3-րդ հազարամյակով թվագրվող կանացիակերպ անոթը: Այն ունի պարզ ձև, վերին մասում կնոջ պատկերավորմամբ, որը խորհրդանշում է մայրությունը՝ որպես կյանքի աղբյուր:

Կանացիակերպ աղամանները ժամանակի ընթացքում անցել են դինամիկ զարգացում և ադապտացվել կրոնա-մշակութային փոփոխություններին՝ կրելով ժամանակաշրջանի առանձնահատկությունները [7, էջեր 60-64]: Մինչքրիստոնեական շրջանում այս կավանոթները կապված էին պտղաբերության պաշտամունքի հետ: Քրիստոնեության տարածմամբ կավե անոթները ենթարկվեցին սրբացման, ինչը ձևափոխեց դրանց խորհրդանշային իմաստը և ձևաբանական կառուցվածքը: Այս փուլում նկատելի է Անահիտի պաշտամունքի ծպտյալ շարունակականությունը, ինչը արտահայտվել է կանացի հատկանիշների ընդգծմամբ: Այս շրջանում է, որ անոթի վերին հատվածում ձևավորվում է կանացի դիմագիծ, իսկ նոր բացվածքը տեղակայվում է կրծքի ներքևի մասում: Հաջորդ շրջանում կավանոթը դառնում է սրբազանության խորհրդանիշ՝ կրելով ինչպես մինչքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական արժեքներ: Այն արդեն մարմնավորում էր միաժամանակ Անահիտի և Մարիամ Աստվածածնի կերպարները՝ միավորելով մայրության և սրբության գաղափարները: Այս շրջանը պսակվում է Անահիտի մոռացումով և «մարիամապաշտության» [7, էջ 64] հաղթանակով: Ավելի ուշ, աղամանները ձեռքագատվում են կրոնական իմաստից և ձեռք բերում աշխարհիկ մշա-

նակություն՝ վերածվելով դեկորատիվ կավանոթների՝ աստիճանաբար կորցնելով իրենց օգտապաշտական բնույթը: Այսօր դրանք դարձել են ինքնության ցուցիչ՝ արտացոլելով հայ մշակույթի և ազգային ինքնության յուրահատկությունները: Այս զարգացումն ընդգծում է, որ աղամանները, թեև ենթարկվել են գաղափարական և խորհրդանշական փոփոխությունների, սակայն երկար ժամանակ պահպանել են իրենց գործառնային եությունը՝ վերահիմաստավորվելով տարբեր մշակութային համատեքստերում:

Արևելյան Հայաստանում կանացակերպ աղամանների ստեղծման և տարածման ավանդույթը կապված է 19-20-րդ դարերում արևմտահայության մշակութային ազդեցության հետ: Գաղթի արդյունքում արևմտահայերի համայնքները նոր միջավայրերում պահպանեցին և վերահիմաստավորեցին իրենց մշակութային արժեքները, որտեղ ներառված էին նաև կանացիակերպ աղամանների պատրաստման ավանդույթները: Պատահական չէ, որ այս աղամանները հատկապես հանդիպում ենք այն վայրերում, որտեղ 1830-ական թվականներից սկսած՝ շարունակաբար վերաբնակվել են արևմտահայերի համայնքները [7, էջ 20: 16]: Արդյունքում արևմտահայերի տեղահանությունը հանգեցրեց մշակութային փոխանակման, որտեղ Արևելյան Հայաստանի տեղական ավանդույթներն ու Արևմտահայաստանի կենցաղային և գեղարվեստական սովորույթները միաձուլվեցին, իսկ արդեն 20-րդ դարի ընթացքում՝ հատկապես խորհրդային շրջանում, կանացիակերպ աղամանները դարձան ազգային ինքնության արտահայտման միջոց: Այս գործընթացն արտացոլում է ոչ միայն նյութական մշակույթի տարրերի փոխանցումը, այլև մշակութային հիշողության պահպանման և տեղային ինքնությունների վերաձևավորման դինամիկան:

20-րդ դարի կեսերից և դրանից հետո կերպավոր աղամանների պատրաստումը անհատական տնտեսություններում անասունների գլխաքանակի կրճատմամբ պայմանավորված աստիճանաբար վերացավ [7, էջ 3]՝ մնալով ժողովրդական վարպետների ստեղծագործական ներշնչման առարկա: Աղամանները դարձան դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, ընդգծելով առավելապես էթնիկ մշակույթի բաղադրիչը, և հանդես գալով որպես հայ ինքնության ցուցիչ: Այս անցման ընթացքում նկատվեց նաև մեկ այլ կարևոր փոփոխություն. եթե մինչ այդ աղամանների պատրաստումը կանանց զբաղմունք էր՝ կապված կենցաղային կարիքների հետ, ապա արհեստի վերածվելու հետևանքով դրանց պատրաստման գործընթացն աստիճանաբար կենտրոնացավ տղամարդ վարպետների ձեռքում: Կավագործության, մասնավորապես՝ կերպավոր աղամանների պատրաստման մասնագիտացումը նպաստեց դրանց արտադրության ընդլայնմանը և որակական կատարելագործմանը: Վարպետները սկսեցին ավելի մանրամասն մշակել ձևերը, ավելացնել հարդարանքային տարրեր՝ զարդանախշեր, փորագրություններ և գունային լուծումներ, ինչի արդյունքում աղամաններն առավելապես ձեռք բերեցին գեղարվեստական նշանակություն: Այս գործընթացը աղամաններին հաղորդեց առևտրային արժեք, և դրանք սկսեցին ոչ միայն գործածվել որպես կենցաղային կամ ծիսական անոթներ, այլև վաճառվել որպես գեղարվեստական առարկաներ: Ժողովրդական վարպետները սկսեցին ակտիվորեն ներգրավվել այս արտադրության մեջ, զարգացնելով նոր ոճեր և տեխնիկաներ, որոնք արտացոլում էին հայ մշակութային ինքնության յուրահատկությունները: Արդյունքում, աղա-

մանների պատրաստման ավանդույթն ապրանքայնացավ, իսկ դրանց գործառույթը վերափոխվեց՝ վերածվելով ոչ միայն ազգային ինքնության խորհրդանիշի, այլև ժողովրդական արհեստի կենսունակ և զարգացող ճյուղի:

ԺԱԹ-ի հավաքածուն ընդգրկում է 19-20-րդ դարերով թվագրվող 40-ից ավելի աղաման, որտեղ ներառված են ինչպես ազգագրական, այնպես էլ դեկորատիվ արվեստի նմուշներ: Այդ աղամանները ներկայացնում են Հայաստանի տարբեր տարածաշրջանները և ունեն ոճական, տեխնոլոգիական առանձնահատկություններ ու ընդհանրություններ: Հավաքածուն ձևավորվել է սկսած 1970-ական թվականներից, երբ Հ. Շարամբեյանի նախաձեռնությամբ նախկին Ժողովրդական տան շենքը վերածվում է թանգարանի: Հավաքածուում առկա ազգագրական տիպի աղամանները հիմնականում Շարամբեյանի անձնական հավաքածուից են՝ բերված Դիլիջանից: Ըստ մեր հետազոտության ընթացքում ձեռք բերված տեղեկությունների՝ նմուշների զգալի քանակ ձեռք է բերվել նաև 1980-ական թվականներին՝ գիտաբանների ընթացքում՝ Արարատի շրջանից և հիմնականում՝ գնման միջոցով: Հետևաբար դրանք պատկանում են Ապարանի, Յուվայի (այժմ՝ գ. Շահումյան) և Երևանի աղամանների տիպին, քանի որ դարասկզբին այդ շրջանների կավագործ կանայք և բրուտները աղամանները վաճառել են Արարատյան հովտում [7, էջ 3]: Հավաքածուում կավե կանացիակերպ աղամանները յուրահատուկ տեղ են զբաղեցնում՝ արտացոլելով հայոց ավանդական կենցաղի և մշակույթի գեղարվեստական կողմերը:

Հավաքածուի տիպաբանական նկարագրություն

Հայկական կավե աղամանները՝ մարդակերպ թե կենդանակերպ, պարտադիր ունեն կանացի հատկանիշներ [7, էջ 15] և խիստ կապված են կանացիության, մայրության և պտղաբերության գաղափարական պատկերացումների հետ, որոնցով և տարբերվում են այլ մշակույթներում հայտնի նմանատիպ՝ փորի բացվածքով անոթներից, որոնք հիմնականում ներկայացնում են տեղային աստվածություններ, և կարող էին լինել նաև տղամարդկային կերպարով:

Թեև հավաքածուում առկա ավանդական տիպի աղամանները ժամանակի ընթացքում քայքայվել են, ինչը բարդացրել է դրանց քննությունը, սակայն համադրական ուսումնասիրության միջոցով մեզ հաջողվել է որոշ օրինակներ տիպաբանել:

Հետազոտության առարկա աղամանները պատրաստված են սև, կարմիր և կարմրամոխրագույն-բացշագանակագույն կավահումքից: Ելնելով Վ. Բոյանի դասակարգումից՝ ԺԱԹ-ի հավաքածուում առկա կանացիակերպ աղամանները կարելի է խմբավորել ըստ կերպավորման՝ մարդակերպ (կանացի դիմավոր և անդեմ), կանացիակերպ-գմբեթավոր, կանացիակերպ-կենդանակերպ և կանացիակերպ-մարդակերպ տիպերի [7, էջեր 11-15]: Հավաքածուն ներառում է ինչպես ամբողջ հասակով ներկայացված ցուցանմուշներ, այնպես էլ կանացիակերպ անդեմ կիսանդրի հիշեցնող աղաման-արձաններ, որոնք, որպես կանոն, ժամանակագրական տեսանկյունից ավելի հին են: Աղամանները ոճական առումով ընդգրկում են տարբեր դարերի [7, էջեր 8-10] նմուշներ, բացառությամբ Մասուն-հանձիթյան դարերի:

Հավաքածուում աչքի են ընկնում հատկապես *ԳԳ4520*, *ԳԳ6621* և *ՓԹ452* հաշվառանիշերով կանացիակերպ աղամանները, որոնք ներկայացնում են կնոջ բնախոսա-

կան վիճակներից ծննդաբերությունը [7, էջ 17]: *ԳԳ4520* համարով աղամանի որովայնի ներքևում նկատելի է ընդունված՝ իգական սեռը խորհրդանշող եռանկյանը փոխարինող կլոր ուռուցիկ նշանը, ինչը և վերջինիս առանձնահատկությունն է: *ԳԳ 6621* հաշվառանիշով Մարտունիում պատրաստած կավե անդեմ աղամանը առանձնանում է թիկունքի հատվածում անվանակիր արձանագրությամբ՝ «Բաղդագուլ», իսկ *ՓԹ452* համարով, հարուստ գեղագարդմամբ կանացիակերպ աղամանը միակ թվակիր նմուշն է՝ «1889» արձանագրությամբ: «Բաղդագուլ» անունով արձանագրությունը ցույց է տալիս պատրաստողի ինքնությունը: Վերջինս կարելի է հիմնավորել երկու հիմնական փաստարկներով՝ տեխնիկական և ազգագրական: Արձանագրությունը արվել է աղամանի պատրաստման ընթացքում՝ մինչև կավի չորանալը, ինչը երևում է դրա մեջ տեղադրման տեխնիկայից: Սա վկայում է, որ արձանագրությունը անձամբ հեղինակի կողմից է կատարվել: Բացի այդ, ազգագրագետ Մերիկ Դավթյանի կողմից արձանագրված ազգագրական նութերից մեկում հստակ նկարագրված է տվյալ աղամանի պատրաստման ընթացքը: (Տե՛ս [13])

Թանգարանի հավաքածուում ավանդական տիպի աղամաններից հետաքրքիր է դիտարկել Գառնիում՝ 1900-ական թվականներին պատրաստված դիմավոր աղամանը: Ադից քայքայված ստորին կեսը ժամանակին նորոգվել է ցեմենտի շաղախով: Դեմքը մասնակի հարթ ու գոգավոր է, իսկ գլխի հետևամասը՝ ուռուցիկ: Քիթը և վզնոցը վերադիրներ են, աչքերն ու բերանը՝ դրվագված հախճապակիներ: Պարանոցի վրա քանդակված վերադիր եռանկյունու և վզնոցի կախիկների կենտրոնում կան ակնաքարերին փոխարինող դրվագված հախճապակիներ: Կինն ունի հղիության պատրանք. ձեռքերը պտղի փայփայանք են արտահայտում: Թիկունքին փոված ծամերը հավանաբար վերջավորված են ծոպերով (*ԳԳ9206*):

Ավանդական տիպի մեջ իր եզակիությամբ առանձնանում է նաև *ԳԳ2275* համարով անդեմ աղամանը: Այն ունի հետաքրքիր և իր տեսակի մեջ ուրույն ոճավորում: Աղամանը պատրաստված է բացառապես կավից, ունի խիստ արտահայտված կանացի հատկանիշներ՝ ստիկներ: Վերին հատվածում երևում են դեկորատիվ մանրամասներ, ինչպիսիք են դիմահայաց կողմից՝ մակերեսային զարդանախշերը, իսկ հետևում՝ ալիքաձև գծերը: Հետաքրքրական են աղամանի կողային հատվածում գտնվող, քիչ խորություն ունեցող երկու շրջանաձև անցքերը: Դրանք կարող են ունենալ և՛ գործնական, և՛ խորհրդանշական նշանակություն՝ կախված աղամանի օգտագործման և ստեղծման համատեքստից: Եթե դիտարկում ենք պտղաբերության խորհրդանիշերի տեսանկյունից, ապա այդ անցքերը կարող են խորհրդանշել ամորձիներ: Հնագույն մշակույթներում, երբեմն տղամարդու սեռական օրգանների կամ պտղաբերության մյուս խորհրդանիշերի պատկերումը օգտագործվում էր՝ ի ցույց դնելու սերնդարտադրության կարևորությունը [7, էջեր 15-17]: Ամորձիների՝ իբրև պտղաբերության հիմնական օրգաններից մեկի, կանացիակերպ աղամանների վրա պատկերելը կարող էր ծառայել ուժեղացնելու պտղաբերության կամ վերարտադրության խորհրդանշական գործառնությունը այդ առարկայի համար: Մեկ այլ մեկնաբանության համաձայն՝ դրանք կարող էին լինել լրացուցիչ անցքեր՝ նախատեսված կծու պղպեղ կամ այլ համեմունքներ պահելու հա-

մար: Կարելի է դիտարկել նաև հոգևոր նշանակությունը: Հնագույն մշակույթներում անցքերը երբեմն ներկայացրել են կապը կյանքի, մահվան կամ վերածննդի հետ: Անոթների կամ ֆիգուրների վրա եղած անցքերը կարող էին օգտագործվել ծիսական գործողությունների համար, ինչպես նաև խորհրդանշել մարդու կամ աստվածայինի «կապը» արտաքին աշխարհի հետ: Եվ վերջապես, հաշվի առնելով աղամանի կառուցվածքը, դրանք կարող էին լինել պարզապես դեկորատիվ տարրեր:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ԺԱԹ հավաքածուի ժողվարպետների կողմից ստեղծված կանացիակերպ աղամանները, որոնք պատրաստված են ինչպես ավանդական մոտեցումները հաշվի առնելով, այնպես էլ անձնական ստեղծագործական մոտեցումներով: Ժամանակակից աղամանները ներկայացնում են անհատական ստեղծագործական պատկերացումներ, որտեղ վարպետները, հաճախ չօգտագործելով ավանդական խորհրդանիշեր և բնորոշ հատկանիշներ, կենտրոնանում են ավելի նորարարական ձևերի և գաղափարների վրա: Այս աղամանները աչքի են ընկնում կանացի արտահայտիչ ուրվագծերով, վարպետների կողմից առանձնահատուկ ուշադրությամբ մշակված մանրամասներով և հարուստ զարդարանքով: Եթե ավանդական տարբերակում շեշտադրվում է դրա օգտապաշտական, կենցաղային, ինչպիսին է աղի պահպանումը և ծիսական գործառույթը, ապա արդի ժամանակաշրջանում դրանք առավելապես հանդես են գալիս իբրև կիրառական դեկորատիվ արվեստի նմուշներ: Ժամանակակից կանացիակերպ աղամանները տարբերվում են ավելի աբստրակտ ձևերով ու ոճային բազմազանությամբ: Դրանք հաճախ լինում են ավելի փորձարարական՝ ընդգրկելով վառ գույներ, անսովոր կամ անհամաչափ ձևեր, մինչև անգամ պատրաստված այլ նյութերից: Այդպիսիներից է, օրինակ՝ ժողվարպետ Հարություն Խաչիկյանի կողմից պատրաստված փայտից կանացիակերպ աղամանը, որի մարմնի վրա փորագրված են երկրաչափական՝ աստղանման նախշեր, իսկ վերևի հատվածում այն ունի տղամարդու կերպար (*ԳԳ4494(ա)*): Այս աղամաններում կանացի մարմնի ուրվագծերը հաճախ ոչ այնքան իրական են, որքան խորհրդանշական և ավելի շատ էսթետիկական, քան գաղափարական: Նման օրինակ է ժողվարպետ Հրանտ Բաղդազույանի աշխատանքը, որն ընդունված մեկ բացվածքի փոխարեն ունի երկուսը: Աղամանը պատրաստված է մուգ գույնի կավից (*ԳԳ5689*): Կամ մեկ այլ վարպետի՝ Սահակ Սահակյանի կողմից պատրաստված (*ԳԳ7891*) տափակ և փոված կանացիակերպ աղամանը: Չնայած դրանք երբեմն կարող են ունենալ ընդգծված տարբերություններ ավանդական կանացիակերպ աղամաններից, այնուամենայնիվ երբեմն էլ կրկնօրինակում են ավանդական մոտեցումները: Հետաքրքրական է, որ ժողվարպետների կողմից պատրաստված կավե կանացիակերպ աղամաններից շատերը ստեղծվել են Վասպուրական-ապարանյան ոճական դպրոցի մոտիվներով (*ԳԳ9727*): Մենք կարծում ենք, որ դա պայմանավորված է դպրոցին հատուկ հարուստ գեղագարդման առանձնահատկությամբ, ինչը կիրառական-դեկորատիվ արվեստում ունի կարևոր նշանակություն: Դրանց վառ օրինակներ են Արարատ Մարտիրոսյանի կողմից պատրաստված կավե աղամանները (*ԳԳ 8757, ԳԳ8754, ԳԳ8024, ԳԳ8037*):

ԳԳ1975 և ԳԳ1974 հաշվառանիշերով կին և տղամարդ պատկերող կավե աղամանները ներկայացնում են տիպական ձևավորում՝ ընդգծված մարդկային կերպարով: Առաջին

աղամանը պատրաստված է տղամարդու կերպարով՝ ընդգծված աչքեր, հոնքեր և բեղեր: Կողմերի բռնակները կարծես ձեռքերն են, որոնք արտահայտում են բնական շարժում: Վերին մասը զարդարված է գունավոր հախճապակու կտորներով (ավանդական աղամանների հարդարման բնորոշ հատկանիշերից է), իսկ գազաթն ունի հարթ մակերևույթ: Առաջին հայացքից իսկ նկատելի է, որ վարպետը փորձել է ստեղծել խորհրդանշական տղամարդու պատկեր՝ դրանով «շեղվելով» ընդհանուր օրինաչափություններից: Երկրորդ աղամանի վրա նույնատիպ մարդկային դեմքը պահպանվում է, սակայն այս անգամ շեշտը դրվում է դեմքի կանացի գծերի վրա՝ թեթևակի շտկված աչքերով և շուրթերով: Նույն ձևով՝ բռնակները ձևավորում են ձեռքերը, որոնք կարծես գրկում են մարմինը: Աղամանի դիմացի կողմում գտնվող վզնոց հիշեցնող տարրերը, ինչպես նաև գունավոր զարդարանքը կանացի հագուստի զարդարանքներ են: Վարպետն այդպիսով ստեղծել է երկու սեռը ներկայացնող աղամաններ՝ յուրահատուկ կերպով համատեղելով իր ստեղծագործական ոճը և նաև պահելով ընդունված ավանդական ձևը:

Հավաքածուում առանձնակի ուշադրության է արժանի կին խեցեգործ վարպետի՝ Անիչկա Արշակյանի կողմից պատրաստված աղամանը (*ԳԳ8122*), որի գլխի ձևը, հատկապես վրայի երկար քիթը և գլխի շուրջ խոյի եղջյուրներ հիշեցնող կորերը մեզ հնարավորություն են տալիս այն դասել կենդանակերպ-կանացիակերպ տիպին: Անիչկայի գործը հետաքրքիր է նրանով, որ, թեև նա, ինչպես շատ այլ խեցեգործներ, ստեղծել է կիրառական արվեստի նմուշ, սակայն ամբողջովին պահպանում է ավանդական ձևը:

Հավաքածուում ներկայացված կանացիակերպ աղամանների ձևավորումն ու ոճը արտացոլում են ինչպես հայ կնոջ ավանդական կերպարը՝ ազգային հագուստի ու զարդարանքի տարրերով, այնպես էլ քաղաքային կամ եվրոպական տիպի հագուստով լուծումները: Այս առումով ուշագրավ է սև կավից պատրաստված *ԳԳ8028* հաշվառանիշով կանացիակերպ աղամանը, որը պատկանում է կանացիակերպ աղամանների Շիրակյան դպրոցին և ունի նմանություններ Սպիտակի կանացիակերպ աղամաններից երկուսի հետ, որոնք նկարագրված են Կ. Բազեյանի աշխատանքում [5, էջեր 183-188]:

Աղամանների ուսումնասիրության մեջ ուշադրության է արժանի ոչ միայն դիմահայաց երեսը, այլև հետևի կողմը, որը հաճախ զարդարված է 3-7 հյուսքերով: Հյուսքերն երբեմն փոխարինվում են ալիքաձև գծերով՝ վարսերի տպավորություն թողնելու համար, իսկ որոշ դեպքերում կիրառվում է երկուսի համադրությունը (*ՓԹ452*): Հաճախ աղամանների հետնամասում կարելի է հանդիպել հայկական տարազի զարդարանքներ՝ ծամաքաղներ և ծամթելեր (*ԳԳ8022*): Ծամքաղը՝ արծաթյա երկտակ շղթա էր, որի եզրերից կախվում էին գնդիկներ, իսկ մեջտեղում՝ կապույտ ուլունք [4, էջ 75]: Հատուկ ուշադրության է արժանի ժողովարպետ Սահակ Սահակյանի աշխատանքը, որն աչքի է ընկնում միայն մեկ հյուսի լուծումով (*ԳԳ7892*): Վարպետների նորարարական լուծումները նկատելի են նաև այն դեպքում, երբ վարսերը կամ ընդգծվում են առջևի կողմից, կամ ընդհանրապես չեն ընդգծվում (*ԳԳ8029, ԳԳ8024*):

Այսպիսով՝ պատրաստման տեխնոլոգիական տարբերությունները՝ փորագրման, ճնշման կամ զարդարման մեթոդները, ցույց են տալիս, թե ինչպես են տարբեր վարպետներ մշակել իրենց յուրահատուկ ոճը՝ մինևույն ժամանակ պահպանելով ընդհա-

նուր մշակութային իմաստները: Այս բոլոր առանձնահատկությունները նպաստում են աղամանների բազմաշերտ իմաստային և գեղարվեստական վերլուծությանը, ինչը նրանց դարձնում է ոչ միայն կիրառական իրեր, այլև մշակութային ժառանգության արժեքավոր օրինակներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Կանացիակերպ աղամանները հայկական խեցեգործական մշակույթի կարևոր արտահայտություններից են: Դրանց պատմական զարգացումը ցույց է տալիս թե՛ ինչպես են նյութական մշակույթի տարրերը ենթարկվում սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական փոփոխությունների: 19-20-րդ դարերի ընթացքում արևմտահայերի գաղթի հետևանքով արհեստի ներթափանցումը Արևելյան Հայաստան՝ այն ենթարկեց մշակութային աղապտացիայի՝ վերցնելով նոր միջավայրի սոցիալական և տեխնոլոգիական առանձնահատկությունները: Տնայնագործական արհեստից վերածվելով մասնագիտացված արհեստի՝ աղամանները փոխեցին իրենց օգտապաշտական-խորհրդանշական նշանակությունը՝ հանդես գալով որպես դեկորատիվ արվեստի նմուշներ, որտեղ շեշտադրվում էր դրանց ազգային-ավանդական կողմը:

ԺԱԹ հավաքածուում ներառված աղամանները ներկայացնում են այս ժառանգության բազմազանությունը՝ ընդգծելով ավանդական և ժամանակակից վարպետների ստեղծագործական մոտեցումների տարբերությունները:

Հավաքածուն կարելի է բաժանել երկու խմբի՝ ավանդական և ժողովրդական վարպետների կողմից պատրաստված ժամանակակից տիպի աղամանների: Ավանդական օրինակները բնորոշվում են դասական ձևերով և գործառույթային լուծումներով, մինչդեռ ժողովրդական վարպետների աշխատանքներում նկատելի են նորարարական, երբեմն՝ արստրակտ մոտեցումներ, որոնք վկայում են ժառանգության վերաիմաստավորման և ստեղծագործական փորձերի մասին:

Թանգարանում հայկական կանացիակերպ աղամանները կազմում են հիմնական ցուցադրության կարևոր արտեֆակտներ՝ հնարավորություն տալով այցելուներին պատկերացում կազմել հայ ժողովրդի գեղարվեստական ընկալումների և ավանդույթների մասին: Դրանք ներկայացված են կենցաղային այլ իրերի կողքին, ինչպիսիք են գործվածքը, մետաղը և փայտը՝ վերականգնելով ավանդական բնակարանի ներքին հարդարման ամբողջական նկարագիրը՝ որպես հայ ժողովրդի մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս:

ՀԱՎԵԼՎԱԾ



ԳԳ4520



ԳԳ6621



ՓԹ452



ԳԳ9206



ԳԳ2275



ԳԳ8757



ԳԳ8754



ԳԳ8028



ԳԳ8122



ԳԳ5689



ԳԳ1975



ԳԳ1974



ԳԳ7891



ԳԳ7892



ԳԳ8022



ԳԳ9727



ԳԳ8024



ԳԳ4494(ա)



ԳԳ8029



ԳԳ 8037

Գրականություն

1. Աբրահամյան Վ. Արիեստոների Հայաստանում 4-18-րդ դարերում: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1956: 283 էջ:
2. Առաքելյան Բ. Քաղաքները և արիեստոների Հայաստանում IX-XIII դդ.: Հատոր 1: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1958: 376 էջ:
3. Առաքելյան Բ. Քաղաքները և արիեստոների Հայաստանում IX-XIII դդ.: Հատոր 2: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1964: 320 էջ:
4. Ավագյան Ն. Հայկական ժողովրդական տարազը, XIXդ.-XXդ. սկիզբ: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1983: 113 էջ:
5. Բազեյան Կ. Ծիրակի կանացիակերպ աղամանները // ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ 24: Գյումրի: 2021: 183-190 էջեր:
6. Բոդյան Վ. Հայ ազգագրություն. Համառոտ ուղիագիծ: Երևան: ԵՀ հրատ.: 1974: 288 էջ:
7. Բոդյան Վ. Հայկական աղամաններ: Անասիտ դիցուհուն խորհրդանշող կանացիակերպ աղամաններ: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1986: 164 էջ:
8. Բոդյան Վ. Չավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանավեպեր: Երևան: ԵՀ հրատ.: 2014: 752 էջ:
9. Եգանյան Լ. Անիի կանացիակերպ աղամանը // Միջազգային գիտաժողով «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15-17 նոյեմբերի 2011 «Չեկուցումների ժողովածու»: Երևան: 2012: 301-313 էջեր:
10. Լիսիցյան Ս. Չանգեզուրի հայերը: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1969: 335 էջ:

11. **Խնկիկյան Օ.** Հայաստանի հնագիտություն(Հին քարի դարից մինչև Վանի թագավորության անկումը). Ուսումնական ձեռնարկ: Երևան: «Աստղիկ» հրատ.: 2009: 242 էջ:
12. **Հալաջյան Գ.** Դերսիմի հայերի ազգագրությունը // «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ»: Հ. 5: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1973: 167-181 էջեր :
13. **Մխիթարյան Լ.** Կավագործ կինը, <https://armenianembroidery.wordpress.com> (դիտվել է՝ 02.08.2025):
14. **Նահապետյան Ռ.** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները: Երևան: ԵՀ հրատ.: 2022: 293 էջ:
15. **Սարգսյան Ե.** Խեցեգործության «Ծեփածո» տեխնիկան հայերի մեջ // «Պատմա-բանասիրական հանդես»: Հ. 2: Երևան: 1968: 203-210 էջեր :
16. **Վարդույան Գ.** Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի ընդհանուր բնութագիրը , (XIX-XXդդ.) // «Պատմա-բանասիրական հանդես»: Հ. 2: Երևան: 2004: 48-64 էջեր :
17. **Саркисян Е.** Гончарное искусство Армении. АП Арм. ССР. Ереван. 1978. 93 с..

References

1. **Abrahamyan V.** "Crafts in Armenia in the 4th-18th centuries" [*Arhestnery Hayastanum 4-18-rd darterum*], ASSR AS Publ., Yerevan, 1956, 283p.. (in Armenian)
2. **Arakelyan B.** "Cities and Crafts in Armenia in the IX-XIII centuries" [*K'aghak'neri yev arhestnery Hayastanum IX-XIII dd.*]. V.1, Yerevan, ASSR AS Publ., 1958, 376 p.. (in Armenian)
3. **Arakelyan B.** "Cities and Crafts in Armenia in the IX-XIII centuries", [*K'aghak'neri yev arhestnery Hayastanum IX-XIII dd.*]. V. 2, Yerevan, ASSR AS Publ., 1964, 320 p.. (in Armenian)
4. **Avagyan N.** "Armenian folk costume, early XIX-XX centuries" [*Haykakan zhoghovrdakan tarazy, XIXd.-XXd. skizb.*]. Yerevan, ASSR AS Publ., 1983, 113 p.(in Armenian)
5. **Bazeyan K.** The Womanlike Salt Cellars of Shirak [*Shiraki kanats'iakerp aghamannery*] // "Scientific Works" of SCAS NAS RA, Vol. 24, Gyumri, 2021, 183-190 pp.. (in Armenian)
6. **Bdoyan V.** Armenian Ethnography. A Brief Outline [*Hay azgagrut'yun. Hamarrot urvagits*]. Yerevan, YU publ., 1974, 288 p.. (in Armenian)
7. **Bdoyan V.** "Armenian Salt Cellars, Woman-shaped salt cellars symbolizing the goddess Anahit", [*Haykakan agha manner: Anahit dits'uhun khorhrdanshogh kanats'iakerp aghamanner*]. Yerevan, "Soviet writer" Publ., 1986, 164 p.. (in Armenian)
8. **Bdoyan V.** "Ethnography and Folk Art of the Armenians of Javakhk", [*Javakhk'i hayots' azgagrut'yuny yev zhoghovrdakan banarvesty*]. Yerevan, YU Publ., 2014, 752 p.. (in Armenian)
9. **Yeganyan L.** "Ani's Womanlike Salt Cellar" [*Anii kanats'iakerp aghamany*] // International Conference "Ani: Political and Civilizational Center of Medieval Armenia", Yerevan, November 15-17, 2011 "Collect Reports", Yerevan, 2012, 301-313 pp.. (in Armenian)
10. **Lisitsyan S.** "The Armenians of Zangezur" [*Zangezuri hayery*] Yerevan, ASSR AS Publ., 1969, 335p.(in Armenian)
11. **Khnikyan O.** "Archeology of Armenia. (From the Old Stone Age to the Fall of the Kingdom of Van) ", [*Hayastani hnagitut'yun. (Hink'ari darits' minch'ev Vani t'agavorut'yan ankumy)*], Study manual, Yerevan, "Asoghik" Publ.. 2009, 242 p.. (in Armenian)
12. **Halajyan G.** "The ethnography of Armenians in Dersim"[*Dersimi hayeri azgagrut'yuny*] //Armenian Ethnography and Folklore, Materials and Studies, V.5, ASSR AS Publ., Yerevan, 1973, 167-181 pp.. (in Armenian)
13. **Mkhitaryan L.** "The Potter Woman" [*Kavagorts kiny*]. <https://armenianembroidery.wordpress.com> (viewed: 02.08.2025). (in Armenian)
14. **Nahapetyan R.** "The Main Complexes of Armenian Rural Culture" [*Hayots' gyughakan mshakuyt'i himnakan hamalirnery*]. Yerevan, YU Publ., 2022, 293 p.. (in Armenian)
15. **Sargsyan E.** The ""Tsepatso" Technique of Pottery Among Armenians"[*KHets'egortsut'yan «Tsep'atso» tekhnikanhayeri mej*] // Historical-Philological Journal, V.2, Yerevan, 1968, 203-210 pp.. (in Armenian)

16. **Vardumyan D.** "General Characteristics of the Main Historical-Ethnographic Regions of Armenia (19th-20th Centuries)" [*Hayastani himnakan patmazgagrakan marzeri yndhanur bnut'agiry (XIX-XX dd.)*] // Historical-Philological Journal, V.2, Yerevan, 2004, 48-64 pp. (in Armenian)
17. **Sargsyan E.** "The Pottery art of Armenia" [*Goncharnoye iskusstvo Armenii*] ASSR ASPubl., Yerevan, 1978, 93p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **13. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **08. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Դիանա Վարուժանի ԱԲՐԱՀԱՄՅԱՆ՝ մշակութաբանության մագիստրոս,
Հովհ. Շարամբեյանի անվ. ԺԱԹ-ի գիտաշխատող-ֆոնդապահ, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ dianaabrahamyan.researcher@gmail.com // orcid.org/0009-0008-1556-6505

Diana Varuzhan ABRAHAMYAN Master's degree of Cultural Studies,
researcher-found manager, Museum of FA named after H. Sharambeyan, Yerevan, RA,
e-mail: dianaabrahamyan.researcher@gmail.com // orcid: org/0009-0008-1556-6505

1926 Թ. ԵՐԿՐԱՉԱՐԺԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ
ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Կարինե Ռ. Բազեյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. 1926 թ. երկրաշարժը մեծապես ազդեց Լենինական քաղաքի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման ու նրա նոր դիմագծի ձևավորման վրա: Հոդվածում ընդհանուր գծերով ներկայացվում են 1926-1930-ական թթ. Լենինականյան կյանքը, վերականգնման ուղղությամբ կատարվող աշխատանքներն ու դրանց ուղեկցող սոցիալական, մշակութային գործընթացները: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրությունն իրականացվել է պատմագագրական և էթնոմշակութաբանական հետազոտությունների մեթոդաբանությամբ: Որպես հիմնական մեթոդ օգտագործվել են համեմատական վերլուծության տարբեր ձևերը՝ դրանք կիրառելով համակարգային մոտեցմամբ: Լայնորեն օգտագործվել է ժամանակի պարբերական մամուլը՝ որպես հավաստի սկզբնաղբյուր տեղի ունեցած պատմամշակութային գործընթացների և վերափոխումների դինամիկան ուսումնասիրելու համար: Վերլուծություն. Հոդվածում ներկայացված են հետերկրաշարժյան գործընթացները, քաղաքացիների վերաբերմունքը աղետի նկատմամբ, կենտրոնական և տեղական իշխանությունների գործողությունները ավերածությունների վերացման ուղղությամբ, շինարարական աշխատանքների ծավալն ու դրա ազդեցությունը քաղաքային նոր կենցաղի ձևավորման, տնտեսամշակութային, հասարակական հարաբերություններում կատարվող փոփոխությունների վրա: Արդյունքներ «Բանվոր» թերթի հրապարակումների ու առկա մասնագիտական գրականության համադրմամբ վեր են հանվել 1926 թ. երկրաշարժի հետևանքների վերացման գործընթացները՝ բացահայտելով դրանց ազդեցությունը քաղաքի նոր՝ սոցիալիստական դիմագծի ու Լենինականյան մշակույթի ձևավորման վրա:

Բանալի բառեր՝ Լենինական, 1926 թ. երկրաշարժ, աղետ, վերակառուցում, շինարարություն, արդյունաբերականացում:

Ինչպես հղել՝ Բազեյան, 1926 թ. երկրաշարժը և արդյունաբերական Լենինականի կառուցումը, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1(28): 154-165 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-154

THE 1926 EARTHQUAKE AND THE CONSTRUCTION OF INDUSTRIAL LENINAKAN

Karine R. Bazeyan

Shirak Center Armenological Studies of NAS, Gyumri, RA.

Abstract

Introduction: The earthquake in 1926 had a significant impact on the development strategy of Leninakan, shaping the city's new identity. This article provides a general overview of life in Leninakan from 1926 to the 1930s, the reconstruction efforts, and the accompanying social, cultural processes. **Methods and Materials:** The study was conducted using historical-ethnographic and ethno-cultural research methodologies. Various forms of comparative analysis were applied within a systematic approach. Periodical press from that time was extensively used as a reliable primary source for studying the dynamics of historical and cultural processes and transformations. **Analysis:** The examination of materials revealed that the earthquake greatly influenced the strategic planning and redevelopment of Leninakan. The article presents the post-earthquake processes, public attitudes toward the disaster, actions taken by central and local authorities to eliminate the destruction, the scale of construction work, and its impact on the formation of a new urban lifestyle, as well as economic, cultural, and social changes. **Results:** By combining publications from the "Banvor" newspaper with existing scholarly literature, the study highlights the processes of eliminating the consequences of the 1926 earthquake and reveals their role in shaping the city's new socialist identity and Leninakan's cultural development.

Key words: *Leninakan, 1926 earthquake, disaster, reconstruction, construction, industrialization, workers' settlement.*

Citation: Bazeyan K. *The 1926 Earthquake and the Construction of Industrial Leninakan.*// "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. V. 1(28), 154-165 pp., DOI: 10.52971/18294316-2025.28.1-154

Ն Ա Ն Ա Ք Ա Ն . 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը Շիրակի բնակչության ու մասնավորապես՝ Լենինականցիների հիշողությունից դուրս մղեց 1926 թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժն ու դրա հետ կապված բազմաթիվ պատմությունները: Լենինականի մասին պատմող բոլոր գրքերում խոսվում է այս երկրաշարժի մասին՝ շեշտը դնելով քաղաքի վերակառուցման գործընթացի ու շինարարական աշխատանքների կազմակերպման վրա: Ավելի ուշ՝ 1988 թ. երկրաշարժից հետո ու դրա համատեքստում, հրատարակվել են երկու հոդված, որտեղ քննության են առնվել 1926 թ. երկրաշարժի ուսումնասիրության խնդիրներն [15] ու երկու երկրաշարժների հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքները [11]: Սույն հոդվածը նվիրված է երկրաշարժի՝ որպես սոցիալիստական-արդյունաբերական Լենինականի կառուցումը պայմանավորող գոր-

ծոնի դիտարկմանը, քանի որ այն փոխեց քաղաքաշինության նախկին հայեցակարգն ու ձևավորեց քաղաքի նոր ու ուրույն դիմագիծը:

1926թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժը տեղի է ունեցել Արաքսի վտակ Ախուրյան գետի հովտում: Էպիկենտրոնը գտնվել է Լենինականից մոտ 10 կմ դեպի հարավ՝ Բայանդուր գյուղի շրջակայքում: Հաջորդ օրերին՝ ընդհուպ մինչև Նոր տարի, զգացվել են բազմաթիվ թույլ հետցնցումներ: ՀԽՍՀ տարածքում երկրաշարժից տուժել են 44 գյուղ, որոնցից 9-ը կործանվել են ամբողջությամբ: Ջոհերի ընդհանուր թիվը կազմել է շուրջ 300 մարդ, մեծ մասը՝ Լենինականի շրջակա գյուղերի բնակիչներ: Քաղաքում քարե տները, հատկապես երկհարկանիները, մեծավասամբ վնասվել են կամ փլուզվել են, իսկ միհարկանի տները կիսով չափ են վնասվել. մնացել են կանգուն հյուսիսային և հարավային պատերը: Երկրաշարժի հետևանքով զոհվել է 13 մարդ, վիրավորվել՝ 144-ը: Վնասվել կամ մասամբ փլուզվել են քաղաքի մանկաբարձական և գինեկոլոզիական հիվանդանոցի, պետական բանկի, Տիգրանյանների տան, թիվ 25 փողոցի արհմիության վարչության շենքերը, կենտրոնական հրապարակում կառուցված կոմկուսի և գործկոմի, «Հոկտեմբեր» կինոթատրոնի շենքերը, քաղաքային գերեզմանատան առանձին հուշարձաններ [15, էջեր 171-173]:

Չնայած նրան, որ քաղաքում մեծ ավերածություններ չեն եղել, սակայն երկրաշարժի հետևանքների վերացման ու վերականգնման աշխատանքները էական ազդեցություն ունեցան Լենինականի կառուցապատման հայեցակարգի մշակման ու քաղաքի նոր դիմագծի ձևավորման վրա: Հողվածի նպատակն է հիմնական գծերով ներկայացնել այն առաջնային գործընթացները, որոնք էական նշանակություն ունեցան քաղաքի վերականգնման, կառուցապատման ու նոր մշակութային համալիրի ձևավորման գործում:

Երկրաշարժի ընկալումն ու մեկնաբանությունները լենինականցիների մեջ

Ինչպես բոլոր երկրաշարժերը, 1926թ. երկրաշարժը ևս առաջ բերեց դրա պատճառներին ու հետևանքներին վերաբերող մի շարք բացատրություններ և կարծիքներ, որոնք պայմանավորված էին այդ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային կյանքով:

Դեռ միջնադարյան պատմիչները, նկարագրելով Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերը, դրանք ներկայացնում էին իբրև Աստծո պատիժ: Միջնադարի աշխարհընկալմամբ՝ երկրաշարժը «Աստվածային բարկություն է», «Աստծո պատիժ»՝ մարդկանց մեղքերի դիմաց, «վերահաս վճիռ», իսկ օրեր, շաբաթներ, անգամ ամիսներ տևած անընդհատ ցնցումների դադարումը՝ «Աստծո ողորմածություն» [19, էջ 72]:

Այս մոտեցումը, որը բնորոշ է հավատացյալ քրիստոնյաների աշխարհընկալմանը, դրսևորվել է նաև 1926 թ. երկրաշարժը վերապրածների մեջ, ինչի մասին տեղեկություններ են պահպանվել «Բանվոր» թերթում: Չնայած այն հանգամանքին, որ մամուլում հրապարակվում էին երկրաշարժի՝ որպես բնական աղետի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ [2, էջ 2], այնուամենայնիվ, դեռ պահպանվել էին դրա քրիստոնեական հիմնավորումները: Այսպես. «Տիրացուն՝ երկրաբան» ֆելիետոնում ներկայացված է տիրացու Սիմոն բիձու բացատրությունը. «Հայր Աստվածը, երբ սկսեց ստեղծել երկինքն ու երկիրը, շինել տվեց նաև դրախորձ արդարների համար, իսկ դժոխքը՝ մեղավորների: Դժոխքը շինված էր այն հաշվով, որ բավականացնի բոլոր մեղավորների համար, մինչև

աշխարհի ահեղ դատաստանի օրը: Բայց անսխալ աստվածը իրա հաշիվներում մի քիչ սխալվել էր, նա չէր նախատեսել այն հանգամանքը, որ քանի գնում, այնքան մարդիկ «հետանում են» աստծու գծած ճանապարհից և նոր ճանապարհով են առաջ ընթանում, և որ կոմունիստներ էլ պիտի լինեին աշխարհում: Այսպիսով, քանի գնաց, այնքան մարդիկ ավելի հեռացան աստծու գծած «ուղիղ» ճանապարհից, և դժոխք գնալու թեկնածուների թիվը քանի գնաց՝ շատացավ, դժոխքը լցվեց, և նոր դժոխականներին այլևս հնարավորություն չկար ընդունելու, ուստի աստված որոշեց նոր դժոխք կառուցել գետնի տակ, և 1926 թ. հոկտեմբերի 22-ին այդ նոր դժոխքի հիմքը դրվեց: Հենց դրանից է, որ այդ օրը տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ և հիմա էլ, երբ ցնցումները շարունակվում են, դժոխքի կառուցումը դեռ չի վերջացել» [4, էջ 3]:

«Բանվորի» մեկ այլ համարում ևս անդրադարձ կա երկրաշարժի պատճառների մասին, որտեղ, բացի Աստծո բարկությունից, աղետին նաև այլ մեկնաբանություններ են տրված: Նկարագրելով Շիրակի գյուղերի բնակիչների հետ հանդիպումները՝ հոդվածի հեղինակը թվարկում է նրանց հետաքրքրող հարցերն ու արտահայտած կարծիքները երկրաշարժի մասին. «-Կսեն պրոֆեսուր պիտի գա, -Կսեն Անըվա օրին պըտի ընկնինք, -Կսեն Ալագյազն է սկսե ու պտի դուս տա, -Կսեն Երևանն էլ տակն ու վրա է եղել:

Դահառլի (այժմ Գետք) գյուղում այդ խոսակցության ժամանակ մի բիձա ասում է. -Ջանըմ դարդակ բան է, ինչքան կուզես խելոք գլուխ ունեցի, գետնի տկեն ավար ինչ պտի հասկնաս օր, հեչ մե մարդմ տեյմօր հիմի դայտին բանմ չըսավ ու չի էլ կրնա ըսե, մեր խորոզները բիրադիքեն թեզ հասկընան կը, որ ժածքը պտի եղնի, ժածքի իրիկունը առջի իրիկվորե մեր խորոզը կանչեր կը, բռնի գլուխը կտրի:

Մի քանի բախտախնդիրներ էլ երկրաշարժը վերագրում են աստծու բարկությանը» [3, էջ 2]:

Ինչպես տեսնում ենք, երկրաշարժի պատճառների ու հետևանքների անհատական և հասարակական ընկալումները մեծ մասամբ պայմանավորված են այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական մթնոլորտով, մասնավորապես՝ կրոնի դեմ պետականորեն մղվող պայքարով: Ուստի շատերը հենց անաստվածություն քարոզողներին ու Աստծու գոյությունը ժխտելն էին համարում երկրաշարժի պատճառը: Բոլոր դեպքերում աղետը ոչ միայն վախ, այլև խուճապ առաջացրեց բնակչության մեջ, որի մասին նույնիսկ երգեր հյուսվեցին:

« Ժամը օխտին ժածքը յելավ, Գյումրին ավիրավ:
 Աղաներին Բոշի սաղը նես հրավիրավ:
 Զբլախ-չբլախ (կնկթիք) դուս կը փախնին բաղնիքներիցը,
 Կիսաթրաշ դուս կը վազգեն բառբառխանիցը:
 Փախե՛ք, փախե՛ք ժածքն է գալիս գետնի տկիցը,
 Դու մի ըսե կեանքը թանգ է յամեն բանիցը:
 Մեկ էլ տեսանք մեկը թռավ պատուհանիցը,
 Լեղապատառ նա էլ փախավ կնկա ծոցիցը:
 Հլը աշե՛ք, Գորկում կայնած է բուֆետնի շկաֆը,
 Շկաֆի մեջ պագած է մեր Վանեցյանը:

Երևանից մեկ՝ մեկավ՝ զեկուցում տալու,
Կնիկը ասավ ու յեղ փախավ՝ եղ էր մազալու:
Փախե՛ք, փախե՛ք, ժածքն է զարկում գետնի տկիցը,
Դու մի ըսե կեանքը թանգ է յամեն բանիցը:»

«Հարուստները պոեզ նստան Թիֆլիս գնացին,
Քյասիբները պատերի տակ նստած մնացին:»¹

«Ժածքեն փախար, քաղքի տղա սրտիդ վախիցը,
Հըբբ միշտ կսեիր. «Չեմ վախենա հեչ մի բանիցը»:
Ախր ի՞նչըդ մարդ չը վախենա եղ յանդեր ժածքեն,
Տղամարդու պես դեմեդ չի գա, զարկե կը տկեն» [22, էջ 432]:

Հետերկրաշարժյան իրավիճակն ու առաջին օգնության կազմակերպումը

Աղետից հետո Լենինական ժամանեցին ԽՍՀՄ կուսակցական օրգանների աշխատակիցներ, ինչպես նաև ստեղծվեց Հայաստանի Հանրապետական արտակարգ հանձնաժողով: Սրան առընթեր գործում էր տեխնիկական հանձնաժողովը, որի գործունեությունը արձարծվում և լուսաբանվում էր հանրապետությունում հրատարակվող թերթերում, մասնավորապես «Բանվոր»-ում [14, էջ 52]:

Հանրապետական արտակարգ հանձնաժողովը լծվեց ավերված քաղաքի վերականգնման և վերաշինման հարցերի լուծմանը: Համաձայն Տեխնիկական հանձնաժողովի ներկայացրած զեկույցի՝ Լենինական քաղաքում երկրաշարժից տուժել էր 8800 տուն, որից ավերված էր 5517-ը, իսկ գավառի 44 գյուղերում տուժել էր 6018 տնտեսություն [11, էջ 165]: Թե՛ քաղաքին և թե՛ գավառին հասցվել էր հսկայական նյութական-տնտեսական վնաս: Եռանդուն աշխատանքներ էին ծավալել նաև Կարմիր Խաչը և ԱՄԵԲԿՈՍ-ը: Մասնավորապես, ըստ «Բանվորի» տվյալների, «Ամսի 6-ին քաղաքում բացվել է սննդատու կայան օրական 2000 ճաշ տալու անխնամ երեխաներին և կաթ տալու խոհանոց՝ 1000 մանուկի համար: Ամսի 7-ին 950 անապաստան երեխայի ուղարկելու է Դիլիջանի սանատորիաներ մինչև մայիս» [1, էջ 2]: Այն բնակելի շրջանները, որոնք դուրս էին մնացել այդ օգնության ցուցակներից, կառավարության որոշմամբ օգնություն էին ստանում պետական միջոցներից: Արտակարգ հանձնաժողովի որոշումներով՝ վնասված տների վերակառուցման համար բնակիչներին վարկ էր հատկացվում, իսկ անտունների համար շտապ կարգով գետնափոր տնակներ էին կառուցում: Արագ տեմպերով վերականգնվում էին նաև վնասված գործարանները, որոնք շտապ կարգով վերսկսում էին իրենց աշխատանքները [1, էջ 2]:

Վերականգնման, բնակիչների տարահանման, նրանց ունեցվածքի անձեռնմխելիության ապահովման ու առաջին օգնության գործում անգնահատելի էր տեղի բերդապահ զորքի և կարմիր բանակայինների ներդրումը: Վերջիններիս զինվորները անձնական արիության շնորհիվ թույլ չտվեցին, որ քաղաքը թալանեն, բժշկական անձնակազմը ցույց տվեց առաջին օգնությունը վիրավորներին, զինվորական խոհանոցները ուտելիքով էին ապահովում կարիքավորներին, իսկ հասարակ զինվորները պահակություն

¹ Այս երկտողը, որը բացակայում է վերևի տեքստից, հիշել է Գ. Աղանյանը: Այն երգում էին լենինականցիները, մասնավորապես՝ քաղաքային երգի կատարող Ա. Գյունաշյանը:

Էին անում բնակչության տներում՝ ապահովելով ունեցվածքը, օգնում փլատակներից հանելու վիրավորներին, ոգևորում էին ծանր վիճակում գտնվող բնակչությանը՝ կասեցնելով խուճապը [2, էջեր 1,2]:

Խուճապի մանրամասն նկարագրությունը, որի ժողովրդական մեկնաբանությունը ներկայացվեց վերը, հետերկրաշարժյան տարբեր պատմությունների թվում, ևս տրված է «Բանվորում»։ «Երկրաշարժի հետևանքով Լենինականից փախչում էին քաղաքացիք: Գնում էին հարուստները, և այդ հարուստների հետևից գնում էին քյասիբները. թե ու՞ր էին գնում այդ քյասիբները, իրենք էլ չգիտեին: Երկրաշարժից սարսափած հեռացողները իրենց տնային իրերը հանձնում էին պահելու քաղաքում մնացող ազգականներին կամ դրացիներին, իսկ շատերը իրանց ունեցած տնային կարասիքը բազար էին հանում և ծախում շատ էժան գներով, որից օգտվողները ճարպիկ «խորամանկ» առևտրականներն էին, որ «ականջի գնով» գնում էին փախչողների տնային իրերը և ապա ծախում մեկին տասը անգամ ավել գնով: Այսպես փախեփախը շարունակվեց մեկ ու կես ամիս: Գնացողները տեղափոխվեցին Թիֆլիս, Բագու, Հյուսիսային Կովկաս՝ մինչև Ռոստով: Գրում էին իրենց բարեկամներին, որ իրանց օգնում են, ստանում են նպաստ, բնակարան, մի խոսքով շատ գոհ են իրանց դրությունից:

Իհարկե այդ բանը երկար շարունակվել չէր կարող, նրանցից շատերը վերադառնալով տեսնում են, որ կառավարության կողմից շինված են բարակներ, ուր տեղավորված են բոլոր բնակազուրկները և պաշտպանված ձմեռվա դառնաշունչ ցրտերից, մի մասն էլ ապրում է կառավարության օգնությամբ իրենց շինած բարակներում, հիմա էլ պատրաստ են վերաշինելու իրենց ավեր տները կառավարության աջակցությամբ ու երնեկ են տալիս մնացողներին: Գնացողները զոջացած են – բայց արդեն ուշ է: Խեղճերը խաբվել էին, հավատացել էին սուտ մարգարեներին, Ափեմերդիին, թե քաղաքը կկործանվի, ջրով կծածկվի, հարկավոր է ջրհեղեղից փրկվել» [6, էջ 3]:

Վերականգնման աշխատանքների կազմակերպումը

1927 թ. փետրվարի 22-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհը հատուկ նիստ գումարեց, որտեղ քննարկվեց Լենինականի վերականգնման, ինչպես նաև Լենինականի գավառի բնակիչներին ցույց տրվելիք օգնության հարցերը: Նիստում ընդունվեցին քաղաքի վերականգնմանն ուղղված կոնկրետ քայլերի ու միջոցառումների ծրագրեր: Ծրագրերն իրագործելու համար կազմվեց քաղաքի վերակառուցման ու ընդարձակման նախագիծ [14, 55]: Երկրաշարժից անմիջապես հետո պաշտոնապես հայտարարվեց, որ «Հին մեշչանական Ալեքսյովի փլատակների միջից պիտի ստեղծվի ուժեղ, արդյունաբերական Լենինականը: Ահա օրվա նշանախոսը: Մի միտք միայն կարող է մեզ զբաղեցնել: Չկորցնելով ոչ մի րոպե, որն անհրաժեշտ է Լենինականի վերաստեղծման համար, չկորցնել ոչ մի կոպեկ, որը կարևոր է վերաշինման գործում: Չկորցնել պաղարյունությունը և տանել պլանումեր, ծրագրված աշխատանք, համատեղ և աննկուն» [1, էջ 1]:

Ծրագրավորված վերակառուցողական աշխատանքների ու տեղական արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և հետագա զարգացման խնդրի հետ կապված բոլոր հարցերը բազմակողմանի ուսումնասիրելու համար կազմվեց հանձնաժողով

(նախագահ՝ Հ.Մինասյան, անդամներ՝ Ս.Ստեփանյան, Դ.Զիսլին, Ս. Ալմազյան և Ա. Համբարձումյան), որը պետք է աշխատեր մինչև ապրիլի 15-ը [11, էջ 166]:

Հանրապետությունում հայտարարվեց հակասեյսմիկ կառույցների իրականացման համար նախագծերի, կոնստրուկցիաների և հաշվարկների մրցույթ: Շինարարական կոնստրուկցիաների կատարելագործման, բետոնի և երկաթբետոնի կիրառման շնորհիվ հնարավոր դարձավ կառուցել երկու հարկը գերազանցող տներ: Այդ տարիներին Հայաստանի գիտնականներն սկսեցին մշակել տուֆի կիրառման հնարավորությունները՝ պատերի շարքի, հատակների սալերի և նույնիսկ միջնորմների համար [18, էջ 23]: 1927 թ. Անդրֆեդերացիայի ժողոտսխորհրդի նախագահի տեղակալ Մարգիս Լուկաշինի (Մրապիտոնյան) շնորհիվ Զիսլինին հանձնարարվեց նախագծել և Արթիկի տուֆից կառուցել միահարկ փորձնական-ցուցադրական տուն, որն իրականացվեց նույն տարում Լենինականում: Դա XX դարում Արթիկի տուֆից կառուցված առաջին տունն էր Հայաստանում [16, էջ 55]:

Ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև նոր քաղաքաշինական դոկտրինան՝ քաղաքի զարգացման ժամանակակից և իրատեսական առաջարկություններով: Այդ մասին «Բանվորը» գրում է. «Մշակված շինարարական լայն ծրագիրը, որ հաստատված է կենտրոնական օրգանների կողմից, հնարավորություն է տալու մեր աշխատավորությանը հին Ալեքսանդրապոլի ավերակների վրա կառուցել նոր Լենինականը» [7, էջ 2]: «Այսօր, երբ հին Գյումրիի ավերակների վրա կառուցվում է նոր Լենինականը, առաջին հերթին պետք է մտածել ջրմուղի և կոյուղու շտապ կառուցման մասին, որովհետև առանց դրան Լենինականը չի լինի քաղաք, այլ կմնա սոսկ մի մեծ գյուղ» [7, էջ 2]:

Դեռ 1922 թ. քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ սկսվել էր Լենինականի փողոցների կարգավորումը, որ իրականացվում էր Ալ. Թամանյանի էսքիզային նախագծով, որը, ցավոք չի պահպանվել: 1923 թ. քաղաքի շուկայամերձ արհեստավորական շարքերի մի մասը քանդվեց, ու ստեղծվեց քաղաքի կենտրոնական հրապարակը [20, էջ 205]: 1926-1930 թթ., Լենինականի գլխավոր ճարտարապետ Դ.Զիսլինի (Զիսլյան) կազմած նոր հատակագծով, կառուցվեցին Մայիսյան ապստամբության (այժմ Վարդանանց), Լենինի (այժմ Խաղաղության օդակ) և կայարանամերձ հրապարակները՝ իրենց հարակից փողոցներով ու սեյսմակայուն տիպային երկհարկանի շենքերով («Զիսլինի տներ») [12, էջ 51]:

1930-ական թթ. պետական ճարտարապետական N3 արվեստանոցը ճարտարապետ Ս. Մազմանյանի ղեկավարությամբ կազմեց Լենինականի նոր հատակագիծը, և քաղաքի կառուցապատումը մինչև 1940-ական թթ. կատարվում էր այդ նախագծին համապատասխան: Հատակագծի գլխավոր գաղափարը խոշորացված բնակելի թաղամասերի ստեղծումն էր: Նախագծի համաձայն՝ վերջնական փուլում ենթադրվում էր կառուցել մինչև 200 000 բնակչությամբ քաղաք: Այն կազմելու պահին քաղաքի կենտրոնը, ինչպես նշվեց, հիմնականում արդեն ձևավորված էր:

1926 թ. երկրաշարժից հետո սուր դրված էր նոր պահանջներին համապատասխանող բնակելի տների կառուցման հարցը: Նպատակ էր դրված մշակել ոչ միայն սեյսմակայուն, այլև ճարտարապետական նոր հորինվածք ունեցող շենքեր: Եթե 1920-ական

թթ սկզբներին կառուցվում էին 1-2 բնակարանոց միահարկ բնակելի տներ, ապա նույն տասնամյակի վերջին նախագծվեցին նոր՝ բազմաբնակարան, երկու և ավելի հարկ ունեցող քաղաքային տիպի բնակելի տներ: Այս կարգի առաջին տները Լենինականում կառուցվեցին ճարտարապետ Չիլևի նախագծով: Բաց աստիճանավանդակներով, սլաքաձև պատուհաններով երկհարկանի այդ տները մեծ հաջողությամբ ներգրավվեցին Ալեքսանդրապոլի պատմական միջավայր:

Բնակարանաշինությունը Լենինականում բոլորովին նոր մակարդակի հասավ տեքստիլագործների համար կառուցված բնակելի տների շնորհիվ: Խոշոր, ուղղանկյուն թաղամասերի պարագծով կառուցված եռահարկ բնակելիները, որպես նոր՝ բազմաբնակարանոց տան տիպ, զարմանալի ներդաշնակություն ստեղծեցին քաղաքի ավանդական ճարտարապետական ոճի հետ [18, էջ 24]:

Լայնածավալ շինարարությունը զուգընթաց՝ իրականացվում էին նաև փողոցների սալահատակման և մայթերի բարենորոգման աշխատանքներ, որ սկսվել էին դեռ 1929 թ.-ից: Կարևոր նշանակություն էր տրվում քաղաքի կանաչապատմանն ու այգիների, պուրակների ու զբոսավայրերի ստեղծմանը [13, էջ 23]:

Լենինականի զարգացման համար կարևոր նշանակություն ուներ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը: Մասնավորապես 1930 թ. շահագործման հանձնվեցին Մանվածքային և Գործվածքային ֆաբրիկաները, 1934 թ.՝ Մսի-պահածոների կոմբինատը, 1936 թ.-ին ավարտվեց հացի գործարանի կառուցումը: Այս ամենի հետ մեկտեղ վերականգնվեցին ու նորացվեցին երկաթգիծը և կայարանը, շահագործման հանձնվեց քաղաքը խմելու ջրով ապահովող նոր ջրագիծը: Հիմնվեցին նոր թաղամասեր՝ Տեքստիլ կոմբինատի, Երկաթգծի և Մսի-կոմբինատի բանավանդակները, որոնցում սկզբնական շրջանում կառուցվեցին փայտե կամ քարե ժամանակավոր շենքեր (բնակչության շրջանում սրանք առավել հայտնի էին «բարաքներ» անվամբ), որոնցում հիմնականում բնակեցվեցին Բանֆակերի ու Ֆաբրիկա-գործարանային ուսումնարանների /ՖԳՈԻ/ (լենինականցիների շրջանում առավել գործածական էր ռուսերեն ՓՅՄ-անվանումը) շրջանավարտները: Բանավանդակների բնակչության մեծ մասը Լենինականի որբանոցների սաներն ու գավառի տարբեր գյուղերից քաղաք տեղափոխված աշխատուժն էր: Յուրաքանչյուր բանավանդակում իր կենցաղի տունը, բուժկետը, սկումբը, բաղնիքը և այլն:

1926 թ. երկրաշարժից հետո սկսեց կառուցապատվել քաղաքի հատկապես հյուսիսային հատվածը: Ինդուստրիալ կառույցները հիմնականում տեղակայվեցին քաղաքի առանձին հատվածում՝ տեղ-տեղ մոտենալով կենտրոնին, տեղ-տեղ հայտնվելով արվարձանում՝ ստեղծելով եռաշերտ հորիզոնական պատկեր. վարչական-մշակութային կենտրոն (երկու հրապարակները. մեկը՝ գաղափարախոսական. Լենինի անվան, ուր կանգնած էր նրա արձանը (այժմյան Խաղաղության օղակ), մյուսը՝ ադմինիստրատիվ-մշակութային. Մայիսյան ապստամբության՝ քաղխորհրդի շենքով, կինոթատրոնով և հյուրանոցով), որը շրջապատվում է բնակելի թաղամասերով, իսկ քաղաքի երրորդ շերտում՝ հաճախ ծայրամասերը, զբաղեցնում են արդյունաբերական արտադրամասերը [21, էջ 101]:

Խորհրդային քաղաքի ուրբանիստական նոր խոսքն էր գաղափարախոսական հրապարակի պարտադրանքը: Մինչ այդ քաղաքի հրապարակները ձևավորվել են առևտրական շարքերի շուրջ: Այստեղ էլ հայտնվում են նաև իրենց ժամանակի գաղափարախոսական կենտրոն եկեղեցիները: Խորհրդային հրապարակն ուներ լրիվ այլ գործառույթ: Եթե քրիստոնեական ծիսակարգը հիմնականում ընթանում էր շենքի ներսում, ապա խորհրդայինը՝ ի դեմս մեծ ժողովրդական տոնահանդեսների ու շքերթների, պահանջում էր ընդարձակ հրապարակներ [21, էջ 103]:

Այս առումով հարկ է նշել, որ երկրաշարժը որպես պատրվակ օգտագործվեց հունական ուղղափառ և մասամբ Հայ կաթողիկե եկեղեցիները քանդելու համար՝ դրանք համարելով խարխլված, վնասված: Մինչ այդ որոշումն ընդունելը «Բանվոր»-ում լայնածավալ հակակեղեցական ու հակակրոնական ագիտացիա սկսվեց: Թերթի մի քանի համարներում տպագրվեցին տարբեր ձեռնարկությունների Բանվորների ու Բանվորուհիների անունից կոչ-դիմումներ՝ ուղղված քաղաքի ղեկավարությանը և Բնակչությանը: «Պրոլետարական Լենինականի պլանավորմանը, Բնակարանային-կուլտուրական շինարարությանը խանգարող անպետք, դատարկ մնացած ու կիսախարխուլ եկեղեցիները պիտի քանդել և նրանց տեղը կառուցել գործարաններ ու կուլտուրայի տներ» ընդհանուր վերնագրի տակ հրապարակված հոդվածներից մեկում գրված է. «Այդ եկեղեցիները խանգարում են պրոլետարական Լենինականի հետագա զարգացումը: Մենք կառուցում ենք սոցիալիստական քաղաք-Լենինական: Անպետք և խարխլված եկեղեցիները, դատարկ մնացած, ժանգոտած, հնացած, տերտերների առևտրի համար ծառայող այդ որջերը պիտի մեջտեղից վերանան» [10]: Բանվորական կուլեկտիվների ժողովներում որոշումներ էին ընդունվում դիմել համապատասխան կազմակերպություններին՝ որոշ եկեղեցիներ քանդելու առաջարկությամբ: Մասնավորապես ասվում էր. «Ժողովը պահանջում է քաղխորհրդից այսպես կոչված *Սուրբ նշան* եկեղեցու տեղը կառուցել դպրոցի շենք, իջեցնել հունաց եկեղեցու գմբեթը և այն հատկացնել կարի գործարանին, իսկ փրկչի եկեղեցին վերածել շրջանային գավառագիտական թանգարանի» [9]:

Բարեբախտաբար հայկական առաքելական եկեղեցիները չքանդվեցին, քանի որ որոշվեց դրանք դարձնել թանգարաններ՝ Սբ Ամենափրկիչ եկեղեցում տեղակայվեց 1930 թ. ստեղծված Շիրակի երկրագիտական թանգարանը (ավելի ուշ՝ Ֆիլիարմոնիան), Սբ Նշանում՝ Պլանետարիումը [17, էջեր 451, 476]:

Քաղաքի նոր՝ խորհրդային դիմագիծը ձևավորվեց երկրաշարժից արդեն չորս տարի անց: 1930 թ. հոկտեմբերի 26-ի «Բանվոր» թերթի մի ամբողջ էջում տպագրված «Լենինականի պրոլետարիատը վերակառուցեց քաղաքը, նոր տեսք տվեց նրան» ընդհանուր վերնագրի տակ ներկայացված են վերոշարադրյալ բոլոր փոփոխությունները: «Քաղաքի հյուսիսում» հոդվածում նկարագրված է տեքստիլագործների թաղամասը. «Այս 4 տարիների ընթացքում հատկապես խոշոր շինարարություն է ծավալվել քաղաքի հյուսիսային մասում – տեքստիլի քաղաքամասում: ...Տեքստիլի Բանվորության մի մասն էլ Բնակվում է ընկ. Սևոյանի անվան այգու շուրջը գտնվող շենքերում: Այս շենքերը երկրաշարժի անմիջական արդյունքն են, ծանրանիստ, խոժոռադեմ, եկեղեցական ոճի դրոշմով: Այս շենքերից մի փոքր այն կողմ-դեպի կայարանը, նախագծվում է մի նոր

և լայն փողոց, որի երկու կողմում կառուցված են երկրաշարժի բազմաթիվ շենքեր, որոնք հար և նման են ընկ. Սևոյանի անվան այգու շուրջը գտնվող շենքերին:» Այնուհետև ներկայացված է «Երկաթուղու քաղաքամասը»՝ երկաթուղայինների սպիտակ, միահարկ տներով: Մյուս հողվածում քաղաքի միջին մասում գտնվող «Նոր բուլվար» փողոցի, նրան կից Մայիսյան ապստամբության հրապարակի ու այդտեղ կառուցված հյուրանոցի ու կառուցվելիք աշխատանքի պալատի նկարագրությունն է: Հիմնական միտքը սա է. «Վերականգնումը համեմատաբար հեշտ էր: Այն, ինչ հին էր, խարխուլ, Գյումրիական, այն, ինչ կործանվեց հիմքից, կարիք էլ չկար վերականգնելու: Գյումրիականը դատապարտված էր մահվան, երկրաշարժը միայն արագացրեց նրա մահը» [8]:

ԵԶՐԱՆՆԱԿՈՒՄ. 1926 թ. երկրաշարժը դարձավ այն կարևոր գործոններից մեկը, ինչը պայմանավորեց Լենինականի նոր քաղաքաշինական դոկտրինան՝ քաղաքի զարգացման ժամանակակից և իրատեսական առաջարկություններով: Դրա հիմնական գաղափարն էր Ալեքսանդրապոլի՝ որպես «արհեստավորների քաղաքի» ջնջումն ու նոր՝ բանվորական և հեղափոխական Լենինականի ստեղծումը:

Լենինականի՝ որպես զարգացող արդյունաբերական ու նոր «բանվորական» մշակույթ կրող քաղաքի, վերածվելու համար կարևորվեց տնտեսական գործոնը: Ըստ այդմ էլ նորակառույց թաղամասերը ստացան համապատասխան ֆարքիկանների կամ գործարանների անունները՝ ձևավորելով լոկալ ենթամշակույթներ:

1926-1940թթ. ընթացքում քաղաքի վերականգման համար պետության կողմից ներդրվեցին հսկայական գումարներ, որոնց շնորհիվ քաղաքը ոչ միայն վերականգնվեց, այլև ամբողջովին նորացվեց, ընդարձակվեց ու ձևափոխվեց: Լենինականը մեկ ու կես տասնամյակի ընթացքում ավանդական արհեստավորա-առևտրական քաղաքից աստիճանաբար վերածվեց ՀԽՍՀ մասշտաբներով խոշոր արդյունաբերական կենտրոնի:

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. «Բանվոր», 1926 թ. № 448:
2. «Բանվոր», 1926 թ., № 449:
3. «Բանվոր», 1926 թ., № 453:
4. «Բանվոր», 1926 թ., № 456:
5. «Բանվոր», 1927 թ. № 7:
6. «Բանվոր», 1927 թ., № 29:
7. «Բանվոր», 1927թ., № 85:
8. «Բանվոր», 1930 թ. № 244,:
9. «Բանվոր», 1932 թ. № 55:
10. «Բանվոր», 1932 թ., № 59:
11. Աղանյան Թ. 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժերի համեմատական վերլուծության փորձ, // ՀՀ ԳԱԱ ԾՀՀԿ «Գիտական աշխատություններ», №19: 2016: 164-172 էջեր:
12. Գաբրիելյան Հ. Լենինական: Երևան, «Հայաստան» հրատ.: 1984: 129 էջ:
13. Գևորգյան Ա. Լենինականը խորհրդայնացման 15 տարում: Լենինական, 1935, 32 էջ:
14. Կոզմոյան Կ. Լենինական, Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1957, 180 էջ:
15. Կրբեկյան Կ., Մելիք-Աղանյան Հ. Պրոֆեսոր Պ.Ի.Լեբեդևի ավանդը 1926 թ. Լենինականի երկրաշարժի ուսումնասիրության գործում (ծննդյան 135-ամյակի կապակցությամբ), ԾՀՀԿ Գիտական աշխատություններ, Հ. 3(24): 2021 թ.: 170-176 էջեր:

16. Մելիք-Աղամյան Հ., Խաչատրյան Հ. Ճարտարապետ Դավիթ Չիսլյանի (Չիսլիեյ) ավանդը արթիկ-տուֆի օգտագործման եւ հանրահռչակման մեջ // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2019, 55 էջ:
17. Մելիք-Սարգսյան Ա. Շիրակի պատմամշակութային հուշարձանները, Երևան: 2023: «Առլաժ» հրատ.: 516 էջ:
18. Միրզոյան Ա. Ալեքսանդրապոլ-Լենինական. Քաղաքաշինական դիմագիծ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, Հ.11, 2008, 17-26 էջեր:
19. Սաֆարյան Լ., Փիրուզյան Ս. Սպիտակի երկրաշարժի պատճառահետևանքային ընկալումները Հայաստանում // Լրաբեր հասարակական գիտությունների, N: 2002 թ.: 66-77 էջեր:
20. Սեդրոյան Կ. Արհեստավորական ավանդույթները լենինականցիների կենցաղում // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հատոր 6: ՀՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 197: 159-252 էջեր:
21. Շագոյան Գ. «Իմ Հայաստան» ծրագրի «Մշակութային պրակտիկաների» ուսումնասիրության երկրորդ փուլի հաշվետվություն: Գյումրի, 2018, 137 էջ:
https://www.academia.edu/126164248/email_work_card=title
22. Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը: Երևան: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024, 640 էջ:

References

- 1 - 10 “Banvor”(“Worker”) Daily newspaper, 1926, № 448; 2.1926 № 449; 3.1926 № 453; 4.1926 № 5; 5.1927 № 7-6; 6.1927 № 29; 7.1927 № 85; 8.1930 № 244; 9.1932 № 55; 10.1932, № 59 (in Armenien)
11. **Aghanyan T.** An Attempt at a Comparative Analysis of the 1926 Leninakan and 1988 Spitak Earthquakes, [1926 t'. Leninakani yev 1988 t'. Spitaki yerkrasharzheri hamematakan verlutsut'yan p'vordz] // “Scientifik works” of SCAS NAS RA, Gyumri, V. 19, 2016, 164-172 pp..(in Armenien)
12. **Gabrielyan H.** Leninakan [Leninakan] Yerevan, “Hayastan” pub., 1984, 129 p.(in Armenien)
13. **Gevorgyan A.** Leninakan in 15 Years of Sovietization, [Leninakany khorhrdaynats'man 15 tarum] Leninakan, 1935, 32 p.(in Armenien)
14. **Kozmoyan K.** Leninakan, [Leninakan] Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1957, 180 p.(in Armenien)
15. **Krbekyan K., Melik-Adamyanyan H.** Professor P. I. Lebedev's Contribution to the Study of the 1926 Leninakan Earthquake (On the Occasion of His 135th Birth Anniversary), [Profesor P.Lebedevi avandy 1926 t'. Leninakani yerkrasharzhi usumnasirut'yan gortsum (tsnndyan 135-amyaki kapaks'ut'yamb)]// “Scientifik works” of SCAS NAS RA, Gyumri, N 24 (3), 2021, 170-176 pp..(in Armenien)
16. **Melik-Adamyanyan H., Khachatryan H.** Architect Davit Chislyan's (Chisliyevev) Contribution to the Use and Popularization of Artiktuf, [Chartarapet Davit' Ch'islyani (Ch'isliyevev) avandy art'iktufi ogtagortsman yev hanrahrrch'akman mej] // “Cultural Heritage of Shirak: Current Issues in Armenian Studies”, 10th International Conference Proceedings, Gyumri, 2019, 55p.(in Armenien)
17. **Melik-Sargsyan A.** Historical and Cultural Monuments of Shirak, [Shiraki patmamshakut'ayin hushardzannery] Yerevan, “Collage” Pub., 2023, 516 p.(in Armenien)
18. **Mirzoyan A.** Alexandropol-Leninakan: Urban Development Profile, [Alek'sandrapol-Leninakan. K'aghak'ashinakan dimagits]“Scientifik works” of SCAS NAS RA, Gymri, 11, 2008, 17-26 pp.. (in Armenien)
19. **Safaryan L., Piruzyan S.** Causal Perceptions of the Spitak Earthquake in Armenia, [Spitaki yerkrasherzhi patcharrahetevank'ayin ynkalumneri Hayastanum] Bulletin of Social Sciences, N 1, 2002, 66-77 pp. (in Armenien)
20. **Seghbosyan K.** Craft Traditions in the Daily Life of Leninakan Residents, [Arhestavorakan avandy'neri leninakants'ineri kents'aghum] “Armenian Ethnography and Folklore”, Vol. 6, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, Yerevan, 1974, 159-252 pp..(in Armenien)

21. **Shagoyan G.** Report on the Second Phase of the Study of “Cultural Practices” within the “My Armenia” Program, [*“Im Hayastan” tsragri “Mshakut’ayin praktikaneri” usumnasirut’yan yerkrord p’uli hashvetut’yun*] https://www.academia.edu/126164248/email_work_card. Gyumri, 2018, 137 p..(in Armenien)
22. Shirak: Armenian Folklore Culture, [*Shirak. Hayots’ banahyusakan mshakuyt’y*], Yerevan, Institute of Archaeology and Ethnography of NAS RA, 2024, 640 p..(in Armenien)

Ընդունվել է / Received on: **20. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **04. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե Ռազմիկի ԲԱԶԵՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ bazeyan60@yandex.ru orcid org//0000-0002-5202-4835

Karine Razmik BAZEYAN: PhD in History, Docent
Senior Researcher at Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA,
e-mail:bazeyan60@yandex.ru orcid org//0000-0002-5202-4835

ՀԱՅՈՑ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՐԾԱԹՅԱ ՀԱՄԱԼԻՐ
ՄՊԱՍՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՊԹ՝ 6144/1-3)

Կարեն Ս. Ասատրյան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հաղորդումն անդրադառնում է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի (այսուհետ՝ Հայոց ազգագրության թանգարան, ՀԱԹ) «ԹՍ» (Թանկարժեք մետաղ) ֆոնդում պահպանվող 19-20-րդ դդ. կետերով թվագրվող պարսկական կենցաղային առարկաների համալիրին՝ կազմված հետևյալ առարկաներից՝ սափոր, զույգ բաժակներ, սկուտեղ: Ուսումնասիրությունը նպատակ ունի մշակութաբանական վերլուծության ենթարկել համալիրը և ուսումնասիրող հանրությանը ներկայացնել այն՝ միաժամանակ վեր հանելով համալիրի թանգարանային նշանակությունը: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում օգտագործվել է համեմատական վերլուծության մեթոդը՝ համալիրի պատկերագրությունը և գեղագրական եղանակները գուգորդելով վաղ ժամանակաշրջանում պատրաստված պարսկական կենցաղային առարկաների հետ: Քննության են առնվել առարկաների պատրաստման տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները, փորձելով գործնականում ստանալ գեղագրական նույնատիպ տարրեր՝ ՀԱԹ-ի «ԱԿ»-2 ֆոնդում պահվող աշխատանքային գործիքների հավաքածուում առկա դրվագող գործիքներով: *Վերլուծություն* Չարդանախշերի վերլուծությունը կատարված է կրոնական փիլիսոփայության տեսանկյունից և հիմքում ունի պարսիկ ժողովրդի կրոնական ընկալումները և այդ ընկալումների գուգորդումները՝ արտացոլված պոեզիայում, դեկորատիվ-կիրառական արվեստի այլ առարկաների վրա: *Արդյունքները.* Պատկերագրության վերլուծությունը, տեխնիկա-տեխնոլոգիական առանձ-

* Մինչ այժմ հավաքածուն չի ուսումնասիրվել մշակութաբանական և թանգարանագիտական տեսանկյուններից:

նահատկությունները, սկուտեղի վրա առկա պարսկերեն հարգադրոշմը՝ «ԸԿ» - «84» և պատրաստող վարպետի դրոշմը՝ «جبر کيارودی» - «Ջաբար Բիառուդի», ցույց են տալիս, որ առարկաները պարսիկ վարպետների ձեռքի աշխատանք են: Առարկաները կրում են դարերի ընթացքում ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված պարսկական մետաղամշակության լավագույն ավանդույթները և ներկայացնում են ժամանակի վարպետների հմտություններն ու այն գործածող ժողովրդի գեղագիտական ճաշակը:

Բանալի բառեր՝ մետաղամշակություն, պարսկական մշակույթ, Ղալամ զանի, կենդանապատկեր, «Վարդ և բլբուլ», Կանսեի ճարտարագիտություն, փորագրագրություն:

Ինչպես հղել՝ Ասատրյան Կ. Հայոց ազգագրության թանգարանի արձայնա համալիր սպասքի բնութագիրը (ՀԱՊԹ՝ 6144/1-3): // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Ն. 1(28): 166-176 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-166

DESCRIPTION OF THE SILVER TABLEWARE SET OF THE MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY (SMAE 6144/1-3)

Karen S. Asatryan

Memorial Complex of Sardarapat Battle,
National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, RA

Abstract

Introduction: The paper examines the set of Persian household items dated from the mid. of the 19th to the mid. of the 20th centuries owned in the collection of the Sardarapat Battle Memorial, National Museum of Armenian Ethnography and History of the National Liberation Struggle (hereinafter - the Museum of Armenian Ethnography, MAE). The set consists of a pitcher, a pair of cups, and a tray. The study aims to examine and analyze the set from the culturological point of view and present it to the research community while simultaneously highlighting its museum significance*. **Methods and Materials:** The study uses the method of comparative analysis paralleling the decoration and decorative techniques of the set with Persian household items from earlier periods. The technical and technological characteristics of the objects were examined, attempting to recreate identical decorative elements using engraving tools from the “EL”-2 collection of the MAE. **Analysis:** The analysis of the decorations was done from the point of view of Persian religious philosophy based on the religious perceptions of the Persian people and their reflection in poetry and on other objects of decorative-applied arts. **Results:** The analysis of decorations, technical and technological features, as well as the Persian stamp “ԸԿ” (84) and the maker’s mark “جبر کيارودی” (Jabar Kiaroudi) on the tray, indicate that the objects are handiworks of Persian masters. The objects embody the finest traditions of the Persian metalwork, developed over centuries and passed through generations, showing the skills of the artisans and the aesthetic taste of the people who used them.

Key words: metalworking, Persian culture, Ghalamzani, zoomorphic ornament, "The Rose and the Nightingale", Kansei engineering, ornamental engraving.

Citation: Asatryan K. *Description of the Silver Tableware Set of the Museum of Armenian Ethnography (SMAE 6144/1-3)*. // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2025. V. 1(28). 166-176 pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-166

ՆԱԽԱԲԱՆ. Հայոց ազգագրության թանգարանում (այսուհետ՝ ՀԱԹ) պահպանվում է 19-20-րդ դդ. կեսերով թվագրվող պարսկական կենցաղային առարկաների համալիր (ՀԱՊԹ՝ 6144/1, 6144/2ա, 6144/2բ, 6144/3)՝ կազմված հետևյալ առարկաներից՝ սավոր, բաժակներ, սկուտեղ:

Հոդվածը նպատակ ունի մշակութաբանական վերլուծության ենթարկել համալիրը՝ գիտական լայն հանրությանը ներկայացնելով այն: Համալիրի մաս կազմող թանգարանային առարկաներն ունեն հարուստ հարդարանք, ձեռք են բերվել մեկ անձից և թանգարանի հավաքածուում դիտարկվում են որպես մեկ ամբողջական համալիր: Մինչ այժմ հավաքածուն չի լուսաբանվել և չի ուսումնասիրվել մշակութաբանական և թանգարանագիտական տեսանկյուններից:

Պատմա-ազգագրական համառոտ ակնարկ

Մետաղամշակությունը, որպես արհեստագործության կարևորագույն ճյուղ, Պարսկաստանում (Իրանում) զարգացում է ապրել դեռևս վաղ ժամանակներից՝ դառնալով երկրի մշակութային զարգացման անկապտելի մաս: Դրա զարգացմանը կարելի է հետևել պատմական ժամանակաշրջանների ընթացքում, որոնք թե՛ գեղարվեստական, թե՛ տեխնոլոգիական առումով ի հայտ են բերում և ընդգծում են պարսկական մետաղամշակության առանձնահատկությունները [3, pp. 8, 9, 17-20, 23-26; 15, c. XII-XXII; 5, pp. 639-641]:

Իրանական դիցաբանության մեջ մետաղը սրբազան է և մեծ կարևորություն ունի: Պարսից մտածողության մեջ մետաղը համարվում է բարության և օրհնության աղբյուր: Հիմքում ունենալով այս հավատալիքները՝ իրանցիները մետաղի հետ են կապել նաև այնպիսի գոյերի ծագումը, ինչպիսիք են դրախտը, երկիրը և մարդը [1, p. 51]:

Մետաղներից պատրաստված զարդերը, ինչպես նաև դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաները, հանդիսանում են ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություններ, այլև ժամանակաշրջանի մշակութային, տեխնոլոգիական առանձնահատկությունների և սոցիալական հարաբերությունների արտացոլում [3, pp. 64-77, 105-221, 223-239]: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում պատրաստված մետաղյա արվեստի նմուշները իրենց գոյությամբ փաստում են տվյալ դարաշրջանին բնորոշ գեղագիտական պատկերացումները, արհեստագործության մակարդակը, ինչպես նաև հասարակության սոցիալական և տնտեսական կառուցվածքը:

Ներկայումս արհեստագործության զանազան ճյուղերը շարունակում են պահպանել իրենց ավանդական հիմքերը՝ խարսխված ժողովրդական հմտությունների, դարերի փորձի և վարպետության վրա: Չնայած տեխնոլոգիական առաջընթացին և մեքենայացված արտադրության լայն տարածմանը՝ ձեռագործ աշխատանքը շարունակում է պահպանել իր բացառիկ տեղը արհեստի (ինչպես նաև արվեստի) աշխարհում՝ արտացոլելով ստեղծագործականությունը, նորարարությունը և կատարողական վարպետությունը: Ձեռագործ առարկաները վարպետների և սպառողների միջև յուրահատուկ երկխոսության միջոց են: Դրանք առարկայորեն ներկայացնում են ոչ միայն տվյալ նմուշի գեղարվեստական արժեքը, այլև այն ստեղծող էթնոսի նյութական ու ոչ նյութական ժառանգությունը և փոխանցում են պատմական հիշողություններ, մշակութային ավանդույթներ և գաղափարների գեղարվեստական արտահայտություններ՝ ձևավոր-

ված դարերի ընթացքում: Որոշ մշակութաբաններ ձեռագործ արհեստագործությունը բնորոշում են որպես արվեստ-արդյունաբերություն (Art-Industry), քանի որ այն ոչ միայն արվեստի ձև է, այլև հասարակական ու մշակութային ինքնության պահպանման կարևոր գործոն [7, p. 3]:

ՀԱԹ-ի սպասքի համալիրի ընդհանուր բնութագիր.

պատկերագրություն և տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկություններ

ՀԱԹ-ի արձայնա սպասքի համալիրը պարսիկ մետաղագործ վարպետների ձեռքի աշխատանք է: Այդ մասին են փաստում պարսկական մշակույթին բնորոշ գեղագարդումը և տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները, նաև սկուտեղի վրա առկա պարսկերեն հարգադրոշմը՝ «آفر» - «84» և պատրաստող վարպետի դրոշմը՝ «جبر کيارودی» - «Ջաբար Բիառուդի»:

Համալիրի մաս կազմող թանգարանային առարկաները աչքի են ընկնում ճոխ բուսանախշ հարդարանքով, կենդանապատկերներով և թռչնապատկերներով: Պարսկական զարդարվեստի գեղարվեստական լուծումների հարցում կարևոր դեր են ունեցել և ունեն կրոնական պատկերացումները: Պարսկական մշակույթը, հետևելով իսլամի շիա ուղղության գաղափարախոսությանը, գերծ է մնացել ազգագրական առարկաների վրա կենդանիների և մարդկանց պատկերման արգելքից, ինչի արդյունքում պարսիկ վարպետները կենդանիների և մարդկանց պատկերագրությունը մեծ կատարելության են հասցրել նաև մետաղամշակության մեջ [12, c. 34]:

ՀԱԹ՝ 6144/1 սափորը հարդարված է պարսկական մետաղամշակության լավագույն ավանդույթներով: Այն ունի գնդաձև իրան, գլանաձև պարանոց, կենդանակերպ ձևավոր բռնակ: Սափորի մակերեսը գերազանցապես զարդանախշ է. իրանը բոլորում են չորս զարդաձևեր (մեդալիոններ), որոնց միջև պատկերված է մեկական թռչնապատկեր: Զարդաձևերը հանդիպակաց գույգերով կրկնում են իրար՝ մեկ գույգում պատկերված է թռչնապատկեր, մյուս գույգը իրենից ներկայացնում է մեկ ամբողջություն կազմող ոճավորված խոշոր վարդաձաղիկ: Դիմահայաց կամ պրոֆիլից դիտելիս տեսանելի է միայն զարդապատկերներից մեկը, ինչը ստեղծում է տպավորություն, թե գործ ունենք երկու տարբեր առարկայի հետ [Նկար 1]: Նույն սկզբունքով է հարդարված նաև պարանոցը: Պրոֆիլից՝ վարդաձաղիկի կողմից այն հարդարված է խիտ դասավորված ծաղկապատկերներով, դիմահայաց՝ թռչնապատկերի կողմից հարդարված է անզարդ շեղանկյունաձև մեդալիոնով, որը պարունակում է ավելի համեստ ոճավորմամբ գծայնացված մեկ ծաղկապատկեր: Դարձյալ տպավորությունը, որ, կարծես, գործ ունենք երկու տարբեր առարկաների հետ, ակնհայտ է [Նկար 2]: Իրանից պարանոց անցման հատվածը հարդարված է բուսածաղկանախշ չորս խորանաձև սրագագաթ զարդաձևերով, որոնց գագաթներից դուրս է գալիս մեկական հովհարաձև բուսանախշ: Նրանց միջև ընկած հատվածն անզարդ է: Սափորն ունի կենդանակերպ բռնակ՝ կես վիշապ-կես օձ. թեփուկավոր վիշապի երախից դուրս է խոյանում օձը [Նկար 3]: Վիշապակերպ ձևավորմամբ բռնակների հիանալի օրինակների ենք հանդիպում Աքեմենյանների և Սասանյանների ժամանակաշրջանում պատրաստված սափորների վրա, որոնց բռնակի երկու ծայրերը, իսկ որոշ դեպքերում՝ բռնակն ամբողջությամբ, կենդանակերպ է [3, pp. 45, 194, 199; 15, cc. 49, 71, 73], ինչպես նաև՝ հետագայում՝

XV-XVII դդ. պատրաստված ոչ թանկարժեք մետաղյա կենցաղային առարկաների վրա [13, cc. 106, 107, 194-199]:

Իրանի գույգ զարդաձևերում թռչնապատկերը հիշեցնում է աքաղաղ (cock-rooster/chicken): Ավեստայում «Kherous» արմատից ածանցված «աքաղաղ» բառը նշանակում է «գոչուն» կամ «բարձրաձայն կանչ» [1, p. 53]: Նախախլամական դարաշրջանում աքաղաղի խորհրդանիշը զուգորդվում էր բարու և չարի գաղափարների հետ: Մարդիկ հավատում էին, որ աքաղաղը վանում է դևերին ու չար ոգիներին, այդ պատճառով հաճախ էին պահում այս թռչնին իրենց տներում [8, pp. 104-121; 2, pp. 15, 16]:

Ամիր Հոսեյն Չիթսազիանը /Amir Hossein Chitsazian/ և Ֆորոուզան Դավուդին /Forouzan Davoudi/ իրենց համահեղինակային՝ «Աքաղաղի խորհրդանշական դիրքը իրանական մշակույթում և արվեստում՝ հիմնված խեցեղենի, մետաղագործության և տեքստիլի վրա» /The symbolic position of the rooster in Iranian culture and art based on pottery, metal and textiles/ աշխատության մեջ հանգամանորեն խոսում են աքաղաղի պատկերագրության տարածվածության սահմանների և իմաստաբանության վերաբերյալ՝ ինչպես նախախլամական շրջանում, այնպես էլ դրանից հետո [2, pp. 13-20]: Երբ լուսաբացին մարդիկ արթնանում են աքաղաղի կանչով, պետք է գործեն ըստ երեք կարևոր սկզբունքների՝ բարի մտքեր, բարի խոսքեր, բարի գործեր և խուսափեն՝ չար մտքերից, չար խոսքերից և չար արարքներից: Աքաղաղից հետո հաջորդ կարևորություն ունեցողը տան օջախն էր, որը ընտանիքի անդամներին հորդորում էր փոխել գիշերային հագուստը, լվանալ ձեռքերը և վառել կրակը: Այսպիսով աքաղաղի ձայնը և տան օջախի կրակը կոչ են անում ընտանիքի անդամներին վաղ արթնանանալ, խուսափել չափազանց երկար քնելուց, վանել ծուլության դևին և զբաղվել աշխատանքով [8, pp. 105-107]:

Խոշոր վարդաձաղիկ ներկայացնող զարդաձևերը երկու կողմում ունեն մեկական թռչնապատկեր, և համատեղ դիտարկելիս թեմատիկ մոտիվը հիշեցնում է պարսկական բանահյուսության և գրականության մեջ հայտնի «Վարդ և բլբուլ» («gol o bolbol»/ բլբուլի /بلبل – bolbol – bulbul – boulboul) սյուժեն [Նկար 1]: Բլբուլի և վարդի փոխաբերական զուգադրումը խորապես արմատացած է պարսկական պոեզիայում և մշակութային պատկերացումներում: Պարսիկ լեզվաբաններն ու բանաստեղծները բլբուլ և մի քանի այլ անուններով թռչուններին ընկալում են իբրև մեկ թռչուն, որը բնութագրվում է իր քաղցր (k'oš) կամ տխուր (zār) երգով: Այն հաճախ նույնացվել է սիրահարի հետ, որ երգում է իր սիրեցյալի՝ վարդի (gol) համար: Բլբուլի բազմաթիվ պոետիկ անվանումները կամ մակդիրները արտացոլում են նրա վարքագծային առանձնահատկությունները: Օրինակ՝ բլբուլին «hazār-dāstān» («հազար») անունով կոչելիս, շեշտում էին թռչնի երգելու զարմանալի վարպետությունը: Պարսկական գրականության մեջ բլբուլին հաճախ անվանում էին «գիշերային երգիչ» (morġ-e šabk'ān), «արշալույսի թռչուն» (morġ-e saħar կամ bolbol-e saħarī): Բլբուլի երգի և դրա սիրային խորհրդաբանության վերաբերյալ բազմաթիվ բանաստեղծական պատումները վերագրել են նրան տխուր և թախծոտ սիրահարի կերպար, որը տառապում է իր սիրեցյալից՝ վարդից բաժանվելուց: Բլբուլը հաճախ ներկայացվում է որպես սիրուց խելագարված (šeydā), տառապող (āšeq-e zār), անքուն, երբեմն էլ «խմած» (mast), ինչը վերաբերում է ոչ թե գինուն, այլ սիրո խենթությանը [11]:

Ինչպես տեսնում ենք, վարդի և բլբուլի փոխհարաբերությունը կապված է սիրո, կարոտի ու տառապանքի հետ, և այն հանդես է գալիս առավել աշխարհիկ և փիլիսոփայական տեսանկյունից:

Մսփորի մակերեսի նախշագարդման համար որպես հետնապատկեր /ֆոն/, օգտագործվել է կետանախշ մակերես, որն ստացվել է դրվագման եղանակով: Կետանախշումը կատարվել է դրվագող գործիքով, որի բանող մասն ունի գնդաձև ներս ընկած փոսիկներ, որոնք սովորաբար կազմված են հինգ, վեց և ավելի հատերից [Նկար 4]: Նմանատիպ դրվագող գործիքների ենք հանդիպում ՀԱԹ-ում պահպանվող Չիֆթալարյանների մետաղագործական հավաքածուում^{*}, որոնց կիրառման արդյունքում ընդգծվում է առարկաների ֆոնը և դրանց գեղարվեստական արժեքը [Նկար 5, 6, 7]: Ասվածը պատկերավոր ներկայացնելու նպատակով փորձ է արվել կավամոմային զանգվածի (պլաստիլինի) վրա վերարտադրել նմանատիպ մակերես՝ օգտագործելով ՀԱԹ-ի «ԱԿ-2» ֆոնդում պահվող տոհմիկ զինագործ Չիֆթալարյանների կիրառած դրվագող գործիքները: Այս գործիքները նախկինում օգտագործվել են զենքերի և զարդերի համար ֆոն ստեղծելու նպատակով: Թեև զարդանախշերի բնույթը որոշակիորեն տարբերվում է (այս դեպքում գնդաձև ելուստներն ուղղված են դեպի դուրս), գործիքների կիրառման տեխնիկան նույնն է: Ստացված արդյունքները վկայում են, որ պարսկական համալիրի առարկաների մակերեսի ֆոնը նույնպես ստեղծվել է նմանատիպ մեթոդով՝ ընդգծելով գործիքների և դրանց օգտագործման ընդհանրությունները:

Զարդանախշման այս ձևը բավականին խորը արմատներ ունի: Դրա նմանատիպ օրինակների ենք հանդիպում իրանական մշակույթի տարբեր ժամանակաշրջաններում պատրաստված առարկաների վրա, ինչը կիրառվել է առարկայի մակերեսի նախշագարդման համար, թե՛ որպես հետնապատկեր, թե՛ պատկերի որոշ հատվածների ընդգծման և նրանք առավել արտահայտիչ դարձնելու համար [15, cc. 7, 8, 10, 13, 14, 17-19, 51-54; 3, p. 123] [Նկար 8]:

Մսփորի մակերեսի վրա նկատելի են նաև օղականախշեր, որոնցից համապատասխան դասավորվածության դրվագմամբ ստացվել են ծաղկանախշեր: Վերջիններս արված են շատ պարզ, դուրին տեխնիկայով և կոչված են մակերեսի ազատ հատվածներն ընդգծելուն: Օղականախշերի պատկերման համար նախատեսված դրվագման գործիքների օրինակների դարձյալ հանդիպում ենք Չիֆթալարյանների հավաքածուի դրվագող գործիքներում: Այս դեպքում տարբերությունը չափսերի մեջ է [Նկար 9]:

Օղականախշը՝ որպես գեղագարդման եղանակ, այս դեպքում նույնպես հանդիպում է իրանական մշակույթի տարբեր ժամանակաշրջաններում պատրաստված առարկաների վրա: Այս տարբերը կիրառվել են պատկերի որոշ հատվածների ընդգծման և առավել արտահայտիչ դարձնելու նպատակով [15, cc. 7, 16, 33; 3, pp. 108, 161-163.] [Նկար 10]:

Խիտ փորագրագարդ հարուստ բուսանախշերով և կենդանա-թռչնապատկերներով են գեղագարդված ՀԱՊԹ՝ 6144/2ա, 6144/2բ բաժակները: Կլոր շրջանակների մեջ զույգերով պատկերված են նապաստակներ, աղվեսներ, եղնիկներ, ոչխարներ, արագիլներ:

* ՀԱՊԹ՝ 6824/1290, 6824/823, 6824/996, 6824/1017, 6824/1149, 6824/1177, 6824/1290, 6824/1317, 6824/1438:

Կենդանապատկերները խիստ բնորոշ են պարսկական զարդարվեստին և հանդիպում են տարբեր ժամանակաշրջաններում պատրաստված առարկաների վրա [նկար 11, 12]: Բաժակների գեղագարդումը կատարվել է գերազանցապես փորագրմամբ՝ մետաղի հեռացման միջոցով (Engraving through metal removing): Այս տեխնիկայով մետաղի որոշ հատվածներ հեռացվում են պողպատե գործիքով, որով իրականացվում է ճնշում գործադրելու միջոցով մետաղաշերտի սեղմում-հեռացում: Փորագրության այս տեխնիկան համարվում է առանց մուրճի կիրառման փորագրության տեխնիկաներից ամենահինը [21]:

ՀԱՊԹ 6144/3 սկուտեղը էլիպսաձև է՝ նեղացող ծայրերում ուղիղ կտրվածքով: Ունի բուսածաղկանախշ հարդարանք: Կենտրոնում պատկերված է բուսածաղկանախշ մեդալիոն, որի երկու կողմերից դուրս են գալիս իրար հաջորդող երեքական ծաղկանախշեր՝ արմավագարդեր, որոնցից երկրորդները առնված են գալարուն վարդակի մեջ: Ունի երկու եզրագոտի: Արտաքին եզրագոտին կազմված է կես-ծաղկանախշերով: Սրան հաջորդում է ծաղիկ-տերևանախշ-ծաղիկ հերթագայությամբ շղթա կազմող շրջագոտին: Կենտրոնական մեդալիոնը բոլորում են չորս կողմում պատկերված, իրար հակադիր գույգ թռչնապատկերները (հավանաբար՝ փասիաններ): Ինչպես նշում են Ջ. Հակոբյանը և Լ. Միքայելյանը իրենց՝ «Մենմուրվը և մյուս առասպելական արարածները Մասանյան պատկերագրությամբ Հայաստանի և Անդրկովկասի միջնադարյան արվեստում»/“The senmurv and Other Mythical Creatures with Sasanian Iconography in the Medieval Art of Armenia and Transcaucasia”/ աշխատությունում, «գրադաշտականության մեջ, ի թիվս այլ թռչունների, փասիանը համարվում էր բարերարության և աստվածության խորհրդանիշ» [4, p. 51; 14, c. 65]: Թռչունները ներկայացված են ռեալիստորեն, սակայն խիստ ներդաշնակ են ընդհանուր գեղահարդարմանը և կարծես հանդես են գալիս որպես զարդապատկեր:

Սկուտեղի զարդանախշումը հիշեցնում է պարսկական գորգերի հարդարանքը [10, p. 16], իսկ բուսածաղկային հորինվածքները և թռչնապատկերները պարսկական զարդարվեստին ինքնատիպություն հաղորդող տարրերից են [10, p. 13] [Նկար 13, 14]:

Համալիրի առարկաների վրա զարդանախշերը պատրաստված են իրանական արվեստում հայտնի «ղալամ զանի» (Ghalam Zani – գրչով փորագրում) եղանակով՝ մետաղամշակության փորագրման հատուկ արվեստով: «Ղալամ զանի»-ն այն եղանակն է, որն ընդգրկում է տարբեր մետաղների վրա նմուշներ և դետալներ փորագրելու գործընթացը: Այս ավանդույթների պահպանման ու զարգացման գործում մեծ դեր են խաղացել վարպետներ Օստադ Մոհամմադ Օրայզին և Օստադ Մոհամմադ Թադի Ջուֆանին [6, pp. 206, 207]: Նրանց աշխատանքները ոչ միայն հարստացրել են այս արվեստը, այլև ոգեշնչել են նոր վարպետների՝ խթանելով արտադրանքի որակն ու բազմազանությունը:

Պարսկական փորագրագարդ իրերը լայն ճանաչում ունեն ոչ միայն տեղացիների, այլև զբոսաշրջիկների շրջանում՝ դիտարկվելով որպես մշակութային հուշանվերներ: Այս հետաքրքրության աճի հետ մեկտեղ՝ դիզայներներն սկսեցին կիրառել «Kansei engineering» [9, p. 289; 7, pp. 1-9] մեթոդը, որը դիզայնի միջոցով ստեղծում է հույզեր արթնացնող արտադրանք՝ ավելի խորությամբ արձագանքելով սպառողների ակնկալիքներին:

Իրանի շուկաներում կարելի է գտնել տարատեսակ կենցաղային սպասք և պարագաներ, որոնք պատրաստված են ինչպես թանկարժեք, այնպես էլ ոչ թանկարժեք մե-

տաղներին: Դրանք առանձնանում են ավանդական արհեստագործական տեխնիկաներով, որոնք արտացոլում են պարսկական մշակույթի հարուստ ժառանգությունը: Եվ, չնայած ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխություններին՝ Իրանը շարունակում է պահպանել իր մշակութային ինքնությունն արտացոլող արվեստը: Ավանդական նախշերն ու զարդանկարները գրեթե անփոփոխ են մնացել դարերի ընթացքում՝ շարունակելով հետաքրքրել տեղական ու միջազգային գնորդներին [17; 18; 19; 20]:

Որոշ նմուշներ ձեռք են բերել ոչ միայն գործնական, այլև մշակութային արժեք՝ ընդգրկվելով կոլեկցիոներների հավաքածուներում: Այս իրերը մեծ պահանջարկ ունեն միջազգային աճուրդներում, այդ թվում՝ Niemczyk, Casa d'aste Capitolium Art, Christie's, Chiswick auctions և այլ հարթակներում, որտեղ իրանական արվեստի նկատմամբ հետաքրքրությունը տարեցտարի աճում է [16]:

Այսպիսով, Իրանում դարերի ընթացքում ձևավորված արհեստագործական մշակույթը շարունակում է զարգանալ՝ պահպանելով իր գեղարվեստական և մշակութային նշանակությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Պարսկական մշակույթը նույնիսկ նոր ժամանակներում շարունակում է առանձնանալ իր ազգային և ավանդական արժեքները պահպանելու ձգտումով: Այս միտումը արտացոլվում է տարբեր արհեստների մեջ, այդ թվում՝ մետաղամշակության:

Պարսիկ վարպետները դարերի ընթացքում ձևավորված տեխնիկա-տեխնոլոգիական եղանակները շարունակում են կիրառել և կատարելագործել՝ ստեղծելով դեկորատիվ-կիրառական արվեստի ինքնատիպ ու բացառիկ նմուշներ: Այս ավանդույթների պահպանման վառ օրինակ է ՀԱԹ-ի դիտարկվող պարսկական համալիրը, որը մարմնավորում է պարսկական մետաղամշակության լավագույն ավանդույթները:



Նկար 1.
ՀԱԹ 6144/1




Նկար 2.
ՀԱԹ 6144/1



Նկար 3.
ՀԱԹ 6144/1



Նկար 4. ՀԱՊԹ- 6144/1



Նկար 8. Орбели, стр. 51.



Նկար 5.
ՀԱՊԹ- 6824/996




Նկար 6.
ՀԱՊԹ- 6824/1438



Նկար 7.
ՀԱՊԹ- 6824/1177



Նկար 9.
ՀԱՊԹ 6824/1017




Նկար 10.
Орбели, стр. 7.



Նկար 11.
ՀԱՊԹ- 6144/2ա



Նկար 12.
ՀԱՊԹ- 6144/2բ



Նկար 13. Yassavoli D. Persian rugs and carpets, 1993, p. 16



Նկար 14.
ՀԱՊԹ 6144/3

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. **Alami A., Yousef Jamali M., Jadidi N.** *Study of Sacred Animals' Bas-relief in Sassanid Metal Works Art in Mazandaran* // Intl. J. Humanities. 2017. V. 24 (3). 49-66 pp..
2. **Chitsazian H., Davoudi F.** *The symbolic position of the rooster in Iranian culture and art based on pottery, metal and textiles* // Journal of Art Faculty, Shahid Chamran University of Ahvaz. 2020. V. 9. Issue 19. 13-20 pp..
3. **Gunter A., Jett P.** *Ancient Iranian metalwork in the Arthur M. Sackler Gallery and the Freer Gallery of Art.* Washington. Smithsonian Institution. 1992, 271 p..
4. **Hakobyan Z., Mikayelyan L.** *The senmurv and Other Mythical Creatures with Sasanian Iconography in the Medieval Art of Armenia and Transcaucasia* // Fabulous Creatures and Spirits in Ancient Iranian Culture. 2018. 39-75 pp..
5. **Ivanov A.** *Applied arts: Metalwork, ceramics and sculpture* // History of Civilizations of Central Asia. 2003. V. V. 621-648 pp..
6. **Karamian G.** *Historical Metal works named Warsaw in Iran*//Historiai Świat. 2020. Tom 9.205-218 pp..
7. **Karimi M., Fard Y., Zafarmand S.** *Kansei engineering as an ergonomic and technological concept derived from customer's preference about a product case study Iranian handicraft* // International confe-

- rence on kansei engineering and emotion research 2010. Keer2010. Paris | March 2-4, 2010. 615-621 pp.. (<https://www.keer.org/keer2010/Papers/0615.pdf>)
8. **Modi J.** *The Cock as a sacred Bird in ancient Iran // Anthropological Papers: Papers read before the Anthropological Society of Bombay.* 1911. 104-121 pp..
 9. **Nagamachi M.** *Kansei Engineering as an ergonomic consumer-oriented technology for product development // Applied Ergonomics.* 2002. V. 33: Issue 3. 289-294 pp..
 10. **Yassavoli D.** *Persian rugs and carpets.* Tehran. Printed by Aban Press Ltd. 1993. 104 p.
 11. **Hūšang A'lam, Jerome W. Clinton, Bolbol** "Nightingale".
<https://www.iranicaonline.org/articles/bolbol-nightingale> (դիտվել է 08.01.2025).
 12. **Арманд Т.** *Орнаментация ткани.* Москва-Ленинград: "Academia". 1931. 206 с..
 13. **Иванов А.** *Медные и бронзовые (латунные) изделия Ирана второй половины XIV — середины XVIII века.* СПб.: Изд-во Гос. Эрмитажа. 2014. 304 с..
 14. **Микаелян Л.** *Мотив лент и ожерелий в средневековой скульптуре Армении и в искусстве Сасанидского Ирана//Исследования по искусству Византийского мира: Сборник статей.* 2013. Т. VII. 64-72сс.
 15. **Орбели И., Тревер К.** *Сасанидский металл. Художественные изделия из золота, серебра и бронзы.* М.-Л.: "Academia". 1935. XLVIII с. + 85 табл..
 16. <https://www.chiswickauctions.co.uk/auction/search/?st=persian%20silver&c=1> (դիտվել է 11.01.2025).
 17. https://www.instagram.com/antique_roben/. (դիտվել է 05.02.2025).
 18. https://www.instagram.com/mehdi_dehghani.hezar_dastan/ (դիտվել է 05.02.2025).
 19. <https://www.instagram.com/ahmad2024812/> (դիտվել է 07.02.2025).
 20. <https://www.instagram.com/aliqapu.handicrafts/> (դիտվել է 08.02.2025).
 21. <https://persianhandicrafts.com/what-is-ghalamzani> (դիտվել է 09.02.2025).

References

1. – 11. (տե՛ս գրականություն)

12. **Armand T.** "Ornamentation of Fabric". [*Ornamentacija tkani*] Moscow-Leningrad: "Academia" Publ, 1931, 206 p.. (in Russian)
13. **Ivanov A.** "Copper and Bronze (Brass) Artifacts of Iran from the Second Half of the 14th to the Mid-18th Century" [*Mednye i bronzovye (latunnye) izdelija Irana vtoroj poloviny XIV — serediny XVIII veka*]. SPb.: The State Hermitage Publ.House. 2014. 304 p.. (in Russian)
14. **Mikayelyan L.** "The Motif of Ribbons and Necklaces in Medieval Armenian Sculpture and Sasanian Iranian Art" [*Motiv lent i ozherelij v srednevekovoj skulpture Armenii i v iskusstve Sasanidskogo Irana*] // *Through Ornament: Studies in the Art of the Byzantine World: Collection of Articles.* 2013, V. 7, 64-72 pp. (in Russian)
15. **Orbeli I., Trever K.** *Sasanian Metalwork. Artistic Objects Made of Gold, Silver, and Bronze.* [*Sasanidskij metall. Hudozhestvennye izdelija iz zolota, serebra i bronzy*] Moscow-Leningrad: "Academia", 1935, XLVIII p. + 85 plates. (in Russian)
16. – 21. (տե՛ս գրականություն)

Ընդունվել է / Received on: **24. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **04. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարեն Սաշայի ԱՍԱՏՐՅԱՆ՝ «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարան», ՀՀ, էլ. huugn@sardarapat01.22@gmail.com // orsid / com0009-0005-4493-4088

Karen Sasha ASATRYAN: Researcher, Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, RA, e-mail: sardarapat01.22@gmail.com // orsid com/0009-0005-4493-4088.

ՀՏԴ՝ 89.09

DOI: 10.52971/18294316-2025.28.1-177

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՑԱՍՄԱՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱԽԻ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Արա Ս. Զարգարյան

ԳԱԱ Մ.Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան Հոդվածում ուսումնասիրության նյութ են դարձել Աստվածաշնչի այն պատմություններն ու հատվածները, որոնցում կան Աստվածային ցասման ու մարդկային վախի դրսևորումներ: Հին Կտակարանում շատ են պատմությունները, երբ Աստված իր ընտրյալների հավատն ու ուժը ամրապնդելու համար դիմում է փորձությունների: Ձուգահեռաբար Հայր Աստծո ցասումը ևս տարածվում է անհավատների նկատմամբ: Այդ կետում գործունենք Պլատոնի առաջ քաշած համակարգի հետ, երբ ստորին գործընթացը ծառայում է վերին համակարգում դրված գաղափարների իրականացմանը: Թիմոսյան վախի մոդելը մարդուն ուղեկցում է ամբողջ կյանքի ընթացքում, և այդ կետում դավանանքը բնավ չի առաջացնում տարրերեցում: *Մեթոդներ և նյութեր*. Աշխատանքում կիրառվել են զուգադրական, հոգեբանական, հոգեվերլուծական և կենսագրական մեթոդներ: Իրականացվել է նաև տարբեր ստեղծագործությունների միջև համեմատություն: *Վերլուծություն*. Աշխատանքում հին հունական դիցաբանությունից մինչև Նոր Կտակարան ընդգծվում են աստվածային ցասման ու մարդկային վախի իրողությունները: *Արդյունքներ*. Կտակարաններում փոխվում են ցասման և վախի ընկալումները: Հիսուսն իր գալուստով փոխում է ցասման գաղափարախոսությունը: Կենտրոնում կանգնում է սերը: Սույն ուսումնասիրության նպատակն է ցույց տալ աստվածային ցասման և մարդկային վախի տարժամանակյա ընկալումները, ընդգծել, որ Աստվածաշնչի մի Գրքից անցումը դեպի մյուս Գիրք մասամբ փոխում է նաև Հոր գաղափարական համակարգի իրագործման մոդելը: Աստվածային ցասումը հավիտենական իրողություն է: Մարդն իր բնությամբ չի կորցնում թիմոսյան վախի ընկալումը:

Բանալի բառեր՝ *Աստված, վախ, ցասում, մարդ, Աստվածաշունչ, Աբրահամ, որդի, հայր: Ինչպես հղել*՝ Զարգարյան Ա. *Աստվածային ցասման և մարդկային վախի ընկալումներն*

PERCEPTIONS OF DIVINE WRATH AND HUMAN FEAR IN THE BIBLE

Ara S. Zargaryan

Institute of Literature after Manuk Abeghyan of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The article studies the stories and passages of the Bible that contain manifestations of Divine wrath and human fear. In the Old Testament, we often encounter stories when God resorts to trials to strengthen the faith and strength of His chosen ones. In parallel, the wrath of God the Father also extends to unbelievers. At that point, we are dealing with the system put forward by Plato, when the lower process serves to implement the ideas set forth in the upper system. The Timonian model of fear accompanies a person throughout his life, and at that point, religion does not cause any misinterpretation. **Methods and materials.** Comparative, psychological, psychoanalytical and biographical methods were used in the work. A comparison between different works was also carried out. **Analysis.** The work emphasizes the realities of divine wrath and human fear from ancient Greek mythology to the New Testament. **Results:** The perceptions of anger and fear change in the Testaments. Jesus, with his coming, changes the ideology of anger. Love stands at the center. The purpose of this study is to show the perceptions of divine anger and human fear at different times. To emphasize that the transition from one book of the Bible to another also partially changes the model of the implementation of the Father's ideological system. Divine anger is an eternal reality. Man, by his nature does not lose the perception of Timothy's fear.

Key words: *God, fear, wrath, man, Bible, Abraham, son, father.*

Citation: Zargaryan A. *Perceptions of Divine Wrath and Human Fear in the Bible* // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2025, Vol. 1 (28): 177-184 pp..

DOI: 10.52971/18294316-2025.28.1-177

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Հին հունական դիցաբանության մեջ տիտան Քրոնոսի [3, էջ 25] մոտ տեսնում ենք ցասում: Դա հատկապես դրսևորվում է սեփական զավակների հանդեպ: Իշխանությունը կորցնելու վախից դրդված՝ նա կուլ է տալիս իր 5 զավակներին: Նրա 6-րդ որդին՝ Ջևսը, հրաշքով ողջ է մնում: Բարկությունն ու վախը երբեմն գործում են նաև կողք կողքի: Հունական դիցաբանության մեջ քիչ չեն նաև վախի աստվածները՝ Փոբոսը, [3, էջ 247] Թիմոսը, Դեյմոսը [3, էջ 59]: Նրանցից յուրաքանչյուրն ունի վախի՝ իրեն բնորոշ արտահայտումն ու կրում է վախի այդ ձևի աստվածության գաղափարախոսությունը: Աստվածներն իրենք իրենցով մարդկանց մոտ առաջացնում էին վախի՝ թիմոսյան ձևը: Դա վախ է Աստծո ներկայությունից: Թիմոս նաև նշանակում է հոգի, սիրտ, որն արդեն իսկ հուշում է, որ «Միրտը դող ընկավ» արտահայտությունը հենց թիմոսյան վախից ծագած դարձվածքային ձև է: Հունական դիցաբանությունում աստվածներն իրենց ներկայությամբ, արարքներով կարող էին վախ տարածել իրենց ընտանիքում, իրենք իրենց դեմ (Հիշենք Քրոնոսին, ով վախենում էր իր զավակներից և կերավ նրանց) և մարդկանց դեմ: Քրիստոնեությունը ևս անմասն չմնաց ցասումի և վախի նախաքրիստոնեական ավանդույթից: Սակայն այս-

տեղ ամեն բան մի փոքր այլ է: Վախն անտրոհելի է մարդկային կյանքից: Հին հունական առասպելաբանությունում հայրն իշխում էր ընտանիքում, իշխում էր Օլիմպոսում, նա աստվածների հայրն էր, աշխարհի տիրակալը: Հայր աստծո մոդելը կա Քրիստոնեության մեջ ևս: Մեկ անձ, բայց երեք բնություն ունեցող Աստված Սուրբ Երրորդության գլխավոր ֆիգուրն է: Հայր Աստծո մասին իր մեկնություններում հետաքրքիր դիտարկումներ է անում 2-3-րդ դարերում ապրած և ստեղծագործած հույն փիլիսոփա, աստվածաբան Որոզինեսը: Աստծո՝ հայր անվան մասին իր գրավոր խորհրդածություններում Որոզինեսը նկատում է, որ Հին Կտակարանում գոյություն չունի գեթ մեկ աղոթք, որում Աստված կանչվի Հայր անունով. «Մինչև հիմա, հակառակ մեր բոլոր պրպտումներին, այդպիսի աղոթք դեռ չենք գտել: Չենք ուզում ասել, որ Աստված այնտեղ Հայր չի կոչվել, կամ ճշմարիտ հավատացյալները Աստծո որդիներ չեն կոչվել: Բայց մեկ տեղ աղոթքի մեջ Աստված չի կանչվել որպես Հայր՝ ըստ նրա հանդեպ լիակատար վստահություն ներշնչող այն արտահայտության, որ մեր Փրկիչը փոխանցել է մեզ» [4, էջ 95]: Հատկանշական է, որ Որոզինեսը, մեկնաբանելով Աստվածաշունչն ու Աստծո խոսքը, միևնույն դեպքում նաև մասնակի քննադատական կարծիք է հայտնում: Հորից որդի անցման կապի բացակայության մասին խոսում է Մադաքիա մարգարեն, ում գիրքը Հին Կտակարանի վերջին՝ ամփոփիչ գիրքն է, որ գրվել է Ք.ա. 5-րդ դարի առաջին կեսին: «Որդին փառաւորում է Հօրը, և ծառան երկնչում է իր Տիրոջից: Իսկ արդ, եթէ ես ձեր Հայրն եմ, ո՞ր է իմ փառքը, իսկ եթէ Տէր եմ, ո՞ր է այն հարգալից երկիւղը, որ պարտական էք ինձ» [1, էջ 1115]: Հին Կտակարանում հավաստի չի նշվում հորից որդի ծննդակարգը: Այլ կերպ ասած Մադաքիա մարգարեն փաստում և ընդգծում է, որ որդիներն ավելի շուտ հպատակներ են, որոնք պետք է երկյուղ ունենան Հորից: Հենց այս վախն է, որն առկա է Հին Կտակարանի մի շարք դրվագներում: Այս վախի մասին է խոսում նաև բողոքական Աստվածաբան Սյոբեն Կիերկեգորն իր «Ան ու դող» աշխատության [6] մեջ: Եթե խտացված խոսենք վախի կիերկեգորյան գաղափարախոսության մասին, ապա մեծ դանիացին ընդգծում է, որ ոչ մի ժամանակ, վայր ու թաքստոց չի ապահովագրում ու հեռացնում մեզ վախից: Այստեղ պետք է հիշել ու ընդգծել, որ երկյուղից առաջացած փախուստի մասին լավագույն օրինակը Հովնան մարգարեի պատմությունն է [8] է: Այն փաստում է, որ չկա թաքստոց անգամ ջրերի հատակում: Ընդհանրացնելով թեման՝ Կիերկեգորը տալիս է մի միտք, ըստ որի Աստված անհանգստությամբ հալածում է մարդուն, քանի որ ցանկանում է սիրված լինել մարդու կողմից: Տերունական աղոթքում տեսնում ենք, որ Աստծուն հավատարիմ մարդը պետք է երկնային Հորից խնդրի, որ Աստված իրեն հեռու պահի փորձություններից: Զուգահեռաբար Աստվածաշնչում տեսնում ենք նաև Աստվածային փորձությունը: Թե՛ Մատթեոս, և թե՛ Ղուկաս ավետարանիչները վերարտադրել են Հիսուս Քրիստոսի աղոթքի բանաձևը: Չնայած երկու տարբերակներում [4, էջեր 87-88] գաղափարական իմաստով կան մասնակի տարբերություններ, սակայն «Եվ մի տար մեզ փորձության» նախադասությունը երկու ավետարանիչների մոտ գրված է նույնությամբ: Հետևաբար Աստված և՛ փորձությունից մեզ հեռու պահողն է, և՛ մեզ փորձությամբ ուժեղացնողը: Աստվածաշնչյան փորձությունների մասին Որոզինեսն ունի իր մեկնաբանությունը, որտեղ կա և՛ մասնակի քննադատություն, որն ուղղված է Աստծուն, և կա՛ աստվածաշնչյան հերոսուհու՝ Հուդիթի շուրթերով մեկնաբանություն «Փրկիչն ինչպե՞ս

կարող է մեզանից պահանջել, որ փորձության մեջ չընկնենք, երբ որ, ճիշտն ասած, Աստված փորձում է ամեն մարդու: Հիշենք, ասում է Հուդիթը ոչ միայն քահանաներին, այլև նաև իր բոլոր ընթերցողներին, թե ի՛նչ պատահեց Աբրահամի հետ, թե Աստված ինչքան փորձեց Իսահակին, և թե ի՛նչ ապրումներ ունեցավ Հակոբը Ասորիքի միջազգեստում, երբ արածեցնում էր իր մորեղբոր՝ Լաբանի ոչխարները: Նա նրանց փորձության ենթարկեց՝ մաքրելու համար նրանց սրտերը: Աստված մեզ փորձում է ոչ թե կորստյան մատնելու, այլ ուղղելու համար» [4, էջ 139]: Աստվածաշնչում հանդիպում ենք, երբ դառն փորձության միջով անցնող մարդն ուղղվում է, գտնում ճիշտ ճանապարհն ու հետևում Աստծուն: Աստվածային բարկության ու պատժի առաջնային օրինակը տեսնում ենք Ծննդոց գրքում զետեղված Ադամի և Եվայի պատմության մեջ: Դրախտում արգելված պտուղը ճաշակելուց հետո առաջին մարդիկ վտարվեցին այնտեղից, քանի որ «Ադամը դարձավ մեզ նման մէկը, նա գիտի բարին և չարը» [1, էջ 7]: Բարու և չարի ծառն ինքնին իմացության ծառն էր: Իսկ իմացությունն ձեռք բերած մարդն իր զարգացումը շատացնելով կարող էր հանգեցնել դրախտի կործանմանն այնպես, ինչպես դա եղավ աշխարհի հետ՝ համաշխարհային ջրհեղեղի ժամանակ: Ֆրանց Կաֆկան դրախտի մասին իր պարադոքսում մարդու վտարումը հաջողություն է համարում, քանի որ հակառակ դեպքում մարդն ի գորու էր կործանել նաև դրախտը: Առաջին մարդկանց կողմից անհնազանդության միջոցով գիտակցությունն ձեռք բերելու փորձը հանգեցրեց սկզբնական մեղքին: Այս դեպքում Աստված զայրացավ մարդկային անհնազանդության պատճառով: Առաջին մարդիկ գիտեին, որ անձայրածիր սահմանների դիմաց կար փոքրիկ գիծ, որն անցնել պետք չէր, սակայն հետո գայթակղությամբ կատարվեց մեղքը, ու մարդիկ ստիպված եղան լքել դրախտը: Կայենի ու Աբելի պատմության մեջ ևս նկատում ենք մեր քննության նյութի գաղափարական հիմքերից: Կայենը շարունակեց ծնողների կողմից մարդկային գիտակցության բացահայտման փորձը: Մարդու կողմից սպանված առաջին մարդու պատմության մեջ հիշարժան է արդեն իսկ մեղքի զգացումն ու գործած հանցանքի համար սպասվելիք դառը պատիժը: Եվ հենց սկզբից եղբայրասպան Կայենը, գիտակցելով կատարվածը՝ մահվան բացահայտման փորձը, Աստվածային պատժից զատ արարչից խնդրում է նաև ինքն իրեն պատժելու հնարավորություն. «Գործած մեղքս մեծ է թողութեան արժանի լինելու համար: Եթե այսօր ինձ հանես երկրից, ես կը թաքնուեմ քեզանից, ահ ու դողի եւ երերման մեջ կը լինեմ երկրի վրայ, եւ ով հանդիպի, կը սպանի ինձ» [1, էջ 8]: Կայենի խոսքերում նկատում ենք գիտակցության ոչ լիարժեքություն, քանի որ եղբայրասպանը գիտակից պատկերացում չունի անձնասպանության մասին: Դա հայտնվեց նաև Քրիստոսին մատնած Հուդայի մոտ: Գործած հանցանքի պատիժը Կայենը պատկերացնում էր կրել ինքնասպանությամբ: Աստվածաշնչյան հետագա կերպարների մոտ կամաց-կամաց ուրվագծվում է մարդկային գիտակցության զարգացումն ու աշխարհին ընկալելու կարողությունը: Մյուս կողմից մարդկային զարգացման հետ մեկտեղ ավելանում էր Հայր Աստծո բարկությունը: Աստվածային փորձության Ադամական պատմությունից հետո ամենաձանր փորձություններից մեկը բաժին հասավ Աբրահամին: Այս դեպքում աստվածավախ Աբրահամը կիերկեգորյան բանաձևին համապատասխան պետք է իր սերն Աստծո նկատմամբ ապացուցեր սեփական զավակի զոհաբերությամբ: Աստծո կողմից մեծ ցեղի նախահոր խոստում ստացած Աբրահամն իր գործունեությամբ

ու հավատքով թերևս մինչև իր որդու՝ Իսահակի զոհաբերության դրվագը, չէր թերացել: Նրա ու Հայր Աստծո միջև երկխոսությունն Աստվածահաճո էր: Սակայն Տիրոջը՝ «Աստված հավիտենական» սուրբ կապակցությամբ պաշտելուց հետո տեղի ունեցավ փորձությունը: Ֆրանց Կաֆկան իր «Աբրահամ» պարադոքսում խոսում է Աբրահամի հոգևոր աղքատության մասին. «*Աբրահամի հոգևոր աղքատությունն ու այդ աղքատության իներտությունը առավելություն է. այն հեշտացնում է նրա կենտրոնացումը և կամ գուցե այն ևս կենտրոնացում է, որով նա, իհարկե, կորցնում է առավելությունը, որ կենտրոնացման կիրառման վրա է հիմնված*» [2, էջ 17]: Աբրահամի կյանքում վերելքները շատ էին, և հերթական վերելքի հիմքում պետք է լինեին վայրէջքը: Այս դեպքում Աստծո փորձությունը, որն ամենամեծ «անկումն» էր Աբրահամի համար, պետք է դառնար մեծ վերելքի սկիզբը: Այս պայքարում Աբրահամը միայնակ էր, քանի որ Մառայի «ծիծաղն» [1, էջ 20] արդեն իսկ փաստել էր, որ մեծ վերելքի ճանապարհը կսկսվի Իսահակի ծննդից հետո: Եվ հանկարծ լսվում է Աստծո ձայնը, ու սկսվում է տանջանքը՝ մեծ վերելքից առաջ: Որքան էլ Կաֆկան Աբրահամի ներսում տեսնում է մասնակի հոգևոր աղքատություն, այնուամենայնիվ Աբրահամը Հովման չէր: Նա վերցրեց իր որդուն, և նրանք բարձրացան լեռը: Լեռան գագաթին երկկողմանի ներքին լռությունը խախտվեց Աստվածային կոչով: Հենց այդ կետում էր պահվում խորհրդավոր միտքը: Լեռան վրա էր թաքնված գաղափարը: Աստծո կողմից սա համոզմունքի փորձություն էր, որով նա առավել վստահեց Աբրահամին և տեսավ նրա երկյուղը: Սակայն մինչև գագաթ հասնելը Աբրահամի լռության մեջ թաքնված է մի ամբողջ տառապանք: Այս ողբերգության երկրորդ կողմում որդին է, ով նույնպես լուռ էր, սակայն ինչ-որ պահի խոսեց, որպեսզի լռության շտեմարանից ինչ-որ բառ դուրս բերի. «*Ահա կրակը, և ահա փայտը, հապա ռ'ըր է ողջակիզելու ոչխարը*» [1, էջ 24]: Իսահակի կասկածամտությունն ու լուռ, ողբերգական քայլի փլուզումը սահմանեց լեռան ճանապարհի մասին բացատրությունը: Այս մի փոքր անհասկանալի ու փակ համակարգի մասին իր յուրահատուկ մեկնությունն է ներկայացնում Սյորեն Կիերկեգորը վերևում արդեն հիշատակված գրքում [6]: Կիերկեգորն իր գրքում քննում է հին հունական և աստվածաշնչյան 2 առասպելներ, որոնց հիմքում հոր կողմից գավակին զոհաբերելու պատմությունն է: Առաջին պատմության մեջ Ագամեմնոնն է, ով պետք է զոհաբերեր իր դստերը՝ Իֆիգենիային, քանի որ պատերազմ գնալու համար պետք էր համընթաց քամի: Աստվածների ցանկությունն էր, որպեսզի Ագամեմնոնը զոհաբերի իր ամենաթանկ, ամենամեծ բանը, հանուն ընդհանրական շահի: Կիերկեգորն այս պատմության մեջ տեսնում է տրամաբանություն, քանի որ զոհելով ամենաթանկը՝ Ագամեմնոնը նպաստեց ընդհանրական նպատակի կայացմանը: Դանիացին ընդգծում է նաև հունական առասպելական կերպարի հերոսությունը: Կիերկեգորը Աբրահամի լռության հիմքում տեսնում է ներքին մեծ հավատը, ներքին աշխարհում ներփակված լինելը: Արտաքին աշխարհում Աբրահամի մոտ լռություն է, քանի որ արտաքին ու ներքին աշխարհների միջև կա բախում, անհասկանալի գիծ: Մյուս կողմից Կիերկեգորն այս պատմությունը որոշում է դիտարկել այն համատեքստում, որ թե՛ Աբրահամը, և թե՛ Աստված գիտեին, որ Իսահակի զոհաբերությունը տեղի չի ունենա: Կիերկեգորն այս տարբերակի մասին և՛ խոսում է, և՛ վերջում տալիս այն գնահատականը, որ իրականում այստեղ Աբրահամի մեծ հավատն էր գործում: Կաֆկան Իսահակին չզոհաբերելու դեպքում

տեսնում է Աբրահամի մեղքը, քանի որ նա չհավատաց, որ այդ ամենը նախասահմանված է իրեն: Հին Կտակարանում Աբրահամի ողբերգական պատմությունից հետո զարգանում էր մարդկային չարությունը: Այն ստանում է աստվածային ցատումն ու պատիժը: Եթե այս պատմության մեջ Իսահակը ողջ մնաց, փրկվեց, ապա «Հոբի» գրքում մենք տեսնում ենք մեկ այլ կարգավիճակ, որտեղ արդեն իսկ չեն փրկվում անգամ Հոբի որդիները: Այստեղ Հոբը պայքար է մղում երկակի ուժերի դեմ: Աստծո ու սատանայի միջև զրույցի [1, էջ 957] արդյունքում սահմանվում են ապագայի ծանր օրերը Հոբի համար: Աստված ի սկզբանե սատանային կոչ է անում իր ընտրյալին ենթարկել ամեն փորձության: Եթե սկզբնական շրջանում տանջանքի հիմքում նյութական հարստության կորուստն է, ապա հետագայում հարվածը հասցվում էր ամենաձանր կետին՝ Հոբի զավակներին: «Մինչ քո տղաներն ու աղջիկներն իրենց աւագ եղբոր մօտ ուտում-խմում էին, անապատից յանկարծակի սաստիկ հողմ փչեց ու խփեց տան չորս անկիւններին. տունը փլուեց քո զաւակների վրայ, ու նրանք վախճանուեցին: Միայն ես ազատուելով՝ եկայ քեզ պատմելու» [1, էջ 958]: Այստեղ ասեալ, ի տարբերություն Աբրահամի պատմության, տեսնում ենք մարդկային կորուստ: Եթե նախորդ դեպքում ողբերգությունն ավելի մեծ էր, քանի որ հայրը պետք է սպաներ որդուն, ապա այս դեպքում Հոբն ուղղակի լուռ դիտորդն էր իր զավակների կորստի: Տառապանքի հիմքում փորձությամբ ամրանալն էր ու Աստծո նկատմամբ հավատի մեծացումը: Եթե այս պատմությունը դիտարկում ենք միայն գաղափարական հենքի վրա, ապա ստացվում է, որ Աբրահամից, Մովսեսից և մյուսներից հետո Աստված դեռ մասնակի կասկածամիտ էր իր ընտրյալների հարցում: Հոբի պատմության մեջ ողբերգական է հուսահատ մարդու կերպարը: Որքան էլ նա, դիմակայելով փորձություններին, հասավ իր նպատակին, այնուամենայնիվ Հոբի տառապանքներում մարդկային ողբերգությունն էր: Սա և մյուս դեպքերը կարծես անհատական ողբերգություններ լինեին: Հոբի թվացյալ կործանումն ու տառապանքը հատկապես ազդեցիկ կերպով երևան է գալիս այս տողերում. «Եվ սաստանան հեռացավ Տիրոջ առջևից և ոտից գլուխ չարորակ վերքերով պատեց Յոբին: Եւ Յոբը խեցու մի կտոր առնելով՝ քերում էր թարախը. նստում էր աղբիւսում, քաղաքից դուրս» [1, էջ 958]: Հատկանշական է, որ թե՛ Աբրահամի, թե՛ Ադամի և թե՛ Հոբի դեպքում կանանց կերպարները հանդես են գալիս Աստծո նկատմամբ կասկածամտությամբ: Նրանց մոտ առավել գործում է միտքը, տրամաբանությունն ու բանականությունը, իսկ իրենց ամուսինների դեպքում հավատը, որը տեղ-տեղ կերպարին կարծես թե դարձնում է ինքնամփոփ: Ավ. Իսահակյանի «Լիլիթ» ստեղծագործությունը լավագույն կերպով փաստում ու ներկայացնում է կնոջ ռացիոնալ մտածողությունն ու դրան հակադրված տղամարդու պատկերը: Ադամն ապրում էր երազային աշխարհում, որտեղ գործում էր սիրտը, իսկ Լիլիթի մոտ միտքն էր: Հոբի դեպքում իր կնոջ սթափության կոչից [1, էջ 958] հետո է, որ Հոբի մոտ կասկածամտությունն է երևում: Թեև այս ամենը հասնում է մինչև Հոբի կողմից իր իսկ անկարողության խոստովանությանը, սակայն պատմության վերջում Աստված վարձատրում է Հոբին ու բազմապատկում նրա կորուստը: Թեև շատ ավելի ուշ Արթուր Շոպենհաուերը հաստատելու էր, որ «Կյանքը անվերջ խաբեություն է, մի ձեռնարկ է, մի անհաջող գործարք, որն իր ծախսերը երբեք չի ծածկում և երբեք իր խոստումները չի կատարում» [7, էջ

63], այնուամենայնիվ Հոբբը ոչ միայն պահպանեց իր գոյությունը, այլև բազմապատկեց իր ունեցվածքը՝ փորձություններին դիմակայելուց հետո:

Հին Կտակարանում թերևս Աստվածային ցասումի և պատժի ամենամեծ դրսևորումները տեսնում ենք Մովսեսի պատմության մեջ: Աստծո կողմից Մովսեսն ընտրված էր իսրայելացիներին Եգիպտոսի գերությունից ազատելու համար: Նախ շրջադարձային էր Մովսեսի քննադատությունն ու հռետորական հարցը՝ ուղված Աստծուն. «Տէ՛ր, ինչո՞ւ չարչարեցիր քո ժողովրդին և ինչո՞ւ ուղարկեցիր ինձ: Այն պահից, երբ մտայ փարաւոնի պալատը քո անունից նրա հետ խօսելու համար, նա չարչարեց ժողովրդին, իսկ դու երբեք չես փրկում քո ժողովրդին» [1, էջ 69]: Թեև դա ներկայացվում է որպես զանգատ, սակայն այդ խոսքերից անմիջապես հետո տեսնում ենք, որ Հայր Աստված վճռական է տրամադրվում. «Հիմա կտեսնես, թե ինչ եմ անելու փարաւոնին» [1, էջ 69]: Եվ Աստծո կողմից 10 հարվածներ են հասցվում Եգիպտոսին: Եթե գետերի արյուն դառնալու, գորտերի, մժեղների, շնաճանճերի, կարկուտի, անասունների կոտորածի, թանձրամած խավարի, մորեխների պատժի դեպքում այդքան էլ մեծ սարսափ չկար, ապա Հոր ցասումի ու պատժի ամենամեծ դրսևորումը եղավ եգիպտացիների մոտ ուռուցքի տարածումն ու անդրանիկ երեխաների մահը: Սա բաժին հասավ բոլոր եգիպտացիներին, ովքեր ունեին անդրանիկ որդիներ: Այս պատիժն ու տառապանքը Աստված համարեց զարմանահրաշ գործ: Երբ Մովսեսը փարավոնին հայտնեց Աստծո այս ցանկության մասին և զայրացած դուրս եկավ փարավոնի մոտից, Աստված Մովսեսին փաստեց, որ փարավոնն իրեն չի լսելու, որպեսզի ինքը եգիպտացիների երկրում ավելի շատ նշաններ ու զարմանահրաշ գործեր անի: Այս պարագայում տեսնում ենք վերևում արդեն իսկ նշված կիերկեգորյան բանաձևի առկայությունը. ընդհանրական գաղափարի ու նպատակի իրագործում, կա՛մ իսրայելացիների փրկություն. «Եգիպտացիների ամբողջ երկրում մեծ աղաղակ բարձրացաւ, որովհետև տուն չկար, որտեղ մեռել չլիներ» [1, էջ 77]: Այս բանաձևին լրացնելու է գալիս նաև Պլատոնն իր իդեալների աշխարհի մասին գրույցների սահմանագծում. «Իդեալական (իդեաների) աշխարհը կազմում է հիերարխիկ սիստեմ, որի մեջ ստորին գաղափարները ենթարկված են վերիններին, գազաթին բարիքի գաղափարն է» [5, էջ 15]: Դա այն էր, ինչը գնահատվում է հին հունական առասպելներում: Պլատոնն իր վերոնշյալ դիտարկմամբ վերևում տեսնում է բարության միտքը, ապա Աստծո համար այդ գաղափարը հասանելի է միայն իր ընտրյալների համար: Այստեղից էլ ծնվում է նվիրյալի կողմից կամքը չկատարելու հետևանքով ստեղծված պատիժը, որն էլ քրիստոնեական ուսմունքը վերաձևակերպեց որպես անհնազանդություն: Իսկ վերևում բարության և գաղափարական աշխարհի հետ առերեսման առաջին փորձը ձախողվեց: Բաբելոնյան աշտարակաշինությունը տապալվեց, ինչպես Կաֆկան է ընդգծում՝ «Եթե հնարավոր լիներ կառուցել Բաբելոնի աշտարակը առանց բարձրացնելու այն դեպի վեր, թույլ կտրվեր» [2, էջ 15]:

Ե Զ Ը Ա Զ Ա Ն Գ ՈՒ Մ. Նոր Կտակարանում գրեթե չենք տեսնում Հայր Աստծուն: Այնտեղ զգում ենք նրա շունչը: Այստեղ Հայրը ուղարկում է որդուն, ով ամենամեծ ողբերգության գլխավոր հերոսն է: Տեղի է ունենում Հին և Նոր Կտակարանների գաղափարական հենքի մասնակի փոփոխություն: Որդին բերում է սիրո նոր ընթերցումը: Նոր Կտակարանում որդին ուղարկվում է որպես զոհ՝ իր մեջ կրելով Հայր Աստծո մահվան, հարության և փրկության գաղափարախոսությունը: Այս կետում նկատում ենք աստվածա-

յին ցասումի ուղղակի վերացում, քանի որ որդին բացառապես սիրո ու նվիրումի գաղափարախոսության տարածողն է լինում, սակայն չի զլանում կրկնել նաև գոջման ու ներման գաղափարախոսությունը: Աստվածային ցասումի և դրանից մարդկային վախի մոդելը նախաքրիստոնեական մշակութաբանական, աստվածաբանական համակարգում առկա է: Այն նկատում ենք նաև Հին կտակարանում: Նոր կտակարանում որդին իր հետ միասին բերում է այլ գաղափարախոսություն, որը բնականաբար տրվում է Հոր շնչով: Թիմոսյան վախի մոդելը գործում է հավերժորեն: Մակայն աստվածային ցասումը մարդու համար դարձել է անտեսանելի: Աստվածային ցասումն ու դրանից մարդու վախը անտրոհելի է մեր բնությունից:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աստուածաշունչ**, Էջմիածին: Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն հրատ.: 2016: 1501 էջ:
2. **Կաֆկա Ֆ.** «Առակներ և պարադոքսներ», Երևան: «Նաիրի» հրատ.: 2014: 71 էջ:
3. **Կրկյաշարյան Ս.** «Դիցարանական բառարան»: Երևան, «Լույս» հրատ.: 1985: 264 էջ:
4. **Որոզինես, Աղոթքի մասին**, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ.: 2007: 173 էջ:
5. **Պլատոն**, հատոր 1, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ.: 2006: 252 էջ:
6. **Կերկեգոր Ս.** "Страх и трепет", М., "Республика", 1993, 109 с..
7. **Шопенгауэр А.**, "Избранные произведения", М., "Республика", 1992, 560 с..
8. **Սուրբ Հովնան**, <https://www.qahana.am/am/christian/show/518724145/10>

References

1. **Astvacashunch** [Bible],Ejmiacin, Hayastani Astvacashnchyan ynkerutyun hrat., 2016, 1501p.. (in Armenian)
2. **Kafka F.** Proverbs and paradoxes, [Arakner ev paradoqsner],Yerevan,"Nairi" hrat.,2014,71p..(in Armenian)
3. **Krkyasharyan S.**, Mythological dictionary [Dicabanakan bararan], Yerevan, "Luys" hrat., 1985, 264p. (in Armenian)
4. **Vorogines**, About prayer [Axotqi masin], Mayr Ator S. Ejmiacin hrat., 2007, 173 p. (in Armenian)
5. **Platon**, [Platon, hator 1], Yerevan, "Sargis Khachenc" hrat., 2006, 252 p. (in Armenian)
6. **Kierkegor S.** Fear and trembling [Strax i tepet] M., "Respublika", 1993, 109 p. (in Russian)
7. **Shopenhauer A.** Selected Works [Izbrannie proizvedeniya] M., "Respublika", 1992, 560 p. (in Russian)
8. **Surb Hovnan**, <https://www.qahana.am/am/christian/show/518724145/10>

Ընդունվել է / Received on: **09. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **14. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արա Սմբատի ԶԱՐԳԱՐՅԱՆ՝ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ, էլ. հասցե՝ zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232

Ara Smbat ZARGARYAN: Junior Researcher at the Institute of Literature named after Manuk Abeghyan of NAS, Yerevan, RA, e-mail: zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232

ՀՏԳ: 82.09

DOI: 10.52971/18294316-2025.28.1-185

LEVON MANVELYAN AND "MURCH" JOURNAL

Siranush H. Parsadanyan

Institute of Literature named after Manuk Abeghyan NAS, Yerevan

Abstract

Introduction: Poet, prose writer, dramatist, translator, pedagogue, literary critic and public figure Levon Manvelyan (1864-1919), entering the literary arena at the end of the 19th century and playing an important role in shaping Armenian literature of that period, as well as becoming one of the key authors of the era, actively collaborated with the literary and socio-political journal "Murch" founded by Avetik Araskhanyan and published in Tiflis during 1889-1907, contributing various materials.

Methods and Materials: The work employed biographical, comparative, and hermeneutic methods of literary text analysis. **Analysis:** Both Levon Manvelyan's literary works and critical articles, being direct products of that period, were mainly published in the literary and socio-political journal "Murch". **Results:** Manvelyan's works, which are unique manifestations of the era and left a crucial mark on the course of Armenian literature, although now primarily hold literary-historical and cognitive value, nevertheless attract attention from the perspective of artistic coverage of the period. In this regard, "Murch" journal's role was particularly important in establishing Manvelyan as a poet, translator, dramatist, and literary critic. It is no coincidence that his name is closely associated with the journal.

Key words: *Levon Manvelyan, "Murch" journal, creative work, history of literature, critical articles, literary process, literary-historical value.*

Citation: Parsadanyan S. *Levon Manvelyan and "Murch" Journal* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. V. 1 (28), 185-191pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-185

ԼԵՎՈՆ ՄԱՆՎԵԼՅԱՆԸ ԵՎ «ՄՈՒՐՃ» ՀԱՆԴԵՍԸ

Միրանուշ Հ. Փարսադանյան

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, մանկավարժ, գրա-

քննադատ և հասարակական գործիչ Լևոն Մանվելյանը (1864-1919), գրական ասպարեզ մտնելով 19-րդ դարավերջին և կարևոր դեր խաղալով հայ գրականության տվյալ փուլի ձևավորման գործընթացում, ինչպես նաև դառնալով ժամանակաշրջանի առանցքային հեղինակներից մեկը, ակտիվորեն աշխատակցել է Ավետիք Արապխանյանի հիմնած և 1889-1907 թվականներին Թիֆլիսում տպագրված գրական, հասարակական-քաղաքական «Մուրճ» հանդեսին՝ հանդես գալով տարաբնույթ նյութերով: *Մեթոդներ և նյութեր*. Աշխատանքում կիրառվել են գրական բնագրի վերլուծության կենսագրական, զուգադրական և հերմենևտիկ մեթոդները: *Վերլուծություն*. Լևոն Մանվելյանի ինչպես գեղարվեստական ստեղծագործությունները, այնպես էլ գրաքննադական հոդվածները, լինելով տվյալ ժամանակահատվածի *անմիջական ծնունդ, հիմնականում լույս են տեսել գրական, հասարակական-քաղաքական «Մուրճ» հանդեսում: Արդյունքներ*. Լևոն Մանվելյանի ստեղծագործությունները, որոնք ժամանակաշրջանի յուրօրինակ դրսևորումներն են և կարևորագույն հետք են թողել հայ գրականության ընթացքի վրա, թեև այժմ առավելապես ունեն գրապատմական և ճանաչողական արժեք, այնուհանդերձ ուշադրություն են գրավում ժամանակաշրջանի գեղարվեստորեն ընդգրկման տեսանկյունից: Այս առումով առանձնակի կարևոր է «Մուրճ» հանդեսի դերը Մանվելյանի՝ որպես բանաստեղծի, թարգմանչի, դրամատուրգի և գրաքննադատի կայացման գործում: Եվ պատահական չէ, որ նրա անունը սերտորեն կապված է հանդեսի հետ:

Բանալի բառեր՝ Լևոն Մանվելյան, «Մուրճ» հանդես, ստեղծագործություն, գրականության պատմություն, քննադատական հոդվածներ, գրական գործընթաց, գրապատմական արժեք:

Ինչպես հղել՝ Փարսադանյան Ս. Լևոն Մանվելյանը և «Մուրճ» հանդեսը // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1(28): 185-191 էջեր:
DOI: 10.52971/18294316-2025.28.1-185

INTRODUCTION: Poet, prose writer, dramatist, translator, pedagogue, literary critic and public figure Levon Manvelyan confirms through his works the pattern that each period in literary history, besides having major authors who characterize its essence, also produces writers who, while not making great artistic discoveries, play a significant role in shaping the literary process of that phase [1, p. 57]: Entering the literary arena at the end of the 19th century and authoring poems, epic poems, dramatic poems, a novel, literary and theatrical articles, Levon Manvelyan played an important role in shaping Armenian literature of that period, becoming one of the era's key authors. In other words, Manvelyan is an author who influenced the course of literature, and his works now primarily hold literary-historical value.

Being a well-rounded individual and one of the most serious intellectuals of the era, Levon Manvelyan was simultaneously a modest, diligent, and honest writer with his own unique convictions and principles [5, p. 3]. This is evidenced by the testimonies of his contemporaries.

Levon Manvelyan and the Literary, Socio-Political Journal "Murch"

Levon Manvelyan's creative period in Armenian literary history was marked by the literary debut and progression of distinctive authors: Raffi, Shirvanzade, Muratsan, Tserents, Alexander Tsaturyan, Hovhannes Hovhannisyanyan and others.

Levon Manvelyan's works, being artistic manifestations of that period, were mainly published in the literary and socio-political journal "Murch," founded by Avetik Araskhanyan and published in Tiflis from 1889 to 1907.

It is a known fact that after the medieval period - in the 17th-18th centuries and the first decades of the 19th century - the literary-social movement that began had not fully resolved its objectives due to insufficient socio-economic and ideological prerequisites. The new decades were a complex and tense period for Armenians, marked by the formation of new economic and political relations, great shifts, and intellectual awakening. Under these conditions, the Awakening generation of Armenian intellectuals fulfilled its historical mission [14, p. 195]. Literary scholar Samvel Muradyan writes about this: "The press experienced unprecedented quantitative and qualitative growth; the social currents formed around it developed journalism and its language; along with published books, the press also gave space to fiction in its pages, through which the language of our poetry, prose, and drama developed. In modern times, the role of theater was especially invaluable in the development of language" [14, p. 195].

Being a representative and follower-successor of the Awakening generation through his works and national-ideological convictions, Levon Manvelyan's creative innovation is directly connected with theater. It is evident that he was fascinated by Shakespeare's works and, under the latter's influence, even wrote tragedies ("The Misanthrope," "The Patricide," "Ideals and Reality," "Artavasdes II").

Manvelyan's works "Magda" [6], "Painter Tashchyan" [7], and "Doctor Yervand Boshayean" [4] are interesting. The author calls the latter a comedy, following Gabriel Sundukyan. However, it is apparent that in this work, it is not the comedic circumstances that play a role, but rather the dramatic ones [3, p. 660].

By the way, the drama "Painter Tashchyan" was once criticized in "Murch" journal, which was followed by Manvelyan's harsh response [11, pp. 153-158].

Particularly noteworthy among Manvelyan's works is the dramatic poem "Towards the Heights," which describes one of the most important episodes in the life of the great enlightener Khachatur Abovyan - his ascent to Mount Ararat with Friedrich Parrot. The work is titled "Towards the Heights," yet it doesn't depict the actual ascent to Ararat, but rather the events before and after. The author emphasizes not the unfolding of actions, but the revelation of characters' feelings. From an artistic perspective, the poem is a weak work, but it's interesting ideologically. Abovyan's ascent to the biblical mountain is symbolically paralleled with reaching the heights of science. And Abovyan appears as a pioneer through whom the enlightenment and progress of the Armenian people must take place.

The publication of Manvelyan's dramatic poem "Towards the Heights" in "Murch" was followed by a critical article by T. Y., in which the author criticizes Manvelyan for his literary material, particularly writing: "He (Levon Manvelyan - S. P.) narrates actual events in verse with meticulous accuracy" [15, p. 207]. Considering this fact as a serious flaw for the work, the critic ends the article with the following sentence: "It must be said that Mr. Manvelyan's verse is beautiful and polished" [15, p. 208].

This critical article in "Murch" is followed by Manvelyan's response titled "On the Occasion of a Literary Question" [9, pp. 80-86]¹, in which the author attempts to answer the critic and explain the main idea of his work, the poem "Towards the Heights."

¹ The article was published with the following editor's note: "We are publishing this article both out of our principle of being patient towards every sincere and honest conviction, and because we consider the author's perspectives to be important" [9, pp. 80-86].

First highlighting the main points that, according to the critic, the author didn't choose suitable material for his poem, that "feeling is very scarce, and finally, there's a complete absence of drama" [9, p. 80], Manvelyan counters with the justification that to find the idea of the writing, it's necessary first to clarify what prompted the writer to take up the pen and artistically reproduce this or that material, which would then be followed by following the main hero, his words or actions, and then drawing conclusions about the idea of the work [9, pp. 80-81]. Manvelyan then writes that the guiding idea of this work stems not from Parrot's aspiration but from Abovyan's heart and mind, then emphasizes the coincidence of physical ascent and high human aspirations [9, p. 81].

Manvelyan then notes that the critic accuses him of having "very scarce" emotionality. According to Manvelyan, this is not accidental but a purposeful choice. He emphasizes that his poem depicts social and intellectual renaissance, meaning the poem's main aspiration lies in portraying ideological and intellectual developments. Manvelyan is confident: "The foundation of drama is not feeling, but struggle, whatever type it may be. On the other hand, more often various elements are mixed in the same writing - description and history, thought and reasoning, feeling and struggle" [9, p. 82].

The criticism also raises the question of why the hero or central idea of "Towards the Heights" avoids dramatic developments. Manvelyan counters in this case as well, insisting that the poem depicts not dramatic development but intellectual renaissance, and the ascent to Mount Masis's peak symbolically represents not only physical but also intellectual renaissance.

However schematic and pathetic Manvelyan's dramatic poem may seem today, his response is admirable, where he justifies all the points that were questioned by the critic.

Along with his literary and translation activities, Levon Manvelyan published various materials and reviews in the literary and socio-political journal "Murch," which were primarily unique responses to the era and given reality. These critical articles and reviews constitute the most important and perhaps most valuable part of Levon Manvelyan's literary heritage. Accordingly, Manvelyan's articles published in "Murch" in the late 1890s and early 1900s not only elevated Armenian literary criticism to a new level but are also important for revealing the author's literary taste and fully uncovering his artistic convictions.

Manvelyan's critical articles not only raised Armenian criticism, especially theatrical criticism, to a new level but are also important from the perspective of understanding the literary debates of the era. It should also be noted that Manvelyan received positive evaluations from the editorial board of "Murch" journal. In one of the journal's issues, it is particularly written: "Mr. Manvelyan, with his theatrical reviews, not only established a regular section in 'Murch,' but also gave theatrical criticism a proper position in our Armenian press in general" [2, p. 519].

In continuation, we read: "Armenian theatrical groups have never shown such respect for the Armenian press as the group from last winter showed towards 'Murch's' theatrical criticism" [2, p. 520].

"Murch" journal served as an irreplaceable platform in establishing Levon Manvelyan as a poet, translator, dramatist, and literary critic, and in this regard, it is no coincidence that his name is closely associated with the journal. The author himself valued and highly appreciated this circumstance. In this context, Manvelyan's poem written on the occasion of "Murch's" tenth anniversary, titled "In Memory of 'Murch's' Decade," is noteworthy as the best manifestation of the above [12, p. 82].

Levon Manvelyan's critical and literary articles are important in the context of Armenian literature's developmental history. As a literary scholar and critic, he actively engaged in literary discussions of the late 19th and early 20th centuries and, why not, often guided the evaluations given to the literary process.

In Levon Manvelyan's literary heritage, the critical article published on the occasion of Hovhannes Tumanyan's poetry collection, which appeared in "Murch" journal, is of exceptional interest.

Thus, Levon Manvelyan as a critic, first addressing Armenian literature and its connections with the era's issues, makes noteworthy observations: "Armenian poetry, long withered, began to bloom anew in the late eighties, and this brings me joy. This is a phenomenon that has its social causes and will not go unnoticed by future literary historians. Why certain types of writers - tragedians, novelists, or poets - appear at certain times, and why certain branches of literature become dominant, this question must seek its answer in the general conditions of social life. What I'm saying, of course, needs no proof; it's not a new idea that there is a great and reciprocal influence between literature and social life, and if today we notice that our poetry in recent years is beginning to occupy a notable place in literature, to show itself, this circumstance certainly deserves serious attention and encouragement" [13, p. 93].

Then, highly appreciating Tumanyan's artistic values, Manvelyan emphasizes the All-Armenian poet's creative originality, highlighting the depth and multifaceted layers of his poetry, writing: "In his poems, he resembles neither our old nor new poets; he stands apart, he is independent, he is a kind of novelty for us. This uniqueness is the folk element, which constitutes the true pulse of his narrative verses. And indeed, show me one who has so systematically and successfully made Armenian peasant life the subject of verses, as we see in our poet's poems" [13, pp. 95-96].

In this regard, Manvelyan's following observation made on another occasion is noteworthy, which helps to fully understand the critic's above-quoted thought: "Each individual supremely knows the country where they were born and raised, and the society with which they have interacted and morally connected. Every poet, painter, and artist in general takes their subjects largely from the life and nature they are closely familiar with, which they have observed and studied" [8, p. 123]. And according to Manvelyan, they willingly or unwillingly submit to the influence of their environment, and their creation bears a unique stamp. And naturally, a poet cannot better imagine the life of a foreign nation that they are not well acquainted with, while their native environment is different. From this, the writer concludes that art, like a plant, can best grow and bloom on its native soil [8, p. 123]. Manvelyan, continuing the thought, writes that "An artistic work cannot become universal if it does not bear the distinctive features of a specific environment; it becomes universal when it is born in a specific environment and bears the stamp of genius" [8, p. 123].

Manvelyan particularly appreciates Tumanyan's poem "Loretsi Sako," specifically writing: "In no poem does Mr. Tumanyan show himself with such characteristic features, with his worthy and deficient sides, as he does in the verse 'Loretsi Sako'" [13, p. 96]. Critic Manvelyan is especially attracted by the fact that Tumanyan manages to prove his natural ability through individual beautiful pieces [13, p. 96].

In general, Manvelyan was convinced that Armenian artistic literature should incorporate folk and contemporary vital multifaceted elements, while at the same time, the motifs and materials should encompass a broader scope. Manvelyan was concerned by the fact that "it (meaning Armenian literature) is compressed within a narrow circle," and it is necessary to remove this framework so that a wider horizon opens up for modern Armenian poetry [3, p. 67].

Levon Manvelyan provided an almost comprehensive and in-depth analysis of Hovhannes Tumanyan's works. He examined Tumanyan's creations not only as valuable and comprehensive examples of Armenian literature but also as works rich in ideological and psychological depth. Manvelyan's critical views reveal much about what distinguishes Tumanyan's writings from his contemporaries.

Concluding his analysis, Manvelyan points out metrical monotony as a creative shortcoming in Tumanyan's work [13, p. 100]. Notably, Levon Manvelyan was among the first to provide a serious critical evaluation of Tumanyan's works.

Overall, Levon Manvelyan's critical articles varied in their emphasis and depth. In his critical writings, beyond general theoretical discussions, Manvelyan addressed both individual authors and specific works.

From this perspective, we should highlight one of Manvelyan's articles published in "Murch," written on the occasion of Arakel Nalbandyan's publication of "Fables." In this critical piece, Manvelyan highly praises the fabulist's style, describing it as "smooth and polished," while first establishing the importance of the fable genre, particularly original fables, in Armenian literature [10, pp. 155-158].

CONCLUSION: In summary, we can conclude that Levon Manvelyan, while being a prolific author and one of the developed intellectuals of his era, demonstrating literary principle and holding his unique place in the Armenian literary-social sphere of the period, has left only a modest mark in the history of Armenian literature through his artistic works. Although Manvelyan's works, which are unique manifestations of their time and have left a crucial imprint on the course of Armenian literature, now primarily hold historical and cognitive value, they nonetheless attract attention from the perspective of their artistic representation of the era. In this regard, the role of "Murch" journal was particularly significant in establishing Manvelyan as a poet, translator, dramatist, and literary.

Գրական ություն

1. **Դավթյան Լ.** «Լևոն Մանվելյանի դրամաները»//Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր: Երևան: 1965: N2: 57-68 էջեր:
2. «Չանագան լուրեր» // « Մուրճ»: Թիֆլիս: 1896: N 3-4: 518-536 էջեր:
3. «Հայ նոր գրականության պատմություն, հ. 4»: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: 1972:
4. **Մանվելյան Լ.** «Դուկտոր Երվանդ Բոչայեան»: Բաբու: 84 էջ:
5. **Մանվելյան Լ.** «Ընտիր երկեր»: Երևան: Հայպետհրատ: 1955: 609 էջ:
6. **Մանվելյան Լ.** «Մագդա»: Թիֆլիս: 1913: 44 էջ:
7. **Մանվելյան Լ.** «Նկարիչ Թաշնյան»: Թիֆլիս: Մ. Մարտիրոսյանց: 1903: 60 էջ:
8. **Մանուէլեան Լ.** «Մայրենի և օտար գեղարուեստ // «Գեղարուեստ»: Թիֆլիս: 1909: N 3: 123-126 էջեր:
9. **Մանուէլեան Լ.** «Մի գրական հարցի առիթով»: «Մուրճ»: Թիֆլիս: 1902: N 12: 80-86 էջեր:
10. **Մանուէլեան Լ.** «Քննադատություն և մատենախօսություն, Ա. Նալբանդեան, «Առակներ»: «Մուրճ»: Թիֆլիս: 1907: N 1: էջեր 155-158:
11. **Մանուէլեան Լ.** «Քննադատություն և մատենախօսություն, Պատասխան իմ քննադատին»: «Մուրճ»: Թիֆլիս: 1904: N 6: 153-158 էջեր:
12. **Մանուէլեանց Լ.** Բանաստեղծություններ և պոեմաներ: Բագու: Տպարան «Արօր»: 1899:
13. **Մանուէլեանց Լ.** «Յ.Թումանյանի “Բանաստեղծությունները”// «Մուրճ»: Թիֆլիս: 1891: N 1: 93-100:
14. **Մուրադյան Ս.** «Հայ նոր գրականության պատմություն, Գիրք Ա», Երևան: ԵՀ հրատ.: 2020: 540 էջ:
15. **Տ. Յ.** «Մատենախօսություն, Լ.Մանուէլեան, “Դէպի վեր” պոեմա»:«Մուրճ»: Թիֆլիս: 1902: N 9:206-208 էջեր:

References

1. **Davt'yan L.** "Levon Manvelyan's dramas" [*Levon Manvelyani dramanerə*], Publ. House of AS Arm SSR, Yerevan, 1965, N 2, 57-68 pp.. (in Armenian)
2. "Various news" [*Zanazan lurer*], Murch, Tiflis, 1896, N 3-4, 518-536 pp. . (in Armenian)

3. "History of New Armenian Literature, volume 4" [*Hay nor grakanut'yan patmut'yun, h. 4*], Publ. House of the AS of Arm SSR, Yerevan, 1972. (in Armenian)
4. **Manvelyan L.** "Doktor Ervand Boshayean" [*Doktor Ervand Boshayean*], Baqu, 84 p.. (in Armenian)
5. **Manvelyan L.** "Works" [*Y'ntir erker*], Yerevan, Haypethrat, 1955, 609 p.. (in Armenian)
6. **Manvelyan L.** "Magda" [*Magda*], Tiflis, 1913, 44 p.. (in Armenian)
7. **Manvelyan L.** "Artist Tashjian" [*Nkarich T'ashtchyan*], Tiflis, M.Martirosyanc, 1903, 60 p..(in Armenian)
8. **Manue'lean L.** "Native and foreign fine arts" [*Mayreni ev o'tar gegharuest*], Gegharuest, Tiflis, 1909, N 3, 123-126 pp.. (in Armenian)
9. **Manue'lean L.** "On a literary question" [*Mi grakan harci ar'it'ov*], "Murch", Tiflis, 1902, N 12, 80-86 pp.. (in Armenian)
10. **Manue'lean L.** "Criticism and bibliography, Arakel Nalbandian, "Proverbs" " [*Qnnadatut'iun matenaxo 'sout'iun, Ar'aque'l Nalbandean, «Ar'akner»*], "Murch", Tiflis, 1907, N 1, 155-158 pp.. (in Armenian)
11. **Manue'lean L.** "Criticism and bibliography, Reply to my critic" [*Qnnadatut'iun ev matenaxo'sut'iun, Patasxan im qnnadatin*], "Murch", Tiflis, 1904, N 6, 153-158 pp.. (in Armenian)
12. **Manue'lean L.** "Poems and Epics" [*Banasteghc'ut'iunner ev po'e'maner*], Baqu, "Aror", 1899. (in Armenian)
13. **Manue'lean L.** "H. Toumanian's "Poems"" [*Y. T'umaneani "Banasteghc'ut'iunnerə"*], "Murch", Tiflis, 1891, N 1, 93-100 pp.. (in Armenian)
14. **Muradyan S.** "History of New Armenian Literature, Book A" [*Hay nor grakanut'yan patmut'yun, girq A*], Yerevan, YU Publ., 2020, 540 p.. (in Armenian)
15. **T. Y.** "Criticism and bibliography, "Upwards", poem" [*Matenaxo'sut'iun, L. Manue'lean, "De'pi ver", po'e'ma*], "Murch", Tiflis, 1902, N 9, 206-208 pp.. (in Armenian)

Received on: / Ընդունվել է **20. 02. 2025**

Reviewed on: / Գրախոսվել է **22. 04. 2025**

Accepted for Pub:/ Հանձնվել է տպ. **23. 05. 2025**

Information about the author

Siranush Hovik PARSADANYAN: PhD in Philology,

Junior researcher at the Institute of Literature after M. Abeghyan of NAS, Yerevan, RA,

e-mail: parsadanyansiranush@gmail.com // orcid.org/0000-0002-5292-4614

Սիրանուշ Հովիկի ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,

ԳԱԱ Մ.Աբեղյանի անվ. գրակ. ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,

էլ. հասցե՝ parsadanyansiranush@gmail.com_// orcid.org/0000-0002-5292-4614

ՀՏԴ՝ 82.09

DOI: 10.52971/18294316-2025.28.1-192

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆԸ ԸՆԴԴԵՍ ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԻ.
«ԿԱՐՈՏ» ՎԻՊԱԿԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Արամ Ա. Խաչատրյան

ԳԱԱ Ս Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Խորհրդային շրջանի շուրջ 70 տարիների գրականության ու գրական դեմքերի վերազնահատման տեսանկյունից հետանկախության տարիներին ամբողջական և համակողմանի գիտական ուսումնասիրություններ չեն ստեղծվել, և խնդիրը մնացել է առանձին հետազոտողների ուշադրության կենտրոնում՝ սահմանափակվելով այս կամ այն առանձին շրջափուլի կամ հեղինակի վերաբերյալ ուսումնասիրությամբ: Խորհրդային գրականագիտության կողմից, այսպես կոչված, գրական կուռքի վերածված հեղինակներից շատերը շարունակեցին մնալ իրենց բարձունքում նաև անկախության շրջանում: Նույն շրջանի գրականության վերաբերյալ առկա բազմաթիվ կնճռոտ հարցեր մինչ օրս շարունակում են մնալ համակողմանի չուսումնասիրված: Կնճռոտ հարցերից մեկը հնարավոր գրագողությունների խնդիրն է: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել են վերլուծական և զուգադրական մեթոդները, ինչպես նաև ժամանակի մամուլի ուսումնասիրության արդյունքում փորձ է արվել բանավեճը ներկայացնել առավել լայն համապատկերում: *Վերլուծություն.* Հոդվածում ներկայացվում է Կարպիս Սուրենյանի և Հրաչյա Քոչարի նույնանուն («Կարոտ») գործերի ստեղծման նախապատմությունը, առնչությունները, տեքստաբանական համեմատությունները, և արծարծվում է հեղինակային պատկանելիության խնդիրը: *Արդյունքներ.* Ըստ էության, Հրաչյա Քոչարը իր «Կարոտը» վիպակի նյութը յուրացրել է Սուրենյանի նույնանուն պատմվածքից՝ որոշ հատվածներում գրեթե նույնականորեն:

Բանալի բառեր՝ Հրաչյա Քոչար, Կարպիս Սուրենյան, վերազնահատում, «Կարոտ», գրագողություն, գրական մամուլ, գրական բանավեճ:

Ինչպես հղել՝ Խաչատրյան Ա. Կարպիս Սուրենյանն ընդդեմ Հրաչյա Քոչարի. «Կարոտ» վիպակի հեղինակային պատկանելության խնդիրը, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Ն. 1(28), 192-200 էջեր:
DOI: 10.52971/18294316-2025.28.1-192

KARPIS SURENYAN VERSUS HRACHYA KOCHAR: THE PROBLEM OF COPYRIGHT OWNERSHIP OF THE SHORT STORY "YEARING" (KAROT)

Aram A. Khachatryan

Institute of Literature named after M. Abeghyan of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: During the years of independence, not a single full and comprehensive scientific study has been created that would rethink the literature and literary figures of the Soviet period, which lasted for about 70 years. This issue remains the focus of individual researchers who limit themselves to studying a particular period or author. Many of the authors whom Soviet literary criticism made literary idols continued to remain on their pedestal even after independence. Many pressing issues related to the literature of that period remain comprehensively unexplored to this day. One of such pressing issues is the issue of possible plagiarism. **Methods and materials:** The work used analytical and comparative methods, and by studying the press of that time, an attempt was made to present the discussion in a broader perspective. **Analysis:** The article examines the background to the creation of the eponymous works ("Yearing") by Karpis Surenyan and Hrachya Kochar, their interrelations, text comparisons, and also touches upon the issue of authorship. **Results:** In essence, Hrachya Kochar borrowed material for his story "Yearing" from the story of the same name by Surenyan, in some places almost identically.

Key words: *Hrachya Kochar, Karpis Surenyan, reevaluation, "Yearing" (Karot), plagiarism, literary press, literary discussion.*

Citation: Khachatryan A. *Karpis Surenyan versus Hrachya Kochar: the Problem of Copyright Ownership of the Short Story "Yearing" (Karot)* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025, V. 1(28), 192-200 pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-192

Ն Ա Ն Ա Բ Ա Ն. Սուրենյան-Քոչար ամենությունները

Անկախության առաջին տարիներին խորհրդային շրջանի տարբեր հեղինակների հնարավոր գրագողությունների վերաբերյալ նախկինում բանավոր շրջանառված խոսակցությունները, արխիվային փաստաթղթերի ու հուշերի հրապարակմանը զուգահեռ, սկսեցին շրջանառվել մամուլում, իհարկե, որոշ դեպքերում հերյուրանքի ու զագրախոսության մակարդակով:

Այս համատեքստում ակտիվորեն շրջանառվում էր նաև իր կյանքի օրոք «գրական գեներալի» համարում ունեցող Հրաչյա Քոչարի անունը: Իհարկե, որոշ դեպքերում դա պայմանավորված էր 1930-ական թթ. գործունեության արդյունքում նրա անձի շուրջ ձևավորված բացասական, իսկ որոշ դեպքերում՝ ժխտողական միտումներով: Հայտնի փաստ է, որ

Քոչարը 1930-ական թվականներին իրեն դրսևորել էր գրականության մարդուն բնորոշ ամենավատ հատկանիշներով: Բազմաթիվ են հոդվածներն ու ելույթները Չարենցի, Բակունցի, Մահարու, Դաշտենցի և այլոց դեմ, որոնցում Քոչարը հանդես է եկել բավականին սուր որակումներով: Արձակագիր, գրականագետ Նորայր Ադայանի բնորոշմամբ՝ Քոչարի «յուրաքանչյուր որակում այն ժամանակ ուներ սպանիչ կրակոցի ուժ» [1]:

«Օգտեն Վասպուրի ճանապարհորդությունը», «Մեծ տան գավակները» և խորհրդրդային գաղափարախոսության շնչով գրված այլ՝ ներկայումս բացառապես գրապատմական առումով հետաքրքրություն ներկայացնող գրքերի հեղինակ Քոչարը 1960-ական թթ. հրատարակում է իր նախընթաց շրջանի գրականությանը բովանդակային, գաղափարական իմաստով գրեթե չադերսվող, իր արձակի համատեքստում ամբողջությամբ նոր որակի գրականություն՝ ազգային-հայրենասիրական թեմաներով¹: Նման կտրուկ փոփոխությունը կարող է վերագրվել «խրուշչովյան ձևափոխության» տարիներին խորհրդային իշխանությունների կողմից որոշ վերապահությամբ արտոնված ազգային-հայրենասիրական թեմաներով ստեղծագործելու հնարավորությանը և քաղաքական նոր իրողություններին արագորեն հարմարվելու Քոչարի ունակություններին: 1930-ական թվականներին իր գրչընկերներին «նացիոնալիզմի» մեջ մեղադրող Քոչարը 1950-ական թթ. կեսերից ինքը դարձավ ազգային գործիչ²: Իհարկե, Քոչարի վերափոխումը պայմանավորված էր հասարակական-քաղաքական իրավիճակով, սակայն նրա ստեղծած գրականության թեմայի, որակի վերափոխումը ունի նաև Քոչարի կյանքն ու գործը ներկայացնող, բայց գիտական գրականության մեջ գրեթե չշրջանառվող ուրիշ պատճառներ:

2006 թվականին «Նորք» հանդեսում հրատարակվում են Ստեփան Ջորյանի անտիպ օրագրային գրառումների որոշ հատվածներ: Քոչարի հուղարկավորության առիթով 1965 թվականի մայիսի 17-ին արված գրառման մեջ Ջորյանը գրում է. «Մի քանի օր առաջ թաղեցին 37-38 թթ. «հերոս»-գրպարտիչ ու մատնիչ Բ-ին (նկատի ունի Հրաչյա Քոչարին- Ա. Խ.), որ տասնյակների գլուխ կերավ այդ թվերին: Բայց թաղեցին որպես հասարակական գործիչ և անվանի գրող: Չէ՞ որ շատերը գիտեին նրա անամոթ գործերը (կան ձեռքից ձեռք շրջող դոկումենտներ), ինչո՞ւ են դիմում ֆալսիֆիկացիայի – չեն հասկանում: Իսկ որպես գրող անարժեք էր, անարվեստ. սրա-նրա թեմաներն ու պլոժները վերցնող-մշակող» [8, էջ 109]: Անդրադառնալով խորհրդային տարիներին որոշ հեղինակների կողմից այլոց ձեռագրերը կամ թեմաները յուրացնելու իրողությանը՝ Ռուբեն Հովսեփյանը 30-ական թվականների գրականության վերագնահատմանը նվիրված բանավիճային մի հոդվածում գրում է, որ հրատարակչությունում աշխատելու տարիներին

¹ Խոսքը մասնավորապես «Նահապետ» և «Կարոտ» վիպակների մասին է:

² Օրինակ, Քոչարը որոշակի ներդրում ունի Սարդարապատի հուշահամալիրի կառուցման գործում: Արձակագիր, լրագրող Կլարա Թերզյանը այս առնչությամբ գրում է. «Սարդարապատի հուշահամալիրի գաղափարը ծնվել է գրականագետ Հրանտ Թամրազյանի տանը՝ խնջույքներից մեկի ժամանակ: Մի քանի բաժակ խմելուց հետո, սովորության համաձայն, տանտերը հյուրերի՝ Հրաչյա Քոչարի ու Հովսեփյանի շրջկոմի առաջին քարտուղար, պատմաբան Վլադիմիր Դարբինյանի հետ սկսեցին հայրենասիրական երգեր կատարել: Հենց սեղանի շուրջ էլ խոսակցություն բացվեց Մայիսյան հերոսամարտերի ու Սարդարապատի ճակատամարտի մասին: Հրաչյա Քոչարն առաջարկեց հուշահամալիր կառուցել» [9, էջ 85]:

մի տարեց մարդ հաճախակի էր այցելում իրեն՝ բերելով պատմվածքներով և վիպակներով լեցուն թղթապանակներ, սակայն ենթադրյալ հեղինակը, ըստ Հովսեփյանի, «բառիս ամենախիսկական իմաստով անգրագետ է, բայց պատմվածքները, վիպակները գրագետ էին շարադրված, տեղ-տեղ նույնիսկ գրական շնորհքի փայլատակումներ կային» [11]: Կասկածելով, որ այդ թղթապանակների հեղինակը նա է՝ Հովսեփյանը պարզել է, որ 1937 թվականին նա եղել է Զապել Եսայանի տան խուզարկությունն իրականացնող անձանց մեջ, և ենթադրաբար, առգրավված ձեռագրերի մի մասը տարել է տուն, հետագայում որոշակի փոփոխություններով արտագրել և փորձել տպագրել: Շարունակելով միտքը՝ Հովսեփյանը գրում է. «Իմ խորին համոզմամբ «Սպիտակ գիրքը» ժողովածուի թեմաները, նյութը Հր. Քոչարին տրամադրել են մնացյալ մահկանացուների համար փակ գրոցներից: Էլ ո՞ւմ պիտի տրամադրեին» [11]:

Նույն առիթով գրված «Հոսող ժամանակը և մնացող պատմությունը» հոդվածում Դավիթ Գասպարյանը ևս հպանցիկ անդրադառնում է այս թեմային. «Պարզվում է, որ Քոչարն իր «Կարոտ»-ն արտագրել է Կարպիս Սուրենյանից: Հետո լույս է տեսել նրա «Կարոտը»-ը: ...Այնպես որ Քոչարի «Կարոտ»-ը կարոտ է նոր լուսաբանումների», գրում է գրականագետը [6]: Խմբագրությունը որպես նշված հատվածի ծանոթագրություն՝ գրել է, որ թերթի հետագա համարներից մեկում Սուրենյանը հանդես կգա առավել հանգամանալից, սակայն հետագա որևէ համարում Սուրենյանն այս թեմային չի անդրադարձել: Նույն 30-ական թվականների գրականության ու գրական դեմքերի վերագնահատման առիթով Նվարդ Քոչարը, ի պաշտպանություն հոր, հրապարակում է ծավալուն հոդված, սակայն «Կարոտ» վիպակի հնարավոր գրագողության մեղադրանքներին չի անդրադառնում [17]:

Երկու «Կարոտ»-ի մեկ պատմությունը

1965 թվականին «Սովետական գրականություն» և «Սովետական արվեստ» ամսագրերի առաջին համարներում լույս տեսան Հրաչյա Քոչարի «Կարոտ» վիպակը [18, էջեր 8-46] և Կարպիս Սուրենյանի նույնանուն փոքրածավալ պատմվածքը [14, էջեր 44-48]: Աշխարհընկալման, ոճական, թեմայի ընտրության տեսանկյունից գրեթե հակադիր այս հեղինակների՝ օրերի տարբերությամբ հրապարակված գործերը, բացի նույն վերնագիրն ունենալուց, նման էին թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային առումով:

1960-ական թվականներին Հրաչյա Քոչարն արդեն ճանաչման հասած «գրական գեներալի» համարում ունեցող գրող էր՝ բազմաթիվ գրքերի, հոդվածների հեղինակ, մրցանակների դափնեկիր, ընդ որում՝ 1965 թվականին արդեն հրատարակվել էին գրողի երկերի վեցհատորյակի երեք հատորները: Ի տարբերություն Քոչարի՝ Աթենքում ծնված, ապա Խորհրդային Հայաստան ներգաղթած Կարպիս Սուրենյանը դեռևս հասարակության լայն զանգվածներին անձանոթ հեղինակ էր: Նա Հայաստան է ներգաղթել 1946 թ., 1947-1958 թթ. որպես երգիչ աշխատել է Հայաստանի պետական երգչախումբում, ապա՝ մինչև 1961 թվականը սովորել Մոսկվայի գրական բարձրագույն դասընթացներում, որից հետո վերադարձել և նշանակվել է «Սովետական արվեստ» ամսագրի երաժշտական բաժնի վարիչ՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1966 թվականը: Այդ ընթացքում Սուրենյանը հրատարակել է ընդամենը մեկ գիրք՝ «Մաքուր ձեռքեր» պատմվածքների ժողովածուն (1959):

Խորհրդային իշխանության տարիներին «գրական գեներալի» կյանքն ու գործունեությունը շարունակեցին մնալ գրականագետների ու հրատարակիչների ուշադրության կենտրոնում՝ ի տարբերություն Կարպիս Սուրենյանի, ով մինչև օրս մնում է պատշաճ չուսումնասիրված ու չգնահատված:

1965 թ. հրատարակվում է Հր. Քոչարի «Սպիտակ գիրքը» ժողովածուն, որը հեղինակի վերջին գիրքն էր ու ներառում էր նաև «Կարոտ» վիպակը: Հետո 1967 թվականին, Քոչարը արժանանում է ՀԽՍՀ պետական մրցանակի՝ ժողովածուում ներառված «Նահապետը» վիպակի համար, իսկ 1977 թ. նույն վիպակի հիման վրա Հենրիկ Մալյանը նկարահանում է համանուն ֆիլմ: «Կարոտ» վիպակը ևս արժանանում է ռեժիսորների ուշադրությանը. Ֆրունզե Դովլաթյանը 1990 թ. վիպակի հիման վրա նկարահանում է համանուն ֆիլմ: «Սպիտակ գիրքը» լայն արձագանք է ունենում թե՛ ընթերցողների շրջանում, թե՛ գրականագետների: Գիրքը բարձր է գնահատվում նաև Սփյուռքում: Բեյրութում հրատարակվող «Բագին» հանդեսի խմբագիր, գրականագետ Պողոս Մնասայանը գրում է. «Ի՛նքը, Հր. Քոչարը, միայն հա՛յ մարդը կրնար եօթանասունըհինգ տարիներ շարունակ մայրենի լեզուին համար կղպում բերաններ բանալ եւ անակընկալ յորդումներով էջեր քաղցրացրնել. ուրիշ մը չէր կրնար բնաւ չբացուած, սրտեր լոյսին հանել ու սանձագերծել այն «կարօտ»ը, որ յատուկ է միայն հայ մարդուն» [13]: Իսկ բանաստեղծ, արձակագիր Հակոբ Նորունին առանձին գրքով է անդրադառնում Քոչարի «Սպիտակ գիրքը» ժողովածուին [12]: «Սպիտակ գիրքը» ներառյալ «Կարոտ» վիպակը, գրականության պատմության մեջ մնաց որպէս Քոչարի «կարապի երգ», նրա լավագույն ստեղծագործությունը. «Առանց վարանման կարող ենք ասել, որ այդ գործը Քոչարի լավագույն գիրքն է, նրա կյանքի պոեմը, կյանքի երգը՝ կարապի երգը», - գրում է գրականագետ Արծրուն Ավագյանը [4]:

Մեր գրականագիտության մեջ Սուրենյանի ստեղծած գրականության վերաբերյալ հոդվածները սակավաթիվ են, առավել ուշադրության են արժանացել նրա թարգմանությունները: 1950-ական թվականների սկզբին գրական ասպարեզում առաջին քայլերն անող Սուրենյանի մուտքը գրականություն ողջունում է գրականագետ Լևոն Հախվերդյանը [10]: Ավելի ուշ Պերճ Զեթունցյանը Սուրենյանի արձակը բնորոշում է որպէս «իսկական գեղարվեստական արժեք», «Կարոտը»՝ «սքանչելի պատմվածք» [7], իսկ Դոստոևսկու «Կարամազով եղբայրները» վեպի հայերեն թարգմանության գրախոսության մեջ Մամվել Անթոյանը գրում է. «Կարպիս Սուրենյանը նախ և առաջ շնորհալի գրող է, ապա նաև՝ հմուտ դոստոևսկիագետ» [2]:

Քոչարի «Կարոտ» վիպակի և Սուրենյանի նույնանուն պատմվածքի նմանությամբ առաջին անգամ հպանցիկ անդրադարձել է ամերիկահայ արձակագիր, բանաստեղծ Հակոբ Ասատուրյանը՝ գրախոսելով Սուրենյանի «Բնիկ ո՛ր տեղացի էք» (1969) գիրքը, որտեղ զետեղված էր նաև «Կարոտ» պատմվածքը. «... Կը յիշեցնէ Քոչարի մէկ պատմուածքը, «Կարօտ»-ը», - գրում է նա [3]:

1991 թ. Կարպիս Սուրենյանը «Գարուն» հանդեսում տպագրում է 26 տարի առաջ տպագրված «Կարոտ» պատմվածքի ամբողջական տարբերակը՝ «Կարոտի պատարագ» վերնագրով և նախաբանով, որում ներկայացնում է պատմվածքի ստեղծման դրդապատճառը: Նա հակիրճ գրում է «Հրայա Քոչարին առնչված այն տգեղ օրերին բավական աղ-

մուկ հանած պատմության» մասին [15]: 2007 թվականին հրատարակվում է Սուրենյանի «Օրագիր. 1943-2001» գրքի 2-րդ հատորը, որը ներառում էր նաև Քոչարի հետ ունեցած առնչությունների օրագրությունը [16, էջեր 284-301, 818-820]: Ըստ նախաբանի և օրագրության՝ Սուրենյանը պատմվածքը գրել է Ռիգայում 1960 թվականի ամռանը: Մի քանի ամիս անց նա Մոսկվայում «վերադաս գրող ու պետական այր Հրայրա Քոչարի» հետ հանդիպման ժամանակ խոսել է իր նոր պատմվածքի մասին, որը պետք է ունենար «Կիլիկյան դիտարան» կամ «Կարոտի պատարագ» վերնագիրը [16, էջ 284]: Քոչարը ցանկություն է հայտնել կարդալու, Սուրենյանը նրան է տվել պատմվածքի ամբողջական տարբերակը: Կարդալուց հետո Քոչարը վերադարձրել է՝ ասելով, որ «այս ձևով հագիվ թե կարելի է տպել» [15, էջ 68]: Չորս տարի անց՝ 1964 թվականի վերջին, Սուրենյանը «Մովետական գրականություն» ամսագրի խմբագրությունում պատահաբար տեսնում է ամսագրի հաջորդ համարի փորձաթերթերը՝ առաջին էջին նկարագարող վերնագիր՝ «Կարոտ», հեղինակը՝ Հր. Քոչար: Մի քանի էջ կարդալուց և ակնհայտ նմանությունները տեսնելուց հետո Սուրենյանը, որ այդ ժամանակ «Մովետական արվեստ» ամսագրի երաժշտական բաժնի վարիչն էր, այս մասին հայտնում է ամսագրի գլխավոր խմբագիր Սարգիս Բայանդուրին և սցենարիստ Վադիմ Մելիքսեթյանին: Նրանց առաջարկով որոշվում է «Մովետական արվեստ» ամսագրի 1965 թվականի առաջին համարում տպագրել պատմվածքը, սակայն ամսագրի բովանդակությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ էր կրճատել այն՝ 40 մեքենագիր էջը դարձնելով 15, և վերնագրից հանել «պատարագ» բառը: Ըստ Սուրենյանի՝ արդյունքում ստացվում, է պատմվածքի «...մի ամփոփ տարբերակ, ասես տաճարի ամբողջական մանրակերտ առանց զարդաքանդակների» [16, էջ 298]: Օրագրում Սուրենյանը գրում է նաև այդ օրերին գրող Գարեգին Բեսի և դրամատուրգ Մերոբ Սարգսյանի հետ կապված միջադեպերի մասին: Ըստ Սուրենյանի՝ երկու «Կարոտների» տպագրումից հետո Գարեգին Բեսը «մեղադրել է» իրեն «բերանբացություն» անելու և սյուժեն Քոչարին պատմելու համար, իսկ Մերոբ Սարգսյանը ասել է. «Դու այդ միտքն ես տվել նրան, առիթ էս տվել, որ ինքն էլ այդ «Կարոտ»-ը գրելով իր սև անցյալը սպիտակեցնի» [16, էջ 300]:

Քոչարի «Կարոտը» վիպակը և՛ կառուցվածքային, և՛ բովանդակային առումով գրեթե նույնական է Սուրենյանի «Կարոտի պատարագ» պատմվածքի հետ, հաճախ նույնիսկ առկա են խոսքային կրկնություններ: Սուրենյանի պատմվածքը բաղկացած է յոթ գլխից, Քոչարի վիպակը՝ նույնպես ունի յոթ գլուխ (վերջինը վերնագրված է «վերջերգ»): Սուրենյանի պատմվածքի հերոսը թուրքական ջարդերից փրկված Հեթում աղբարն է՝ իր ծննդավայր Կիլիկիան լքած և Կիպրոս գաղթած, կարոտի հոգեկան տագնապով ապրող մարդ: Քոչարի մոտ Հեթում աղբարը դարձել է Առաքել՝ փրկված թուրքական ջարդերից ու գաղթած Խորհրդային Հայաստան: Երկուսն էլ երկու որդի ունեն: Տարբեր են միջավայրերը. Հեթում աղբարը Կիպրոսից նայում է ծովի հակառակ կողմում գտնվող Կիլիկիայի լեռներին, Առաքելը՝ Արաքսից այն կողմ գտնվող լեռներին: Երկուսն էլ երազում իրենց ծննդավայրն են գնում, տանջվում կարոտից, կորցնում քունը:

Սուրենյանի պատմվածքում կարդում ենք. «Հաճախ, բահին հենված, կանգնում էր ցանկապատի մոտ ու երկար նայում այդ լեռներին, որոնք երբեմն ավելի մոտ էին թվում

կարծես, քան այգուց մինչև ծով իջնող կանաչ բլուրներն ու ձորերը»³ [15, էջ 70], իսկ Քոչարի վիպակում կարդում ենք. «Առավոտ շուտ Մասիան ու Բարթողյան լեռներն այնքան մոտիկ ու հստակ էին երևում, որ թվում էր, թե ձեռքդ պարզես՝ նրանց լանջերից մանդակ ու խավրժիլ կքաղես» [18, էջ 9]: Հեթում աղբարն ասում է. «Հայրս կանչեց» [15, էջ 76], Առաքելը ասում է. «Երկիր ընձի կկանչե...» [18, էջ 13], Հեթումի կինը՝ Սիրանը, անհանգստանալով ամուսնու պահվածքից, ասում է. «Ի՞նչ եղավ քեզի, պե մարդ» [15, էջ 76], նույն իրավիճակում Առաքելի կինը՝ Սանամը, ասում է. «Ի՞նչ եղավ քեզի, հայիվոր...» [18, էջ 13]: Մեկ այլ տեղում Սիրանը ասում է. «Աման, պե մարդ, իսկա կորսնցուցեր ես... ալ ի՞նչ կփնտրես հին գյուղը, ի՞նչ մնաց հոն» [15, էջ 77], իսկ Սանամը ասում է. «Սև գա վրեղ, երկիր ըսելով պիտի մեռնիս» [18, էջ 13]: Սիրանը վախենում է՝ «խենթացե՞ր է» Հեթում աղբարը [15, էջ 76], Սանամը վախենում է՝ հանկարծ «չճո՞ղի» Առաքելը [18, էջ 13]: Սիրանը ասում է. «Գիտնա՛ս ինչ եկավ մեր գլխուն» [15, էջ 76], նույն իրավիճակում Սանամը ասում է. «Էս ի՞նչ սև բերիբ մեր գլխուն [18, էջ 13]: Հեթում աղբարի անհետանալուց հետո կինը ասում է. «Վախ, տղաս, վախ, գիտնաս ինչ եկավ մեր գլխուն... մեր մարդուն իսկա փչեր է, որ ելյե Կիլիկիա երթա... Բան չըսած ելեր գացեր է գիշերը... Ես ալ կկարծեմ, պարտեզը նստեր է, շատ անգամ այդպես կըներ: Սպասեցի, սպասեցի, չեկավ ես պառկեցա: Մեյ մըն ալ արթնացա, որ, մեղա քեզ Տեր, պիտի լմնա գիշերը, առտու ըլլա, դեռ չկա մարդը» [15, էջ 76]: Նույն իրավիճակում Սանամը ասում է. «Իրիկուն Առաքել չկար: Ասի միգուցե գնացեր է դուրս հովանալու... Գիշեր ելա նայեցի՝ չկար... Լուսադեմին նայեցի՝ չկար... Չկա, չկա, Առաքել չկա... Մեր տուն քանդեց, մեր գերաններ փլցուց, Առաքել...» [18, էջ 13] և այլն⁴:

Տարբեր են երկու գործերի վերջաբանները: Հեթում աղբարը նավակով դուրս է գալիս ծով՝ գնալու դեպի Կիլիկիա, սակայն «կարոտի երազանքը փուլ է գալիս», հասկանում է իր գյուղը վերադառնալու երազանքի անհնարիությունը: Հեթում աղբարին նկատում են ծովի վրա հերթապահություն իրականացնող ոստիկանները և տանում ոստիկանական բաժին, ապա նա որդու ուղեկցությամբ գնում է տուն: Իսկ Առաքելը լուսնյակ գիշերով աննկատ հատում է միջպետական սահմանը՝ առանց վախենալու սահմանի հակառակ կողմում գտնվող թուրք ասկյարներից, գտնում է գյուղը, հանդիպում իր հին համագյուղացի քրդերին: Հոգեկան նուրբ ապրումները նկարագրող գործը կորցնում է հոգեբանական համոզվածությունը և վերածվում արկածի: Առաքելի սահմանախախտությունը դառնում է միջպետական հարց. Մոսկվան և Անկարան դիվանագիտական նոտաներ են հղում միմյանց: Ի վերջո Առաքելը, հասկանալով, որ իր քայլը դարձել է միջպետական լարվածության թեմա, վերադառնում է և հայտնվում բանտում: Ըստ էության, սյուժետային այն հատվածները, որոնք բացակայում են Սուրենյանի պատմվածքում և ավելացվել են Քոչարի կողմից՝ մասնավորապես գյուղ վերադառնալու ճանապարհը, արկածները և այլն, զեղարվեստական տեսանկյունից թույլ են, նաև՝ ոչ համոզիչ: Իսկ Քոչարի վիպակի, այսպես ասած, երկարակեցությունը մեծապես պայմանավորված է նաև նույնանուն ֆիլմի առկայությամբ: Այս առնչությամբ գրականագետ Վազգեն Գաբրիելյանը իրավացիո-

³ Համեմատության համար հիմք ենք ընդունել Կարպիս Սուրենյանի «Կարոտի պատարագ» պատմվածքի՝ «Գարուն» ամսագրում տպագրված ամբողջական տարբերակը [15]:

⁴ Սուրենյանի օրագրում և ս առկա են տեքստային որոշակի համեմատություններ [16, էջ 294]:

րեն նշում է «Քոչարի Կարոտ» վիպակը շարունակում է շրջանառվել «կինոսցենար-ռեժիսոր-դերասան» բարեհաջող նպաստով» [5]:

Քոչարի՝ ազգային-հայրենասիրական թեմայով գրված առաջին գործը «Նահապետը» վիպակն էր, որը հրատարակվել էր մեկ տարի ավելի վաղ՝ 1964 թվականին Քոչարի երկերի վեցհատորյակի երկրորդ հատորում: Սակայն այն, որ Քոչարը Սուրենյանի «Կարոտ» պատմվածքի ձեռագիրը կարդացել էր 1960 թվականին, թույլ է տալիս ենթադրել, որ «Կարոտը» վիպակը գրվել է ավելի վաղ, և Քոչարի ստեղծարանական համակարգում հենց այս գործն է թեմայի վերափոխման առաջին արդյունքը:

Ե Զ Ը Ա Հ Ա Ն Ն Գ ՈՒ Մ. Այսպիսով, ծանոթ լինելով Կարպիս Սուրենյանի «Կարոտի պատարագը» պատմվածքին և վստահ լինելով, որ իր հորդորով Սուրենյանը երբեք չի տպագրելու այն, Քոչարը յուրացրել է վերջինիս պլոժեն՝ որոշ դեպքերում գրեթե նույնականորեն: Այդուհանդերձ, Սուրենյանի պատմվածքը թե՛ գեղարվեստական, թե՛ կառուցվածքային, բովանդակային ու ոճաբանական առումով գերազանցում է Քոչարի «Կարոտ» վիպակին:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աղայան Ն.** «Աերնագիրը՝ 1937» / «Գրական թերթ»: 2007: N 34:
2. **Անթոսյան Ս.** «Կարամազով եղբայրները» հայերեն / «Գրական թերթ»: 1971: N 12:
3. **Ասատուրյան Հ.** «Բնիկ ո՞րտեղացի էք» / «Պայքար»: Բոստոն: 1970: N 117:
4. **Ավագյան Ա.** «Զգրված հարյուր էջեր» // Գիտության աշխարհում: 2010: N 3:
5. **Գաբրիելյան Վ.** «Ներել թե՛ չներել» / «Գրական թերթ»: 2008: N 4:
6. **Գասպարյան Գ.** «Հոտոլ ժամանակը և մնացող պատմությունը»: «Ազգ»-ի, «Մշակույթ» հավելված: 2008: N 4 (47): էջ Ը:
7. **Չեյթոնցյան Պ.** «Ծննդարիտ արժեքներ» / «Գրական թերթ»: 1981: N 49:
8. **Չոբյան Ս.** «Օրագիր» / «Նորք»: 2006: N 4:
9. **Թերզյան Կ.** «Բույլ մեծաց»: Երևան: «Գրաբեր» հրատ.: 2001: 85 էջ:
10. **Հախվերդյան Լ.** «Երկու պատմվածք» / «Գրական թերթ»: 1952: N 12:
11. **Հովսեփյան Ռ.** «Ծննդարտությունը գտնելու և հաստատելու» ճանապարհին / «Գրական թերթ»: 2007: N 43:
12. **Նորունի Հ.** «Հրաչյա Քոչարի «Սպիտակ գիրքը»»: Բեյրութ: «Սևան» տպարան, 1967: 58 էջ:
13. **Սնապյան Պ.** «Հրաչյա Քոչարի «Սպիտակ գիրքը» / «Բագին»: Բեյրութ: 1965: N 6: 53-54 էջեր:
14. **Սուրենյան Կ.** «Կարոտ» / «Սովետական արվեստ»: Երևան: 1965: N 1:
15. **Սուրենյան Կ.,** «Կարոտի պատարագ» / «Կարուն»: Երևան: 1991: N 10:
16. **Սուրենյան Կ.** «Օրագիր 1943-2001»: Հատոր 2: Երևան: «Սարգիս Խաչենց. Փրինթինֆո» հրատ.: 2007:
17. **Քոչար Ն.,** «Հրաչյա Քոչար. գրպարտություններն ու նշնարտությունները» / «Ազգ»-ի «Մշակույթ» հավելված: Երևան: 2008, թիվ 5(48):
18. **Քոչար Հ.,** «Կարոտ»: «Սովետական գրականություն» հրատ.: Երևան: 1965: N 1:

References

1. **Adalyan N.** Title 1937 [Vernagiry – 1937] / "Literary newspaper". Yerevan. 2007. N 34.
2. **Anthosyan S.** The Brothers Karamazov in Armenian [Karamazov yeghbayrmeri hayeren]. / "Literary newspaper". 1971: N 12:
3. **Asaturyan H.** Native or Local? [Bnik vortheghatsi yek]. / "Paygar". Bpston. 1970. N 117.
4. **Avagyan A.** Hundred Unwritten Pages [Chgrvats haryur ejery]. / "Science World". 2010. N 3

5. **Gabrielian V.** Forgive or not to Forgive [*Nerel te chnerel*]./ "Literary Newspaper", 2008. N 4.
6. **Gasparyan D.** The Flowing Time and Remaining History [*Hosogh zhamanaky ev mmasoghan patmutyuny*]. / "Azg", Culture Supplement. 2008. N 4 (47).
7. **Zeytuntsyan P.** True Values [*Chshmarit arjeqner*]./ "Literary newspaper". 1981. N 49.
8. **Zoryan S.** Diary [*Oragir*]. "Nork". 2006. N 4.
9. **Terzyan K.** Buil Metsats [*Buil metsats*]. "Graber Publishing House". 2001. 85 p.
10. **Hakverdyan L.** Two Short Stories [*Erku patmvatsk*]. / "Literary newspaper". 1952. N 12.
11. **Hovsepyan R.** On the Path of Finding and Affirming the Truth [*Chshmartutyuny gnalu ev hastatelu champany*]. / "Literary newspaper". 2007. N 43.
12. **Noruni H.** Hrachya Kochar's "White Book" [*Hrachya Kochari "Spitak Girqy*]. Beirut: "Sevan Press". 1967. 58 p.
13. **Snapyan P.** Hrachya Kochar's "White Book" [*Hrachya Kochari "Spitak Girqy*]./ "Baghin". Beirut. 1965. N 6. 53-54 pp.
14. **Surenyan K.** Karot [*Karot*]./ "Soviet Art". 1965. N 1.
15. **Surenyan K.** The Liturgy of Longing [*Karoti Patarag*]./ "Garun". 1991. N 10. 68-79 pp.
16. **Surenyan K.** Diary 1943-2001 (Volume 2) [*Oragir 1943-2001*]. Yerevan: Sargis Khachents: "Printinfo Publishing house". 2007.
17. **Kochar N.** Hrachya Kochar: Slanders and Truths [*Hrachya Kochar: zrapartutyunnern u chshmartutyunnern*]. "Azg" Culture Supplement. 2008. N 5 (48).
18. **Kochar H.** Karot [*Karot*]. / Soviet Literature. 1965. N 1.

Ընդունվել է / Received on: **18. 02. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **14. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արամ Աշոտի ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ aramkhachatryan93@mail.ru // orcid ID 0009-0009-4685-3117

Aram Ashot KHACHATRYAN: Junior researcher at the Institute of Literature after M. Abeghyan of NAS, Yerevan, RA,
e-mail: aramkhachatryan93@mail.ru // orcid ID 0009-0009-4685-3117

ՆԵՐԱՊՐՈՒՄԻ ԳՐԱԿԱՆ-ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՎԻՋՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ XX ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ

Նելլի Բ. Գալստյան

Մ. Խրենացու անվան համալսարան, Երևան, ՀՀ

Անվտիում

Նախաբան. Հոդվածը նվիրված է Վիլյամ Սարոյանի XX դարի 30-ական թվականների դրամաներում հավաքական մարդու ներաշխարհի, ենթագիտակցությունից ապրելու իմաստավորմանը անցնելու, աշխարհի մեջ հերոսի պատասխանատվության բաժինը փնտրելու, մահվան խորհուրդը մեկնելու, ապրելու դատապարտվածությունից կեցության իմաստավորման հասնելու ներապրումի գրական-փիլիսոփայական դրսևորումների բացահայտմանը: *Մեթոդներ և նյութեր.* Հոդվածում կիրառվել են պատմահամեմատական, կառուցվածքային-տիպաբանական մեթոդները, գրական երկերի վերլուծության համակարգային և ամբողջական վերլուծության սկզբունքը: Փորձ է արվել՝ վեր հանելու ուսումնասիրվող նյութում պատճառահետևանքային կապերը, առնչությունները: Շարադրանքում օգտագործվել են գրականագիտության ինչպես նախորդ շրջանների ուսանելի փորձը, այնպես էլ ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները: *Վերլուծություն.* Ապրելով և ստեղծագործելով Ամերիկայում՝ Վիլյամ Սարոյանը հետևել է եվրոպական գրական արժեքներին, հարել դարի առաջնային գրական ուղղության գոյափիլիսոփայության հիմքում ընկած ներապրումի գրական-փիլիսոփայությանը, որն ԱՄՆ էր ներթափանցել Ֆրանսիայից: Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի արանքում ամերիկյան գրականության զարգացման պատմական գործընթացում ամերիկյան գրողների ստեղծագործություններում նկատվում էին ներապրումի գրական-փիլիսոփայական դրսևորումներ: Սարոյանը ներապրումի գրական-փիլիսոփայությանն է հարել այն պարզ պատճառով, որ նրա գլխավոր թեման եղել է մարդկային գոյությունը, ժամանակակից աշխարհում անհատի ճակատագիրը, կյանքի իմաստը և նպատակը,

մարդու ազատությունը, օտարումը, անհատի և հասարակության հարաբերությունները: *Արդյունքներ*. Եվրոպական գոյափիլիսոփայական ուղղությունը հուշել է գրողին հայացքն ուղղել դեպի հավաքական մարդու ներաշխարհը, ենթագիտակցությունից անցնել ապրելու իմաստավորմանը, աշխարհի մեջ հերոսի պատասխանատվության բաժինը փնտրել, մահվան խորհուրդը մեկնել, ապրելու դատապարտվածությունից հասնել կեցության իմաստավորմանը:

Բանալի բառեր՝ ներաշխարհ, կեցություն, գույթ, փիլիսոփայական խորհրդածություն, ներապրում, ապրելու ինքնություն, դրամա, աշխարհըմբռնում, կյանքից հալածվածներ, գոյության խորհուրդ:

Ինչպես հղել՝ Գալստյան Ն. Ներապրումի գրական-փիլիսոփայական դրսևորումները Վիլյամ Սարոյանի xx դարի 30-ական թվականների դրամաներում:// ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1 (28): 201-209 էջեր:

DOI: 10.52971/18294316-2025.28.1-201

LITERARY-PHILOSOPHICAL MANIFESTATIONS OF INNER LIFE IN WILLIAM SAROYAN'S DRAMAS OF THE 30S OF THE XX CENTURY

Nelli B. Galstyan

University after M. Khorenatsi, Yerevan, RA

Abstract

Introduction: The article is dedicated to the discovery of the literary-philosophical manifestations of the inner world of the collective person in William Saroyan's dramas of the 30s of the 20th century, moving from the subconscious to the meaning of living, searching for the hero's share of responsibility in the world, leaving the mystery of death, and reaching the meaning of existence from the condemnation of living. **Methods and materials:** Historical-comparative, structural-typological methods, the principle of systematic and complete analysis of literary works are used in the article. An attempt was made to highlight the cause-and-effect connections, relationships in the studied material. In the paper, both the instructive experience of previous periods of literary studies, as well as modern studies and achievements were used. **Analysis:** Living and creating in America, William Saroyan followed the European literary values, connected with the literary-philosophy of inner life, which was the basis of the existential philosophy of the primary literary direction of the century, which entered the USA from France. In the historical process of the development of American literature between the First and Second World Wars, literary-philosophical manifestations of inner life were observed in the works of American writers. Saroyan joined the literary-philosophy of inner life for the simple reason that his main theme was human existence, the fate of the individual in the modern world, the meaning and purpose of life, human freedom, alienation, the relationship between the individual and society. **Results:** The European existential-philosophical direction prompted the writer to turn his mindset to the inner world of the collective person, to move from the subconscious to the meaning of living, to look for the hero's share of responsibility in the world, to leave the mystery of death, to reach the meaning of existence from the condemnation of living.

Key words: *Inner life, inner world, existence, greed, philosophical reflection, originality of living, drama, world cognition, haunted by life, the mystery of existence.*

Citation: Galstyan N. *Literary-Philosophical Manifestations of Inner Life in William Saroyan's Dramas of the 30s of the XX Century*// "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 1 (28). Gyumri. 2025, 201-209 pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-201

Ն ԱԽ ԱԲ Ա Ն. Վիլյամ Սարոյանի գրական գործունեության վրա մեծապես ազդել է գոյափիլիսոփայության ներապրումի գրական փիլիսոփայությունը, որի ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել երեք ուսմունք՝ Ս.Կիերկեգորի փիլիսոփայությունը, Ֆ. Նիցշեի «կյանքի փիլիսոփայությունը» և Է. Հուսեռլի ֆենոմենոլոգիան: Ս.Կիերկեգորի կարծիքով, եթե բանական իմացությունը վերացական է և անդեմ, ապա գոյափիլիսոփայական մտածողությունը, կապված լինելով մարդու ներաշխարհի հետ, կոնկրետ անհատական գիտելիք է: Բանականությունը չի կարող թափանցել մարդկային գոյության մեջ, որովհետև վերջինս դուրս է գտնվում բանականության իշխանությունից [7, 204]:

«Կյանքի փիլիսոփայությունից» գոյափիլիսոփայությունը փոխառել է բանականության մասին այն պատկերացումը, թե բանականությունը պատկանում է ոչ թե մարդու անհատական գոյությանը, այլ նրա հոտային բնությանը, որն արտահայտում է մարդու մեջ եղած անդեմը և վերացականը: Գիտակցության ֆենոմենները ուսումնասիրող Հուսեռլի ֆենոմենոլոգիական մեթոդը գոյափիլիսոփայությունն օգտագործում է վերլուծելու մարդկային գոյության կառուցվածքը: Գոյափիլիսոփայության ելակետը Էկզիստենցիա՝ մարդկային գոյություն հասկացությունն է: Էկզիստենցիան այն է, ինչ երբեք չի դառնում օբյեկտ: Իսկ քանի որ ճանաչել կարելի է միայն այն, ինչ օբյեկտ է, ուստի Էկզիստենցիան չի կարող դառնալ գիտական, ռացիոնալ ճանաչողության առարկա: Էկզիստենցիան գուտ սուբյեկտիվություն է, ինքն իր համար գոյություն, այն կեցություն-գիտակցություն է, քանի որ կեցությունը (աշխարհը) գոյություն ունի միայն որպես կեցություն գիտակցության մեջ: Գիտակցությունը և աշխարհը գոյություն ունեն միաժամանակ. առանց սուբյեկտի չկա և չի կարող լինել օբյեկտ: Այսինքն՝ արտաքին աշխարհը գոյություն ունի այնքանով, որքանով ընկալվում և գիտակցվում է սուբյեկտի կողմից: Ըստ Հայդեգերի՝ սուբյեկտի շնորհիվ է աշխարհը իմաստավորվում, որոշակիանում և ոչնչից վերածվում ինչ-որ բանի: Էկզիստենցիալիզմը ելնում է այն մտքից, որ մարդու գոյությունը նախորդում է նրա էությանը: Օրինակ, երբ մարդը ուզում է որևէ իր պատրաստել, նախապես իր մտքի մեջ ստեղծում է այդ իրի գաղափար-պատկերը: Նա գիտի, թե այդ իրը ինչի համար է ստեղծում, ուստի, կարող ենք ասել, որ իրի էությունը նախորդում է նրա գոյությանը: Դասական, ռացիոնալիստական փիլիսոփայությունը նույնպես ընդունում է, որ մարդու էությունը նախորդում է նրա գոյությանը, որ գոյություն ունի ընդհանուր «մարդկային բնություն» առանձին մարդկանց մեջ: Մինչդեռ, ըստ գոյափիլիսոփայության, մարդն իր էությունը ձեռք է բերում գոյությունից հետո, այսինքն՝ ժամանակի ընթացքում է ինքն իրեն ստեղծում: Մարդու էությունն այն է, ինչն ինքն իրենից է ստեղծվում: Մարդը մի էակ է, որն ուղղված է ապագային և գիտակցում է, որ ինքը նախագիծ է: Այսպիսով, գոյափիլիսոփայությունը մարդուն հանձնում է կեցության տնօրինությունը և նրան պատասխանատու դարձնում իր հետագա գոյության համար [6, 9]: Էկզիստենցիան բնութագրվում է որպես վերջավոր, պատմական և իրադրային գոյություն: Մարդու պատ-

մականությունը դրսևորվում է այն բանում, որ նա «նետված է որոշակի իրադրության մեջ և գիտակցում է իր մահկանացու, վերջավոր լինելը: Աշխարհում մարդը միակն է, որին բնորոշ է ժամանակի և կեցության մասին մտածելը [5, էջ 57]:

Վիլյամ Սարոյանի 30-ական թթ. դրամաներում պարզորոշ դրսևորվում է ներապրումի գրական-փիլիսոփայական հակվածությունը: Գրողի համար յուրաքանչյուր անհատ գեղարվեստական իրականության մեջ նվաճում է ներաշխարհի բացահայտման իրավունք անկախ ընկերային դիրքից, անկախ կրթվածության հարաբերական աստիճանից: Սարոյանն իր դրամաներում շեշտը դնում է մարդու ներաշխարհի վերհանման և բացահայտման վրա: Միայլ կլինի կարծել, թե գրողը անտեսում է արտաքին հանգամանքը. նա այն ծառայեցնում է ներքինին: «Արտաքինի իջեցումը ներքին մակարդակ և ներքինի բարձրացումը արտաքին մակարդակ, - գրում է պրոֆեսոր Հենրիկ Էդոյանը, - XX դարի արվեստի գլխավոր գիծն է, նրա կառուցվածքային հիմքը: Դա պարզորոշ կարելի է տեսնել կերպարվեստի (կուբիզմից մինչև արստրակցիոնիզմ), երաժշտության (ավանգարդիստական), գրականության բոլոր ժանրերի մեջ (հատկապես սյուռեալիստական պոեզիայում), վեպի մեջ Պրուստից, Ջոյսից, Կաֆկայից մինչև «նոր վեպ», դրամատուրգիայում՝ «արսուրդի թատրոն»: Ներքին մակարդակի բարձրացումը արտաքին պլան նշանակում է գեղարվեստական ինֆորմացիայի զարգացում իր ուղղահայաց կառուցվածքի մեջ (վերնից դեպի ներքև, մակերեսից դեպի խորքը), իմաստային կողմի մեծացում, բացահայտումն այնպիսի իրականության, որը մինչ այդ անձանթ էր արվեստին» [1, էջեր 6-7]: Որպես ազատ մտածող՝ Սարոյանը ելնում է մարդ-հասարակություն բարոյական ծայրերի զարգացման անհրաժեշտությունից, «մարդ այնպես պետք է ապրի իրեն տրված կյանքի բաժինը, որ աշխարհի աղետներին նոր ցավ չավելացնի, այլ բարոյամբ և ցնծությամբ ողորդի աշխարհը» [3, էջ 218]:

Վ. Սարոյանը մարդուն չափում է ներաշխարհից բխող արձագանքումով: Նա քաջ գիտի, որ ներաշխարհի ցուլցման առաջնահերթ կովանը ներանձնացումն է: Ահա թե ինչու իր հերոսները, գրեթե անխտիր, առանձին են, ներամփոփ, կտրված արտաքին հետաքրքրություններից: Կուզենայի երկու վերապահում կատարել՝ կապված «առանձնության» հետ: Նախ այն չի կարելի հասկանալ բացարձակ իմաստով. իրական կյանքից տարանջատումը գրողի գեղարվեստական նախասիրությունն է, որ հետագայում ևս գերիշխեց նրա ստեղծագործություններում: Կյանքից կտրվածությունը հերոսի պայմանական վիճակն է. որ խնամքով կառուցում է գրողը, որպեսզի գեղարվեստական զննական լուսարձակը ամբողջությամբ ուղղի «ներաշխարհի» վրա: Ներաշխարհը գտվում է. ծավալվում են նրա ներքին օրինաչափությունները միայն այն դեպքում, երբ գրողը կլանված է իր «խոշորացույցով», զուտ ներանձնական գեղարվեստական պրպտումներով: Այդ ժամանակ բնական է նրա «կամավոր հեռացումը» առօրյա-առարկայական այն հարաբերություններից, որոնք թուլացնում են լուսարձակի գորությունը: Նախնառաջ պետք է ընդունել, որ ներապրումը կյանքի հոգևին արձագանքն է, նոր նվաճված գեղարվեստական իրականությունը: Եվ եթե կա տարանջատում, ապա այն պետք է որոնել մեկը մյուսով պայմանավորված երկու իրականությունների միջև. որտեղ շատ հաճախ վերջիններս սուր, իրարամերժության հասնող բախումների մեջ են: Երկրորդ վերապահությունը մարդու և հասարակության փոխհա-

րաբերությունն է, որը անպայմանորեն դեմոկրատական բովանդակություն ունի, քանի որ պարզում է Մարոյանի մարդկայնության սահմանը՝ գույթը, կարեկցանքը, շեմից մերժված, տառապանքը առանձին կրող անհատների հանդեպ:

1939 թվականին ամերիկահայ գրողը տպագրում է իր առաջին դրաման՝ «Իմ սիրտը լեռներում է», որի բնաբանն է դարձրել շոտլանդացի վտարանդի գրող Ռոբերտ Բրնսի «Իմ սիրտը լեռներում է» բանաստեղծությունը: «Երբ որ կըսեն «Միրտս լեռներում է»,-մեկնում է գրողը, ըսել չէ սիրտս լեռներում է, ըսել է սիրտս միշտ կերթա լեռները, սիրտս ազատ է, սիրտս չբռնվիր, և սիրտս չես կրնար բռնել դուն ու պահել...Ամեն մարդ էդպես է, չբռնվիր ու չպահվիր...ծերուկ, երբ կըսե սիրտս լեռներում է, ծերուկն ալ ազատ է: Ծերուկություն ալ չկրնար ինձի պահել, ծեր ըլլալ ալ ինձի համար հաշիվ չունի, ատ է՝ սիրտս լեռներում է» [5, էջ 202]:

«Իմ սիրտը լեռներում է» դրաման աչքի է ընկնում խնդիրների հրատապությամբ և խորությամբ, հերոսների մարդկային նշանակալիությամբ, կոմպոզիցիայի նրբությամբ, մտածվածությամբ: Ներկայի պատկերները տեղը զիջում են անցյալի հիշողություններին: Բեն Ալեքսանդրի վարձու տան պատերի միջով ներս են մտնում մարմնավորված երազները, հիշողությունը, երկյուղը, հուսալքությունը: Պատկերելով ընկերային ծանր բարքերը՝ Մարոյանը Բեն Ալեքսանդրի, նրա իննամյա որդու Ջոնիի, ծեր մոր, ութսունն անց երգիչ-դերասան Մըք Գրեգորի դառը ճակատագրերի միջոցով ընդգծում է մարդկային կեցության ողբերգությունը: Յուզին Օ՛Նիլի, Թեննեսի Ուիլյամսի համեմատությամբ՝ գրողը սրում է ընտանիքի կործանման, մարդկային տառապանքների սոցիալական պատճառաբանվածությունը, օգտագործում Շերվուդ Անդերսոնից անցած հոգեբանական վերլուծության ասպարեզում գոյափիլիսոփայության ձեռք բերած որոշ նվաճումներ: Մըք Գրեգորը ողբերգակ դերասան է. նա ընկերային բարքերի գոհն է: Նրա կյանքը եղել է երազ ու սպասում: Մըք Գրեգորի բոլոր հույսերը մարել են, երազները փշրվել և չնայած դրան՝ նա ուրիշի կյանքի մեջ տարբալուծում է իր սպասելիքները, իր երազները: Միայնակ ծերունին կյանքի վերջին պահերին փորձում է առանձնանալ իր նման ճակատագրից քշվածների հետ: «Ութսունն անց եմ և շուտով չվելու եմ աշխարհից,-ասում է Մըք Գրեգորը,-: գնալուց առաջ ուզում եմ դառնալ ձեր մի մասնիկը, որ սալրելու եք իմ մահից հետո» [2, էջ 38]:

Կյանքին խորագիտակ ծերունին համոզված է, որ միայնությունը մահ է, մահը մահ է, երբ անբաղձալի է, կանխահաս, սխալ, նվաստացնող, անիմաստալից: Երգիչ-դերասանը վերջին անգամ փորձում է գտնել իր հեզկոթ «սպառումը», որը կյանքից քշվածներին փոքր-ինչ երջանկացնելն է, նրանց իր շեփորի հնչյուններով հայրենի լեռները տեղափոխելը, վշտերն ու ցավերը մեղմելը, մի պահ առօրյա հոգսերից կտրելը: «Ես ծեր եմ, ես գիտեմ, որ երկրային օրերս հաշված են, -ասում է ծերունին,-ես ուզում եմ այդ օրերը ձեզ հետ անցկացնել» [2, էջ 36]:

«Մահը,-գրում է Մարոյանը,-օրհնություն է, մի վերջին հույս դիմացդ պարզված» [2, էջ 38]: Մըք Գրեգորի համար մահը հենց այդպիսին է: Մահվան խորհուրդը փիլիսոփայական մեկնություն ունի, այն գեղեցիկ է, երբ խորհրդավոր պարուրանքի մեջ է: Ինչ է մահից հետո, գուցե այն, ինչ էր մահից առաջ: Դրամայի ավարտը ձեռք է բերում այլաբանական խորք. մահվան պատկերին հաջորդում է մանկան լացը: Դա նշանակում է՝ շա-

րունակական է կյանքը. որի երկու ծայրակետերը մահն ու ծնունդը, երիտասարդությունը և ծերությունը, դժբախտությունն ու երջանկությունը, մտերմությունն ու առանձնությունը, որի զգացումը գալիս է փոքրության, խեղճության գիտակցումից, շաղկապված են մեկը մյուսով, շարունակաբար ուղեկցում են միմյանց: Սարոյանի հերոսները փոքր ու խեղճ մարդիկ են, կյանքից քշվածներ, որոնց կերպարների մշակումը կապված է Շ. Անդերսոնի, Յուզին Օ' Նիլի անվան հետ: Սոկրատյան սկզբունքով ամերիկահայ գրողը մարդու տեղը, հասարակության մեջ նրա շարժը, մեկուսացումը կամ առանձնացումը չափում է խառնվածքի, անհատի և շրջապատի բախման անընտելության հոգեբանական խորքով: Մըք Գրեգորն ապրում է իր ստեղծած տրամադրությամբ և պատրանքների գերիշխանության ներքո: Արտաքին աշխարհը նրա մտածողության հունը շրջում է դեպի ներաշխարհ: Մենության, լքումի զգացումը միջավայրի թողած «նստվածքներն» են: Հուշի, ներկայի համադրմամբ Սարոյանը վարպետորեն ներկայացրել է իր հերոսի ներաշխարհը: «Ես հիշում եմ իմ առաջին ելույթը Լոնդոնում՝ 1851 թվականին, կարծես երեկ լինեի, դառնությամբ ասում է հերոսը, -14 ամյա մի տղա էի Գլազգոյի աղքատ թաղամասերից մեկում: Իմ անդրանիկ դերը սուրհանդակ էր: Խոսք չունեի, իսկ շարժում՝ ինչքան կուզեք, շարունակ վազում էի մի սպայից մյուսը, սիրահարից իր սիրուհուն և նորից դեպի հետ և այսպես շարունակ» [2, էջ 17]: Մի խոսքը, մի հնչյունը, ակնարկը, առօրյայի անտեսված մեկ մանրամասը նոր ուժով, նոր իմաստերանգով են ներխուժում հերոսի կյանք, դառնում տիրապետող հատկանիշներ: «Հիշողությունը երևակայություն է, -գրում է Սարոյանը, -ինչ որ հիշում ես, նման չէ ճշգրտորեն քո տեսածին, և քանի որ տեսածը տարբեր է, քո հիշողությունը մի աստիճանն է քո երևակայության, իսկ երևակայությունը վերհիշված իրականն է» [3, էջ 42]: Երազն ու հուշը՝ միախառնված իրական, բայց գրականության մեջ զուսպ ներկայացված կյանքին, լրացնում են, ողողում հերոսի (հերոսների) հոգեկան ափունքները: Գեղագիտական հայեցողության համակարգում Սարոյանի հակումը հոգեբանական և «գիտակցության ներհոսի» գործոնների կողմն է. այն մնում է իբրև առաջնային ելակետ:

Դրամայի հաջողված կերպարներից է Բեն Ալեքսանդրը, որը Մըք Գրեգորի նման արվեստագետ է, գրում է բանաստեղծություններ, որոնք, սակայն, չեն տպագրվում: «Մարդիկ բանաստեղծություն սիրում են, ասում է հերոսը, - բայց չեն հասկանում, ահա ամբողջ ցավը» [2, էջ 19]: Բեն Ալեքսանդրը փորձում է գտնել չհասկանալու պատճառը, որն այստեղ ոչ թե չհասկանալ պետք է դիտել, այլ պարզապես չընդունել: «Ինչո՞ւ նրանք բարձրաձայն փառաբանում են ամեն բան բացի լավագույնից, -ասում է հերոսը, - ինչո՞ւ են կործանում իրենք իրենց՝ մահվան գործարքների ետևից ընկնելով, և դեն նետում այն ամենը, ինչը ծառայում է կյանքին: Ես այդ բանը չեմ կարողանում հասկանալ» [2, էջ 27]: Հերոսը վստահ է, որ արվեստի ուժը կփրկի աշխարհը, սակայն համոզված չէ, որ ի վերջո կհաղթի մահվան դատապարտված արվեստը, ուստի ընդվզում է անօրեն կյանքի դեմ, կյանք, որտեղ «դեն են նետում այն ամենը ինչը ծառայում է կյանքին» [2, էջ 27]: Բեն Ալեքսանդրը, չնայած իր ծանր, թշվառ վիճակին, Մըք Գրեգորի նման չի հուսալքվում, նա չի կորցնում իր կենսափիլիսոփայությունը:

Թե՛ Բեն Ալեքսանդրը, թե՛ Մըք Գրեգորը դրամատուրգի ահեղ բողոքի արտահայտիչներն են այն աշխարհի դեմ, ուր ինչպես Ջոնին է ասում «Ինչ որ տեղ մի բան սխալ է»: Մենության դատապարտված հերոսները լրացնում են իրար. ողբերգակ դերասանը մեռնում է թշվառության և խեղճության մեջ, իր նմանների շրջապատում երագով ու կարոտով, Բեն Ալեքսանդրը, չկարողանալով վճարել սենյակի վարձը, մոր և որդու հետ հարկադրված հեռանում է՝ երազելով ու սպասելով նոր կյանքի: Ճիշտ է նկատել Պարույր Սևակը. «Նրանք հեշտ կոտրվող չեն, առավել ևս՝ պարտվողներ: Նրանք դիմանալ գիտեն, գիտեն դիմադրել, որքան էլ երկար ու անհաշտ լինի բախտի ճանապարհը, հավատքի ուժով նրանք պետք է քայլեն, պետք է մաքառեն, պետք է ապրեն» [4, էջ 106]:

Վ. Մարոյանը որոնում է գոյության փիլիսոփայական խորհուրդը: Այս դրամայով հաստատում է փիլիսոփայական հիմնաբևեռները՝ աբսուրդն ու ընդվզումը: Կյանքի անիմաստության գիտակցումը գրողին հանգեցնում է այն մտքին, որ մարդն ազատ է իր գործողություններում, բայց պարտավոր է հատուցել իր կատարած սխալների համար: Գրողի խորին համոզմամբ՝ անհատը ներգրավված է պատմական առաջընթացի մեջ և պատասխանատու է ոչ միայն իր, այլև մարդկության առջև: Նա գիտակցում է, որ աբսուրդը մարդու և աշխարհի միջև չէ, այն ծնվում է անհատի և նրա անորոշ կեցության բախումից: Աբսուրդից Մարոյանը արտածում է անհատի ընդվզումը, նրա ազատաբաղձությունը: Գոյության փիլիսոփայական խորհուրդը մի սահման է, որ ներառում է ազատ կյանքը և պատասխանատվությունը հավաքական ազատ մղումների հանդեպ, ինչի տակ պետք է միավորել նաև անհատի անընկճելիությունը, տառապանքի վեհությունը, դիմակայելու ուժը, հատկանիշներ, որ տեսնում է մարդկանց դժվարին կյանքի մեջ: Դրամայի իրադարձությունների հիմքում ընկած է ընտանիքի անդամների ներքին միասնությունը, որը նրանց կեցության գլխավոր ազդակն է միայնության, առանձնության դատապարտված աշխարհում:

Դեպի լեռները գնացող հերոսին դրամատուրգը պարտադրում է անձնագոհ սիրո, նվիրումի մշակված-մոռացված գաղափարը, սա գոյության փիլիսոփայության նոր սահմանն է, որ ներառում է կեցությունը, գուրջը, որպես սիրո բնական նշան: Աշխարհը պետք է կառուցվի նվիրումի զոհաբերման սկզբունքով:

1939 թվականի Մարոյանը գրում է իր երկրորդ լավագույն դրաման՝ «Քո կյանքի ժամերը», որը բռնում է ժամանակի քննությունը և դիտվում 30-40-ական թվականների գոյության փիլիսոփայական խորհուրդը որոնող ամերիկյան գրականության լավագույն գործերից մեկը: Գրողը կարևորում է նոր փիլիսոփայական այն ելակետը, թե մարդը դատապարտված է ազատության և ապրելու ինքնության, նա իր ուսերին պարտավոր է տանել աշխարհի բարոյական ողջ ծանրությունը և պատասխանատու է աշխարհի մեջ եղած զուգակշիռ ներուժի պահպանման և շարունակության համար: Ամբողջության մեջ սարտրյան կեցություն-ոչնչություն-գիտակցություն առանցքն է, որը տրոհվում և տարրալուծվում է գրողի ստեղծագործության ներքին շերտերում: Այն հետևողական հունով գրողին տանում է դեպի «գիտակցությունը որպես բարոյական կեցություն» հայեցողությանը: Մարոյանը դրամայում կյանքը պատկերում է իրական գծերով, առօրյա իրարանցումով. խստորեն պահված է տեղի և ժամանակի միասնությունը: Ստեղծագործության

դեպքերը տեղի են ունենում Սան Ֆրանցիսկոյի «Նիքի բար» ռեստորան և զվարճավայր պանդոկում, որը հավաքատեղի է դարձել կյանքից հալածվածների համար, հատկապես նրանց, ում համար կյանքը անհեթեթ է ու անիմաստ: Նրանք ազատ են «տարրական բարոյականությունից», տառապում են ձանձրությունից, միայնակ են, դատապարտված իրենց կյանք քարշ տալու աննպատակ ու դառնացած աշխարհում: Սարոյանը փորձում է միջամտել, բարեփախել նրանց առօրյան: Հերոս երիտասարդ Ջոնին, իր բարի և հոգատար վերաբերմունքով կյանքի է կոչում նրանց, արթնացնում նրանց մեջ մարդկային վեհ հատկանիշներ՝ բարություն, սեր, հարգանք:

Շնորհիվ Ջոնիի՝ նրանք կարողանում են մարդ մնալ և հակադրվել անարդար աշխարհի ապականող օրենքներին, միօրինակ, անհեթեթ աշխարհից պաշտպանվելու համար ռոմանտիկական, երբեմն էլ սենտիմենտալ միություն են կազմում, որի հիմքը բարու և անշահախնդրության ոգին է, մարդու ցավը իբրև իր սեփականը ընդունելու և հասկանալու, ուրիշին օգնության հասնելու պատրաստակամությունը, մեկը մյուսին «խաղով» և «երագով», ուրախությամբ և հույսով վարակելու ընդունակությունը: Դրամայի նախնական քննության ժամանակ գրաքննադատ Վոլտեր Բրրիին սենտիմենտալ միությունն է պարտադրել դրաման համարել սենտիմենտալ: Հետագայում այն վերաքննելիս բարձր է գնահատել, համարել է ժամանակի հանդուգն, կատաղի և արդիական պիես: Վ.Սարոյանին հիացնում է մարդու ներաշխարհի թռիչքը, տառապանքի մեջ մարդու դիմակայության սահմանը, հատկապես երբ նա չի հանձնվում թշվառության, խեղճության հորձանքին: Հենց այդ ճանապարհին է գտնվում հեղինակի հերոսի համար գոյության խորհուրդը: Գոյության պատգամը Սարոյանի երկերում ունի ծրագրային նշանակություն: Փիլիսոփայական խորհրդածությունները գրողի ստեղծագործություններում գերակշիռ մաս են կազմում և յուրովի արձագանքն են գեղարվեստական աշխարհըմբռնման արդեն ձեռք բերած կայունության, մի մոտեցում, որ վերաճել էր սկզբունքի և նշանակալի էր ստեղծագործական հետագա փուլերում ևս:

Ե Ջ Ը Մ Հ Ա Ն Գ ՈՒ Մ. Վ.Սարոյանը մարդուն չափում է ներաշխարհից բխող արձագանքումով: Նա քաջ գիտի, որ ներաշխարհի ցուլացման առաջնահերթ կովանը ներանձնացումն է: Ահա թե ինչու նրա հերոսները, գրեթե անխտիր, առանձին են, ներամփոփ, կտրված արտաքին հետաքրքրություններից: Գոյության պատգամը Սարոյանի երկերում ունի ծրագրային նշանակություն: Դրամաների հիմքում ընկած է անձնագոհ սիրո, նվիրումի մշակված-մոռացված գաղափարը, սա գոյության փիլիսոփայության նոր սահմանն է, որ ներառում է կեցությունը, գութը, որպես սիրո բնական նշան: Աշխարհը պետք է կառուցվի նվիրումի զոհաբերման սկզբունքով: Վ.Սարոյանին հիացնում են մարդու ներաշխարհի թռիչքը, տառապանքի մեջ մարդու դիմակայության սահմանը, հատկապես երբ նա չի հանձնվում թշվառության, խեղճության հորձանքին: Հենց այդ ճանապարհին է գտնվում հեղինակի հերոսի համար գոյության խորհուրդը: Փիլիսոփայական խորհրդածությունները գրողի ստեղծագործություններում գերակշիռ մաս են կազմում և յուրովի արձագանքն են գեղարվեստական աշխարհըմբռնման արդեն ձեռք բերած կայունության:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Էդոյան Հ.** «Մարդու «Անհետացման» իմաստաբանական գիծը Վերածննդից մինչև xx դար»: «Համաստեքստ-2002» ամսագիր: Երևան: ԵՀ հրատ.: 2002: 6-7 էջեր:
2. **Սարոյան Վ.** «Երկեր, հ.2»: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1989: 400 էջ:
3. **Սարոյան Վ.** «Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր»: Երևան: «Նաիրի» հրատ.: 1999: 482 էջ:
4. **Սևակ Պ.** «Երկերի ժողովածու, հ. 5»: Երևան: «Հայաստան» հրատ.: 1974: 380 էջ:
5. **Malantschuk G., Hong H., Hong E.** "Kierkegaard's concept of existence". Milwaukee: Marquette University Press. 2003. 313 p.
6. **Merigala G.** "Subjectivity and Religious Truth in the Philosophy of Søren Kierkegaard. Macon", Georgia: Mercer University Press. 2010. 192 p.
7. **Stewart J.** "Kierkegaard and Existentialism". Ashgate Publishing Ltd. 2011. 210 p.

References

1. **Edoyan H.** "The Semantic Line of "Disappearance" of Man from the Renaissance to the 20th century". [*Mardu anhetacman imastabanakan ghitse Verafsnndic minchev XX dar*], "Context-2002" magazine. Yerevan. Press of Yerevan University. 2002. 6-7pp. (in Armenian)
 2. **Saroyan W.** "Erker, no. 2". [*Erker*], Yerevan. "Soviet writer" Publ. house. 1989. 400 p. (in Armenian)
 3. **Saroyan W.** Stories, Interviews, Essays, Memoirs". [*Patmvatsqner, harcazrucyner, essener, hucher*], Yerevan. "Nairi" newspaper. 1999. 482 p. (in Armenian)
 4. **Sevak P.** "Collection of Countries, v. 5". [*Erkeri joxovacu*] Yerevan. "Armenia" newspaper. 1974. 380 p. (in Armenian)
- 5-7 (տե՛ս գրականություն)

Ընդունվել է / Received on: **27. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **30. 04 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Նելլի Բակուրի ԳԱԼՍՏՅԱՆ՝ բան. գիտ.թեկնածու,
Մ. Խորենացու անվան համալսարանի արտասահմանյան
գրականության և անգլերեն լեզվի դասախոս, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ hasmikbakuralstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378

Nelli Bakur GALSTYAN: PhD in Philology,
Lecturer of Foreign Literature and English language
University after. M. Khorenatsi, Yerevan, RA,
e-mail: hasmikbakuralstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378

ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ ԱՊՐԱԾ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՄԾ
ՀԱՅՐԵՆԱՊԱՐԸ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ. ՀԱԿՈՒԲ ՀԱԿՈՒԲՅԱՆ,
ՊԵՏՐՈՍ ԿՈՆՏՈՒՐԱԶՅԱՆ, ՆՎԵՐ ՍԱՖՅԱՆ

Արաքս Վ. Մարգարյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ
Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Դիտարկվել է 1950-1960-ականներին Լենինականում ապրած ու ստեղծագործած հայրենադարձ գեղանկարիչների՝ Հակոբ Հակոբյանի, Պետրոս Կոնտուրաջյանի, Նվեր Սաֆյանի ստեղծագործությունը, որոնք, վերադառնալով հայրենիք, մեծ նպաստ բերեցին հայ մշակույթի զարգացմանը: Հայրենադարձների խնդրին անդրադարձել է Ռ. Միրզախանյանը իր «Խորհրդահայ մշակույթը 1956-1990թթ.» աշխատությունում: Պ. Կոնտուրաջյանի, Հ. Հակոբյանի ստեղծագործությունը բազմիցս ներկայացվել է արվեստաբանների կողմից, այդ թվում՝ Հ. Իգիթյանի, Շ. Խաչատրյանի: Ն. Սաֆյանի մշակութային գործունեությանը առաջինը մենք ենք անդրադառնում սույն աշխատանքի համատեքստում: Մեթոդներ ու նյութեր. Դիտարկվել են երեք հայրենադարձ ստեղծագործողներ, որոնք հաստատվելով նախնիների հողում՝ սկսեցին արարել տեղացի նկարիչների հետ: Հետազոտությունն արվեստաբանական է, ներկայացված է համեմատական ու վերլուծական մեթոդներով: Վերլուծություն. Փորձ է արվել բացահայտելու նկարիչների կենսապայմանները, աշխարհայացքը, արվեստի զարգացման նրանց տեսլականները, ծավալած գործունեությունը, թե որքանով էին սոցեալիզմի կադապարները կաշկանդել կամ արգելափակել ստեղծագործողներին: Արդյունքներ. Մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ սահմանափակ հնարավորություններով Լենինականում էլ կարելի էր գտնել սեփական ուղին ու ձեռագիրը կամ, ինչպես կասեր ճարտարապետ Ա. Իվանովը, «Ազատությունը վանդակի մեջ» [5, 76]:

Բանալի բառեր՝ *հայրենադարձ, քաղաքական հալածանքներ, սփյուռք, Հակոբ Հակոբյան, Պետրոս Կոնտուրաջյան, Նվեր Սաֆյան, Լենինական, կերպարվեստ:*

Ինչպես հղել՝ Մարգարյան Ա. Լենինականում ապրած ու ստեղծագործած հայրենադարձ նկարիչները. Հակոբ Հակոբյան, Պետրոս Կոնտուրայան, Նվեր Սաֆյան // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: Հ. 1(28): 210-217 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-210

REPATRIATE ARTISTS LIVING AND WORKING IN LENINAKAN: PETROS KONTURAJYAN, HAKOB HAKOBYAN, NVER SAFYAN

Arax V. Margaryan

Armenian Academy of Fine Arts, Gyumri Branch
Shirak State University after M. Nalbandyan Gyumri, RA

Abstract

Introduction: The paper examines the works of repatriated painters of Hakob Hakobyan, Petros Konturajyan, and Nver Safyan, who lived and worked in Leninakan, Gyumri, in the 1950s and 1960s, and who, upon returning to their homeland, made a great contribution to the development of Armenian culture. The issue of repatriates was addressed by R. Mirzakhanyan in his work "Soviet Armenian Culture 1956-1990." The work of P. Konturajyan and H. Hakobyan has been repeatedly presented by art critics, including H. Igityan and Sh. Khachatryan. We are the first to address N. Safyan's cultural activities in the context of this article. We also examine the activities of repatriated painters in Leninakan, which will complete the cultural image of the city in the 1950s and 1960s. **Methods and materials:** In our article, we have considered three repatriated artists who, upon returning to their homeland, settled in the land of their ancestors and began to create with local artists. The research is artological, presented using comparative and analytical methods. **Analysis:** We have tried to reveal the living conditions of the artists, their worldviews, their visions of the development of art, their activities, and to what extent the templates of socialist realism constrained or blocked the artists. **Results:** As a result of our study, we have come to the conclusion that with limited opportunities in Leninakan, one could find one's own path and handwriting, or, as the architect A. Ivanov would say "Freedom in a Cage" [5, 76].

Key words: *repatriation, political persecution, diaspora, Hakob Hakobyan, Petros Konturajyan, Nver Safyan, Leninakan, fine arts.*

Citation: Margaryan A. *Repatriate Artists Living and Working in Leninakan: Hakob Hakobyan, Petros Konturajyan, Nver Safyan* // "Scientific Works" of the SHCAS of NAS RA. Gyumri: V. 1(28): 210-217 pp. DOI: 10.52971/18294316-2025.28.1-210

ՆԱԽԱԲԱՆ. «Սոցիալիստական դրախտավայրի» [1, 246] մտապատկերով խաբված բազմահազար հայրենադարձներ, ռումանտիկ մղումով համակված, եկան հայրենիք: Երկրորդ համաշխարհայինում հաղթանակած երկիրը հեռվից թվում էր հույսի ու լույսի փարոս: Սակայն հայրենիքը դեռ պատրաստ չէր ընդունելու իր բազմաթիվ տարազիր զավակներին: Բարգավաճ ու զարգացած երկրներից գաղթած հայրողիները հայտնվեցին խոր հիասթափության մեջ. քաղցը, հետպատերազմյան տարիների անհարմարավետ կյանքը մի կողմից, քաղաքական հալածանքները՝ մյուս կողմից, շուտով փշրեցին հայրենիքում կայանալու այն ողորկ հույսերը, որ կային հայրենադարձների

մեջ: Նրանց մի մասը շուտով աքսորվեց Սիբիրի խորքերը՝ մասնավերջով անխուսափելի կորստյան: Քչերին հաջողվեց դիմակայել ու արմատներ ձգել հայրենի հողում:

ՊԵՏՐՈՍ ԿՈՆՏՈՒԴԱՋՅԱՆԸ (1905-1956)՝ Եղեռնի տարիներին ծնողներին կորցրած ու մանկությունը որբանոցում անցկացրած նկարիչը, Ֆրանսիայից Խորհրդային Հայաստան տեղափոխվելուց հետո 1947-1951թթ. ապրել և ստեղծագործել է Լենինականում: «1947թ. սոցիալիզմի սիրուն համար ես հրաժարվեցի իմ թանկագին հարազատներիցս ու մենամենակ ներգաղթեցի Հայաստան», - գրել է նա [2, 10]: Հետպատերազմյան Լենինականը, ինչ խոսք, բարեկեցության կենտրոն չէր: Բայց նկարիչն ապրում էր, հարմարվում զարմանալի քաղաքի կյանքին: Լենինականը Փարիզ չէր: Լենինականը Փարիզ չէ՛ր, սակայն գերիչ էր իր առանձնահատկությամբ. երկհարկանի սրբատաշ տուֆով կառուցված քաղաքում վեր էին խոյանում նշանավոր եկեղեցիներ: Քաղաքը շնչում էր արհեստներով, թատրոնով ու արվեստով: Լենինականը նաև մշակութային օազիս էր, տաղանդների հանգրվան:

Համեստ, ազնիվ Կոնտուրաջյանը աշխատում է Մոսկվայի անվան թատրոնում և դասավանդում միջնակարգ դպրոցում՝ հայրական հոգատարությամբ վերաբերվելով իր սաներին: Ֆրանսիական արվեստին քաջածանոթ՝ նա իր սաներին բացատրում էր տարբեր նկարչական տեխնիկաներ, տանում էտյուդների, ծանոթացնում կերպարվեստի պատմությանը: 1949-ին Կոնտուրաջյանն ամուսնանում է ուսուցչուհի Գայանե Մահակյանի հետ: Ծնվում է դուստրը՝ Սիրվարդը:

Խոսելով Կոնտուրաջյանի արվեստի մասին՝ Հ. Իգիթյանը օգտագործում է «մաքուր», «վճիտ» բառերը: Դրանք չեն ձգտում «հատուկ կարևորության թեմաների», ոչ էլ նորարարարության հավակնություն ունեն: Գործերի մի մասը արված է թղթի, սովորաբար թղթի, տախտակի երկու երեսների վրա: Դրանք անշտապ, հանգիստ, մեծ ազնվություն ու կյանքի հանդեպ անկեղծ վերաբերմունք պարունակող գործեր են, որոնց մեջ խտանում է յուրօրինակ մենություն ու լռություն: Կոնտուրաջյանի կտավները՝ Լենինականում նկարչի ստեղծած առաջին աշխատանքները, իրենց կապտաարծաթավուն երանգավորումով հիշեցնում են ֆրանսիական շրջանի գործերը: Օրինակ՝ ձկներով նատյուրմորտում պատկերված է ջրաման, ավսեի մեջ դրված ձկներ, ծլած սոխ, բաժակով ջուր ու հաց: Ռիթմիկ գծանկարը դիտողի հայացքը սահեցնում է մի առարկայից մյուսին՝ հիշեցնելով հետպատերազմյան կյանքի աղքատիկ օրերը: Լենինականում ապրելիս նկարիչը վրձնել է նաև ճարտարապետական հուշարձաններ՝ «Մարմաշենի վանքը», «Լմբատավանքը» [2, 9] որոնք, սակայն չեն պահպանվել:

Կոնտուրաջյանի աշխատանքները խոսում են գեղանկարչական բարձր վարպետության, ճաշակի ու ինքնատիպության մասին: Ցավոք, նկարչի և նրա ընտանիքի դրամատիկ վախճանը կասեցրին նրա արվեստի հետագա զարգացումն ու գրեթե աննկատ թողեցին տաղանդավոր նկարչի գործունեությունը:

ՀԱԿՈՒԲ ՀԱԿՈՒԲՅԱՆԸ (1923-2013) ծնունդով Ալեքսանդրիայից էր: Միգրացե իր ծննդավայրի անվան նմանությունն էր Ալեքսանդրապոլին, որը մոզական ուժով ձգեց նկարչին՝ մի քանի տարի ապաստան ու ստեղծագործական ոգեշնչում տալով նրան: Հատկանշական է, որ մինչև Հայաստան գալը Հակոբյանը ոչ մի բնանկար չէր արել: Ինչ-

պես նկատում է Իգիթյանը. «Այդ շրջանում նրա արվեստն առավելապես ներփակ, կամերային բնույթ է ունեցել: Նրա ողջ կյանքը, խոհերը, որոնումները սահմանափակվել են սենյակի չորս պատերով, ուր կուտակվել են պոտենցիալ մեծ հնարավորություններ պարունակող նրա գործերը, հնարավորություններ, որ դրսևորվեցին հայրենիքում» [1, էջ 268]: Հակոբյանի առաջին ծանոթությունը Լենինականին երկուստեք դարձավ որոշիչ ու ճակատագրական. «Երբ հասանք Լենինական, չորս աչք դարձած՝ նայում էի, թե Լենինական քաղաքի մեջ որևէ նկարելու բան կա՞ր ինձ համար:... Տեսա տուֆակերտ, հին, սև Լենինականը: Քարքարոտ այդ տուները, որ տեսա, ասի՝ ուրեմն ես այստեղ նկարելու բան ունեմ: Առաջին օրն իսկ, Լենինականում գնացի նստեցի փողոցի վրա և սկսեցի նկարել» [3, էջ 12]:

Այստեղ նա դարձավ հայկական բնաշխարհի նորօրյա երգիչը՝ բացահայտելով նրա գողտրիկ, բայց մոնումենտալ գեղեցկությունը: Լենինականում ապրած տարիներին նկարիչը ստեղծեց «Բացառիկ ամփոփ ու ամբողջական» [1, էջ 268] նկարների շարք:

Քաղաքը բյուրեղացրեց նրա մտածողությունը, հասցրեց ձևի ծայրահեղ պարզեմանը: Իր լավագույն բնանկարներում՝ «Փողոց Լենինականում», «Լենինական. Կիրովի փողոց», «Բակ», «Ուշ աշուն», «Վաղ գարուն» նկարիչը հասնում է բացառիկ ընդհանրացման: Նա, ասես, բացահայտում է քաղաքի ու նրա գողտրիկ փողոցների մետաֆիզիկական լռությունն ու մոնումենտալ գեղեցկությունը: «Դարպասներ» բնանկարում կտավը ձեռք է բերում տարածություն և զարգացնում է հեռանկարի պատրանքը: Խաղաղ փողոց, դեպի հեռուն գնացող և անսպասելիորեն հեռագրասյունի «դեմ առնող» տնակներ, որոնք զարմանալի ճշգրտությամբ պատկերում են քաղաքի բնույթը: «Ի վերջո, կարևորը ոչ միայն քաղաքի գրավիչ կողմերն են, այլ այն, որ այստեղ գործ ունենք սովորական անշուք տնակներից, չոր ծառերից ու հեռագրասյուններից գեղեցկություն հյուսող նկարչի հետ» [1, էջ 268]: Կտավների գունաշարը հիմնված է դարչնականաչավուն երանգների ու գծային ռեֆլեքսների համադրության վրա: Իգիթյանը այս կոմպոզիցիաները համարում է «բնօրինակի արտոտրահում՝ ոչ թե խախտելով ձևը, այլ ազատելով կողմնակի առարկաներից, բեռնաթափելով բոլոր կարգի ավելորդություններից» [1, էջ 268]:

Նրա բնանկարներում չկան մարդիկ. տիրում է մետաֆիզիկական լռություն: Եվրոպական արվեստին քաջածանոթ նկարիչը, ասես, երկխոսում է Կիրիկոյի հետ, դատարկության միջոցով ցույց տալիս քաղաքի խորհրդավոր լռությունն ու միստիկ էությունը: Մակայն ի տարբերություն Կիրիկոյի վառ գույների, Հակոբյանն օգտագործում է նրբերանգներ, տոնային անցումներ, մեղմ գունաշար:

ՆՎԵՐ ՄԱՖՅԱՆ /ՀԱԿՈՒՅԱՆ/ (1939). Ծնվել է Իրաքի Գերկուկ քաղաքում՝ Հակոբյանների ընտանիքում: Հայրն ու եղբայրները ներգրավված էին Գյուլբենկյանների նավթարդյունաբերական ընկերությունում: Ծնողները, լինելով մեծ հայրենասերներ, Մերձավոր Արևելքում աղջկան տվել են հայեցի դաստիարակություն: Նվերը սովորել է տեղի Խրիմյան Հայրիկի անվան 10-ամյա հայկական դպրոցում, հետո՝ Բաղդադի ամերիկյան 12-ամյա օրիորդաց դպրոցում: 1960թ-ից հաճախել է Բաղդադի արվեստների բարձրագույն ակադեմիա, որտեղ դասավանդել են Փարիզից ժամանած վարպետներ: Արևելքում կին նկարչուհին բացառիկ երևույթ էր: Նվեր Հակոբյանը, որ կուրսի միակ

աղջիկն էր, աչքի էր ընկնում բացառիկ ունակություններով ու տաղանդով: Բեյրութում նա գեղանկար էր դասավանդում, երբ տեղի է ունենում հանդիպում խորհրդահայ նկարիչների պատվիրակության անդամների՝ Տ. Չախմախյանի և Հ.Ռուխկյանի հետ: Ռուխկյանը, վերադառնալով, նամակ է գրում Նվերին՝ հրավիրելով Հայաստան գեղարվեստական կրթություն ստանալու: Ու թեև Նվերը միաժամանակ ընդունվել էր Մերձավոր Արևելքի 2 բուհերն էլ՝ Բեյրութի համալսարանն ու Բաղդադի բարձրագույն ակադեմիան, որոշում է հայրենադարձվել և ուսումը շարունակել մայր հայրենիքում: Հավանաբար, աղջիկը փորձել է տեր կանգնել հոր երազանքին, քանի որ հայրը ողջ կյանքում տենչացել էր վերադառնալ հայրենիք, ինչը նրան չէր հաջողվել: 1964 թ. Նվերը Հայաստանում է. նա դառնում է գեղարվեստաթատերական ինստիտուտի առաջին հայրենադարձ ուսանողուհին: Բուհի պրոռեկտորը իմանալով, որ նա ընդունվել է նաև երկու այլ բուհեր, զարմացած հարցրել էր. «Աղջի՛կ ջան, ինչո՞ւ ես եկել Հայաստան» [5]: Նվերը պատասխանում է. «Եկել եմ իրապաշտական նկարչություն սովորելու»: Նվերին տրամադրվում է հանրակացարանի սենյակ, 90 ռուբլի կրթաթոշակ, որը մեծ գումար էր համարվում Խորհրդային Հայաստանում: Նրան առաջարկվում է բաժինն ընտրել իր հայեցողությամբ: Եվ Նվերը նախընտրեց ինստիտուտի նորաբաց՝ ձևավորման բաժինը, որտեղ սովորում էին 4 աղջիկներ (բոլոր մյուս կուրսերում սովորում էին միայն տղաներ):

Կյանքը հետզհետե ընկնում էր հունի մեջ. շփվող ու բարյացակամ աղջիկը բուլդոզի հետ ընդհանուր եզրեր է գտնում, երբեք չի տրտնջում, չի դժգոհում Խորհրդային խղճուկ ապրելակերպից: Անգամ Բեյրութի հյուպատոս Նորայր Ավետյանին շնորհակալություն է հայտնում Խորհրդային Միությունում իր ուսումնառության համար: Եվ այդ բնավորության համար էլ նրան բացառություններ են արվում. թույլ է տրվում ամեն ամառ ճանապարհորդել, լինել արտասահմանյան երկրներում, ինչը չլսված բան էր այն տարիներին: Շնորհիվ իր բազմաթիվ ազգականների ու բարեկամական կապերի՝ նա այցելում է Փարիզ, Լոնդոն, Կոպենհագեն, Աթենք, Սյունիսեն, Բեռլին... Մի քանի տարում նա լինում է Եվրոպայի լավագույն քաղաքներում, ամենուրեք այցելում թանգարաններ, մշակութային օջախներ: Հատկապես տպավորիչ էր Փարիզ կատարած ուղևորությունը, որը արվեստասեր աղջկա համար իսկական բացահայտում էր: Միայն 13 անգամ նա այցելում է Լուվր: Հորեղբոր աղջկա՝ Վերժինեի հետ, որը համարվում էր Փարիզի երրորդ վիտրինիստը, լինում է Քրիստիան Դիորի նորաձևության տանը, որը կախարդական աշխարհ էր հիշեցնում ձևավորողի մասնագիտություն ընտրած և նորաձևությունից հեռու խորհրդային իրականության մեջ ապրող աղջկա համար: Նվերը իրեն նվիրած SHWARC սարքով էյֆեյյան աշտարակից նկարահանում էր տեսարաններ Փարիզյան կյանքից ու առօրյայից: Փարիզի մասին պատմող այդ փոքրիկ ֆիլմը տեսել ու շատ էր հավանել քանդակագործ Արա Մարգարյանը:

Ամեն անգամ, վերադառնալով Հայաստան, նա կիսվում էր տպավորություններով, հուշերով: Հայաստանը նա սիրեց ողջ էությանբ: Ու թեև աղքատիկ և դժվար տարիներ էին, սակայն՝ մեծերի բույրով լեցուն ժամանակներ: Ճանաչողական այցով գեղարվեստաթատերական ինստիտուտ էին գալիս լավագույն մտավորականները: Հ. Շիրազի հետ հանդիպման ժամանակ աղջիկը տարել էր բանաստեղծի լուսանկարը, որը Շիրա-

զը մակագրեց. «Նվեր՝ Նվերին»: Նա համակուրսեցիների հետ զբոսնում էր, հաճախ այցելում օպերա, կինո: Մակայն Նվերին նախ և առաջ հետաքրքրում էր նկարչությունը: Նա պատկանում էր այն բախտավոր սերնդին, ում ճեպանկար է դասավանդել Վռամ-շապուռի Շաքարյանը, իսկ գծանկար ու գունանկար՝ Մասիս Գրիգորյանն ու Գրիգոր Աղապյանը: Երբ գեղարվեստաթատերական ինստիտուտի ուսանողների հետ հանդիպման է գալիս Մարտիրոս Սարյանը, նա նկատում է ալ կարմիր բաճկոնով Նվերին ու ցույց տալով նրան՝ ասում է. «Ինքը արև է, ինքը մնալու է այստեղ»: Մեծ Մարյանի խոսքերը դառնում են կանխատեսական. բոլոր սփյուռքահայ ուսանողուհիներից միայն Նվերն է մնում և ընտանիք կազմում Հայաստանում: Երկրպագուները շատ էին, բայց երբ երևան եկավ լենինականցի փեսացու Յուրի Սաֆյանը, որ բանասեր էր, դասավանդում էր Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում. ամեն ինչ հանգուցալուծվեց շատ արագ ու բնականոն: Նրանց ծանոթությունը տեղի ունեցավ 1968թ. մարտի 8-ին: Մի քանի հանդիպումից հետո փեսացուն անձեռոցիկի վրա ջնջեց Նվերի հայրական ազգանունը՝ Հակոբյան, ու ավելացրեց իրենը՝ Սաֆյան:

Երբ վրա հասավ Նվերի (այսուհետ՝ Սաֆյան) դիպլոմային աշխատանքի պահը, նա արդեն սպասում էր իր առաջնեկին: Մակայն այդ հանգամանքը չխանգարեց աղջկան անգլիական կողպեքով փակել իր արվեստանոցի դուռն ու դուրս չգալ այնքան ժամանակ, մինչև ավարտին կհասցնեք 3 տարբեր աշխատանքներ: Նվերը առաջինն իր աշխատանքները ցույց տվեց հայտնի արվեստաբան Եղիշե Մարտիրոսյանին, որն արդեն տարեց էր ու դժվարությամբ բարձրանալով չորրորդ հարկ՝ ուշադիր դիտեց աշխատանքն ու բարձր գնահատեց այն: 1969թ. Սաֆյան Նվերը ավարտում է ինստիտուտը և ամուսնու հետ բնակություն հաստատում Լենինականում, որտեղ զբաղվում է ստեղծագործությամբ և մանկավարժական գործունեությամբ. . .

Նվեր Սաֆյանը երկար տարիներ դասավանդել է Լենինականի (Գյումրու) երեք բուհերում: Ամենուրեք, նաև նկարչական դպրոցում՝ կրթելով, նկարչություն սովորեցնելով, ճաշակ ձևավորելով տասնյակ պատանիների ու աղջիկների մեջ: Որտեղ էլ աշխատում էր Սաֆյան Նվերը՝ Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում, Երևանի Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղում, նրա շուրջ տիրում էր ստեղծագործական բեղուն մթնոլորտ. իր սաներին նա փորձում էր փոխանցել այն ամենը, ինչ տեսել էր, սովորել Եվրոպայում, Մերձավոր Արևելքում: Նա միշտ ստեղծագործական գործընթացի մեջ էր, ակտիվ մասնակցում էր հանրապետական և միութենական բոլոր ցուցահանդեսներին: 1975թ. մասնակցում է Երևան-Մոսկվա-Լոս-Անջելես ցուցահանդեսին՝ անցնելով երեք բժախնդիր գեղխորհուրդների աչալուրջ քննությունը:

Նկարիչների միության անդամ դառնալը չափազանց դժվար ու պատվաբեր էր այդ տարիներին: Մի քանի փորձից հետո 1982թ. նրան հաջողվում է դառնալ այդ միության անդամ՝ ստանալով երկու տոմսեր (Գեղֆոնդի և Պետպատվերների), ինչը թույլ է տալիս նաև պետական պատվերներ կատարել:

Սաֆյանը կտավներում գովերգում էր կյանքն իր բոլոր դրսևորումներով. դա դժվարությունների միջով անցած մարդու աշխարհայացք է՝ ապրելու իմաստությամբ ու կյանքի ուժով առլեցուն. «Աշնանային հանգիստ», «Գյուղական կյանք», «Ջաջուռ» կտավ-

ներում նա, ասես, նորովի է բացահայտում ու գովերգում Հայաստանի գողտրիկ անկյունները՝ ստեղծելով կամերային, ընդհանրացված բնապատկերներ:

Դիմանկարների շարքը կատարված է նյութի զգացողությամբ ու բնավորությունների նուրբ մատուցմամբ. «Անահիտի դիմանկարը», «Գնչուհիներ», «Գուշակուհի», «Անահիտ», «Աշոտ»: Մեր կարծիքով առավել հաջողված են Սաֆյանի նատյուրմորտները, որոնք վկայում են ճաշակի ու նյութի փայլուն տիրապետման մասին. «Հայկական նատյուրմորտ», «Կակտոս», «Երիցուկներ», «Մանուշակները պատշգամբի վրա», «Ծաղիկներ»:

Բազմազբաղ դասախոսը, հմուտ տանտիկինը իր ուժերը փորձել է նաև քաղաքականության մեջ: 1980թ. պոլիտեխնիկի հանրության կողմից նա ընտրվում է քաղխորհրդի պատգամավոր: Այդ տարիներին քաղաքը ղեկավարում էր Դոնարա Հարությունյանը, որը մեծ գործունեություն էր ծավալել քաղաքի բարեկարգման ու վերափոխման գործում. Սաֆյանն առաջարկում է քաղաքի գեղագիտական բարեփոխման մի շարք նախագծեր: Սակայն 1988թ. երկրաշարժը կասեցնում է բոլոր նորամուծությունները:

Սաֆյանի հետագա գործունեությունը կապված է բարեգործության հետ: Հետերկրաշարժյան ցրտի ու խավարի տարիներին արտերկրում բնակվող բազմաթիվ ազգականները օգնություն էին ուղարկում, և Սաֆյանը այդ օգնությունը բաժանում էր համաքաղաքացիներին: Շվեյցարացի ազգականի՝ Զատիկ Զեյդանի միջոցով Սաֆյանը աջակցում է 33-րդ դպրոցի կառուցման գործին (այն վերջին տնակային դպրոցն էր Գյումրիում): Դպրոցի կառուցման համար Շվեյցարիայում վաճառվում են Նվեր Սաֆյանի նկարներով 9000 օրացույցներ, որից գոյանում է 150 հազ. դոլարի հասույթ: Նա այն ամբողջությամբ փոխանցում է դպրոցի կառուցման ֆոնդին: Օրացույցները մակագրված էին «Նվեր Գյումրիին՝ Նվերից» խորհրդանշական տողերով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. 1950-1960-ականներին Լենինականում ապրել ու ստեղծագործել են սփյուռքահայ գեղանկարիչներ Հակոբ Հակոբյանը, Պետրոս Կոնտուրաջյանը և Նվեր Սաֆյանը: Քաղաքի և հայրենադարձ նկարիչների փոխհարաբերությունը տարբեր է եղել. եթե Կոնտուրաջյանը մնացել է չհասկացված, ապա Հակոբյանը նորովի է բացահայտել իր տաղանդը, իսկ Սաֆյանը իր կյանքն ամբողջությամբ նվիրել է մանկավարժական գործունեությանը կերպարվեստի ոլորտում: Նրանք իրենց կենսափորձով, գիտելիքներով, վարպետությամբ մեծ ավանդ են բերել Լենինականի կերպարվեստի զարգացմանը:

Գրականություն

1. **Իգիթյան Հ.** «Հովնաթանյանից Մինաս...»: Երևան: «Տիգրան Մեծ» հրատ.: 2001: 340 էջ:
2. **Խաչատրյան Ծ.** «Կոնտուրաջյան Պ.»: Երևան: «Սարգիս Խաչենց» հրատ.: 2011: 88 էջ:
3. **Մարգարյան Ա.** «Լենդուտա, Ջարդան Վ.Քաղաքի ոգին և հիշողությունը»: «Չանգակ»: 2016: 63 էջ:
4. **Միրզախանյան Ռ.** «Խորհրդահայ մշակույթը 1956-1990թթ.»: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2009: 351 էջ:
5. **Иванов А.** "Гюмри: Вернакуляр черного туфа". Ереван. Изд. «Коллаж» 2021. 375 стр.

R e f e r e n c e s

1. **Igityan H.** "Hovnatanyan to Minas" [*"Hovnatanyanic Minas"*], "Tigran Mets", Yerevan, 2001, 340 p. (in Armenian)
2. **Khachatryan Sh.** "Konturajyan P" [*"Konturajyan P."*]. Yerevan: "Sargis Khachents" Publ. 2011: 88 p. (in Armenian@ English)
3. **Sargsyan A.** "Lenduta", [*Lenduta*] "Zangak"Publ., 2016: 63p. (in Armenian@ English)
4. **Mirzakhanyan R.** "Soviet Armenian Culture 1956-1990". [*Khorhrdahay mslhakuyty 1956-1990tt.*]. Yerevan: "Science" Publ.of the National Academy of Sciences of the RA. 2009: 351. (in Armenian)
5. **Ivanov A.** "Gyumri: Vernacular of black tuff." [*Vernakulyar chyornogo tufa*], Yerevan. 2021. 375p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **07. 03. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **16. 04. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արաքս Վարդանի ՄԱՐԳԱՐՅԱՆ, արվեստագիտ. թեկնածու, դոցենտ, ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի գեղանկարի և քանդակի ամբիոն, Շիրակի պետհամալսարանի սպորտի ու արվեստի ամբիոն, Գյումրի, ՀՀ, էլ հասցե՝ araxmargaryan@gmail.com // orcid.org/0009-0003-8523-0891

Arax Vardan MARGARYAN: PhD in Art Studies, Associate Professor, Department of Painting and Sculpture of Fine Arts at the Gyumri branch of AA Department of Sports and Art of the Shirak State University, Gyumri, RA e-mail: araxmargaryan@gmail.com // orcid.org/0009-0003-8523-0891

ՀՏԴ՝ 398

DOI: 10.52971/18294316-2025.28.1-218

ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՄԵԾԱՐԺԵՔ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը», կազմողներ՝ Մ. Հ. Խենյան (գիտական ղեկավար), Է. Հ. Խենյան, Լ. Խ. Ղոնջյան, Հ. Հ. Մատիկյան, Երևան, ՀԱԲ հրատ., 2024, 640 էջ +2 էջ նկար:

Վերջերս հրատարակվել է Շիրակի բանահյուսական մշակույթը ներկայացնող ծավալուն ժողովածու, որին ընթերցող-հետազոտողները սպասել են տասնամյակներ շարունակ: Շիրակի բանահյուսությանը նվիրված առանձին ժողովածուներ մեզանում շատ չեն եղել: Անգնահատելի արժեք է Էմինեան ազգագրական ժողովածուի առաջին հատորում Աղ. Մխիթարյանցի տպագրած «Փշրանք Շիրակի ամբարներից» աշխատանքը (Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901), որը Շիրակի բանահյուսության և ազգագրության ուսումնասիրման առաջին փորձն էր: Շիրակը, լինելով հայ բանահյուսական մշակույթը կրող ու ապրեցնող ազգագրական շրջան, մինչ այս ժողովածուի լույս աշխարհ գալը կարոտ էր իր ամբարներում պահվող բացառիկ արժեքների մեկտեղմանը, հանրայնացմանն ու հանրահռչակմանը: Այս ծավալուն գրքում ի մի են բերվել վերջին հարյուրամյակում Շիրակի տարբեր տարածաշրջաններից հավաքագրված և բանահյուսության գրեթե բոլոր ժանրերին պատկանող բացառիկ ու արժեքավոր նյութեր՝ օգտագործելով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվներում պահվող անտիպ նյութերը, դաշտային բանահյուսական նյութերի արդի գրառումները:

Աշխատանքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և բ. գ. թ. Է. Խենյանի պատասխանատու խմբագրմամբ:

Ժողովածուն կազմված է առաջաբանից (15 էջ), որտեղ տրվում է Շիրակ աշխարհի պատմության ու աշխարհագրության համառոտ ուրվագիծը: Ըստ փուլերի ներկայացվում են Շիրակում 19-րդ դարավերջից մինչև 21-րդ դարսկիզբն ընկած ժամանակահատվածում իրականացված բանահավաքչության, հրատարակչության և ուսումնասիրության գործընթացը ներկայացնող տեղեկություններ: **Առաջին փուլը** ներառում է հայ մտավորականների՝ Քաջբերունու (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), Աղեքսանդր Ափրիկյանի, Աղեքսանդր Մխիթարյանցի, Արշակ Բրուսյանի, Հովհաննես Կոստանյանցի, Երվանդ Լալայանի և այլոց

արժեքավոր հավաքածուները, տարբեր հեղինակների կողմից հայ պարբերական մամուլում տպագրված բանահյուսական նյութերը, որոնք ամբողջացնում են 19-րդ դարավերջի և 20-րդ դարակազմի Շիրակի բանահյուսության ընդհանուր պատկերը:

Բանահյուսական նյութի հավաքման ու տպագրման գործընթացի **երկրորդ փուլը** համընկնում է Հայաստանի Խորհրդային շրջանին: Ժողովածուն կազմողներն այս շրջանը ներկայացնում են երկու ենթափուլերով՝ 1925-1960 թթ. և 1960-1990 թթ.: Առաջին ենթափուլն ընդգրկող ժամանակահատվում բանահավաքներ Գեղամ Թարվերդյանը, Մնացական Թամրազյանը, Նիկողոս Նիկողոսյանը և այլք առավել շատ ուշադրություն են դարձրել քնարական բանահյուսության նոր դրսևորումներին և գրառել մեծ ծավալի նյութ: Այս շրջանն առանձնանում է աշուղների գործունեությանը նվիրված աշխատանքների հրատարակմամբ, ինչի մասին ամփոփ ներկայացվում է ժողովածուի առաջաբանում:

Երկրորդ ենթափուլը ներկայացնում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտական-բանահավաքչական արշավախումբը, որի մասնակիցներն էին Սարգիս Հարությունյանը, Արտաշես Նազիսյանը, Արուսյակ Սահակյանը, Ժենյա Խաչատրյանը և Արագ Կարապետյանը: Մեծ արժեք են ներկայացնում Պարույր Բարսեղյանի գրառումները: Ժողովածուի պատասխանատու խմբագիր Է. Խենյանը, լինելով վերջիններիս ժամանակակիցն ու գործընկերը, ճշգրտորեն ներկայացնում է բանահավաքների կատարած հսկայածավալ աշխատանքի մանրամասները:

Երրորդ փուլն ընդգրկում է 1990-ականներից մինչև մեր օրերը, որը հիմնականում կապված է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ: Կենտրոնի «Գիտական աշխատություններում» բազմիցս հրատարակվել են Շիրակի բանահյուսական մշակույթը ներկայացնող, տեսական ու գործնական աշխատանքների արդյունքները ներկայացնող հետազոտություններ: «Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուի հիմքն են կազմում ինչպես արխիվներում և առանձին հավաքածուներում պահվող, այնպես էլ կազմողների կողմից արված արդի գրառումները: Նրանք, քաջատեղյակ լինելով հայ բանագիտության պատմությանն ու գիտական հիմնարկներում պահվող բանահյուսական արխիվներին, ամենայն պատասխանատվությամբ կարողացել են ներկայացնել Շիրակի բանահյուսությունը՝ նյութի գրառումից մինչև ժողովածուների հրատարակություն:

Ժողովածուն բաղկացած է երեք բաժիններից՝ 1. Վիպական բանահյուսություն (349 էջ), 2. Քնարական բանահյուսություն (74 էջ), 3. Ասույթաբանություն (72 էջ):

Առաջին՝ «Վիպական բանահյուսություն» բաժնում զետեղված են հրաշապատում (31 միավոր), իրապատում (60 միավոր) և կենդանապատում (4 միավոր) հեքիաթներ, որոնք կլրացնեն հայ ժողովրդական հեքիաթների՝ մինչև այժմ հրատարակված հարուստ ժառանգությունը: Ծանոթագրություններում կազմողները տվել են հեքիաթների տեսակների միջազգային զուգահեռներն ըստ Հանս-Յորգ-Ութերի դասակարգման: Ժողովածուում ընդգրկված հեքիաթները տպագրվում են առաջին անգամ:

Բաժնում ընդգրկված են նաև առակներ (8 միավոր), «Ղարիբի հեքիաթը» սիրավեպի մեկ տարբերակ, ավանդություններ ու ավանդազրույցներ (11 միավոր), զրույցներ (40 միավոր), իրապատում զրույցներ (61 միավոր), զվարճախոսություններ (222 միա-

վոր), ստապատումներ (2 միավոր), գյումրեցի Ղազար Աղայի պատմությունները (9 միավոր) և մեկ հուշապատում:

Երկրորդ՝ «Քնարական բանահյուսություն» բաժինը ներառում է Շիրակի բազմաբնույթ երգերը, որոնց մեծ մասը կենցաղավարում են մինչ օրս: Շիրակի երգերը բաժանվում են երեք հիմնական խմբերի՝ պարերգեր, երգեր, խաղեր, որոնցից յուրաքանչյուրն ունի ներքին ստորաբաժանումներ: Ժողովածուի այս բաժինը Շիրակի երգերի հարուստ շտեմարան է, որն ընդգրկում է ժողովրդական խաղիկներ (468 միավոր), պարերգեր, ջանգուլումներ և վիճակի երգեր (ընդհանուր՝ 265 միավոր), վիպական, աշխատանքային, հարսանեկան, զավեշտական, աշուղական երգեր, սգերգեր, օրորոցայիններ և զանազան այլ երգեր (ընդհանուր՝ 140 միավոր):

Երրորդ՝ «Ասույթաբանություն» բաժնում ներկայացվում են խոսքաշեն շիրակցիների արխաիկ մտածելակերպն արտահայտող բանաձևային բանահյուսության տարբեր ժանրերը ներկայացնող բացառիկ նյութեր՝ առած-ասացվածքներ (1281 միավոր), դարձվածքներ (775 միավոր), օհնանք-բարեմաղթանքներ (255 միավոր), երդումներ (115 միավոր), անեծքներ (423 միավոր), սպառնալիքներ (94 միավոր), հանդիմանական ու ծաղրական խոսքեր (45 միավոր), փաղաքշական ասույթներ (60 միավոր), ասելուկներ և շուտասելուկներ (37 միավոր), հանելուկներ (166 միավոր) և աղոթքներ (8 միավոր): Նյութերը դրված են այբբենական կարգով և ունեն համարակալումներ, ինչը խոսում է կազմողների գիտական լուրջ մոտեցման ու ժողովածուների կազմման հարուստ փորձի մասին:

Հավատարիմ մնալով ժողովածու կազմելու ակադեմիական չափանիշներին՝ նրա հեղինակները այն հազեցրել են հանգամանալից ծանոթագրություններով, Շիրակի բարբառի հարուստ բառարանով (շուրջ 2500 բառ), բանասացների, անձնանունների, տեղանունների և օգտագործված գրականության ցանկերով:

«Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուն կազմված է գիտական հրատարակություններում մինչ այժմ կիրառված տեքստաբանական կանոններով՝ հավատարիմ մնալով բնագրին ու բարբառին:

Հետազոտողների սեղանին դրված այս ժողովածուն նոր ու կարևոր խոսք է հայ բանագիտությանը, ազգագրությանը և, ընդհանրապես, հայագիտությանը զբաղվողների և հետաքրքրվողների համար:

Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ, բան.գիտ.թեկնածու
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ և ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտաշխատող

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հակոբյան Արարատ Մ.

Հույն պատմագիր Պոլիբիոսը պատմագիտության մեջ քննական և վերլուծական մոտեցումների սկզբնավորող (Պատմության մեթոդաբանության հարցեր).....5

Ցականյան Ռուսլան Ա.

Միջինասորեստանյան պետության վարչաքաղաքական և տնտեսական կառավարման համակարգերը.....23

Մելիքյան Արթուր Տ., Չատինյան Իռա Հ.

Արտաշես երկրորդի հակահռոմեական դիրքորոշումն աղբյուրագիտական և դրամագիտական տվյալների քննահամեմատական լույսի ներքո.....35

Հովհաննիսյան Արտակ Հ.

Պաղեստինյան հակամարտության նկատմամբ տարածաշրջանային քաղաքականությունը՝ որոշ արաբական երկրների օրինակով՝ համեմատական վերլուծություն.....49

Հ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աղամյան Մուսաննա Խ.

Ծաղկունքի վիճակական ժառանգությունը.....61

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պետրոսյան Մարգիտ Գ., Պետրոսյան Լուսինե Ս.

Դրախտային ծառերի գույգի, խաղողի որթի և դրանց պահապանների մասին.....72

Հարությունյան Հասմիկ Հ., Մատիկյան Հասմիկ Հ.

Շիրակյան պարերգերը փոփոխվող միջավայրի համատեքստում.....85

Մահակյան Լիլիթ Ա.

Կերպարանափոխությունն իբրև մոգական հմտություն, շնորհք և հնարիմացություն «Կախարդը և իր երեխաները» հեքիաթաշարում.....96

Մատիկյան Հասմիկ Հ.

Հագարան բլբուլը որպես հրաշագործ կերպար.....106

Ա Զ Գ Ա Գ Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գաբրիելյան Ռաֆիկ Գ.

Տարածքի օգտագործման առանձնահատկությունները Գանձակի շրջանում.....115

Հարությունյան Հասմիկ Թ.

Կաթնատնտեսության հետ կապված հավատալիքները հայոց մշակույթում.....128

Աբրահամյան Դիանա Վ.

Կավե կանացիակերպ աղամանների պատմական զարգացման
դինամիկան՝ Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական
արվեստների թանգարանի հավաքածուի օրինակով.....140

Բազեյան Կարինե Ռ.

1926 թ. երկրաշարժը և արդյունաբերական Լենինականի կառուցումը.....154

Ասատրյան Կարեն Ս.

Հայոց ազգագրության թանգարանի արձաթյա
համալիր սպասքի բնութագիրը (ՀԱՊԹ՝ 6144/1-3).....166

Բ Ա Ն Ա Ս Ի Ը Ռ Ի Թ Յ Ո Ւ Ն

Զարգարյան Արա Ս.

Աստվածային ցասման ու մարդկային վախի ընկալումներն Աստվածաշնչում.....177

Փարսադանյան Միրանուշ Հ.

Լևոն Մանվելյանը և «Մուրճ» հանդեսը..... 185

Խաչատրյան Արամ Ա.

Կարպիս Մուրենյանն ընդդեմ Հրայա Քոչարի.
«Կարոտ» վիպակի հեղինակային պատկանելության խնդիրը..... 192

Գալստյան Նելլի Բ.

Ներապրումի գրական-փիլիսոփայական դրսևորումները Վիլյամ Սարոյանի
XX դարի 30-ական թվականների դրամաներում.....201

Ա Ր Վ Ե Ս Տ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մարգարյան Արաքս Վ.

Լենինականում ապրած ու ստեղծագործած հայրենադարձ նկարիչները.
Հակոբ Հակոբյան, Պետրոս Կոնտուրաջյան, Նվեր Սաֆյան.....210

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գալստյան Հասմիկ Հ.

Բանահյուսական մեծարժեք ժողովածու.....218

Contents

HISTORY

Hakobyan Ararat M.

*The Greek Historian Polybius as the Originator of Critical and Analytical Approaches in Historiography (issues in the Methodology of History).....*5

Tsakanyan Ruslan A.

The Administrative and Economic Government Systems of the Middle Assyrian State.....23

Melikyan Arthur T., Chatinyan Ira H.

The Anti-Roman Stance of Artaxias II in the Light of Source and Numismatic Data Critical Analysis.....35

Hovhannisyan Artak H.

Regional Policy Towards the Palestinian Conflict Based on the Example of Some Arab Countries: A Comparative Analysis.....49

ARCHAEOLOGY

Adamyany Susanna Kh.

The Epigraphical Heritage of Tsakhkunq.....61

FOLKLORE STUDIES

Petrosyan Sargis G., Petrosyan Lusine S.

On the Twin Trees of Paradise, the Vine and Their Keepers.....72

Harutyunyan Hasmik H., Matikyan Hasmik H.

Shirakian Traditional Ditties in the Context of Changing Environment.....85

Sahakyan Lilit A.

Shapeshifting as a Magical Skill, Gift, and Cunning in the Series of Fairy Tales “The Witch and Her Children”.....96

Matikyan Hasmik H.

The Bird of a Thousand Songs as an Enigmatic Personage.....106

ETHNOGRAPHY

Gabrielyan Rafik G.

Specificity of Space Use in Gandzak District.....115

Harutyunyan Hasmik T.

Beliefs Related to Dairying in the Armenian Culture.....128

Contents

<i>Abrahamyan Diana V.</i> The Dynamics of the Historical Development of Womanlike Clay Salt Cellars, as an Example of the Collection of the Folk Arts Museum Named After Hovh. Sharambeyan.....	140
<i>Bazeyan Karine R.</i> The 1926 Earthquake and the Construction of Industrial Leninakan.....	154
<i>Asatryan Karen S.</i> Description of the Silver Tableware Set of the Museum of Armenian Ethnography (SMAE 6144/1-3)	166
PHILOLOGY	
<hr/> <hr/>	
<i>Zargaryan Ara S.</i> Perceptions of Divine Wrath and Human Fear in the Bible.....	177
<i>Parsadanyan Siranush H.</i> Levon Manvelyan and "Murch" Journal.....	185
<i>Khachatryan Aram A.</i> Karpis Surenyan versus Hrachya Kochar: The Problem of Copyright Ownership of the Short Story "Yearning" (Karot).....	192
<i>Galstyan Nelli B.</i> Literary-Philosophical Manifestations of Inner Life in William Saroyan's Dramas of the 30s of the XX Century.....	201
ART STUDIES	
<hr/> <hr/>	
<i>Margaryan Arax V.</i> Repatriate Artists Living and Working in Leninakan: Petros Konturajyan, Hakob Hakobyan, Nver Safyan.....	210
BOOK REVIEW	
<hr/> <hr/>	
<i>Galstyan Hasmik H.</i> Valuable Collection of Folklore Materials.....	218

*Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն*

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1 (28) 2025

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ. 1 (28) 2025

*Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia*

SCIENTIFIC WORKS. 1 (28) 2025

*Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի
Խմբագրումը և սրբագրումը՝ Ս. Հայրապետյանի, Հ. Մատիկյանի*

Ստորագրված է տպագրության՝ 23. 05. 2025թ.

Ծավալը՝ 226 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am